

891, 981-99

ԱՍՏՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

A 95257



«Հայաստան»
ԵՐԵՎԱՆ 2000

ԴՏՀ 891.981.0 Սարյան

ՊՄԴ 83. 3Հ1

Ս 271

Խ մ ք ա գ ի ը՝

բանասիրական գիտությունների

թեկնածու Գ.Ա.ՍԱԴՈՅԱՆ

Սարյան Ա.Գ.

Ս 271

ԺԷ ԴԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԴԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, մենագրություն,
Ասատուր Սարյան.- Եր.: «Հայաստան»: 2000թ., 168 էջ:

Աշխատության մեջ տրվում է միջնադարյան գրականության ուշագրավ աեսակներից մեկի՝ ուղեգրության ժանրային բնութագիրը՝ առավելաբար 17-րդ դարի նյութի հիման վրա: Ինչպես նաև ներկայացվում են աեսակի զարգացման մյուս շրջափուլերը՝ առանձին ուղեգիրների երկերի բնական-համեմատական վերլուծությամբ:

Գիրքը հասցեագրվում է մասնագետներին և ընթերցող լայն շրջաններին:

Թ $\frac{4702080106}{01 (701)- 2000}$ 2000 արտ.

ՊՄԴ 83.3Հ1

ISBN-5-540-01739-0

© ԱՍԱՏՈՒՐ ՍԱՐՅԱՆ, 2000թ.:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հարուստ և բազմազան է հայ միջնադարյան գրականության ժանրային համակարգը, որի մի կարևոր բաժինն են կազմում ուղեգրությունները: Հայ ուղեգիրների «... նպատակն է հնարավորին չափ ներկայացնել ուխտագնացությունը, նկարագրել ճանապարհը, բնակավայրերը, վանքերն ու եկեղեցիները, այնտեղ պատկող մատուցարարությունները, երկրի ազգաբնակչության գեթ գլխավոր հատկանիշները, սովորույթները, զբոսնունքները, հաղորդել ժողովրդագրական-վիճակագրական ինչ-ինչ տվյալներ և այլն»: Այս ամենով հանդերձ ուղեգրությունները ունեն պատմաճանաչողական որոշակի նշանակություն: Սակայն մեզ հետաքրքրում են նրանց գրական արժանիքները: Այսինքն, մեր հետաքրքրության առարկան հայկական ուղեգրություններն են որպես գրական տեսակ:

Ուղեգրությւնը, որի ակունքները երևում են դեռևս Ե-ԺԲ դարերի պատմագրական և ուղեցուցային երկերում, արդեն ԺԵ դարավերջին Մարտիրոս Երզնկացու շնորհիվ սաանում է ինքնուրույն, առանձին տեսակի «կարգավիճակ»: (Ուղեգրությւնը աննախադեպ զարգացում է ապրում ԺԷ դարում) ապա նոր ձևաբեկումներով շարունակվում է հետագա հարյուրամյակներում՝ հաստատելով տեսակի հարատևությունն ու կենսունակությունը: Այդ ընթացքում գրվել են մեծ թվով ուղեգրական գործեր, որոնցից լավագույնները հարստացնում են ոչ միայն հայկական ուղեգրապատումը, այլև գրականությունն առհասարակ:

Ուղեգրության տեսակը անցել է զարգացման հետաքրքիր և երկար ճանապարհ: Մենք ուսումնասիրության նյութ ենք դարձնում այդ ճանապարհի մի հատվածը միայն՝ ԺԷ դարը: Սակայն այդ շրջանում գրված ուղեգրություններում ցայտուն տեսանելի են հայկական ուղեգրությունների բոլոր յուրահատկությունները և ընդհանրությունները:

Ինչպես միջնադարյան մատենագրության մի շարք տեսակներ,

ուղեգրությունը ևս ունի սահմանման որոշ դժվարություններ ու բար-
կություններ, որ պայմանավորված է ուղեգրության և հուշագրական սև-
սակների (հուշ. ինքնակենսագրություն, օրագրություն, նամականի և
այլն) միջև եղած սերտ աղերսներով: Իրավացի է «Հայ միջնադարյան
գրականության ժանրեր» (Երևան, 1984) գրքի գրախոսության հե-
ղինակը, երբ գրում է. «Առհասարակ բավական դժվարին գործ է հին և
միջնադարյան ժանրերի ճշգրիտ սահմանումը, մասավանդ, երբ նկատի
ենք ունենում այդ ժանրերից շատերի սինկրետիկ բնույթը, այն հան-
գամանքը, որ դրանք իրենց մեջ ներառում են նաև այլ ժանրերի (երբեմն
մի քանի) ժանրային հատկանիշներ»²: Դրա հետևանքով առաջանում է
շփոթ մի շարք սեսակներին պատկանող գործերի ժանրային պատ-
կանելության որոշման գործում: Ուղեգրությունները ամենից հաճախ
կարող են շփոթվել ինքնակենսագրական հիշատակարանների, օրա-
գրությունների հետ: Նման դեպքերում պարզ է, որ պետք է նախա-
պատվությունը տալ տվյալ ստեղծագործության մեջ գերակշռող, այս
կամ այն սեսակին հատուկ գծերին և այդպիսով գրվածքը համարել մի-
այն այդ սեսակին պատկանող:

Կ. Գանիեյանը որոշ վերապահությամբ է ընդունում ուղեգ-
րության պատկանելությունը հուշագրական տեսակներին: «Դրանք (ու-
ղեգրությունները- Ա. Ս.), գրում է նա, մեմուարներ չեն, բայց մոտենում
են մեմուարային գրականությանը, որովհետև դրանց հիմքում ընկած են
վաղեմի և անցյալ հիշատակներ, որոնք համենայն դեպս մի որոշ չափով
վերաբերում են տվյալ հեղինակի անձնական կյանքի պատմությանը»³:
Հարկ է նշել, որ այդ հարաբերությունը մի «որոշ չափով» համարելը ճիշտ
չէ: Դիցուք Սիմեոն Լեհացու Ուղեգրության էջերում սփռված բազմաթիվ
նկարագրությունները, զնահատականները, տեղեկությունները, մտքերն
ու զգացմունքները ամենասերտ կապերով հարաբերակցվում են ուղեգրի
«անձնական կյանքի պատմությանը»: Նույնը այս կամ այն չափով
կարելի է ասել ուրիշ ուղեգրական գործերի վերաբերյալ: Ի վերջո, ո՞րն է
հուշագրական բոլոր սեսակներին բնորոշ ամենից գլխավոր յուրա-
հատկությունը: Այն, որ բոլոր դեպքերում գրական նյութը վերար-
տադրվում է հեղինակային հիշողության միջոցով: Ըստ այդմ ուղեգ-
րությունը ևս պատկանում է հուշագրական տեսակների թվին: Որևէ
ուղեգիր, երբ մտովի պատկերացնում ենք նրա ստեղծագործական աշ-
խատանոցը, ժամանակի մի փոքր կամ մեծ միավորի ավարտին, դիմելով
հիշողությանը, պետք եղած գրառումներն էլ անում, նորագրում է իր սև-

սածն ու լսածը հիմնական կետերով, այնուհետև, իր ճամփորդությունը վերջակետին հասցնելուց հետո, վաղօրոք գրառածը մշակելով, ստեղծում է ուղեգրական երկ: Ճիշտ է, «ճանապարհորդական հիշողությունների ելակետը, այնուամենայնիվ, մնում է այցելած վայրերի ու երկրների հետազոտությունը»⁴, բայց ուղեգիրը այդ ամենի մեջ, ուղղակի քն անուղղակի, պատկերում է նաև իրեն, իր անձնական կյանքը: Չէ՞ որ ուղեգրական գրերի բոլոր նկարագրությունները արվում են հեղինակի աշխարհայացքի ու ընկալումների, տպավորությունների ու զգացողությունների մակարդակում, այլ կերպ ասած, անցնում են հեղինակի «նախ» քուրայով:

Մենք դեռ առիք կունենանք խոսելու ուղեգրությունների մյուս կայուն և անփոփոխ հատկանիշների մասին, որոնցով բնութագրվում են այդ տեսակին վերաբերող գործերը:

Միջնադարյան հայ մատենագրության շատ տեսակների նման ուղեգրությունները որևէ հատուկ, միասնական անվանում չեն ունեցել, այլ գրիչների կամ հեղինակների կողմից ստացել են տարբեր անուններ, ինչպես՝ հիշատակարան, պատմություն, քուրք, իսկ չափածոյում, սրանց հետ մեկտեղ, նաև՝ բան, տաղ, գովք, ներբող և այլն: Նկատված է, որ գրչագրերի վերնագրերում զանվող նմանօրինակ նշումները պետք է մեկնակետ ընդունել ցանկացած տեսակ բնութագրելիս, որովհետև դրանք «որևէ երկի խորագրում մատնանշում են միաժամանակ և՛ բովանդակություն, և՛ ժանր»⁵, և «տվյալ դեպքում գործ ունենք գիտակցված, որոշակի, անշվտքելի անվանման հետ»⁶: Բայց ոչ բոլոր տեսակների վրա կարելի է առաձեռն այս մտաեցումը: Ա. Մադոյանը գտնում է, որ, օրինակ, պոեմի խնդրում պատկերը այլ է, քանի որ այդ եզրը «նոր ժամանակներին է պատկանում, իսկ որպես պոեմ դիտարկվող երկերը միջնադարում կոչվել են ամենատարբեր, խայտաբղետ անուններով... Այս պարագային վճռական կարևորություն է ստանում քննարկվող երկերի ոչ քե բուն ժանրային բնութագիրը, այլ ծավալը՝ ինչպես ասացինք, գեղարվեստական ստեղծագործության համար երկրորդական մի հանգամանք»⁷: Սա կարելի է ասել նաև ուղեգրության տեսակի մասին, որովհետև այս եզրույթը նույնպես նոր ժամանակների արտահայտություն է, և ուղեգրության տեսակին պատկանող գրվածքները, ինչպես նշեցինք, ձևագրերում զանազան անուններով են հանդես գալիս: Բացի այդ, ուղեգրություններին տրվող որոշ տարածված անվանումներ (օրինակ՝ «հիշատակարան», «պատմություն») շատ ընդհանուր են և չեն բացա-

հայտում տեսակի էությունը, չեն կապվում նրա բովանդակության հետ: Երբեմն միևնույն ստեղծագործությունը նշվում է խորագրում մեկ, իսկ բնագրում՝ մեկ այլ ձևով: Շատ դեպքերում նույն անվանումով հավասար իրավունքով կարող են կնքվել քե՛ր արձակ և քե՛ր՝ չափածո գրվածքները:

Ասվածից պարզ է, որ ուղեգրության անսակը բնութագրելիս պետք է հիմք ընդունել ուղեգրական երկերի բովանդակությունը և ձևը, և ոչ, ասենք, գրվածքների վերնագրերում հանդիպող անվանումները (ինչպես պատմական ռդրի պարագայում է): Ասել է քե, ուղեգրության տեսակի սահմանագատման կամ բնորոշման համար հարկ է երկեա ընդունել հիմնականում այն երեք չափանիշները, որոնցով սովորաբար տարբերակվում են գրական անսակները:

Տեսակները գատորոշվում են քեմատիկ (պատկերման առարկան, նյութը), կառուցվածքային (երկի մասերի ամբողջությունը) և գրական պատկերավորման (պատկերի և կերպարի ստեղծման սկզբունքները) առանձնահատկություններով⁶: Կան նաև տեսակների տարբերակման և սահմանման այլ չափանիշներ: Օրինակ, գրական երկերի ծավալը երբեմն ժանրատարբերիչ չափանիշ է: Ուղեգրությունների պարագային դրանց ծավալային ընդգրկումները առանձին նշանակություն չունեն:

Ուղեգրությունները, որ ուղևորի տարաբնույթ նոթեր են՝ գրված ճանապարհորդության ուղղակի ազդակներով, պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ ուխտագնացական և ոչ ուխտագնացական: Այս բաժանումը պայմանավորված է ուղեգնացությունների շարժառիթներով: Ուղեգրությունները կարող են լինել պատմաաշխարհագրական, երկրախոցական, առևտրական, քաղաքական, դեսպանագնացական, փաստագրական, գիտական և այլն: Մրանք ոչ ուխտագնացական ուղեգրություններն են: Հայ միջնադարյան գրականության մեջ այս խմբի ուղեգրություններից հայանի են միայն քաղաքական, ուսումնական և առևտրական ուղևորությունների մի քանի նկարագրություններ: Անենից ստորածված ձևը ուխտագնացական ուղեգրություններն են:

Ուխտագրությունների քեմատիկայի շրջանակներում առաջին հերթին պիտի խոսել նշանավոր սրբավայրերի նկարագրությունների մասին: Այս գուրծերի գլխավոր քեման պատվում է համաքրիստոնեական և հայրենական տարբեր սրբատեղիներ կատարված բարեպաշտական այցելությունների, դրանց հետ առնչվող հանգամանքների շուրջը: Մարտիրոս Երզնկացին (ԺԵ դար) և Սարգիս Աբեղան (ԺԶ դար) գրում են Իտալիայի և Իսպանիայի սրբությունների մասին: Սիմեոն Լեհացին

(ԺԷ դար) և Չուար Քահանան (ԺԸ դար) նկարագրում են Երուսաղեմի սրբավայրերը: Շատ դեպքերում կարճառոտ պատմվում են քրիստոնեական հուշարձանների հետ կապված Աստվածաշնչի համապատասխան հատվածները, ներկայացվում են այդ կորողների արտաքին տեսքի ինչ-ինչ մանրամասներ: Հատուկ ուշադրություն է դարձվում եկեղեցիներում պահվող սրբազան մատուցներին, սուրբ այրերի գերեզմաններին, վանքերի սպասավորների թվին և այլն: Հաճախ սրբատեղիների նկարագրություններին զուգընթաց ուղեգիրները պատմում են քրիստոնեական լեզենդներ և լեզենդանման պատմություններ, սրբերի ու սրբավայրերի մասին ավանդություններ, որոնք որոշ դեպքերում ունենալով բանավոր կամ գիտական շրջանառության մեջ չորված սկզբնաղբյուրներ, շատ կողմերով դառնում են հետաքրքրական և ուշագրավ:

Անձ թիվ են կազմում նաև երկրորդական, անանցյալ քեմաները: Թեմաաիկ կարևոր գիծ է այցելավայրերի հայկական համայնքների կյանքի զանազան կողմերը լուսաբանող տեղեկությունների հաղորդումը, որը, օրինակ, Լեհացու պարագայում առաջնային դիրքերից մեկում է զտնվում: Փիրգատը (ԺԷ դար) հետաքրքիր տվյալներ է հաղորդում լեհահայոց կյանքի մասին: Տարբեր հեղինակների գրվածքներից պարզ է դառնում հայերի դիրքը և թիվը տարաշխարհիկ քաղաքներում, նրանց զբաղմունքը, տեղագիտության վերաբերմունքը հայերի հանդեպ և այլն:

Ուղեգրություններում ընթերցողը կգտնի բազմաթիվ քաղաքների նկարագրություններ, այլևայլ երկրների քաղաքական, տնտեսական զննահատականներ: Ուղեգրությունները արժանահավատ փաստեր և վկայություններ են պարունակում նաև այցելավայրերի բնիկ ժողովուրդների, նրանց սովորույթների և հավատալիքների, պատմական ու ռազմական անցուղարձերի, աշխարհագրական հայտնագործությունների մասին: Ուղեգրական հուշարձանները բնականաբար նախ և առաջ ընդարձակում են տվյալ ժամանակաշրջանում հայերի ունեցած պատկերացումներն ու գիտանքները այն երկրների վերաբերյալ, որտեղ կատարվել է տվյալ ճանապարհորդությունը:

Հայագետները ռուս և եվրոպական մի շարք լեզուներով քարզմանել և հրատարակել են Երզնկացու, Լեհացու, Օգոստինոս Բաջենցի (ԺԷ դար), Շահմուրատ Բաղիշեցու (ԺԷ դար), Հովհաննես Թովմաճանի (ԺԸ դար) ուղեգրությունները: Որպես պատմագիտական մտքին սառաբող աղբյուրներ, ուղեգրական երկերը հետաքրքիր ու արժեքավոր են այնու, որ գրված են նկարագրվող դեպքերին մասնակից և ականատես, երբեմն նաև ականջատուր հեղինակների կողմից:

Ուխտագնացություններում մեծ տեղ է արվում նաև պապերի,

քազավորների, եկեղեցական ու քաղաքական տարրեր գործիչների հետ հանդիպումներին: Այդ պատմական դեմքերը հասկապես Սիմեոն Լևհացու շարադրանքում երբեմն վերածվում են գրական կերպարների:

Արժև նշել նաև բնության ու կենդանական աշխարհի նկարագրությունները, որոնք կենդանացնում են ուղեգրական երկերը: Ըստեղ էլ առաջնության դափնին պատկանում է Լեհացուն: Ընդհանրապես նրա Ուղեգրությունը ծավալուն նյութ է ընդգրկում, որը նախ և առաջ բացառվում է հեղինակի աշխարհայացքով: Որքան մեծ է հեղինակի անհատականությունը, այնքան լայն են նրա ուղեգրության քեմատիկ շրջանակները: Լեհացին իր նկարագրությունները ուղեկցում է հուզական վերաբերմունքի արտահայտումով, որը գեղարվեստական լրացուցիչ լիցք է հաղորդում իր շարադրությանը:

Ուխտագնացական ուղեգրությունների՝ քեմատիկ և բովանդակային ընդհանրություններով պայմանավորված առանձնահատկությունները խնդրի մի կողմն են միայն: Տեսակի կատարյալ տարբերակման համար մեծ նշանակություն ունեն ուղեգրությունների կառուցվածքային հատկանիշները, որոնցով, առավել քան մյուս յուրահատկություններով, միավորվում են խնդրո առարկա գործերը ուղեգրության աեսակի շրջանակներում: Միջնադարյան քերականական աշխատություններում տեղ չեն գտել ուղեգրությունների կառուցվածքի մասին դիտողություններ: Այնինչ իրականում հայ ուղեգիրները խատորեն հետևել են իրենց գրվածքների կառուցվածքային պայմանականություններին, երկր գրելիս՝ առաջնորդվել որոշակի գրական սկզբունքներով: Այն, որ միջնադարում գործել են հետևողական ըմբռնումներ, կարող է և բացառվել ուղեգրությունների ստեղծմանը բնականորեն նախորդող ուղևորությունների համանման հանգամանքներով: Ինչևէ, ուղեգրական գործերում կառուցվածքային համանմանությունները, գրական հյուսվածքում կոնկրետ նկարագրական բաժինների հերթագայությունը և ուրիշ կարգի գուգադրելի ձևերի գոյությունը ակնհայտնի իրողություն է:

Այսպես, կառուցվածքային բաժիններից առաջինը մուտքն է, սկիզբը, որտեղ հեղինակը իր մասին կցկատոր կենսագրական տեղեկություններ հաղորդելուց հետո գրում է ուխտ կատարելու իր ցանկության, նաև երբեմն, ուխտագնացության՝ կանխատեսվող վայրերի մասին: Բնորոշ օրինակ է Մարտիրոս Երզնկացու ուղեգրության սկսվածքը. «Ես՝ Մարտիրոս միայն անուամբ եպիսկոպոս Եզրնկացի ի սուրբ Կիրակոսու անապատն ի Նորգեղակ գեղն, որ ի վաղուց յետ վաժապելի սուրբ գլխատր սասերեոց գերեզմանին և սուրբ Յակոբայ գերեզմանին տև-

գրության մեջ: Հնարավոր է փառատրական տարրերի առկայություն: Այդպիսին է Օգոստինոս Բաջենցի առաջաբանությունը:

Ուղեգրության կառուցվածքի համար պարտադիր այս նախաբանին հաջորդում է բուն բաժինը, ուր արվում են ուղևորությունն սկսելու (ե՞րբ, ո՞րտեղից) պարագաները: Դա նկարագրական մասն է, որը հիմնականն է ուղեգրության մեջ: Այստեղ հեղինակը նկարագրում է այն, ինչը ընդհանուր հետաքրքրության առարկա է և այն, ինչը սոսկ իր համար է ուշագրավ և հիշատակման արժանի: Ընդհանուր առմամբ ուղեգրի հետաքրքրությունը իր բովանդակությամբ համապատասխանում էր ընթերցողի հետաքրքրություններին: Ուղեգրությունների քեմատիկ բոլոր գծերը արտահայտվում են այս մասում:

Ուղեգրությունների կառուցվածքում կարևոր իրադարձիչ է վերջվածքը: Հեղինակն իր գրվածքի վերջին դրվագում ներկայացնում է իր մուտքը այն վայրը, որտեղ ավարտվում է ճանապարհորդությունը (հիմնականում դա հանրնկնում է ուղեգնացությունն սկսելու տեղի հետ), նշում է ժամանակը Քրիստոսի կամ Հայկական տոմարով, ինչպես նաև՝ երկուսը միասին: Ինչպես ուղեգրության սկզբնամասը, վերջավորությունը նույնպես կարող է ընդմիջարկվել փառատրությամբ (Մարտիրոս Երզնկացի) և կամ չափածո խոսքով (Սարգիս Արեղա):

Ուղեգրական երկերի սկիզբն ու ավարտը անհրաժեշտաբար պարունակում են նաև ձեռագրերի հիշատակարաններին բնորոշ տարրեր:

Սակայն ուղեգրության տեսակը իր բոլոր առանձնահատկություններով երևում է միջնամասում: Այստեղ է, որ ընթերցողը տեսնում է ուխտավորի կերպարը և ուխտավայրերի պատկերները: Այդ երկուսի հարաբերությունն է արդյունում իսկական ուղեգրություններ:

Կառուցվածքային տեսակետից երկրորդական չէ այն հանգամանքը, որ ուղեգրություններում, ինչպես բնորոշ է հուշագրական տեսակներին, պատումը առաջ է մղվում առաջին դեմքով, որը իր կնիքն է դնում ուղեգրական բնագրերի լեզվական և ոճական յուրահատկությունների, արտահայտչական ձևերի վրա: Կա երկու բացառություն: Դրանք Թովմա Վանանդեցու և Հովհաննես Թովմաճանի ուղեգրական գործերն են: Առաջին դեպքում մենք գործ ունենք ուխտագնաց եղբայրների կողմից հեղինակին տրված պատվերի, երկրորդ դեպքում՝ ընդամենը գրական հնարանքի հետ:

Դրական պատկերի (որոշ դեպքերում նաև կերպարի) կերտման սկզբունքներով ևս միավորվում են ուղեգրությունները: Պատկերը (սովյալ

պարագայում քաղաքների, գյուղերի, վանքերի, գետերի, լեռների և այլ առարկաների նկարագրությունները) ուղեգրական երկերում առաջ-
նային է:

Պատկերները կառուցվում են, ինչպես գիտենք, պատկերավոր-
ության միջոցներով: Պատկերավորման միջոցների խնդիրը առավել է
կարևորվում ուղեգրություններում, քանի որ ս. Գրքից ընթերցողին ծանոթ
կաղապարների և ձևերի փոխարեն հեղինակը պետք է դներ նորերը, կամ
կենդանացներ, տեսանելի դարձներ արդեն արմատացած-կարծրացած
պատկերացումները՝ դրանց նոր երանգ հաղորդելով, որը հնարավոր էր
միայն իր տեսածը, լսածն ու զգացածը ազդեցիկ արտահայտչամի-
ջոցներով մարմնավորելու դեպքում: Իրենց դիտումները կարելիվոյն չափ
տպավորիչ հաղորդելու նպատակը քրիստոնեական սրբավայրերի ու
սուրբ այրերի նկատմամբ հետաքրքրություն և սեր առաջացնելն էր, որը
կիրականանար միայն այդ ամենը ճանաչելու միջոցով: Դա էլ ուներ մի
սկեռում նպատակ՝ ամուր հիմքերի վրա դնել հայ ժողովրդի քրիս-
տոնեական կրթությունը, խորացնել նրա հավատը, որի հետ կապված
խնդիրները միշտ էլ եղել են օրակարգային:

Ուղեգրություններում հարուստ և բազմազան է պատկերավոր-
ման եղանակների համակարգը, որը սնվում է մեծավ մասամբ ժողովրդա-
կան խոսքարվեստի ակունքներից: Մեծ թիվ են կազմում մասնավորա-
պես համեմատությունները, որոնք գերակշռող մասով կառուցված են
նկարագրվող առարկայի ծավալային հատկանիշներով: Եվ դա բնական
է. ուղեգիրների ուշադրությունը առաջին հերթին գրվում են այցելա-
վայրերի շենքերի ու շինությունների կամ դրանց ինչ-ինչ մասերի,
կենդանական կամ բուսական աշխարհի այս կամ այն ներկայացուցչի
չափերը՝ մեծությունը, բարձրությունը, երկարությունն ու լայնությունը:
Այսպես, Մարտիրոս Երզնկացին Փարիզի եկեղեցու պատուհանների
մասին ասում է, որ դրանցից յուրաքանչյուրը մի կայի չափ է: Բաջենցը
Մոսկվայի վանքերից մեկում գտնվող զանգի մեծությունը շեշտում է՝
նշելով, որ այն հարյուր մարդ է քաշում: Լեհացին Կ. Պոլսի Մոֆիայի
տաճարը այսպես է պատկերում. «Եւ ամեն տապաղա այնպէս մեծ էր, որ
թէ երեսուն հազար հոգի մտնէր յինքն՝ ոչ լցէր»¹⁰:

Ուղեգրությունների լեզուն ժամանակի խոսակցական հայերենն
է, որն անհամեմատ ազատ է եկեղեցական մատենագրության ընդուն-
ված դարձվածքներից ու կաղապարային ձևերից: Մովորաբար ուղեգ-
րությունները գրված են այնպես, ինչպես ճամփորդությունից վերադար-
ձած ուղևորը նեղ շրջանում կպատմեր իր տեսած հրաշայիքների մասին:
Ուղեգիրների խոսքը շատ դեպքերում ենթակա է առաջին հայացքից
10

ստացած սպալորությունների ներգործությանը, որն ունենում է իր դրական և բացասական հետևանքները:

Հայկական ուղեգրությունների հեղինակները կրոնական գործիչներ են, ավելի հաճախ՝ եկեղեցու ցածրաստիճան սպասավորներ: Չեռագրերում նրանք և՛ հեղինակ են, և՛ գրիչ: Ուղեգրությունները մեզ հասել են հիմնականում ինքնաձեռագիր վիճակում: Հեղինակների մի մասը առանձնապես չի փայլել գրագիտությամբ: Գրչագրերում հաճախ են հանդիպում սխալաշատ տողեր ու քերականական անճշտություններ: Սակայն կարևորը ուղեգիրների պարագային նրանց դիտողականությունն է, այն, թե նրանք ինչպիսի աչքերով են նայել ու տեսել այցելավայրերի իրականությունը և ինչպիսի գրական արտահայտչաձևերով են այդ դիտումները թղթին հանձնել: Այս վերջին պարագան մեզ համար առավել կարևոր գործոն է, քանի որ ցույց է տալիս տարբեր ուղեգիրների՝ գրական շնորհքին տիրապետելու աստիճանները, նյութի պատկերման այլևայլ ձևերը, ոճի յուրահատկությունները: Տեսակի համար հատկանշական կադապարները պահպանելով, հայ ուղեգիրներից շատերը մի նոր, միայն իրենց բնորոշ երանգ են հաղորդել ուղեգրությանը, բերել անհատական գծեր:

Ժամրային լայն ընդգրկումներով հայտնի է հայ մատենագրությունը, որին հատուկ ամենից ավելի տարածում գտած տեսակներին վերաբերող ստեղծագործությունները և դրանց ժամրային-տեսական բնութագրման հետ առնչվող խնդիրները դարձել են գրականագետների հետազոտության առարկան: Ասվածի վկայությունը միջնադարյան գրականության տեսակները սահմանազատող և բնորոշող մի շարք աշխատություններն են, որոնցում գրական ստեղծագործությունների վերլուծությունները ուղեկցվում են այդ երկերի ժամրային առանձնահատկությունների բազմակողմանի բնութագրումներով: Այդպիսի ուսումնասիրություններ են Ա.Սրապյանի «Հայ միջնադարյան գրույցներ» (1969), Պ. Խաչատրյանի «Հայ միջնադարյան պատմական ողբեր» (1969), Մ. Ավդալբեգյանի «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» (1971), Հ. Սիմոնյանի «Հայ միջնադարյան կաֆաներ» (1975), Բ. Տեր-Դավթյանի «11-15-րդ դարերի հայ վարքագրությունը» (1980), Գ. Հակոբյանի «Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ» (1980), Ա. Մաղոյանի «Միջնադարյան հայկական պոեմը» (1985): Միջնադարյան տեսակների տարբերակման և ուսումնասիրման ճանապարհին կարևոր քայլ էր «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» (1984) ժողովածուն:

Դեռևս կան մեծ թվով գրական տեսակներ, որոնք իրենց գիտական նկարագրությունը ամբողջական ձևի մեջ ցայժմ չեն ստացել: Ինչ-

պես դիտել է Վ. Նալբանդյանը, «տակավին իրենց ուսումնասիրությանն են սպասում մի շարք ժանրեր և ժանրային տարատեսակներ՝ ողբագրություն, ուղեգրություններ, հրապարակախոսական արձակ, նամականի, մեկնություններ, ճառեր, տեսիլքներ, հրաշապատումներ, դամբանականներ, պատմական պոեմներ, շարականներ, զանձեր և այլն»¹¹:

Մտորև կլխտվի ուղեգրության գրական տեսակի դրսևտրումների մասին ԺԷ դարի մատենագրության մեջ: Տեսակի ուսումնասիրման նախորդ շրջանավուրերի վերաբերյալ կարելի է ասել հետևյալը: Վաղուց արդեն ուղեգրական բնագրերի մի մեծ մասը ձեռագիր մատյաններից հանվել և հրատարակվել է: Այսպես, 1828-ին Մեն Մարբենը Փարիզում հրապարակ է հանում Մարտիրոս Երզնկացու ուղեգրության բարգմանությունը: 1882-ին «Բազմավէպում» լույս է տեսնում Փիրզատի ուղեգրությունը: Դրանից առաջ՝ 1847 թվականին նույն հանդեսում տպվել էր Խաչատուր Թոխաթցու ուղեգրական պոեմը, իսկ երեք տարի անց «Արարատում» Մահտեսի Շահնուրատի հիշատակարանը: 1884-ին Զ. Պատկանյանը գիտական շրջանների ուշադրությանն է հանձնում Օգոստինոս Բաջենցի Ուղեգրությունը: Այնուհետև, 1895-ին Հ. Տաշյանը իր «Յուցակում» բերում է Դավիթ Եվդոկիացու Ուղեգրությունը: Մեր դարի հրապարակումներից կարևոր են 1932-34 թթ. Ն. Ակինյանի կողմից Միմեոն Լեհացու և 1946-ին Ա. Ալպոյաճյանի կողմից Հովհաննես Թությունջիի Ուղեգրությունների հրատարակությունները և այլն:

Ուղեգրական բնագրերը հրատարակվել են ինչպես տարբեր ժողովածուներում, այլ նյութերի հետ, այնպես էլ առանձին գրքերով: Ուղեգրությունների մեծ մասը ցրված է Հայաստանում և արտերկրում լույս տեսած մամուլի էջերում: Այդ ամենը մտադիր էր ի մի բերել Վ. Հակոբյանը, և ծրագրվում էր դրանք հրատարակել «Մանր ժամանակագրությունների» հատորներից մեկում¹²: Սակայն ինչ-ինչ պատճառներով այդ գործը չի իրականացել:

Վերևում նշված և չնշված բոլոր հրատարակություններն էլ ուղեկցվել են առաջաբաններով, որոնք (բացառությամբ Ն. Ակինյանի առաջաբանի որոշ մասերի) ունեն բանասիրական և պատմագիտական բնույթ:

Ուշադրությունից դուրս է մնացել դրանց տեսական-գրականագիտական ուսումնասիրությունը, որը կրացահայտեր տեսակի ընդհանուր պատկերը՝ իր սկզբնավորման, զարգացման, անկման կամ ժամանակի հոլովությամբ կրած ամենատարբեր փոփոխությունների պայմաններում: Հրապարակի վրա չկան տեսակի պատմությունը լուսաբանող,

ինչպես ընդհանուր վերլուծական, այնպես էլ տեսական բնույթի աշխատություններ:

Հայ ուղեգիրներից միայն Միմեոն Լեհացին է արժանացել գրականագետների ուշադրությանը: Նրա մասին հոդվածներ են գրել Մ. Գարրինյանը ("Симеон Лехаши о странах Юго-восточной Европы")¹³, Հ. Սահակյանը ("Путевые заметки Симеона Лехаши")¹⁴, Ա. Մադրյանը («Միմեոն Լեհացու Ուղեգրությունը»)¹⁵:

Հայ միջնադարյան գրականության պատմությանը վերաբերող աշխատություններում հայկական ուղեգրություններին և Միմեոն Լեհացուն անդրադարձել են Վ. Նալբանդյանը¹⁶, Մ. Գարրինյանը¹⁷, Հ. Բախչինյանը և Վ. Ներսիսյանը¹⁸: Երևանի Մատենադարանում պահվող ուղեգրական բնագրերի մասին գրել է Գ. Աբգարյանը¹⁹: Միմեոն Լեհացուն և ուղեգրության տեսակին անդրադարձել է Կ. Գանիելյանը²⁰:

Միմեոն Լեհացուն իրենց տարբեր աշխատություններում այս կամ այն չափով (հիմնականում համառոտակի) անդրադարձել են Ե. Սլուշկևիչը²¹, Ն. Պոդարյանը²², Բ. Բարսեղյանը²³, Յ. Գաշկևիչը²⁴: "Исторические связи и дружба украинского и армянского народов" ժողովածուներում (այսուհետև՝ *ИСД*) գետեղված հոդվածներում Միմեոն Լեհացու մասին գրել են Մ. Մելիքսեր-Բեկը ("Из истории армяно-украинских отношений", *ИСД*, Եր., 1961, с. 52), Վ. Հակոբյանը ("Армянские источники об Украине", *ИСД*, Եր., 1961, с. 213-215), Լ. Խաչիկյանը ("Новые материалы о древней арм. колонии Киева", *ИСД*, Եր., 1961, с. 216 и 219), Վ. Ոսկանյանը ("Древняя Русь и Украина в судьбах армян", *ИСД*, Եր., 1961), с. 81-82 և այլն:

Չափածո ուղեգրությունների ուսումնասիրության անպարբուն պատկերը այսպիսին է: 1975-ին Հ. Սահակյանը «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» գրքում (էջ 280-288) խոսում է «նոթագրական բնույթի չափածո երկերի» մասին՝ առանձնացնելով Խաչատուր Թոխաթցուն, Մինաս Գոչին, Հակոբ Սսեցուն: Մինչ այդ Թոխաթցուն Լեհացու հետ համեմատել էր Կ. Մելիք-Օհանջանյանը («Պատմության Փարեզ և Վեմնայի», Եր., 1966, էջ 238): Իսկ 1964-ին Հ. Սահակյանը իր «Երեմիա Քյոնյուրճյան» աշխատության մեջ վերջինիս համեմատում է Միմեոն Լեհացու հետ: Այնուհետև չափաերկված ուղեգրություններին անդրադարձել է Ա. Մադրյանը: Նա «Միջնադարյան հայկական պոեմը» (1985) աշխատության մեջ ներկայացնում է «այսպես ասած, պատմա-աշխարհագրական բովանդակությամբ քերթվածները», ի թիվս որոնց վերլուծում է Խաչատուր Թոխաթցու, Հակոբ Գրիգորենցի և Թովմա Վանանդեցու գրվածքները: Ա. Մադրյանը չափածո ուղեգրական երկերի

հեղինակներից անցողակի անդրադարձել է նաև Գրիգոր Գրչին («Ուղեգրություն», «Գպրություն», 1993, 28 հոկտ.-3 նոյեմբ.) և Պրոխորոն Միլխատրեցուն («Հայ ուղեգրության առաջնեկը», «Արարս», 1995, 1, էջ 30):

Ուղեգրական բնույթի չափածո առանձին գործերի մասին գրել են էլի մի քանի գրականագետներ տարբեր բանաստեղծների ստեղծագործությանը նվիրված մենագրություններում:

Միջնադարյան արձակ ուղեգրությունները արդի գրական հայերենի վերածելու ուղղությամբ աշխատանքներ է կատարում Ա. Մաղոյանը: «Արարս» միջազգային հայ-բասկյան հանդեսի էջերում արդեն լույս են տեսել Մարտիրոս Երզնկացու, Սարգիս Աբեղայի, Փիրգատի, Օգոստինոս Բաջենցի ուղեգրությունների թարգմանությունները, որոնք ծրագրվում է հրատարակել «Միջնադարյան հայկական ուղեգրությունների» Բ գրքում (Արդեն հրատարակվել է Ա գիրքը²⁵):

Ուղեգրությունները, իբրև գրական տեսակ, հայ իրականության մեջ առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Մեր նպատակն է ցույց տալ տեսակի ընդհանուր պատկերը, բացահայտել տեսակին պատկանող գործերի ինքնահատուկ ձևերը, ուղեգրությունները դիտել համասեռ գրվածքների հետ փոխակապակցության մեջ, ներկայացնել տեսակի անցած ուղին, ուղեգրական երկերի կարևոր օրինակափությունները և այլն: Եվ քանի որ ուղեգրությունները հայ հարուստ ու բազմաժանր գրականության մեծակտավ տեսակներից մեկն են, նրանց ուսումնասիրությունը կհարստացնի մեր պատկերացումները հայոց մատենագրության ընթացքի մասին:

ՉԼՈՒՆ ԱՌԱՋԻՆ
ՏԵՍԱԿԻ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուսումնասիրության բուն նյութին՝ ԺԷ դարի հայկական ուղեգրությունների քննությանը անցնելուց առաջ համառոտակի ներկայացնենք հայ մատենագրության մեջ խնդրո առարկա տեսակի սկզբնավորումը: Եվ այսպես, ի՞նչ կա հայկական գրավոր աղբյուրներում, որ կարելի է այժմյան եզրույթով ուղեգրական համարել: Այս հարցի պատասխանը մեծ կարևորություն է ստանում այնու, որ առանց նախորդ շրջանների հանգամանակից քննարկման հնարավոր չէ ըմբռնել այն վերելքը, որ ԺԷ հարյուրամյակում ապրեց ուղեգրության տեսակը: ԺԷ դարը մի կարևոր օղակն է հայկական ուղեգրության տեսակի պատմության ընդհանուր շղթայի: Եվ այդ դարում ուղեգրության զարգացումը նախապատրաստվել է անցած շրջանների նույնատեսակ գրվածքներով:

Հայկական առաջին ուղեգրությունը, որ հասել է մեզ, ԺԵ դարավերջին գրել է Մարտիրոս Երզնկացին: Նրա ուղեգրությունը Ա. Մաղոյանն իրավամբ անվանել է «հայ ուղեգրության առաջնեկ»¹: Դա մեզ ծանոթ ուղեգրության ձևն է, որի կաղապարները շարունակվում են հետագա ժամանակներում՝ զարգացման ընթացքում կրելով որոշակի փոփոխություններ, բայց բովանդակությամբ մնալով նույնը: Վիճելի խնդիր է մինչև Երզնկացի ընկած շրջանը, երբ ուղեգրական գործերը կան որևէ այլ երկի մաս էին կազմում, կամ գրված էին նկարագրական կարճ միավորներից բաղկացած ցանկերի և ուղեցույցների ձևով:

Առաջին անգամ հայ բանասիրության մեջ հայկական ուղեգրությունների ակունքներին ու սկզբնավորմանը անդրադարձել և ուղեգրական երկերի պարբերացում է արել Լ. Խաչիկյանը: «Սարգիս Արեղայի ուղեգրությունը» հոդված-հրապարակման սկզբում գիտնականը խոսում է առկա երկու շրջանի մասին: Առաջինն սկզբից մինչև Երզնկացի տևող շրջանն է, երկրորդը՝ Երզնկացուց մինչև Լեհացի և Բաջենց ընկած շրջանը: Առաջին շրջանում պատմաբանը գրում է հայ ուխտագնացների մասին, «որոնք հաղթահարելով մեծ դժվարություններ՝ հեռագնա ճանապարհորդությամբ Հայաստանից հասել են մինչև Սպանիայի անձանոթ ավերը՝ բարի հիշատակ թողնելով իրենց մասին»²: Սակայն նրանք այդ հիշատակը չեն թողել՝ նկարագրելով իրենց կատարած ուխտագնացությունները: Համենայն դեպս, մեզ չեն հասել նրանց հեղինակած ուղեգրական և ուրիշ գործեր (զուցե ընդհանրապես չեն էլ

եղել այդպիսիք) և մենք հայազգի այդ ուխտավորների ուղևորությունների և հրաշագործությունների մասին իմանում ենք կողմնակի աղբյուրներից³:

Երկրորդ շրջանին վերաբերող մասում, ԺԵ- ԺԶ դարերը նկատի ունենալով, Լ. Խաչիկյանը գրում է. «Այժմ արդեն ուխտագնացությունից ավելի նրանց (Եվրոպայում և այլ վայրերում դեզերող հայերին- Ա. Ս.) սկսում է հետաքրքրել իրենց այցելած երկրների քաղաքական ու տնտեսական վիճակը, ժողովուրդների վարքն ու բարքը, աեսած քաղաքների բնակչության թիվն ու զբաղմունքը, նշանավոր վանական ու քաղաքացիական շինությունները և այլն»⁴: Իրականությունն այն է, որ ԺԵ դարից հետո ուխտագրությունները ոչ միայն չեն դադարում գրվել, այլև առավել լայն թափով շարունակվում են հաջորդող ժամանակներում: ԺԵ-ԺԸ դարերի ուղեգրությունների նյութը գերիշխող մասով վերաբերում է ուխտագնացություններին: Այլ խնդիր է, որ դրանց նկարագրությունները, ասենք՝ ԺԷ դարում, դառնում են ավելի բազմաբովանդակ՝ ներառելով կյանքի այլ ոլորտներ: Բացի այդ, մինչև ԺԵ դարը (Երզնկացի) բացի ուխտագնացականից մենք ունենք նաև ուսումնական ու առևտրական բնույթի ուղեգրական երկերի նախատիպեր, որոնք անսուսերով, Խաչիկյանը գրում է միայն այդ շրջանի ուխտագնացությունների մասին, և այն էլ՝ ոչ թե ուխտագնացական նկարագրությունների, այլ ընդամենը կատարված, բայց ոչ հեղինակների կողմից շարադրված ուխտագնացությունների նկարագրությունների:

Եթե ուղեգրությունների առաջին շրջանում Խաչիկյանը գետեղում է միայն ուղեգրական գործ չհեղինակած ուխտագնացներին, ուրեմն մինչև ԺԵ դարը իրեն անձանոթ են հայ ուրիշ ուղևորներ, որոնք այս կամ այն չափով և այս կամ այն ձևով անդրադարձել են իրենց ճանապարհորդության մանրամասներին: Փորձենք լրացնել այդ բացը:

Վերևում հիշված «Սարգիս Աբեղայի Ուղեգրությունը» հողվածում տեղ գտած անվանի պատմաբանի որոշ փաստական անճշտությունները հետագայում շարունակվում են: Հռոմի պապերի կողմից սրբերի շարքը դասված Միմեոն Հայր, Դավիթ Հայկազնը և Լևոնը ուղեգրության տեսակի ակունքներին անդրադարձած հայ գրականագետները համարվում են հայկական ուղեգրական գրականության սկզբնավորողներ: Այսպես, «Հայ գրականության պատմություն» ռուսերեն բուհական դասագրքում կարդում ենք. «Հայ միջնադարյան գրականության մեջ ուղեգրական ակնարկների առաջին նմուշները հանդիպում են դեռևս 10-12-րդ դարերում, դրանց հեղինակներն են Սիմեոն Հայր (10-րդ դար), Դավիթ Հայկազնը (12-րդ դար), Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն 5-րդը»⁵: Բառացիորեն նույնը կրկնում է Ս. Հայրապետյանը. «Ուղեգրությունների ամենաինչև օրինակները հայ գրա-

կանուրեան մէջ հանդիպում են 10-12-րդ դարերում՝ Միմեոն Հայեցու (10-րդ դ.) եւ Դաւիթ Հայկազնի (12-րդ դ.) գործերում»⁶: Հ. Բախչինյանը նույնպէս գտնում է, որ ուղեգրոյցի տեսակը «հայ իրականութեան մէջ սկզբնավորվել է դեռևս 10-12-րդ դարերում»⁷: Չնայած անուններ չեն տրվում, բայց հավանաբար գրականագետի աղբյուրը վերոհիշյալ դրոյքներն են: «Հայ գրականություն» դպրոցական դասագրքում Բախչինյանը այլ կերպ է գրում նշված հարցերի մասին. «Առաջ են գալիս (15-18-րդ դարերում- Մ. Ս.) գրական նոր տեսակներ, ինչպես ուղեգրություններն ու օրագրությունները...»⁸: Ուղեգրոյցի տեսակի սկզբնական դրսևորումներին անդրադարձել է նաև Բ. Բարսեղյանը⁹: Նա ևս, ինչպէս նախորդ դեպքերում հիշված գրականագետները, վստահությամբ է վերաբերվել իրենից առաջ գրված ուսումնասիրությանը և առանց լրացուցիչ ստուգման միևնույն հերթականությամբ կրկնել է Ն. Ալիմյանի՝ Միմեոն Լեհացու Ուղեգրոյցի առաջաբանում¹⁰ բերած ուղեգիրների շարքը՝ Հեթում պատմիչի գլխավորությամբ: Բանն այն է, որ Կիլիկիայի գորահրամանատար, Կոռնիկոս բերդաբաղաթի տեր Հեթումը (եվրոպական շրջաններում Հայտոն Հայ անվամբ հայտնի) իր «Ծաղիկ պատմութեան արևելեան աշխարհի» գիրքը շարադրել է հին ֆրանսերենով, որին տիրապետելու մասին է վկայում ֆրանսերենից կատարած «Քրոնիկոնի» թարգմանությունը¹¹: «Վասն հայերէն բնագրի չիք յիշատակ...», գրում է այդ գործի հայերեն թարգմանությունը իրականացնող Մ. Ավգերյանը¹²: Հակված ենք կարծելու, որ հայերեն բնագիր գոյություն չի ունեցել: Ահա ինչու Հեթումի գրվածքը հայ գրականութեան փաստ չէ և պատկանում է ԺԳ դարի ֆրանսիական պատմագրոյցանը: Պակաս կարևոր չէ մեկ այլ հանգամանք. թեպետ հեղինակն անձամբ եղել է նկարագրվող երկրների մեծ մասում և այդ մասին չի մոռանում հիշել իր երկում, բայց ևայնպէս Հեթումի գործը ոչ թե ուղեգրություն է, այլ պատմական ու աշխարհագրական հարուստ գիտանքներով լի մի երկասիրություն:

Գրականագետների մի խումբ էլ հայկական ուղեգրական հուշարձանների առաջին օրինակ են համարում 12-րդ դարում անհայտ հեղինակի գրած «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» բնագիրը: Այս տեսակետը արտահայտվել է Մ. Դարբինյանի գործում¹³, ապա Հ. Սահակյանի կողմից փճարկվել է՝ դիտվելով որպէս «ոչ թե ուղեգրություն, այլ վաճառականների համար գրված ուղեցույց»¹⁴:

Ուղեգրությունների նախնական, մինչև վերջ չկազմավորված փճակի վերաբերյալ դիտողություններում ճիշտ դիրքերի վրա է կանգնած Կ. Դանիելյանը¹⁵, որը ուղեգրական առաջին նմուշ է համարում Մովսէս Խորենացու «Հայոց պատմության» երրորդ գրքի ԿԲ գլուխը: Այս կարծիքը տվելի ուշ իր արտահայտությունն է գտնում Հ. Սահակյանի «Միմեոն Լեհացու Ուղեգրությունը» հոդվածում¹⁶:

Ի՞նչ է նկարագրում Պատմահայրը: «Ի վարդապետան, յինքն եւ

ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային զարդոյ» զլիսում Խորենացին պատմում է իր ուղևորության մասին Եղեսիայով և Պաղեսա-
ահնով դեպի Ալեքսանդր Մեծի հիմնած քաղաքը: Հատկապես Ալեքսան-
դրիան արժանանում է մանրամասն նկարագրության: Խորենացին քա-
ղաքի հեթանոսական անցյալին հակադրում է քրիստոնեական ներկան,
որի մասին տալիս է ակամատեսի վկայություններ: Այնինչ անցյալի
պատկերը վերակենդանացնում է իրեն քաջ ծանոթ «Պատմութիւն Աղեք-
սանդրի Մակեդոնացոյ» վեպից քաղված տեղեկություններով. «Սորա
առաջի այժմ ոչ անցեալ նստի Պոլտենիոս հինգակատար զագաքամբն,
զանսպառ աշխարհի պատելով, այլ Մարկոս արետարանչական քարո-
զութեամբ և ոչ վիշապագին դիցագնական գերեզմանք, այլ սրբոցն վա-
յելչանան վկայարանք»¹⁷: Նաև կան ուշագրավ հաղորդումներ Եգիպ-
տոսի բնակլիմայական պայմանների, Նեղոս գետի մասին և այլն:

Հոմերոսի «Ողիսական» պոեմում¹⁸, Կեղծ-Կալիսթենեսին վերա-
գրվող «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյն» վեպում¹⁹, ինչպես
նաև «Նոր կտակարանի» Պողոս առաքյալի ճանապարհորդությունները
ներկայացնող դրվագներում²⁰ հեղինակային սովորական երրորդ դեմք
ունեցող պատմւմը ընդմիջվում է առաջին դեմքի շարադրանքով, և հերոսը
պատմում է իր ուղևորությունների մասին: Մովսես Խորենացին, որի
աշխարհայացքը, կարող ենք վստահ ասել, ձևավորվել է այդ երեք գրա-
կան մեծ կոթողների տիրական ազդեցությամբ, հիշված հնարանքը (որի
նպատակը հավանաբար եղել է կոտրել գրական հյուսվածքի միա-
պաղաղությունը) օգտագործեց իր երկում բոլորովին նոր ձևով՝ ինքնա-
կենսագրական փաստը դարձնելով ստեղծագործության մաս: Եթե նա-
խորդ դեպքերում ճամփորդական հատվածների նմանությունը ուղեգրու-
թյուններին միայն ձևային բնույթ ունի, ապա Խորենացու պարագայում
պատկերը ուրիշ է: Խորենացին նկարագրում է իր այցելած իրական
վայրերը, մասամբ արտահայտելով տեսածի հանդեպ իր վերաբեր-
մունքը: Իսկ նշված գործերում հեղինակները ոչ թե իրենք են պատմում
իրենց մասին, այլ հերոսներին են պատմել տալիս նրանց գործերի
վերաբերյալ: Այդ երկերի պատմական միջուկը պարուրված է երևա-
կայական կեղևով: Դրանցում առկա կրոնական, առասպելական և հրա-
շապատում հանգամանքները հեռացնում են այդ դրվագները ուղեգ-
րության տեսակից, որին բնորոշ է իրականի (տեսածի) և գրականի
(տեսածը արտացոլելու կերպերի) միաձուլման միտումը, բայց ոչ երբեք
գրականի, նաև հորինովիի գերիշխանությունը իրականության վրա:
Վերջապես, մի դեպքում գործ ունենք գրական-պատմական, մյուս դեպ-
քերում՝ գրական-ոչ պատմական ստեղծագործությունների հետ: Հե-
տևաբար, Զերթողահոր պարագայում առաջին դեմքով ներկայացվող

պատումը չունի գրական հնարանքի արժեք, ինչը տեսնում ենք նախորդ դեպքերում: Նա գրում էր Հայոց պատմությունը, և, երբ ինքն է մաս կազմում այդ պատմության, բնականորեն գրում է առաջին դեմքով: Ավելի հավանական է թվում այն վարկածը, ըստ որի Խորենացին քննված դրվագը հեղինակել է երիտասարդ տարիքում, այնուհետև դրել «Հայոց պատմության» մեջ: Այդ ենթադրության հիմքը մեզ հետաքրքրող հատվածի լեզուն ու ոճն է, որ հունարան հայերենի ցայտուն արտահայտություն է: Ստ. Մալխասյանցը չի ընդունում այդ կարծիքը՝ փոխարենն առաջարկելով իր ենթադրությունները²¹:

Սեր կարծիքով առանձին լուրջ կովաններ չկան կասկածի տակ առնելու վերոհիշյալ գլխի՝ սկզբնապես անկախ գործ լինելու հնարավորությունը: Պատմահայրը, կարծում ենք, գրել է իր ուղեգրական նոթերը կամ ուղեգնացության ընթացքում, կամ շատ չանցած դրանից, այնուհետև «Պատմությունը» շարադրելիս համապատասխան տեղում գործածել է վաղօրոք գրի առածը, որը «Հայոց պատմության» հյուսվածքում էլ, կարծես, պահպանել է իր անկախ, ինքնուրույն գործածության նախնական արժեքը:

Մեզ համար ամենից կարևորն այն է, որ գործ ունենք ուղեգրական հնագույն հատվածի հետ, որ համապատասխանում է տեսակի բոլոր պահանջներին: Թող որ այդ տեսակով քնորոշվում է ոչ թե ամբողջական մի գործ, այլ այդ գործի միայն մեկ հատվածը: Դա էլ բավական է եզրակացնելու համար, որ, ինչպես հայ միջնադարյան մատենագրության մի շարք տեսակներ, ուղեգրությունն էլ իր նախնական ձևով սկզբնավորվել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկասիրությանից:

Ժամանակագրական առումով հաջորդ երկը, որտեղ ուղեգրական հատված ենք տեսնում, Եղիշեի՝ Տիրոջ այլակերպության մասին ճառն է, որի վերջին մասը՝ «Սրբոյն Եղիշէի վարդապետի ասացեալ Թաբոր լերին» վերառությամբ²², վերաբերում է հեղինակի՝ Թաբոր լեռ այցելությանը:

Հենց սկզբից Եղիշեն ընթերցողին տեղյակ է պահում, որ իր նկարագրությունները սեփական դիտումի արդյունք են. «Վասն լերինն զեղեցկութեան և վայրացն վայելչութեան եթէ կամիք յխորժելով ունկն դնել, սակաւիկ մի երկրորդեցից գտեսիլ ցանկալի տեղոյն, լսելով յԱւետարանէն զիսւթ ամէնէքին. բայց մեր անձամբ իսկ հասեալ և աչօք մեր տեսեալ ոչ միայն առանձին, այլ բազում ընկերօք սրբովք»²³:

Լեռան նկարագրությունը տեղադրությունից սկսելով, Եղիշեն պարզ գրաբարով պատմում է բնության տեսարանների, զագաթ տանող ճանապարհի, լեռան գլխից բացվող պատկերների, երեք եկեղեցիների, նրանցում պաշտոնավարող հոգևորականների մասին և այլն:

Այս շրջանի ուղեգրական բնույթի ստեղծագործությունների հենքի վրա Եղիշեի գործը բացառիկ է նախ և առաջ նյութի մանրամասն, համակողմանի, բայց և առանց ավելորդաբանությունների մատուցմամբ, գեղեցիկ հայերենով արտահայտված ոճական պարզ միջոցներով, որով հետագայում բնութագրվելու են գրեթե բոլոր հայկական ուղեգրությունները:

Եղիշեից հետո Երուսաղեմի հայկական 70 (որոշ ձեռագրերում 72) վանքերի ու եկեղեցիների մասին է դարձել Է Անաստաս վարդապետը (Հերապոլսեցի) Պահլավունի Համագասպ Կամսարականի խրնդրանքով: Վերջինիս Անաստասի «Կասն վանորէից, որ ի Ս. քաղաքն Երուսաղեմ» կոչվող ցանկը²⁴ պետք է եղել իբրև ուղեցույց՝ Երուսաղեմում և նրա շրջակայքում կողմնորոշվելու համար:

Ի՞նչն է կարևոր Անաստասի համար: Նախ՝ թե ով է շինել ավել սրբավայրը, ապա՝ որ սրբի պատվին է կառուցվել, այնուհետև՝ որտեղ է գտնվում և, վերջապես՝ այժմ ում է պատկանում:

Ընդհանրապես, Անաստասը սեղմ ու կարճ է գրում, ինչը առավել հատուկ է ուղեցույցներին: Նաև լեզուն պարզ է ու հասկանալի: Դրա համար էլ «Երևակի» հրատարակիչները չեն տեսել ցանկը աշխարհաբարի վերածելու անհրաժեշտություն. «Բնագիրնիս թելւտ գրաբար է, բայց պարզ պատմական (կարդա՛ պատմողական- Ա. Ս.) ըլլալուն համար աշխարհաբարի թարգմանել չուզեցինք»²⁵:

Բազմաթիվ վանքերի առիթով հեղինակը արձանագրում է, որ դրանք ավերակ են կամ գտնվում են անհավատների ձեռքում, որ, ի վերջո, մույն բանն է. «Սիւնեաց վանքն, որ յանուն Սրբոյն Գէորգայ, [գոր Տաճիկք քակեցին]»²⁶: Սա մի մտախիլ է, որ հետագա հայ ուղեգիրների համար դառնում է խիստ բնորոշ. նրանք ցավով ու դառնությամբ են գրում մահմեդականների ձեռքը մատնված քրիստոնեական սրբությունների մասին՝ նաև, ի տարբերություն Անաստաս վարդապետի, արտահայտելով իրենց հուզական վերաբերմունքը: Այս հանգամանքը աչքի առջև ունեցած Ղ. Ալիշանը, որ ընդհանուր առմամբ Անաստասի գործը համարում է «վանորէից չոր ցանկ»²⁷, չի կարող միաժամանակ չընդունել իրողությունը այն ներգործության, որ ընթերցողի վրա ունենում է ներկա գրվածքը. «Իբրև հեռաոր աշխարհի մէջ մեր նախնի հարց և իշխանաց բարեպաշտութեան և առատածեռնութեան յիշատակարանք՝ անշուշտ ախորժելով կարդացուին վանորէիցս և շինողաց անուանք»²⁸:

Նմանատիպ մի ցանկ էլ Վահան Մամիկոնյանի պատվերով Անաստասը գրել է Երուսաղեմում Աղվանքի նախարարների հիմնադրած տասներկու վանքերի ու եկեղեցիների մասին: Այդ երկը, որ ունի նախոր-

դին շատ նման կառուցվածք և բովանդակություն, մեզ է հասել Մովսես Կաղանկատավացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկասիրության երկրորդ գրքի վերջին՝ ԾԲ գլխում («Անուանք վանորէից, որք յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զորս ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան՝ առեալ ուսաք»)՝:

Մովսես Կաղանկատավացու գրքում մեզ հետաքրքրում է նաև վերոհիշյալ գլխին նախորդող գլուխը այսպիսի վերնագրով. «Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցեաց շինուածք, թուով և չափով հիմնադրելոց. գտառյզն գտցես աստանօր, որում ականատես լեաք»³⁰: Մա ասես տեղագրական բնույթի մի ուղեգրությունից հատված է (անավարտության տպավորություն է թողնում), որ ընդհանուր գծերով նույնական է Երուսաղեմի ուղեգրական հետագա նկարագրությունների հետ: Այստեղ ներկայացված են Քրիստոսի ու Աստվածածնի գերեզմանների, Սիոն, Կաթողիկե և Գողգոթայի եկեղեցիների, Հարության տաճարի և Փրկչի արյամբ սրբազործված ուրիշ վայրերի տեղագրությունը, միմյանց նկատմամբ հեռավորությունները, կառույցների արտաքին մանրամասները, չափերը և այլն:

Միջնադարյան աշխարհագրական ժողովածուներում է պահպանվել անհայտ հեղինակի (գիտենք միայն, որ վաճառական է) գործը, որ նույնպես ուղեցույց է: «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» զբրվածքում (ԺԲ դար) կան հետաքրքիր ավյալներ պարսկական ու հնդկական քառասունից ավելի բնակավայրերի, նրանց միջև եղած հեռավորությունների, նրանց առևտրա-անտեսական հարաբերությունների և արտադրական հնարավորությունների մասին:

Մեզ հասած բնագիրը թերի է (պակասում են սկիզբն ու վերջը, որոնք թերևս հեղինակի հետ կապված շատ հարցեր պարզեին): Պահպանված միջնամասում հեղինակի անվան, ծննդավայրի, ծննդյան ժամանակի, ճամփորդությունն սկսելու և ավարտելու քվականների մասին հիշատակումներ չկան: Թեև հեղինակն իրեն չի ներկայացնում նկարագրվող տեղերում, բայց հստակ տեսանելի է, որ նրա լավ ծանոթությունը Հնդկաստանին և Պարսկաստանին սկսվել է անձամբ այդ երկրներում շրջագայելուց: Նրա նկարագրությունների մանրամասնությունը, նաև այն, որ երբեմն նա հաղորդում է տեղեկություններ, որոնք, պարզ երևում է, որ ինքը լսել է տեղաբնակներից, հիմք են տալիս հաստատելու հեղինակի, ինչպես ասացինք, ականատես և ճանապարհորդ լինելու հանգամանքը: Հեղինակի ներկայությունը անուղղակի կերպով երևում է նաև հետևյալ նախադասություններում. «Ի Պիմնճու երթայ ճա-

նապարհորդն ի Պնիփոքին ի տասն ատուր...»³¹, կամ՝ «Բաղաք է Տեպուլ և մայրիքն դժուար և ճանապարհքն և կապըննի և լեռինք» (322):

Հեղինակն ակնհայտնի կերպով եղել է առևտրական: Այս կարծիքը կազմվում է այն բանի հիման վրա, որ բնագրում մեծ թիվ են կազմում զանազան ապրանքների մասին տվյալները (որտեղ՝ ի՞նչ կարելի է ձեռք բերել): Օրինակ, Մեյլան (Յեյլոն) կղզուն անդրադառնալիս՝ հեղինակը գրում է քանկարժեք քարերի տեսականու մասին, որ արտադրում և արտահանում է կղզին (324): Նկարագրություններում կարևոր տեղ է հատկացված քաղաքների բնակիչների ազգային կամ կրոնական պատկանելության բացահայտումներին: Հատուկ նշվում է, թե ինչ լեզվով են խոսում տվյալ քաղաքի բնակիչները, որ վարչական բաժանման մեջ է քաղաքը, ինչպիսի սովորույթներ ունեն տեղացիները և այլն:

Մեծ հետաքրքրություն են առաջացնում բերված փոքրիկ ավանդությունները, որոնք վերաբերում են Ադամ նախահորը (324, 326): Հետագայում ավանդությունների ներմուծումը ուղեգրական երկի հյուսվածք լայն կիրառություն է գտնում, դառնում ուղեգրությունների մի կարևոր կողմը:

Գործի խորագիրը լրիվ չի արտահայտում նրա բովանդակությունը: Վերնագրից դատելով, այն պետք է որ Հնդկաստանի ու Պարսկաստանի քաղաքների պարզ ցանկը պարունակեր, բայց, ըստ էության, ավելին է, քան սովորական մի ցուցակ, թեպետ գրված է թվարկման ձևով:

«Անուանք քաղաքաց» - ին իր կառուցվածքով նման է Նիկողայոս Ալսերքմանցու ուղեցույցը՝ «Այս են Տնօրինական սուրբ տեղիքն որ է յԵրուսաղէմ. գոր գրեցից սակասս ի բազմացն ես ծառայս Աստուծոյ Նիկողայոս Եպիսկոպոս» խորագրով: Բնագիրը 1483 թվականից ոչ շատ առաջ գրչագրված մի ձեռագրից հանել և հրատարակել են Մյսիքարյանները նախ «Բազմավէպի» էջերում³², ապա առանձին գրքով՝ Անաստաս վարդապետի ցուցակի հետ միասին³³: Այս գործը, ուղեցույց լինելով, ինչ-ինչ գծերով մտնում է ուղեգրության տեսակին: Չնայած այստեղ նույնպես հեղինակը անձամբ իրեն չի ներկայացնում, փոխանակ ասելով «զնացի, տեսա», նա գրում է «զնաս, տեսնես»: Դրանով նա ուղղակի դիմում է ընթերցողին՝ նպատակ ունենալով դյուրացնել նրա գործը Երուսաղեմում: Դա ուղեցույցների գործնական կիրառության արտահայտությունն է, որը նաև ուղեգրությունների նշանակության մի էական մասն է: Օրինակ, Սիմեոն Լեհացին նույնպես իր Ուղեգրությունը գրել է ճանապարհացույց-տեղեկատու ծառայելուն միտված նպատակադրությամբ. «... զի յօգուտ և շահաւետ լիցի ուխտատուրաց և շրջող անձանց»³⁴: Բայց, հասկանալի է, նրա գործը չի սահմանափակվել միայն այդ դերով

ու նշանակությամբ: Այս իմաստով ուղեցույցները ուղեգրությունների նախնական վիճակ կարելի է համարել:

Այսբերմանցին ամեն մի կարևոր ուխտատեղի (նա խոսում է 120-ից ավելի սրբավայրերի մասին) նկարագրում է դրա հետ կապված մեկ, ամենից էական գծի հիշեցումով. «Եւ գնա ի Նազարէք, ուր հրէշաակապետն աւետեաց Կոսիմ: Ի լեռն՝ ուր գահալէժ արարին զՏէրն Հրէայքն...: Թափորական լեռն, ուր Քրիստոս պայծառակերպեցաւ»³⁵ և այլն:

Նիկողայոս եպիսկոպոսի ուխտագնացությունից ընդամենը մի բանի տարի անց (1489-ին) իր մեծ ճանապարհորդությունն է սկսում Մարտիրոս Երզնկացին՝ հետագայում գրելով իր նշանավոր Ուղեգրությունը:

Քննարկված ստեղծագործությունները տարբերվում են միմյանցից իրենց նշանակությամբ, գեղարվեստական արժեքով, կառուցվածքով ու ձևով: Հեղինակներից յուրաքանչյուրը, կարծես, դավանել է ուղեգրական նկարագրության մեկ, միայն իրեն հատուկ սկզբունք, որով առաջնորդվել է երկը գրելիս: Դա ուղեգրական տեսակի զարգացման բարդ շրջան է, երբ, քվում է, փորձ էր արվում գտնել ուղեգրություններին բնորոշ համեմատաբար կայուն մի ձև: Այդ գործերը, համեմայն դեպս, միավորվում են մի բանում. դրանք գրվել են ուղևորությունների առիթներով, ուղեգրության տեսակի սկզբնական մոտիվներ են, մի տեսակ, պատահիկներ, առանց որոնց, սակայն, դժվար է ամբողջացնել հայկական ուղեգրությունների պատմությունը, նրանց զարգացման ուրույն ընթացքը:

Ինչ խոսք, Մարտիրոս Երզնկացիով սկսվող շրջանի և խնդրո առարկա գրվածքների թուցիկ համեմատությունն իսկ բացահայտում է առաջինի բովանդակային ու ձևային հարստությունը, այդ շրջանի ուղեգիրների առավել լայնախոհ վերաբերմունքը տեսածի հանդեպ, ի հայտ է բերում մինչև Մարտիրոս Երզնկացի ընկած շրջանի ուղեգրություններում նկարագրվող իրականության որոշ իմաստով միակողմանի պատկերումները և այլն: Բայց վերլուծված գործերը մեզ հետաքրքրում են հայ մատենագրության մեջ ուղեգրության տեսակի սկզբնավորմանը նախորդած շրջանը պատկերացնելու տեսակետից:

Հայ մատենագրության մեջ մինչև Սիմեոն Լեհացու Ուղեգրության հրապարակումը³⁶ նույնասեռ գրվածքների շարքում իր բազմազան հատկանիշներով առանձնանում էր Մարտիրոս Երզնկացու Ուղեգրությունը: Ավելին, որոշ բանասերներ հայկական ուղեգրական հուշարձանների մասին զաղափար են ունեցել՝ իմանալով հենց միայն Մարտիրոսի անունը: Օրինակ՝ Հ. Բյուրայանը «Ասիոյ խորերը հայ մը 1602-ին» վեր-

նագրված հողվածում գրում էր. «...Մերայնոց մէջ նման դէպքեր (ուղեգրություններ և օրագրություններ- Ա. Ս.) հագուադէպ են: Ինձի ծանօթ է միայն Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացոյ ուղեգրութիւն իր կատարած ճամբորդութեան յԵւրոպա 1489-1492-ին»³⁷: Մինչդեռ այս առոյթը գրելու միջոցին հայագիտական շրջաններին արդեն ծանոթ էին Փիրգատի, Օգոստինոս Բաջենցի, Դավիթ Եվդոկիացու, Խաչատուր Թոխաթցու, Շահնուրատ Բաղիշեցու ուղեգրությունները:

Մարտիրոս Երզնկացու անունն ու գործը բազմիցս զուգորդվել են իր դարի նշանավոր երկրախոյզ ուղևորների աշխարհագրական հայտնագործությունների հետ: Մեզ համար, սակայն, ներկա ուղեգրությունը կարևոր է ուրիշ առումով. Մարտիրոսին էր վիճակված դառնալու հայ առաջին ուղեգիրը, որը հեղինակել է ինքնուրույն, մյուս տեսակների ժանրային սահմանները չմտնող մի ուղեգրություն: «Ուղեգրությունն իբրև ուրույն գրական տեսակ հայ իրականության մեջ առանձնացավ ու ձևավորվեց...»³⁸ Երզնկացու շնորհիվ:

Մարտիրոս Երզնկացու մասին կենսագրական տվյալներ չեն պահպանվել, եթե իհարկե, նկատի չունենանք Ուղեգրության մեջ առկա փաստերը, որ վերաբերում են նրա կյանքի՝ ճամփորդություն կատարելու տարիներին (վեց տարուց մի փոքր ավելի), հոգևոր աստիճանին, ծննդավայրի կամ եկեղեցական պաշտոնավարության վայրի մասին հաղորդմանը: Հետաքրքիր է Ալիշանի՝ առանց արդյուրը մատնացույց անելու տված վկայությունը. «Այս բուականներէն (1491-97- Ա. Ս.) շատ տարիներ առաջ (թերևս 25 կամ 30) կը յիշուի նա (Մարտիրոս Երզնկացին, Ա. Ս.) նույնպէս եպիսկոպոս կոչմամբ և «Սպասատր Ս. Լուսատրչին Ս. Գերեզմանին..., որ գուցէ այն ատենէն կու փափագէր յաջողագոյն դիտմամբ՝ ճամփորդելու. և կատարեց փափագը՝ վայելչապէս»³⁹:

Մարտիրոս Երզնկացին հիմնականում երագում էր տեսնել գլխավոր առաքյալների գերեզմանները Հռոմում և ս. Հակոբի գլխատայալ մարմինը ամփոփող գերեզմանը Իսպանիայում: Այդ ցանկության մասին նա գրում է Ուղեգրության հենց սկզբում⁴⁰: Երկար դեգերումներից հետո, իր ուխտը ս. Հակոբոսի տաճարում կատարելով, Մարտիրոսը պիտի արձանագրեր. «ԶԱստուած ունէի ազնական, յոյժ աշխատեալ և նուադեալ հասայ յամէնարիինեալ և փառաւորեալ, տ/լ/եզերալոյս տաճարն և ի գերեզմանն սրբոյն Յակոբայ, ուր սուրբ մարմինն է ի քաղաքն ի Կալիցիայ: Բագում արտասուօք գփափագ սրտիս կատարեցի...» (108): Այսպես հագուորդ են ստանում մեր ուխտագնացի կրոնական զգացմունքները, սրտի տագնապները, որ հանգիստ չէին տալիս նրան հայրենի Երզն-

կայում (103), փոխարինվում են իր նվիրական բաղձանքին հասած ուխտավորի բերկրանքով, իսկ վերջնական արդյունքում հայ մասնագրությունը հարստանում է մի ուշագրավ ստեղծագործությամբ:

Ինքնին պարզ է, որ մինչև, Սարգիս Աբեղայի արտահայտությամբ, «Ըսպանիայ՝ սուրբ Յակոբայ աշխարհին» հասնելը Մարտիրոսը այցելում է նաև բազմաթիվ այլ սրբավայրեր, որոնք ընկած էին նրա ճանապարհին: Եվրոպական բաղաքներում Մարտիրոս եպիսկոպոսին մեծավ մասամբ հետաքրքրում էին այդ նշանավոր սրբավայրերը, որոնց կողքով նա երբեք անուշադիր չի անցնում, իսկ դրանցից առավել կարևորները մանրամասն ներկայացնում է: Բացի կրոնականից, նա կարճ ակնարկների ձևով գրում է այցելավայրերի կյանքի ուրիշ կողմերի մասին: Հաճախ հեղինակը մի կարճառոտ նախադասությամբ արտահայտում է այն էականը, որ ամենից ավելի բնորոշ է տվյալ վայրին: Այսպես ասած, «աշխարհիկ» բնույթի նկարագրություններում երբեմն առկա են այնպիսի գրառումներ, որոնք բնութագրական են ոչ միայն ներկայացվող տեղանքի համար, սակայն հեղինակի վրա տպավորություն են գործել, հետևաբար և դարձել են Ուղեգրության մաս: Սանթամարիա տ'Աբսում նրան գրելու արժանի են թվացել տաք ջրերի, իսկ Ֆրիբուրխում՝ այգիների առատության հանգամանքները (105): Սան Սեբաստիանում մարդիկ իր աչքին գեղեցիկ են երևացել, և նա հիշում է այդ մասին (107): Գալիցիայում, ըստ Մարտիրոսի, մարդ կարող է իր փնտրած ապրանքը գտնել, որովհետև ամեն ինչ վաճառվում է (108): Ընկուզաց աշխարհի մարդկանց (106), Պիսկայայի բնակիչների (107) և Հոլանի աշխարհում ապրողների (108) կերակրացանկում մեծ տեղ է բռնում ձուկը, ուստի Երզնկացին նրանց կոչում է «ձկնակեր» և այլն:

Սակայն էականը Մարտիրոսի նկարագրություններում կրոնական-ժիսական շինություններին վերաբերող հատվածներն են, այդ տեղերում պահվող սրբերի մատուցները, որոնց մասին ուխտագիրը պատմում է առանձնահատուկ սիրով ու ջերմությամբ: Երզնկացին հակիրճ տողերով, բայց անբաբույց հպարտությամբ է արձանագրում, որ ինքը տեսությանն է արժանացել այնպիսի մատուցների, ինչպիսիք են Աստվածածնի շապիկը Սանթամարիա տ'Աբսում (105), Հունվեսում գտնվող Քրիստոսի դաստառակը (106), Հիսուսի պատանքը, որ պահվում է Փոքերում (107) և այլն: Առավել մանրակրկիտ կերպով Մարտիրոսը նկարագրում է ս. Պետրոս և Պողոս առաքյալների, ս. Մարկոսի, ս. Հակոբի, տաճարները, Արտեմիայի մեծ եկեղեցին, ուր «Աստուածածինն ուսպաք ի դուրս քաշած և ըստ իր արժանեացն զարդարած և տէրն մեր Քրիստոս ի գրկին» (105), Սանճուան և Փարիզի Ավագ եկեղեցիները: Վերջինիս նկա-

բազրության մեջ շեշտվում է պատկերների բնականությունը, իրականին մոտ գտնվելը. «Եւ այլ ի վեր հանած է ԻԸ (28) բազաւոր բարն ի գրլխրնին և կանկներ են մարդու պէս...» (107): Իսկ Կալիցիայում Հակոբ առաքյալը «մարդապէս շինած է ի վերայ սուրբ սեղանին...» (108):

Երազային վայրերում գտնվելու բարեպատեհ առիթը հնարավոր է դարձնում բավարարելու Մարտիրոսի սերն ու հետաքրքրությունը եկեղեցական նշանավոր կառույցների հանդեպ: Այդ հասկանալիչները, միանալով նրա անհանգիստ ու շարժուն բնավորությանը, գոյացնում են ուխտավոր-հեղինակի մի ամբողջական կերպար, որը չի ուզում բաց թողնել և ոչ մի մատուռ առանց տեսնելու և, որչափ հնարավոր է, նկարագրելու: Հռոմում, օրինակ, նա մեկ օրում տասից-քսան «մեծ ու փառատը» եկեղեցի է այցելում, իսկ ամեն օր գնում է գլխավոր առաքյալների եկեղեցին: Մա սավում է Հռոմի մասին, բայց ընդհանրական է նաև այլ մեծ ու փոքր քաղաքների համար: Երզնկացու այդ վերաբերմունքը սրբությունների հանդեպ այնքան է մեծ, որ երբեմն (պատահականորեն կամ միատմնավոր կերպով) նա մոռանում է քաղաքի անունը՝ փոխարենը դնելով այն եկեղեցու անունը, որը գտնվում է այդ վայրում. «Օրինակ, գերմանական Էքս-լա-Շապել քաղաքը,- ինչպես նկատել է Վ. Հակոբյանը,- կոչում է Մանթա Մարիա, որովհետև այստեղ է գտնվում ս. Մարիամին նվիրված եկեղեցին, իսպանական Օվեյդո քաղաքը (Աստուրիայում) Ման-Սալվադոր եկեղեցու անունով կոչում է Մանսալվադոր և այլն» (98):

Ինչպես ասացինք, շատ ուղեգիրներ իրենց գրվածքներն անվանում են «Պատմութիւն»: Նույն կերպ է վարվում և Մարտիրոս Երզնկացին՝ ունենալով այն ներքին համոզումը, որ իր երկը ամենից ավելի հարմար է տեղավորել «Պատմութիւն» կոչվող տեսակի սահմաններում. «Այս է պատմութիւն ֆրոանկաց երկրին, գոր տեսեալ է Եզրնկացի Մարտիր/ոս եպիսկոպոսն. եւ գրեաց զքաղաքացն, գոր տեսի աչօք իմօք և գորպիսութիւն, որ է այսպէս.» (103): Անտարակույս, նա գրելիս օգտվել է ձեռքի տակ եղած գրառումներից, որ արվել էին ճանապարհորդության ընթացքում: Ասվածի վկայությունը նկարագրվող դեպքերի հաջորդականության խախտումներն են, որոնք ունեն նաև գրական հնարանքի արժեք: Այսպես, բերենք մի օրինակ. «Եւ հանդիպեալ բազում վնասակար զազանաց և հանդիպեցայ վանք (աղճատված բառ, որ իմաստով համապատասխան է զազանին- Ա. Ս.) մի մեծ, որ ասացին թէ Ի (20) հոգին երախտվ չի կարեր անցանիլ՝ դու ինչպէս ազատեցար» (108): Վտանգից ազատվելու վերաբերյալ զարմացում մեր ուղեգրին հայանել են հետո, Հոլանդիայում, սակայն իր խոսքի տպավորությունը պահպանե-

լուն հետամուտ, Երզնկացին հետագայում ասվածը օգտագործում է վաղօրոք, ոչ իր ճիշտ տեղում:

Մարտիրոս Երզնկացին բազմիցս գրում է այն դժվարությունների մասին, որոնք նրան ուղեկեցել են երկար ու վստահաշատ ուղևորության ընթացքում: Շատ դեպքերում հեղինակը չի մանրամասնում իր խոսքը և բավարարվում է «խիստ դժարութեամբ» (106), «բազում աշխատութեամբ» (107) և նմանատիպ ընդհանուր արտահայտություններով: Ուղեգրության վերջվածքում նույնպես՝ գտնում ենք իրեն հետապնդած դժվարությունների մասին հիշողություն, որ ամփոփող նշանակություն ունի: Երզնկացին հիշում է. «...եկեալ յԱնբանիա մտա նա և բազում փորձանաց դիպա, որ ի մահուն յաժարեցայ և ոչ զայն վիշտ քաշէի» (110): Փորձությունների հաղթահարման պատկերումները ընթերցողին օգնում են հասկանալու Մարտիրոսի կերպարի այլևայլ գծերը՝ անկոտրում կամքն ու հավատի մեծությունը: Նույն ուսուցական խնդիրների հաջող լուծմանը իրենց նպաստն են բերում նաև քննվող գործի լեզուն ու ոճը, խոսքի կերտման սկզբունքները:

Մարտիրոս եպիսկոպոսի լեզվաոճական համակարգի յուրահատկությունները ամենից առաջ և ամենից շատ երևում են իր «պարզ ու անսեքեւեք ձևին մէջ...»⁴¹: Հեղինակը պատումը կառուցում է տպավորիչ մանրամասնություններով և հիշվող համեմատություններով: Այդ ամենի շնորհիվ նրա խոսքը դառնում է սահուն, զրվածքի ընթերցանությունը՝ հետաքրքրական: Օրինակ, ուշագրավ ձև է գտնված Փարիզի մեծությունը ցույց տալու համար. «Եւ քաղաքն խիստ մեծ և զարմանալի և Բ(2) գետ կու մտնէ ի մէջն և կէսն ի դուրս չի ելնուր» (107): Դուրսին է նկատել, որ Մարտիրոս Երզնկացու և նրանից հետո ստեղծագործած մյուս ուղեգիրների շատ համեմատությունների համեմատելի կողմը ծավալն է: Նրանց զարմանք ու հիացմունք է պատճառում տաճարների, քաղաքների, գետերի մեծությունը:

Ընդհանրապես, Մարտիրոսին բնորոշ է ներկայացվող առարկաների չափերի ճշգրիտ արտացոլման միտումը: Այդ մասին գրել է Ալիշանը՝ նկատի ունենալով Իտալիային վերաբերող դրվագները⁴²:

Մարտիրոսի նկարագրությունների ճշմարտացիությունը այս անգամ արդեն ընդհանուր դիտակետով հաստատում է Բ. Սարգիսյանը՝ Ուղեգրությունը պարունակող Ճառքնոցիքը նկարագրելիս, դիտելով, որ մեր ուղեգիրը «...կու տայ համառօտ՝ բայց ճիշդ նկարագիր տեսած քաղաքներուն»⁴³: Մարտիրոսը չի բավարարվել տեսածով. նա շատ բան իմացել է հարցումներ անելով (105): Նաև հաճախ ինքն է չափումներ կատարել («... և Գ (3) քիզ չափեցի զլանքն..., էջ 106):

Հեղինակը երբեմն ուշադրություն է դարձնում այնպիսի մանրա-

մասների վրա, որոնք օգնում են ամբողջացնելու ասելիքը: Այս իմաստով տիպական է, օրինակ, Վենետիկի ս. Մարկոսի եկեղեցու նկարագրությունը, որն իր ավարտում տեսքն է ստանում այսպես. «... ես ի // դրանն շատ ի վեր Գ (4) դեղին պղնձի. ձի, շինած և կանկնեցում մեծ մեծ և գԱ(1) Ա(1) ոտվին ի վեր են կալեր» (104): Մի, քվում է, աննշան մանրամասնի հաղորդում, և պատկերը ամբողջական է դառնում:

Երզնկացին կարողանում է ստեղծել ոչ միայն հետաքրքիր պատկերներ, այլև մարդկային հարաբերությունների ուշագրավ արտահայտություններ, կենդանի կերպարներ: Միջնադարյան արծակի գեղեցիկ նմուշ է, օրինակ, նավավարի հետ կապված միջադեպը, որտեղ պատումը զարգանում է տրամախոսության ձևով՝ համեմված ժողովրդական լեզվին բնորոշ կենդանի լիցքերով (109):

Ուղեգրության լեզուն առհասարակ ժամանակի խոսակցական լեզուն է, որը բավական հեռու է մատենագրական լեզվի կանոնարկված ձևերից: Ահա քե ինչու Բ. Մարգիսյանը «աղաւաղ» է համարում Մարտիրոսի գրելաճոճը⁴⁴, իսկ «Բազմավայի» հրատարակության ներկայացնող խոսքում կարդում ենք. «Մարտիրոս եպս. ի քով կպակսի գրական-պատմական ոճն ու լեզուական մաքրութիւնը»⁴⁵:

Մարտիրոսի դարձվածքները («Ով կարող է լեզվով պատմել» մոտավոր բովանդակությամբ և այլն) ժողովրդական ծագում ունեն: Հատկանշական է, որ փակագծում բերված դարձվածքի կիրառության հանդիպում ենք «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ» երկում (բնագիր Գ-ում, որ հենց «ժողովրդականացած տարբերակ» է). «... զի ոչ կարեն ընդ գրով արկանել զվայելչութիւն վայրիւն»⁴⁶: Մարտիրոս Երզնկացու շարադրանքում տարբեր եկեղեցիների նկարագրություններին հաջորդում են միևնույն իմաստով, բայց տարբեր լեզվական միջոցներով հատկանշվող հեղինակային յուրօրինակ անփոփոմները: Օրինակ, Հռոմին հատկացված դրվագի վերջում հեղինակը հարում է. «... ո՞վ կարէ պատմել լեզուաւ զփառաւորութիւն սուրբ եկեղեցեացն և քաղաքին» (104):

Այս կադրապարի օգտագործումներ շատ են հանդիպում նաև հետագայի ուղեգրություններում: Նմանօրինակ մի շարք դեպքերում Մարտիրոսը կարծեք դիտմամբ մինչև վերջ չի հասցնում նկարագրությունը:

Այդ, ներկա հորջորջումով, քերասությամբ կարծեք Երզնկացին ուզում է ասել. լեզվով անհնար է պատմել, աչքով պետք է տեսնել: Եվ հեղինակը ձգտում է հնարավորին չափ ընթերցողին տեսանելի դարձնել իր տեսած արվեստի հրաշալիքները: Լինելով Վերածնության շրջանի Եվրոպայում, Մարտիրոսը ամենուր տեսնում, գնահատում և պատկերում է գեղեցիկը: Առանձնապես գրական ձիրքով են վերարտադրված եկեղեցի-

ների նկարագրումները, որոնք ինքնին Վերածննդի արվեստի գլուխգործոցներ են: Այդ նկարագրությունները մի առանձին շուր են հարորդում Ուղեգրությանը:

Մարտիրոս Երզնկացուն է պատկանում հայ գրականության մեջ ուղեգրության տեսակը «հայտնագործելու» պատիվը, որով մեկընդմիջտ ապահովվում է նրա կայուն տեղը հայ մատենագրության անդաստանում:

Սարգիս Աբեղայի Ուղեգրության բնագիրը Երևանի Մատենադարանի ք. 9832 ձեռագրից հրատարակել է Լևոն Խաչիկյանը⁴⁷: Նրա կարծիքով Սարգիս Աբեղան ծնված պետք է լինի Բարձր Հայքի Երզնկա գավառում և իր եկեղեցական պաշտոնավարությունը պետք է որ կատարելիս լիներ ս. Կիրակոսի վանքում, որտեղ միաբան էր մահ Մարտիրոս Երզնկացին, որի ուղևորությունից շուրջ 100 տարի անց (1587 թ.) իր ուղեգնացությունն է սկսում Սարգիս Աբեղան՝ Մարտիրոսի երթուղիներով ճամփորդելով մինչև 1592 թիվը:

Մարտիրոս Երզնկացու ուղեգծին գրեթե համապատասխանում են Սարգիս Աբեղայի ճամփակետերը: Սակայն նույնական են մահ ամբողջական հատվածներ (Վենետիկի, Հռոմի, Անվերսի և Փարիզի, Մանթանարիա տ'Աքս եկեղեցու նկարագրությունները), որոնք, ինչպես նկատել է Լ. Խաչիկյանը, բանաբաղել է Սարգիս Աբեղան:

Եթե վերոհիշյալ հատվածները նույնությամբ վերցված են Երզնկացուց, ապա մի շարք դրվագներում էլ ընդամենը երևում է Մարտիրոսից կրած ազդեցությունը: Այդպիսին է, օրինակ, երեցների միջնորդությամբ նավապետի կողմից նավ մտելու թույլտվություն ստանալու դրվագը, որը, ճիշտ է, ունի առանձին բանաձևեր, որ տառացիորեն առնված են Երզնկացուց, բայց իր ամբողջության մեջ Մարտիրոսի ընդարձակ հատվածի կարճառոտ տարբերակն է, յուրովի վերաշարադրումը ավելի ժողովրդական, պարզ ոճով: Սա էլ մի լրացուցիչ վկայություն կարող է լինել հրատարակչի այն պնդման, որ Սարգիս Աբեղան ծանոթ էր ս. Կիրակոսի վանքի ձեռագրատանը պահվող Երզնկացու ձեռագրին:

Չնայած այսպիսի մի քանի ոճական ընդհանրություններին, Սարգիս Աբեղան ունի իր ուրույն լեզվատճական համակարգը, որի առաջին բնորոշ կողմը սեղմությունն է, նախադասությունների կարճությունը, որոնցով էլ առանձնանում է ուղեգրության երկրորդ, Մարտիրոսից ներմուծումներ չպարունակող մասը:

Ի տարբերություն Մարտիրոս Երզնկացու, որի գրվածքում առկա են նշանավոր սրբավայրերի մանրամասն նկարագրություններ, Սարգիսը տալիս է հակիրճ, հարևանցիորեն արված պատկերումներ: Բացառություն է Գալիցիայի Սանտյագո դե Կոմպոստելլա քաղաքում

գտնվող ս. Հակոբի շիրմին այցելության հատվածը, ուր ընթերցողը կգտնի բավական հետաքրքիր տվյալներ: Հեղինակի համար այնքան կարևոր նշանակություն ունի ս. Հակոբոս առաքյալի գլխատված մարմինը հանգչեցնող վանքը, որ այդ սրբի անունով է կոչում ողջ Իսպանիան՝ «Ըսպանիա՝ Սուրբ Յակոբայ աշխարհին» (309): Մնացած դեպքերում գործում են միօրինակ կաղապարներ՝ «ուխտ արի», «ելա գնացի», «սրբոց մասեր կայ» և այլն: Շատ հաճախ են անցած քաղաքների անվանական քվարկումները՝ առանց նկարագրությունների («Ելաք զնացաք Կարմուհայ, Մարչինա, Մունայ, Էսիշայ, Գորտովայ», Լջ 310): Նաև բնութագրական է երթուղու պատկերումը անգամ առանց անունների, արտահայտված միայն անցած քաղաքների թվով («Ե (5) քաղաք ալ անցայ» (անդ):

Ներկա Ուղեգրության մի կարևոր առանձնահատկությունն էլ պատմական ակնարկներն են, որ նա անում է այս կամ այն այցելավայրի վերաբերմամբ: Դրանք, թեկուզ, միջանկյալ բնույթ են կրում, բայց, միա-հյուսվելով ընդհանուր պատումին, ամբողջացնում են նկարագրությունները պատմական որոշակի հենքով: Այսպիսին է, օրինակ, Փարիզի լիզայի և Հենրիկոս քագավորի՝ միջև ներքին կռիվների անդրադարձը: Այդ խառնակ շրջանում Մարգիսը Փարիզում էր և «քաղքին դովին վակեցին,- գրում է նա,- ես միս մն չի բացին, մեջն մնացաք մինչև բացին, շատ չար քաշեցի» (309): Մարտիրոսի նման մեր հեղինակն էլ գրում է այս և ուրիշ դժվարությունների մասին, որ ծառայել են նրա ճանապարհորդության միջոցին:

Ժամանակաշրջանի ուշագրավ դեպքերից Մարգիս Աբեղան հիշում է իսպանական «Անպարտելի արմաղա» նավատորմի խոտուակումը: Հետաքրքիր է, որ նա այդ պատմությունը վերապատմում է ոչ քե Իսպանիային վերաբերող հատվածներում, այլ իր ճամփորդության առաջին շրջանի ամփոփումից հետո:

Իսպանական Միվիլիա քաղաքի առջևով հոսող մեծ գետը ներկայացնելով, Մարգիսը գրում է այն նավերի մասին, որոնցով Իսպանիայի քագավորը, որը Ամերիկյան հայտնագործեց («Նոր Հունդուստան»), ռսլի է ներկրում իր երկիրը Ամերիկայից: Այդ առիթով հեղինակը պատմում է առասպելախառն մի պատմություն, որը զեղարվեստականություն է հաղորդում պատումի որոշ իմաստով չոր, թվերով բեռնավոր հյուսվածքին (310):

Մարտիրոս Երզնկացին իր կրած դժվարությունների շարքում երիցս նշում է իր լեզու չիմանալը: Մարգիս Աբեղան նույնպես տարբեր առիթներով արձանագրում է նույն բանը՝ կատարելով, սակայն, մի հավելում տվյալ լեզուն դժվարությամբ յուրացնելու վերաբերյալ: Յոթ անգամ մեր հեղինակը օգտագործում է միևնույն կաղապարը. «Բայց լե-

գու ոչ էի գիտել, խիստ չարչարեցայ մինչև տրվեցա...»: «Այսպիսով,- եզրակացնում է Լ. Խաչիկյանը,- ընդամենը 3-4 տարում մեր ճանապարհորդը, որ հայերենից բացի անշուշտ գիտեր քուրքերեն, գուցե եւ յունարեն լեզուները, սովորում է իտալերեն, գրեմաներեն, ֆլանդրերեն, անգլերեն, ֆրանսերեն, սպաներեն եւ պորտուգալերեն լեզուներով պարզ նախադասություններ կազմել, հարց ու փորձ անել, հասկանալ, թէ ուր պետք է գնալ, ինչ տեսնել եւ այլն: Ըստ այդմ, մեր ուղեգիրը լեզուագիտական մեծ ընդունակություններով օժտուած անձնատրուբիսն է եղել» (301): Բացառված չէ, որ այս դեպքում մենք գործ ունենք հնարավոր չափազանցումների հետ: Հայտնի է, որ Վերածնության շրջանում մեծ և կրթված չի համարվել այն մարդը, «որը չի կատարել հեռավոր ճամփորդություն, չի խոսել չորս կամ հինգ լեզվով...»⁴⁸: Մարգիս Աբեղայի Ուղեգրության մեջ առկա այդ չափազանցությունը ժամանակի Եվրոպայում շատ տարածված հիշյալ մտայնության արտահայտությունն է:

Ամեն դեպքում ներկա Ուղեգրությունը վկայում է հեղինակի զարգացածության, և այն բանի մասին, որ ուղեգիրը լավ գիտի Աստուածաշունչն ու հայրենի բանահյուսությունը: Հեղինակն իր խոսքը կառուցում է ժողովրդական բանարվեստին բնորոշ լեզվական ձևերով: Բանահյուսական տեսակների նկատմամբ Մարգիս Աբեղայի հետաքրքրությունը լավ երևում է ուղեգրության վերջնամասում, ուր հեղինակը ինքնուրույն չափածո տողերից հետո հիշում է իր սպրած զգացողությունները հարազատորեն արտահայտող ժողովրդական քնարի մի մնուշ, որ պանդխտության հայրեն է:

Ուղեգրության շարադրանքի ընդմիջարկումը ինքնուրույն կամ ժողովրդական չափաբերված խոսքով ԺԷ դարում մեծ չափերով գործածում է Սիմեոն Լեհացին:

ԺԶ դարում գրվել են նաև մի քանի մանր ուղեգրություններ: Դրանցից մեկը Մարտիրոս եպիսկոպոս Մարտինցու փոքր ուղեգրական երկն է, որը Վենետիկի ձեռագրատան ԺԴ Ավետարանի (ժամանակ 1236) մագաղաթյա պահպանակի վրա գրչագրել է հեղինակը՝ Մարտին քաղաքի հոգևոր առաջնորդ Մարտիրոս եպիսկոպոսը 1541 թվականին⁴⁹:

Իսպանիա իր կատարած այցելությանն է վերաբերում նաև Հովհաննես վարդապետի կարճ ուղեգրական գործը, որը 1558-ից ոչ շատ անց ինքնագրել է հեղինակը Երուսաղեմի Սբբոց Հակոբյանց վանքի մատենադարանի թիվ 2583 Ավետարանի (ժամանակ 1443) էջերում⁵⁰:

Մարգիս Աբեղայից մեկ տարի առաջ (1586-ին) իր քսանմեկ տարի տևած ճանապարհորդությունն է սկսում Փիլոզատը, որ իր ձեռքին եղած Ադոբագրքի էջերին ուղեգրական վերջին նշումը արել է 1607 թվականին, հետևաբար մենք նրան կանդրադառնանք մեր ուսումնասիրության՝ ԺԷ դարի հայկական ուղեգրություններին նվիրված գլխում:

Այսպիսով, մինչև ժԷ դարի ուղեգրությունների քննարկմանն անցնելը նպատակահարմար գտանք խոսել ուղեգրական տեսակի երկու շրջանների մասին: Առաջինը տեսակի ամենից նախնական վիճակն է՝ արագություն՝ սկզբից մինչև Մարտիրոս Երզնկացի: Երկրորդը սկսվում է Երզնկացիով և ավարտվում ժԷ դարասկզբով և ներկայացնում է տեսակի սկզբնավորման և ավանդների մշակման փուլը: Երրորդ, հիմնական շրջանը ընդգրկում է ժԷ դարի ուղեգրությունները, որոնց նվիրված են մեր գրքի երկրորդ, երրորդ և չորրորդ գլուխները: Իսկ ուղեգրության տեսակի չորրորդ շրջանը (ժԸ դար) կներկայացնենք «Արջաբանում»:

Որպես թեմա՝ ընտրված է միայն տեսակի զարգացման երրորդ շրջանը, միայն ժԷ դարը, քանի որ, նախ՝ այդ ժամանակաշրջանում ուղեգրական երկերը անհամեմատ մեծ թիվ են կազմում և, երկրորդ՝ ապահովում են անհրաժեշտ բարձր որակը: Այդ իմաստով ժԷ դարը հանգուցային նշանակություն ունի հայկական ուղեգրությունների պատմության մեջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ- ՄԻՍԵՈՆ ԼԵՀԱՅԻ

ՇԷ դարում ուղեգրության տեսակը մեծ քոչք է ապրում: Հարյուրամյակի գրական արտադրանքը հարուստ է ուղեգրական հետաքրքիր գրվածքներով: Դարասկզբին իրենց ուղեգրական գրառումներն են ավարտում Փիրգատը, Օգոստինոս Բաջենցն ու Միմեոն Լեհացին: Այնուհետև ուղեգրություն է հեղինակում Գավիթ Եվդոկիացին: Ուխտագնացություններին վերաբերող ուղեգրություններից բացի գրվում են նաև ղեսպանագնացություններ, քաղաքական առաքելություններ և երկրախուզական ճանապարհորդություններ ներկայացնող գործեր: Այդպիսին են Անտոն Ապրակունցեցու, Հովհաննես Թուրունջիի, Շահմուրաա Բաղիշեցու և Ավետիք Տիգրանակերտցու ուղեգրական երկերը:]

Ներկա գլխում մենք կքննենք Միմեոն Լեհացու Ուղեգրությունը, իսկ դարի մյուս ուղեգրություններին կանդրադառնանք երրորդ գլխում:

Միմեոն Լեհացուն հատուկ բաժին հատկացնելը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ Միմեոնի գործը առանձնանում է հարյուրամյակի մյուս ուղեգրություններից թե՛ իր ծավալով, թե՛ բովանդակությամբ և թե՛ գրական արժանիքներով: Լեհացու Ուղեգրության մեջ վառ կերպով երևում են միջնադարյան հայկական ուղեգրությունների բոլոր բնորոշ հատկությունները:]

ՇԷ դարի լեհահայ համայնքի նշանավոր ներկայացուցիչ Միմեոն Լեհացին (1584-1636) հայ մատենագրության մեջ մտել է իր գրչագրած մատյաններով, հեղինակած պոեմով, տարեգրությամբ և ուղեգրությամբ, որը իր ստեղծագործության գլուխգործոցն է:]

Միմեոն դպիր Լեհացու (Չամոսցացու) մասին առաջին հիշատակությունը տվել է լեհահայ բանահավաք և պատմաբան Սադոկ Բարոնչը (Վիկենտի-Ֆերրերի Պարոնյան) իր «Հայոց պատմության ակնարկ» (1869) աշխատության մեջ¹: Այնուհետև արդեն մեր դարի առաջին քառորդին Լվով է այցելում ֆրանսիացի արևելագետ Ֆրեդերիկ Մաքլերը, ծանոթանում տեղի հայերեն ձեռագրերին, ապա Փարիզում 1927-ին հրատարակում է դրանց ցուցակը Գալիցիա և Բուկովինա կատարած գիտական ճամփորդությանը վերաբերող հաշվետվության մեջ: Միմեոն Լեհացու գործի մասին նա նշում է այսպես. «Բնագիր, որը հավանականություն ունի լինելու ճանապարհորդության պատմություն»:

1932-ի հունիսին Ն. Ալիևյանը, գտնվելով Լվովում, ուշադրու-

քյուն է դարձնում Հին Համալսարանի Մատենադարանի թիվ 58 ձեռագրին, որը պարունակում էր Սիմեոն Լեհացու ինքնագիր Ուղեգրությունն ու Տարեգրությունը³: 1932-1935 թվականներին Ն. Ալիևյանը նրա գրական ժառանգությունը հրատարակում է «Հանդէս Ամսօրեայի» էջերում: Ապա 1936-ին լույս է բնծայում առանձին գրքով՝ կատարելով հարկավոր լրացումներ և սրբագրություններ⁴: Դա «Ազգային մատենադարանի» ԽՄ հատորն է: Այս հրատարակությամբ հայ մատենագրությունը հարստանում է մի կարևոր երկով, հայկական ուղեգրության տեսակը՝ համալրվում նշանակալից ուղեգրությամբ: Դա չի վրիպել Հ. Բյուրախյանի ուշադրությունից, որը 1938-ին, գրախոսությամբ արձագանքելով այդ հրատարակությանը, գրում էր. «Հին հայերեն ուղեգրական մատենագրութիւնքը մեր մօտ չէ մշակուած, հագուագիտ են նիւթեր այդ մասին: Եւ այդ հագուագիտութեան մէջ զլուխ գործոց է Սիմեոն Դպրի ուղեգրութիւնը: Հ. Ալիևեան մեզի կու տայ անոր խնամեալ հրատարակութիւնը՝ մեծ նպաստ մը բերելով մեր մատենագրութեան»⁵:

Հայ մատենագրություն բերած նպաստը ոչ միայն Սիմեոն Լեհացի ուղեգրի գոյության փաստն էր, նրա հայանությունը, այլև առաջին հերթին Սիմեոնի ձեռագրերի հրատարակությունը, որով կորստից փրկվեց գրական մի մեծ հուշարձան: Գուցե Ալիևյանը ձեռագրի վերջին տեսնողն էր, որովհետև ընդամենը տաս տարի անց (Ուշախարհամարտի տարիներին) նրա հրատարակության հիմք դարձած ձեռագիր մատյանը այլ նյութերի հետ Լվովի Մատենադարանից անհետանում է⁶:

Չի բացառվում սակայն, որ Սիմեոն Լեհացու ձեռագիր մատյանը ոչնչացված չէ և մի օր կարող է գտնվել Լեհաստանի գրադարաններում կամ մասնավոր անձանց հավաքածուներում: Ուղեգրությունն այնուհետև լրիվ կամ հատվածաբար թարգմանվել է մի շարք լեզուներով, որ ապացույցն է նրա ունեցած մեծ արժեքի նաև օտար շրջանակներում:

Սիմեոն Լեհացու Ուղեգրությանը հաջորդում է Տարեգրությունը (356-384), որը Ուղեգրության շարունակությունն է կազմում: Այստեղ նկարագրված են 1623-35 թթ. նշանակալից դեպքերը:

Պատմական հարուստ նյութ են պարունակում նաև Սիմեոն Լեհացու ընդօրինակած ձեռագրերի հիշատակարանները, որոնցից ուրբ հրատարակել է Ալիևյանը (էջ 387-399 և 405-420): Իսկ երկու տարի անց Հ. Բյուրախյանը հրատարակում է ևս չորս հիշատակարան⁷: Այդ հիշատակարանների մեջ իր ծավալով և կարևորությամբ առանձնանում է 1636-ին ընդօրինակված Վարդանի «Մեկնութիւն Հնգամատենին» ձեռագրի հիշատակարանը (էջ 405-420), որտեղ պատմված են 1634-1636 թվականների քաղաքական դեպքերը, հայերի բռնի դավանա-

փոխությունը և այլն: Նույն դեպքերի արձագանքը կա նաև 1634-ին գրված «Վիպասանութիւն Նիկողական» երգիծական-քաղաքական պոեմում⁸, որը Ալիմյանը վերագրում է Սիմեոնի գրչին (էջ 399-405): «Վիպասանութիւն Նիկողականի» հեղինակը հայկական շրջանակներում վերապահությամբ է համարվել Սիմեոն Լեհացին, «խսկ Լվովում անվերապահորեն է ընդունվում (տե՛ս «Լվովի պատմություն», Կիև, 1984, ուկրաիներեն գիրքը)»: «Նիկողականը» վերաբերում է Մելիքխետք կաթողիկոսի աջակցությամբ լեհահայոց համայնքի բռնի կաթողիկացումը իրականացնող Նիկոլ Թորոսովիչի՝ Լեհաստանի հայոց հոգևոր հովվի ազգակործան գործունեությանը: Լուսավորչական դավանանքը, հայոց լեզուն ու դպրոցը պահպանելով ու զորացնելով միայն հնարավոր է դիմակայել ու գոյատևել պետականության չգոյության պայմաններում. ահա «Վիպասանութիւն Նիկողականի» հեղինակի համոզմունքը:

Սիմեոն Լեհացու Ուղեգրության հրատարակության ներածական մատում Ալիմյանը, մեծ չափով օգտագործելով Ուղեգրության, Տարեգրության և հիշատակարանների տվյալները, վերականգնում է Սիմեոնի կենսագրականը, գնահատում նրա ստեղծագործությունը, բացահայտում հատկապես Ուղեգրության գրական արժանիքները, որոնց շնորհիվ այն դառնում է ոչ միայն հայկական ուղեգրությունների, այլև առհասարակ, հայ մատենագրության մեջ շատ կողմնորոշ աչքի ընկնող մի գրվածք: «Բնականաբար ասելիքի առկայությունն է պայմանավորել նրա (Սիմեոն Լեհացու, - Ա. Ս.) գրքի ծավալը, իսկ արժեքը կանխորոշել է հաղորդվող առատ նյութը: Հաջողությանն իր նպաստն է բերել նաև մատուցման եղանակը, պատմելու աշխույժ ոճը»¹⁰:

Փիրգատը իր Ուղեգրության՝ Լեհաստանին նվիրված մատում գրում է Լվովին մերձակա Չամոսցա քաղաքի մասին. «Էնկից (Լվովից, - Ա. Ս.) կինեցի Չամոցա քաղաքն. Հայկական ազկ շատ կայ մեջն. իսկի խարճ չեն տալ. ուրանց գլխու պարոնէք են»¹¹: Նույն քաղաքում արդեն այդ ժամանակ Մահտեսի Մարտիրոսի և Դովվաքի ընտանիքում ծնվել էր (1584թ.) նրանց որդին, ում շնորհիվ հետագայում պիտի նշանավորվեր Արևմտյան Ուկրաինայի Չամոնջ փոքրիկ քաղաքը: Ծնողները 1580-ականների սկզբին այնտեղ էին գաղթել Թեոդոսիայի Կաֆա քաղաքից. «Ծնողքն իմ բնական յաշխարհին Հոնաց, ի տիրախնամ եւ աստուածապահ ծովահայեաց քաղաքին Քաֆայու, պանդուխտ գոլով եկեալ բնակեցան ի բրիստոնէից երկրին՝ ի գաւառն Ըռզաց, որ այժմ տիրեն Լէիք, ի նորաշէն գիղաքաքաղաքն Չամոսցա» (էջ 1): Վաղ տարիքում կորցնելով մորը՝ Լեհացին մնում է մեծ քույր Դուհարի և հոր խնամքի տակ:

Հոր մահով Սիմեոնը «հայրենի ստացուածքներու ժառանգը

կ'լա» (ԼԶ ԺԵ): Սակայն հորից մնացել էր Սիմեոնի համար մի առավել քանկազին ժառանգություն. նա Սիմեոնին էր բողել իր հիշողությունները Երուսաղեմի մասին. «և Սիմեոնը, մանուկ հասակից լսել էր սուրբ երկիր կատարած ուղեգնացության մասին»¹²: Այդ պատմությունները օրորել են նրա մանուկ երևակայությունը, և գուցե այն ժամանակներից էլ Սիմեոնը փայփայել է հեռավոր ճամփորդությամբ Երուսաղեմի տնօրինական տեղերն այցելելու երազանքը: Այդ նվիրական իղձը հավանաբար որոշակի ձև ու կերպարանք է ստացել իր ուսումնառության տարիներին, երբ աշակերտում էր նշանավոր Հակոբ Թոխաթցուն, որը 1602-ին Վալախիայից տեղափոխվել էր Չամոսցա: Հավանաբար, հենց Թոխաթցին էլ պատանու հոգում Մահաեսի Մարտիրոսից հետո երկրորդ անգամ արժարժում է ուխտագնացություն ձեռնարկելու ջերմ փափագը: Նա, ինքը ավելի ուշ լինում է Երուսաղեմում և 1635-ին գրում բանաստեղծություն՝ «Տաղ վասն սուրբ Երուսաղեմայ, ի Յակոբ քահանայէ ասացեալ»¹³: Բայց հոր և ուսուցչի՝ իր վրա ունեցած ներգործությանը միանում է ավելի գորեղ մի հանգամանք. ընթերցած գրքերը, որոնց ազդեցությամբ էլ Սիմեոնը բացատրում է ուխտագնացություն սկսելու իր գաղափարը. «Եւ երբեմն ընթերցեալ իմ գՎարս հարանց և գՊատմութիւնս վիպասանաց, անկաւ ի սիրա իմ փափագ եւ ջերմ սէր. ըսա այնմ քէ «Ձեռաւ սիրտ իմ ի փորի իմում, եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր», ի բազում ամաց եւ ի վաղուց հեաւ. վասն որոյ եւ տոչորէր սիրա իմ, գալարէին աղիք իմ միշտ եւ հանապազ, շրջագայել եւ տարաշխարհիկ լինել յօտար եւ յանձանօք գաւառսն եւ ի սփիռս հեթանոսաց: Այլ եւ ուխտիւ գնալ նախ յաստուածակոխ քաղաքն սուրբ Երուսաղեմ՝ յերկրպագութիւն լուսարուխ սուրբ գերեզմանին Քրիստոսի եւ այլոց սուրբ տնօրինականացն որ անդ: Եւ անտի գնալ ի Մուշ, ուր նշխարքն է սրբոյն Յովիաննու Սկրտչի. եւ ապա ի մեծն Հռոմ, ի սուրբ գերեզմանն Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ յօքնախումբ եւ բազմահաւար արեամբ ներկեալ սուրբ վկայիցն» (2): Երուսաղեմ սբ. Կարապետ Հռոմ ծրագրված հերթակազմությունը խախտվում է՝ ուղևորից չկախված պատճառներով:

Համառոտ ներկայացնենք Սիմեոն լեհացու ճամփորդության ուղեգիծը: 1608-ի փետրվարի 15-ին Լվովից դուրս գալով, նա մի քարավանի հետ հասնում է Կ. Պոլիս, որտեղից ուզում էր գնալ Երուսաղեմ: Բայց քանի որ ուխտավորների նավը արդեն գնացել էր, իսկ ցամաքի ճանապարհը վտանգավոր էր, Սիմեոնը սահպված էր վեց ամիս մնալ Պոլսում: 1609-ի վերջերին, ընկերանալով Սկրտիչ Խարբերդցուն, մինչև հաջորդ թվականի գարունը, Սիմեոնը ծովով շրջում է Եվեսոս-Մանիսա - Իզմիր-Կելիպոլի-Թեփրուսաղ-Նիկիա-Իզմիր գծով: Այնուհետև Կ. Պոլ-

սից 1611-ի հունիսին Չաքարիա վարդապետի հետ գնում է Վենետիկ, ուր մնում է 2 ամիս: Դրանից հետո մեկնում է Հռոմ, ուր մնում է 9 ամիս: Այնուհետև, 1612-ի մայիսի 31-ին վերադառնում է Վենետիկ և այնտեղից Կրետե-Չապրա գծով հասնում է Իզմիր, ուր մնում է 5 ամիս: Իսկ 1613-ի գարնանը Սիմեոնը Պրուսա-Խարբերդ ճանապարհով այցելում է Մուշ, ուր մնում է երեք օր: Ամռանը վերադառնում է Կ. Պոլիս, ուր մնում է մեկ տարի: 1615-ի օգոստոսի 15-ին նավարկում է դեպի Ալեքսանդրիա և Կահիրեով ու Գազայով մտնում է Երուսաղեմ, ուր մնում է 1616-ի սեպտեմբերից մինչև ապրիլը: Դրանից հետո Հալեպ-Կեսարիա-Անկուրիա ուղևորով վերադառնում է Կ. Պոլիս, ուր 2 ամիս մնալուց հետո ճանապարհ է ընկնում դեպի հայրենիք: Հավանաբար 1618-ի աշնանը հասնում է Լվով, որից հետո Չամոսցա: 7

Այս ուղեգիծը նկատի ունենալով, Վ. Ռսկանյանը գտնում է, որ Սիմեոնի ճամփորդությունը կարող էր ունենալ քաղաքական նպատակներ: «Մենք հիմք ունենք ենթադրելու, զրոյն է նա, որ Սիմեոն դպիր Չամոսցացին (Չամոսցեցին), 1608-1619 թթ. շատ երկրներում ճամփորդած, գաղտնի կատարում էր ուկրաինահայերի քաղաքական առաջադրանքները: Այլ կերպ չի կարելի բացատրել նրա 11-ամյա ուխտագնացությունը այսպիսի տարօրինակ երթուղով (Լվով, Կոստանդնուպոլիս, Իզմիր, Կոստանդնուպոլիս, Վենետիկ, Հռոմ, Մուշ, Կոստանդնուպոլիս, Կահիրե, Երուսաղեմ, Հալեպ, Կոստանդնուպոլիս, Լվով)»¹⁴: Այնուհետև խոսվում է անասիման հայրենասիրության մասին, որ արտահայտվել է Ուղեգրությունում և «Վիպասանութիւն Նիկողայականում»: Հարկ է նշել, որ այս երկու կովաններն էլ բավարար հիմքեր չեն տալիս նրա ուղեգնացությունը քաղաքական առաքելություն համարելու: Ինչ վերաբերում է Սիմեոնի ուղեգծին, որի «տարօրինակությունը», ըստ Ռսկանյանի, չորս անգամ Պոլսում զանվելն է, ասենք, որ այդ քաղաքը գտնվում էր ծովային և ցամաքային ճանապարհների խաչմերուկում և ժամանակի բոլոր ուղիները սկսվում էին Պոլսից: Իսկ հայրենասիրության դրսևորումների մասին կարելի է ասել, որ դա միայն Սիմեոնի Ուղեգրությանը բնորոշ հատկանիշ չէ, և դրանով հատկանշվում է նաև, օրինակ, Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը»: Սիմեոն Լեհացին մի համեստ ուխտավոր է, որը ձգտում է կատարել իր ուխտը նշանավոր սրբավայրերում, այդ նպատակով ճանապարհաձախսի համար ձեռագրեր է ընդօրինակում, գրադվում առևտրով և այլն: Ուղեգրությունն էլ ուխտագնացություն է, որից չեն պակասում երկի արժանիքները:

Ինչևիցե:

Միմեռնը ուղևորությունից վերադառնում է Լվով և, ընդառաջելով հարազատների քախանձանքին, նշանվում է Նաստոլխնա անունով աղջկա հետ 1614-ի սեպտեմբերի 12-ին, իսկ հաջորդ տարվա օգոստոսի 15-ին ամուսնանում է: Այնուհետև, վերադառնալով Ջամոսցա, մնում է 5 տարի, 1624-ից ուսուցիչ է աշխատում Լվովի հայկական Դպրատանը, որտեղ ուսուցչության հետ մեկտեղ զբաղվում է ձեռագրերի ընդօրինակմամբ: Վերջին մեզ հայտնի ձեռագրի («Վարդանայ Մեկնութին Հնգամատենին») հիշատակարանը ավարտում է 1636-ի դեկտեմբերի 15-ին: Սա Միմեռն Լեհացու կյանքի տարեգրության վերջին նշանն է: «Այս տեղ կը կորսցնենք Միմեռն դպրի կենդանութեան հետքերը» (ԼՀ):

Միմեռնի երկարատև ուղևորությունը արդյունավետ եղավ երկու առումով. նախ՝ նա իրագործեց իր սրտի փափագները՝ ուխտ կատարելով երազած սրբավայրերում, ապա՝ գրեց ներկա Ուղեգրությունը՝ հայ մատենագրությունը՝ հարստացնելով աննախադեպ մի ստեղծագործությամբ, որով և իր համար մնայուն տեղ ապահովեց հայ դասական գրողների շարքում:

Ե՞րբ է գրել Միմեռնը իր երկը: Ինչպես գրեթե յուրաքանչյուր ուղեգրություն, Լեհացու գործն էլ անշուշտ հորինվել է ստեղծագործական երկու հիմնական փուլով: Առաջինը ճամփորդության ժամանակ արված նոթերն են, երկրորդը՝ դրանց խմբագրումը արդեն ճամփորդությունից հետո: Այդ մասին՝ մի փոքր մանրամասն:

Միմեռն Լեհացին Ուղեգրության շատ հատվածներ գրել է ճամփորդության ընթացքում, երբ երկար դադար էր առնում այս կամ այն քաղաքում: Ձեռագրերի ընդօրինակման աշխատանքին զուգընթաց, Միմեռնը աշխատում էր նաև գրառումների վրա: Բուն ուղեգրությունը վերջնական տեսքով գրել և ավարտել է ճամփորդության ավարտից հետո: Այս առումով հետաքրքիր է այս հատվածը. «Եւ տեսար (Հռոմում,- Ա. Ս.) եկեղեցի մի ալ վիմաշէն հին, նման Երուսաղէմայ սուրբ Յարութեանն...» (124): Եվ կամ դարձյալ Հռոմին վերաբերող հատվածում գրում է. «Եւ հանդէպ նմին եկեղեցի մի ազնի՝ Երուսաղէմայ սուրբ Յարութեանն նման...» (131): Նման օրինակներ կան նաև 49 և 128 էջերում: Հռոմում գտնված ժամանակ Լեհացին չէր կարող իր համեմատություններն անցելիս հիշատակել Երուսաղեմը, այն պարզ պատճառով, որ Պաղեստին նա այցելել է ճանապարհորդության վերջերին, այսինքն՝ Հռոմից բավական ուշ: Հետևաբար ուղեգիրը Հռոմում չէր կարող գիտենալ Երուսաղեմի մասին այնքան, որպեսզի համեմատություն կատարեր:

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Ուղեգրության վերջնական խմբագրության աշխատանքները Լեհացին կատարել է Լվովում, 1619-

1625 քվականների միջև ընկած շրջանում, «երբ Լեհահայոց կեանքը չէր յուզուած դեռ ներքին զժառոթխններով» (ԼԹ): Ալիմյանը ուշադրություն է հրավիրում Լեհացու կողմից Հռոմին (1611-1612) վերաբերող դրվագում «յանկարծ» գրված այս նախադասությանը. «Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս կայսրն քրիստոնէից՝ ալաման, բարի մահուամբ, Մաքիոս անուն» (138): «Խոսքը Մաքիոս կայսրն մասին է, որ վախճանած է 1619-ին. ուստի հարկ է հետևեցնել թէ Սիմեոն 1619-ին պարապած էր իր Ուղեգրութեան խմբագրութեամբ եւ գրած էր արդեն 1-138 էջերը» (ՀԹ-Խ):

Ուղեորության ընթացքում Սիմեոն Լեհացուն ամենից առաջ զբաղեցնում են իր հայրենակիցները, նրանց հետ կապված բազմազան խնդիրները, որոնց կողքով նա անուշադիր և անտարբեր չի կարող անցնել: Բնականաբար ուղեգրության մեջ ևս Սիմեոն Լեհացին իր նկարագրություններում կարևոր տեղ է հատկացնում այցելավայրերի հայ բնակչությանը: Դիտելով, որ «ի Պուղտանայ մինչև Ստամպոլ, պտբուն Ռեռումէլին մինչև մեծն Վանաաիկ, նա չկայ քաղաք. գեղ կամ չֆաիկ, որ հայ չկենայ...» (էջ 8): Սիմեոնը ամեն մի բնակավայր ներկայացնելիս առաջնահերթ է համարում խոսել հայերի մասին:

Իր ուղեորությունն սկսելով Լվովից, անցնելով Սինափին քաղաքը, Սիմեոնը հասնում է Մեչով: Դա փաստորեն ուղեգրության սկիզբն է: Սիմեոնը այդ քաղաքը ահա ինչպես է նկարագրում. «Եւ կայր յայս քաղաքս երեք-չորս հարիւր տուն հայի. երեք քարաշէն եկեղեցի եւ երկու վանք վիմաշէն քաղաքէն ի դուրս, յոյժ գեղեցիկ եւ պատուական, մինն մերձ եւ հուպ քաղաքին, միւսն երկու մղոն հեռի: Եւ էր անդ եպիսկոպոս մի երկրցի՝ Յովիաննէս անուն, եւ վարդապետ մի Հիզանցի՝ Սլքաիչ անուն, եւ վարդապետ մի այլ Մեսրոբ անուն» (4): Արդեն այս նկարագրության մեջ ուրվագծվում են ուղեգրի հետաքրքրության շրջանականները, որոնք հետագա շարադրանքում ավելի են լայնանում՝ ներառելով նաև գաղթավայրերի հայ բնակչության հետ առնչվող այլ հարցեր, ինչպես՝ եկվոր հայերը ե՞րբ են հաստատվել ավյալ բնակավայրում, ի՞նչ լեզվով են հաղորդակցվում և այլն: ԺԷ դարասկզբի «հայ գաղթական կեանքի պատմական մեկ րոպէն էր. մայր երկիրը լքած՝ օտար երկրքի տակ իւր հանգիստը կը փնտռէ հայ ժողովուրդը. նոր գաղթավայրեր կը հաստատուին ամենուրեք» (ԼԸ): Սիմեոնի հաղորդած տեղեկությունները մեծ չափով կիրառելի են հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրման համար և ընդհանուր առմամբ մտավոր ճշտությամբ համապատասխանում են իրականությանը: Բայց Սիմեոնի համար քանակից ավելի էական նշանակություն ունի որակը:

Լեհացին ուրախությամբ ու հպարտությամբ է արձանագրում տեղաբնակների՝ դեպի հայերը ունեցած դրական վերաբերմունքը:

Նրանք իրենց վաքք ու բարքով, գործարարությամբ և այլ ունակություններով տեղացիների սերն ու համակրանքն են վայելում: Օրինակ, գրելով Պապի կողմից մատուցվող բարեգործական ճաշկերույքների մասին, Լեհացին հայտնում է. «Բայց հայուն առաել պատիւ կ'առնեն եւ ի գլուխ տեղ մատեցուցանեն» (143): Պապի իններորդ ձեռնարկությունը (Ռտնլլվան) ներկայացնելով, Սիմեոնն ընդգծում է, որ «...հայն ի վեր մասի. եւ ամենին անուն տայ (Պապը Ա. Ս.) գառաքելոց, բայց հային Պետրոս...» (145): Հռոմի բնակիչները լավ են վերաբերվում նաև ճանապարհորդ հայերին, հոգում նրանց կարիքները, «ես առաել յորժամ զհայ տեսանեն՝ ցնժան եւ խնդան, փարէն եւ փաղաքշեն եւ մեծ սէր եւ զուր ցուցանեն» (81): Լեհացին ցավով և տխրությամբ է խոսում հայերի հեղինակության անկման վերաբերյալ: Նա գրում է իր որոշ հայրենակիցների անմիաբանության, հարբեցողության, հայհոյասիրության և այլ վատ գործերի մասին (81-83): Այդպիսի գործերով նրանք արատավորում են իրենց անունը, հայերին այլևս հատուկ պատվի չեն արժանացնում, չեն ընդունում իբրև սրբերի, ինչպես առաջ, երբ նույնիսկ հայ «զ[ու]խտաւորաց զհին չուխան պատառէին եւ միմե՞անց պարզեւք տային եւ արմաղան» (84):

Հայ ժողովրդի թեման իր հետաքրքիր արտահայատությունն է գտնում նաև Սիմեոնի բազմաթիվ ողբախառն տողերում, որտեղ հեղինակը՝ իբրև հայրենասեր մտածող, իբրև ճշմարիտ քրիստոնյա, ցաված սրտով ողբում է հայրենի պետականության բառնալը և օտարների կողմից Հայաստանի նվաճումը՝ ի հետևանք հայ ժողովրդի զավակների բարոյալքման և ազգային դեմք ու դիմագծի կորստի: Ըստ Լեհացու, այդ հատկանիշները կարելի է վերագտնել, խեղված արժեքները հնարավոր է հեռ բերել կրթության և եկեղեցու միջոցով: Ահա ինչու անողոր է նրա դիրքորոշումը դավանափոխ հայերի նկատմամբ, որոնց Լեհացին ոչ մի կերպ չի կարող ընդունել, արդարացնել: Այդպիսիներին նա անվանում է «աղթարմա» (ուրացող): Այլ է Սիմեոնի վերաբերմունքը ֆրանկ կաթոլիկների հանդեպ: Նա հիացմունքով ու զովեստով է գրում «Ֆռանկի աշխարհի» մարդկանց մասին: Եվ չնայած խոսքը կաթոլիկ տերությանն է վերաբերում, բոլոր դեպքերում միշտ առկա է ճշմարտացի ու արդար գնահատականը: Ֆռանկների երկրում Լեհացին իր տեսածը համադրում է այլ վայրերում (հիմնականում հայ կյանքում) տեսածին, որը սկիզբ է դնում հակադրության: Իտալիայի քաղաքներում հանդիպած ամեն լավը և գեղեցիկը Սիմեոնը մտովի համեմատում է այդ ամենից զուրկ իր հայրենիքի հետ, փորձում գտնել հայերի այդ վիճակի պատճառները: Հակադրության մեթոդով շատ հաճախ հեղինակը զարգացնում է իր միտքը: Այսպես, գրելով վենետիկյան վանքերի մարդասիրական գործունեության մասին (ապօրինածին որբերին ապաստանելը, պահելը,

կրոնավոր օծելը կամ արհեստի տալն ու ամուսնացնելը), Սիմեոնը գրում է. «Եւ այսպիսի բարի եւ շահաւէտ խրատովն ապրեցուցանեն զբազում հոգիս անմեղ տղայոցն. եւ լինին պատճառ բազում բարեաց, զոր յայլ աշխարհի վասն ահի եւ ամօրոյ ոչ թողուն ծնողք յառաջ զալ անմեղ տղայոց, այլ դեղօք եւ պէս-պէս չարիւք սպանանեն զծնեալս կամ չտան ծնանիք» (65-66): Նկարագրելով խամութների, եկեղեցիների հարստությունները, մարդկանց բարձր կենսամակարդակը, Սիմեոնը գծում է արդար հասարակության պատկերը, որտեղ մարդիկ «յոյժ բարի եւ անխառվ, անկռիվ են, սուր ամենեւին չունին, այլ եւ դանկաց ճոթն կտորած է ամենին, չունին ստութիւն, կաշառ չառնուն ի վերայ իրաւանց, այլ արդար դատաստան առնեն, առանց նենկութեան» (84-85):

Այստեղ չկա հարրեցողություն, ստություն, սպանություն, անիրավություն, որձապղծություն և այլն: Գ-ա կարելի է ասել ոչ միայն քաղաքների, այլև հեռավոր ճանապարհների, մոռացված վայրերի, մացառոտ անտառների մասին, ուր մարդ կարող է միայնակ շրջել, առանց քարավանի, որ անձանոք բառ է այս կողմերում, և նույնիսկ եթե «... ոսկի թագ դնես ի գլուխս՝ ոչ վնասիս» (87): Լեհացու համոզմամբ այս բոլոր բարիքների աղբյուրը պետական իրավական կարգերն են, բնակիչների աղոթասիրտությունն ու եկեղեցական արարողությունների պարտաճանաչ կատարումը: Նրանք օր չեն մթնեցնում առանց եկեղեցի գնալու, առանց աղոթքի հաց չեն ուտում (87-88): Նույնիսկ թուրքերին Սիմեոնը գնահատում է՝ իրենց աղոթասիրտությունը և կրոնական ջերմեռանդությունը երակետ ունենալով (28-29): Տաճիկներին նա համարում է «յոյժ աղօթասէրք» (28): Սինչդեռ «... կայ ազգս մեր, հիշում է Լեհացին, որ երկու, երեք տարով եկեղեցոյ դռուն չեն կոխել եւ ոմանք սպիտակ ալեօք գճայր մերն ոչ զհանն, թող թէ գճաւատամքն կամ զայլ ինչ. այլ եւ ոչ յերեսն խաչ հանեն...» (88):

Բնութագրական է ֆռանկների գովքը (110-112), որտեղ այդ հակադրությունը շարունակվում է նոր ուժգնությամբ: Սիմեոնը բարձրացնում է քրիստոնեական կրթության հարցը՝ դրա չգոյության հետ կապելով հոգևոր և նյութական անկումը: Իր հայրենակիցների մասին հեղինակը գրում է, որ «բնաւ չունին սէր ուսման վասն որոյ եւ զգաւական թողուն անձնապատան եւ անվոյթ, իսկ նոքա մեծացեալ որպէս պախրէք ազէտ եւ յիմարք յոլով՝ ի մեղս ծնօղաց եւ ի նախատինս անձանց: Վասն որոյ նուազեալ պակասեցան եւ ջնջեցան կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր եւ որք կանն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել զնոսս» (111-112):

Ըստ Լեհացու, ահա այս հատկանիշների պատճառով է, որ Աստված հայերի դիմաց փակել է արքայության դռները, նրանց գրկել իշխանությունից ու քաղաքորությունից, բաժին հանել մեծ դժբախտուր-

յուններ, այնինչ անհուն բարիքների է արժանացրել կաթոլիկներին, որոնց չեն սպառնում բնության բազմապիսի աղետները և ավերածությունները, զավթիչները չեն ասպատակում նրանց երկիրը, ուր «ի սկզբանէ մինչէն ցայժմ կան հաստատ քազաւորութիւն եւ հայրապետութիւն» (89): Մուրք Մարկոսի տաճարին մերձ գտնվող կոյս աղջկա արձանի մասին Միմեռնը գրում է. «...կոյսն՝ զկուսութիւն քաղաքիս նշանակէ, որ ի սկզբանէ մինչէն ցայսօր ոչ անկաւ ընդ ձեռամբք ումեք եւ ոչ տիրեաց որ սմա եւ ոչ ծառայեաց այլում եւ ոչ որ ի թշնամեաց տիրեաց կամ գերեաց, այլ մնաց անյաղթ եւ անխախտ որպէս զկոյս աղջիկ» (59): Այս իմաստով հետաքրքիր է նաև 120 տարեկան «ծեր ֆռանկի» պատմությունը. «... ես իմ ժամանակս ոչ մահ եմ տեսել, ոչ սով, ոչ սուր...» (89):

Ֆռանկների գովաբանությունը Միմեռնը լրացնում է Հռոմի պապի մասին դիտողությունների և տեղեկությունների հաղորդումով: Նա մանրաբանասանդրեն մեկ առ մեկ թվարկում է պապի 15 բարեգործական ձեռնարկները (142-147), չհաշված «գայլ ծածուկ ողորմութիւնքն որ մարդ չի գիտէ, բայց միայն Աստուած» (147), ցույց տալու համար դրանց մարդասիրական էությունը:

Լեհացին «արքայատկեր» չի դարձնում ֆռանկներին, իրավացիորեն գտնում է, որ նրանք ևս ենթակա են մեղքերի ազդեցությանը, որովհետև «...Աստուած է միայն առանց մեղաց» (89), բայց տվյալ պարագային կարևորն այն է, որ «... եօթն մահուչափ մեղաց ի բաց են» (90):

Այս ամենով հանդերձ Միմեռնը չունի Իտալիայի կյանքը իդեալականացնելու միտումներ, նա չէր կարող չզիտակցել, որ արևմտյան պետությունների, Հռոմի պապի ուշադրությունն ու հոգատարությունը հայերի նկատմամբ իր հետնախորքում ուներ առավել կարևոր գերխնդիր՝ Արևելքում կրոնական ու քաղաքական ամուր հեռաայտների ստեղծումը: Ֆռանկների գովաբանությունը Ուղեգրության մեջ հետապնդում էր մի շատ կարևոր կրթական նպատակ. Միմեռն Լեհացին, համեմատությունների միջոցով «փղեայ» դարձնելով ֆռանկներին, ցանկանում էր, որ հայերը նմանվեն նրանց, ցույց էր տալիս մեղքերից մաքրագործվելու և առաքինի գործեր ձեռնարկելու ճանապարհը, որը կտաներ դեպի օրինական ու բարոյական հասարակություն:

Ժողովուրդների պատմության մեջ մեղքի նշանակությունը առաջնային համարելը հայ դասական գրականության ավանդներին հավատարմության արտահայտություն է:

«Հայտնի է, որ միջնադարյան մատենագրությունների մեջ մեծ տարածում ունեին քրիստոնեական կաղապարային պատկերացումները,- գրում է Ա. Մաղոյանը,- և դա անբնական չէ: Դրանցից թերևս ամենաբնորոշը ժողովրդի կյանքում մեղքերի դերի բացարձակացումն է:

Հևաներով հագարամյա ավանդույթին՝ Միմեոն Լեհացին առիթից առիթ վերացականորեն նշավակում է անբարեպաշտ, հանցավոր գործերը, որոնք պարզապես կոչված են բացատրելու հայերին բաժին ընկած դժբախտությունները, երբ չկա այլ, ավելի ակնհայտ բանական պատասխան, գնում է դյուրին ճանապարհով»¹⁵: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել Ուղեգրությունից, բայց բավարարվենք մեկով. «Ձի ոչ յԱստուածոյ երկնչին եւ ոչ ի մարդկանէ ամաչեն, այլ լրբին եւ յանդգնին. եւ այս ոչ թէ միայն այժմ, այլ եւ ի սկզբանէ եւ ի ժամանակս թագաւորաց, թէ որպիսի՞ չարիք անցուցին ի գլուխ սուրբ եւ աստուածահաճոյ հայրապետացն մերոց Ներսէսի, Մեսրոբայ, Սահակայ եւ այլոց սրբոցն, բրիստունեայք գոյով այլեւ բռռացն սուրբ Լուսաորչին մերոյ: Չոր եւ գարժանահաս պատուհասն ընկալան յարդարադատ Տեառնէն, որովք բարձան թագաւորութիւնք եւ իշխանութիւնք մեծառնչակ ցեղէն Արշակունեաց եւ Բագրատունեաց, նաեւ Պահլաւունեաց եւ եղաք ծաղր եւ այլն կատականաց դրացեաց մերոց եւ մատնեցաք ի ձեռս թշնամեաց անօրինաց, խստաց եւ ասպտամբողաց եւ ոչ գոյ մեզ բանալ գրերան մեր, զի ամօք եւ նախատինք եղաք ամենայն ազգաց» (109-110): Նույնպիսի դիտողությունների հանդիպում ենք նաև 239, 261, 275, 346, 348 և այլ էջերում:

Եթև նմանօրինակ դեպքերում գերիշխում են հայ ժողովրդի ներկա դրության՝ ընդհանուր գծերով արված գնահատականները, ապա արդեն Արևմտյան Հայաստանին վերաբերող հատվածներում նման խոհերը կոնկրետանում են և մատնանշվում են թուրք իշխանավորների կամայականությունների ստույգ փաստեր, որոնց Միմեոնը ականատես է եղել: «Եւ այնպէս չար էին Եանիչարիքն, որ բրիստունէից չի տային ձի հեծնալ, ոչ ջորի, ոչ լաւ չուխայ ազանիլ, ոչ այգի, ոչ տուն մեծ. այլ զամենայն յափշտակէին ի ձեռաց: Նաեւ առաջնորդաց չտային քննել հաս-չհաս կամ օրէնք պահել...» (193): Միմեոնի խոսքերը վերաբերում են Խարբերդին, բայց հատկանշական են ավելի կամ պակաս չափով նաև «Թուրքաց աշխարհի» այլ վայրերին: Բացառություն է կազմում Ստամբուլը, որտեղ բրիստունյաները փոքր-ինչ մխիթարություն են գտնում. «զի ունին եկեղեցիք պայծառ...» (անդ): Միմեոնը պատմում է, որ իր՝ Թուխարում գտնված ժամանակ, հրաման է արձակվում, ըստ որի եկեղեցիներում և վանքերում արգելվում էր «մոմեղէն ճրագ» վառելը, բռնվողները տուգանվում էին: «Եւ այսպիսի տառապանք եւ նեղութիւն էին ի ձեռս Տաճկաց, վասն որոյ յոյժ աղբատ եւ չբառք են, զի միշտ գրկեն, զզվեն, տուգնեն, զրպարտեն եւ առաւել հարկս պահանջեն. եւ թէ տասն որդի ունիցի որ, ամէնէն խարած առնուն. եւ թէ հեռանայ, դարձեալ առնուն» (194): Տեսնելով այս ամեն անօրինություններն ու ճնշումները,

թալաններն ու շահատակությունները, Միմեռնին այլ բան չի մնում անելու, բան դառն կսկիծով գրել. «...ես առաել բան զամենեսեանսն տառապէի, վշտանայի, բանգի տեղեակ չէի ես այս բաներուս, հիանայի եւ նեղանայի յոյժ. եւ հանապազ ի սուզ եւ ի տրամութիւն էի անմխիթար» (194-195):

Պակաս անմխիթար չէ նաև Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ կեղերվող մյուս ժողովուրդների վիճակը: Թուրքական սուլթանությունը նրանց մշտապես իրավագուրկ դրության մեջ է պահում: Հետաքրքիր պատկերավորումով է նկարագրված Պուլսի սարկավաճառանոցը՝ («Եսաքը պագարը»), «ուր բագում քրիստոնեայք գերիք ազգ եւ ազգ: Որք ծերն են եւ պառաւր՝ նստել են: Իսկ զաղջկունս եւ զմանկունս, զտղայս եւ զաղտրերէս կանայս տէլլարնին առեալ ի ձեռս զնոսա՝ չոր ամէին եւ ծախնին որպէս զծի եւ զգորի. եւ զայս ժողովեալ ի տեղի ինչ կամ ի մօտանի՝ իբրեւ զոչխարս ի փարախի: Իսկ զնողքն եկեալ բանային զերեսս եւ զծոցս կոյս աղջկանց եւ զամենայն մարմինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի զլուխ, զի մի բոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վեր ունիցին: Եւ նոքա լուռ եւ անմռունչ կային. եւ զորս հաճէին՝ զնէին եւ որոշեալ ի հօրէ, ի մօրէ կամ ի քերց եւ յերարց բաժանեալ առեալ տանէին ի տուն: Եւ ես տեսեալ զայս ամենայն աղէտս ցաւագինս, զոր բնաւ չէի տեսեալ, ցաւաց զլուխ իմ, դողաց սիրտ իմ, խռովեցաւ անձն իմ եւ ամենայն ոսկերք իմ սասանեցան. եւ ոչ իշխէի հարցանել կամ մերձեալ առ զերեալս, թէպէտ զլեզուս նոցա զիտէի՝ վասն ահի Տաճկաց» (18-19): Շարունակության մեջ Միմեռնը իր հարցումներն է ուղղում Աստծուն և նրա խոսքը, ինչպես համանման ուրիշ դեպքերում, բանաստեղծական է, զգացմունքային: Գերիները արևելյան շուկաներն էին բերվում տարբեր վայրերից, նաև Ուկրաինայից և նրա հարևան երկրներից: Գերեվարությունը և գերեվաճառությունը այնպիսի մեծ չափերի էր հասնում, որ «ժամանակակիցներից մեկը Կահիրե քաղաքում հետևյալ հարցն է տալիս սարկավաճառին. «Արդյո՞ք մնում են մարդիկ այն երկրներում, որտեղից դուք բերում եք գերիներին»¹⁶: Սարկավաճառանոցը նկարագրելուց հետո Միմեռնը հարում է. «Եւ այլ բագում եւ ազգի ազգի խեղճ եւ ողորմելի բանքեր տեսաք, զի անօրէն տաճիկքն՝ ազգն Հագարու զրզվին եւ նեղեն զազգս քրիստոնէից...» (20):

Միմեռն Լեհացին չի կարող հաշտվել այն մտքի հետ, որ քրիստոնեական սրբավայրերը գտնվում են անհավատների տիրապետության տակ: Եփեսոսում նա տխրությանը է հիշատակում, որ գմբեթահարկ եկեղեցիները այլազգիները խլել են քրիստոնյաներից և մզկիթի վերածել (34): Այլակրոնները նաև թալանում են Աստծու տաճարները: Երուսաղեմի ս. Հարություն եկեղեցու գմբեթի մասին ասվում է, որ «...յա-

ռաջն ոսկի էր, բայց անօրէնքն առել են ի վրայէն...» (225): Ամենա-
ցայտուն արտահայտութիւնը այս երևույթի գտել է Կ. Պոլսում, որտեղ
կուսանաց վանքը հեթանոսները դարձրել են զազանանոց: Հոգեկան մեծ
խառվրի պահեր ապրելով է Սիմեոնը գրում, որ եկեղեցու պատերին «... դեռ
ես երեւէին նկարք սրբոց պատկերաց» (13): Սիմեոնը ողբ է խառնում
Աստծուն ուղղված իր խոսքերին. «Տէր իմ ընդէ՞ր մտին հեթանոսք ի
ժառանկութիւն քո, եւ պղծեցին գաճաք սուրբ քո» (14): Բոլոր նմա-
նատիպ հանգամանքներում Լեհացին մեղավոր է ճանաչում իրեն կամ
քրիստոնյաներին, որոնց մեղքերը աեսնելով, Աստված սքթութիւնները
մատնել է անհավատների ձեռքը:

Սիմեոն Լեհացին կրել է ոչ միայն բարոյական, այլ և ֆիզիկական
տառապանքներ, երկարատև ճանապարհին նրան մշտապես ռդեկից են
եղել զրկանքներն ու դժվարութիւնները, ինչպես բանտարկութիւնները,
հիվանդութիւնները, ալեկոծութիւնները, վտանգաշատ արկածները և
այլն:

Հոգեկան տառապանքներից ու մարմնական դժվարութիւն-
ներից առավել Սիմեոնը ապրել է բերկրանքի և ուրախության պահեր,
երբ կատարել է իր ուխտը ամենատարբեր սրբատեղիներում: Նա գույ-
նէր չի խնայում Հռոմի, Վենետիկի, Երուսաղեմի կրօնական տաճարների
նկարագրութիւններում: Գա Լեհացու երկրորդ հետաքրքրութիւնն է:
Այդ քաղաքները, ինչպես Պոլիսը, Հալեպը, Կահիրեն, Լվովը, բավական
մանրամասն են ներկայացված: Ինքը երկար է մնացել այդ վայրերում,
ուստի հնարավորութիւն է ունեցել ավելի լավ ծանոթանալու քաղաքային
կյանքին, բնակիչների կենցաղին ու սպրելակերպին, նշանավոր եկե-
ղեցական և աշխարհիկ շինութիւններին: Այստեղ տեղին է մի մեջբերում
անել. «Ձի որչափ կացի անդ,- գրում է Լեհացին՝ նկատի ունենալով Պոլի-
սը,- օր մի չկացի ի տան. այլ ամէն օր երբայի յեկեղեցի մի կամ ի շէնք»
(24):

Ուղեգիրը այսպես կարող էր ասել նաև այցելած մյուս քա-
ղաքների մասին: Բայց զիտի, որ անխոստափելի ձանձրոյթ կարող է
առաջացնել, «զի բազմութիւն խոսից տաղսկութիւն տայ լսելեաց եւ
յաճախումն խօսիցն ձանձրացուցանեն զընթերցողս եւ քուն ածեն
ունկնդրողացն» (69): Նմանօրինակ խոսքային կառուցվածքները մեծ
տեղ են բռնում Ուղեգրոյթյան էջերում (109, 150, 289 և այլն): Հեղինակը
մի շարք նույնատիպ երևույթներից ընտրում է մեկը, ավելի տիպականը և
բնորոշը («Ձոքս ի բազմաց սակաւ մի կամիմ պատմել», (340), որը «... լավ
է իմաստնոցն» (անդ): Լեհացուն ցույց են տալիս բազմաթիվ եկեղե-
ցական կորոզներ, որոնց հետ կապված են հայ և օտար սրբերի անուն-
ները: Այդ դեպքերում Սիմեոնը բավարարվում է կարճ ակնարկներով,

որոնց միջոցով հիշեցնում է ավյալ վայրի հետ առնչվող սրբի գործունեության մեկ հիմնական կողմը՝ հենց այդ վայրին վերաբերող:

Առավել մանրամասն է Միմեռնի խոսքը, երբ վերաբերում է Երուսաղեմի սրբություններին: Հետաքրքիր են ս. Հակոբի մայրավանքի, ս. Հարության տաճարի, Գեթսեմանի ձորի, Բեթղեհեմի նկարագրությունները:

Քրիստոնեության հաստատումից ի վեր հայ հավատացյալները իրենց կրոնասիրությանը հագուրդ են ավել պաղեստինյան սրբավայրերի հետ կենդանի շփումների միջոցով: Թեպետ Իսապիայում և Իսպանիայում ևս կային նշանավոր ուխտավայրեր, բայց քրիստոնյա աշխարհում Երուսաղեմին էր փիճակված դառնալ ամենից կարևոր ուխտատեղին: Եվ դա օրինաչափ է. սուրբ երկրի գլխավոր քաղաքում ու նրա շրջակայքում են գտնվում Տնօրինական տեղերը, Տիրոջ գերեզմանը: Դրա շնորհիվ, ինչպես ասում է Լեհացին, «սուրբ քաղաքն աստուածակոխ» (248) մագնիսի պես դեպի իրեն է ձգել հավատացյալների հարյուրավոր սերունդների: Բնական է, որ այդ ձգողական ուժին տակավին Գ. դարից սկսած մեծապես ենթարկվել են նաև հայ քրիստոնյաները, որոնք ս. Քաղաք են այցելել ամենատարբեր նպատակներով:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի մասին ուղեգրություններին, կարելի է ասել, որ մեզանում առաջին անգամ դասական իմաստով Երուսաղեմի մասին ուղեգրության հեղինակ է դարձել Միմեռն Լեհացին: Խոսքը ուղեգրության տեսակի՝ այսօրվա ըմբռնումներով բնութագրվող երկերի մասին է: Երուսաղեմյան քեման մեծ տեղ է զբաղեցնում հայկական ուղեգրությունների առաջին շրջանում (սկզբից մինչև ԺԵ դարավերջ), սակայն այդ գործերը խստորեն չեն համապատասխանում ուղեգրության տեսակի պահանջներին: Երուսաղեմի այցելությունների պատկերմը, կարելի է ասել, սկսվել է մեր գրականության մեջ ուղեգրության տեսակի առաջացման հետ միաժամանակ: Մովսես Խորենացին «Հայոց պատմության» երրորդ գրքի ԿԲ գլխում («Ի վարդապետան, յինքն եւ ի ճանապարհորդութիւն ուսմանն, օրինակաւ երկնային գարդոս») նկարագրում է իր ուսումնական ուղևորությունը դեպի Ալեքսանդրիա, դեպի ուր տանող ճանապարհը անցնում է Եղեսիայով և Պաղեստինով: Պատմահայրը մեկ նախադասությամբ պատմում է իրենց կատարած ուխտի մասին Երուսաղեմում, որտեղ ճանապարհորդները եղել են ուղևորության ըսկզբներում. «Օրինակ իմն, այսպէս և մեր յաւետախաղաց շնորհիւ ցոյացեալ յիմանալի ճառագայթից հոգևոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարայածեալք՝ յեղեսացոյն հասանւնար քաղաք. քեթևակի ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցար ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացոց հրահանգս»¹⁷: Ուղևորները, ինչպես երևում է, քիչ ժա-

մանակով են կայանել այդ վայրերում, հետևաբար մեջբերված հաս-
վածում որևէ նկարագրություն չկա, ինչն անկասկած մեծ արժեք կունե-
նար Երուսաղեմում հայկական վանքերին վերաբերող արժանահավատ
և ստուգապատում տվյալներ հաղորդելու տեսակետից: Մովսես Խորե-
նացու այդ պակասը տարբեր չափով լրացրել են իր և հետագա ժամա-
նակների ուղեորները՝ Եղիշեն, Անաստաս Վարդապետը, Նիկողայոս
Ախբերմանցին, որոնց մասին խոսք եղավ վերևում: Մա՛ առաջին շրջա-
նում: Հայ ուղեգրությունների երկրորդ շրջանում (ԺԵ դարավերջ - ԺԷ
դարասկիզբ) Երուսաղեմին նվիրված ուխտագրություններ չունենք կամ
չեն պահպանվել: Երրորդ շրջանում Երուսաղեմի ուղեգրական նկարա-
գրություն տվել է Սիմեոն Լեհացին: Հաջորդ դարում նշանակալից է
Ջուար Քահանայի Ուղեգրությունը:

Սիմեոնը նպատակ չի ունեցել ստեղծել ուղեցույց, որն ան-
հրաժեշտաբար ունի գործնական նպատակներ: Եթե մինչև Լեհացին
գրված գործերում որոշակի հերթագայությամբ տրվում են Երուսաղեմի
սրբությունների ցանկերը կամ հակիրճ նկարագրությունը, ապա Լեհա-
ցին դրանից բացի ուշադրություն է դարձնում, նաև, այսպես ասած, ոչ
կրոնական բովանդակություն ունեցող քեմաների:

Դրանք տնտեսական բովանդակություն ունեցող շինությունների
նկարագրություններն են (պարտեզ, ախտո, ջաղաց, հացատուն և այլն):
Նա չի մոռանում նաև հիշել Երուսաղեմի բնակչության թվի, ազգային
պատկանելության, ընկերային շերտերի մասին (260-261): Թերևս Երու-
սաղեմի և այլ քաղաքների նկարագրություններում առկա այսպիսի հաս-
վածները չպետք է բացարձակացնել, որովհետև մինչև իսկ «աշխարհիկ»
քեմաները Լեհացին զնահատում է «հոգևորականի դիրքերից»: Այլ կերպ
չէր էլ կարող լինել: Բերելով Պապի հանդերձանքի ճոխության մասին
Լեհացուց մի կտոր, Հ. Մահակյանը գրում է. «Նման նկարագրու-
թյունների հեղինակ Սիմեոն Լեհացին, ինքը լինելով հոգևորական, չի
մտածում այն մասին, որ ժուժկալությունը, աշխարհիկ շքեղություններից
հրաժարումը քրիստոնեության հիմնական պատվիրաններից մեկն է, նա
չի դատապարտում եկեղեցու հայրերին պճնասիրության, ինչպես նաև,
այն բանի համար, որ նրանք, եկամուտ ստանալու նպատակով, ս. Մար-
կոսի եկեղեցու հրապարակը վերածել են տոնավաճառի և երկրային
զվարճությունների վայրի: Այդ բոլորը նրա համար միանգամայն բնա-
կան է»¹⁸: Պետք է նկատել, որ դա այդպես չէ: Լեհացին գրում է Երուսա-
ղեմում ս. Հարության դռան մերձ հրապարակում ամեն կիրակի բացվող
տոնավաճառի մասին, ուր «...գամենայն ինչ գոր եւ կամւիր, գտանւիր. թէ՛
կերակուր մարդկան, թէ՛ դարման անասնոց, թէ՛ կտաւ, թէ՛ այլ ինչ» (262):
Տեսնելով այդ շուկան, Լեհացին անհարիր է համարում դրա գոյությունը

սրբությունների կողքին. «Եւ մեր նեղանայար եւ տարըմիշ լինեաք. զի է Երուսաղէմ որպէս վանք, ոչ է տեղ վաճառականաց, այլ սրբութեան եւ ուխտի» (անդ):

Ուղեգրության՝ Երուսաղէմին վերաբերող հատվածները կարևոր են նրանով, որ նկարագրում են տարբեր կարգերն ու սովորույթները, որոնցով ուխտավորներին առաջնորդում էին սրբազան տեղեր և ս. Հակոբի վանքում նրանց ընդունելության, հոգատար վերաբերմունքի մասին տեղեկություններ տալիս:

Շատ դեպքերում Լեհացին արտահայտում է իր հուզական վերաբերմունքը: Այս իմաստով ուշագրավ է հատկապես «Գովեստ ս. Տեղեաց» գլուխը (293-299), որտեղ թեպետ երևում է Աստվածաշնչի ազդեցությունը, բայց այն ամբողջության մեջ բանաստեղծական հորինվածք է: Ահա մի բնորոշ օրինակ. «...Երուսաղէմ երկինք է վերին, դրախտ եւ սուրբ քաղաք Աստուծոյ, ուր սկիզբն եղև փրկութեան մերոյ եւ դատաստան անդ լինելոց է եւ կատարում. եւ թէ որ կարէր մի ըստ միոջէլ պատմել զլուծփուն կամ զբել զփառս մեծութիւն նորա, զիարդ կարէր. զի անպատմելի է եւ անասելի. եւ եթէ լինէր ծովն մելան եւ քարինք ամենայնք քարտեգ, ոչ էր բավական տանել» (294):

Սիմեոնը Երուսաղէմ այցելում է ճամփորդության վերջում: Մինչ այդ մեր ուղեգիրը լինում է Արևմտյան Հայաստանում. նա ուխտել էր զնալ Մշո Մուլքան սուրբ Կարապետ նշանավոր վանքը: Բայց մինչև ս. Կարապետում ուխտ կատարելը Սիմեոնը այցելում է բազմաթիվ հայկական սրբավայրեր: Այստեղ ևս առաջիններից է Լեհացին: Հայաստանում կատարված ուխտագնացությունների նկարագրություններ մինչև Լեհացի չեն հանդիպում, և Լեհացուց հետո ընկած շրջանում էլ մինչև ԺԺ դարը մատների վրա կարելի է հաշվել նման ուղեգրություններ: Դատելով մեզ հասած ուղեգրական բնագրերից, հայ հավատացյալները ավելի սաեպ մեկնել են համաքրիստոնեական նշանակություն ունեցող սրբատեղիները՝ Հռոմ, Կոնստանտեյա, Երուսաղէմ, Կ. Պոլիս և այլ քաղաքներ: Անհամեմատ փոքր թիվ են կազմում հայրենական սրբավայրերում ձեռնարկված ուխտագնացությունների նկարագրությունները: Դյուրին է եզրակացնել, որ այդ կարգի ուխտագնացությունների մասին ուխտավորների կողմից քիչ է գրվել: Սակայն դրա պատճառը ոչ թե նման ուխտագնացական ձեռնարկումների քանակն է (դրանք բավական շատ են), այլ մեկ ուրիշ հանգամանք. շատ դեպքերում ուխտագնացները ուղղակի չեն գրել ծանոթ, բոլորի կողմից հայանի վկայարաններում կատարված ուխտերի վերաբերյալ: Այս իմաստով տեղին է հիշել ԺԷ դարի բանաստեղծ Երեմիա Քյոմուրճյանի տողերն այն մասին, որ ինքը

ամենքին քաջածանոթ (գոնե պոլսեցիներին, որոնք նրա գրվածքի հիմնական ընթերցողն էին լինելու) Պոլիսը նկարագրելուց առաջ ճիշտ չհասկացվելու մտահոգություն է ապրել:

*Տեսողքս գայս՝ զիս ծաղր առնեն՝
քէ ընդէ՞ր կաս ի յաշխատման,
Զծանօքս մեր մեզ պատմես՝
տխմարից չունիմք գպատասխամ՞:*

Չպետք է անտես առնել այն պարագան, որ Եվրոպա կամ Պարսիստան կատարված ուխտագնացությունների նկարագրությունները միջնադարում ունեցել են նախ ճանաչողական նշանակություն, դիտելով իբրև տեղագրական, աշխարհագրական գործեր, հետևաբար և ավելի մեծ կարևորություն են ունեցել, քան Հայաստանում կատարված ուխտագնացությունների նկարագրությունները:

Հայկական վանքեր, որ գտնվում են տարաշխարհում, տեսել ու նկարագրել են շատ հայ ուղեգիրներ: Հատկապես մեծ թիվ են կազմում ս. Հակոբի վանքի մասին չափածո ուղեգրությունները: Ուխտ կատարող հայագրի հավատացյալները առանձնահատուկ պարծանքով են գրել Եվրոպայում և այլուր գտնվող հայաշատ վայրերի հայկական եկեղեցիների մասին: Տվյալ դեպքում խոսքը բուն Հայաստանում կատարված ուխտագնացությունների նկարագրությունների մասին է: Այդպիսի ուղեգրություն, ինչպես ասացինք, առաջինը գրել է Սիմեոն Լեհացին: Նրանից հետո, ԺԸ դարում է գրվել Աբրահամ Կրետացու «Պատմագրությունը», որին ներհյուսված են բազմաթիվ ուխտագնացական այցելությունների պատկերումներ՝ ձեռնարկված Մայր Աթոռ ս. Էջմիածնից դեպի հայրենական սրբավայրեր: Վերադառնալով Սիմեոնի Ուղեգրության՝ Արևմտյան Հայաստանին վերաբերող դրվագների վերլուծությանը:

Փորձենք ցույց տալ ուղեգրություններին բնորոշ առանձնահատկությունները, որոնցով բնութագրվում են թե՛ ամբողջ Ուղեգրությունը և թե՛ ԺԷ դարի մյուս ուղեգրությունները:

Օրինակները կրերենք միայն Ուղեգրության՝ Հայաստանին նվիրված մասից՝ ավելորդ ծանրաբեռնվածությունից խուսափելու համար:

Ուղեգրությունների սկզբածրնեում հեղինակները հայտնում են ուխտ կատարելու իրենց ցանկության և տեղի մասին: Այդպես և Սիմեոն Լեհացին իր Ուղեգրության սկզբում բացահայտում է ուղևորության նպատակը՝ ուխտագնաց լինել նախ Երուսաղեմ, ապա՝ Մուշ, հետո՝ Հռոմ

(2): Այս թվարկման հերթականությունը, որ հետո փոփոխվում է հանգամանքների համաձայն, սկզբնապես պայմանավորված էր իր համար ուխտավայրերի ունեցած կարևորությամբ: Հասկանալի է, որ Երուսաղեմից հետո Սիմեոնը գլխավոր ուխտատեղի է համարում Մշո ս. Կարապետի վանքը:

«Ուխտագնացություն ի Մուշ» մեծ գլխում հեղինակը ներկայացնում է իր ճանապարհորդությունը դեպի Մուշ՝ Մարզվան, Ամասիա, Թոխաթ, Սեբաստիա, Մալաթիա, Խարբերդ, Բալու երթուղով և վերադարձը Մուշից՝ ճանապարհին լինելով մահ Տիգրանակերտում: Հետագայում, Լվովը նկարագրելիս, վերհիշելով իր տեսածը, պիտի գրեր, որ տեղի եկեղեցիներում կատարվում է «ճաստատ ժամակարգություն եւ անխափան սաղմոսերգություն եւ պատարագ», որ համեմատելի է միայն Երուսաղեմի եւ Ամիդի հետ (339): Իսկ Ուղեգրության՝ Ամիդին հատկացված դրվագում մա ընդգծում է. «Աստ եւ ի Սեաստ տեսայ լաւ հաւատ եւ լաւ քրիստոնէութիւն» (205): Այս միաքը Սիմեոնը ամենատարբեր օրինակներով հաստատում է Ուղեգրության էջերում: Տիգրանակերտը իր հոգում արթնացնում է ժամանակների վերնուշը. «Եւ մերձ եղեալ յԱմբայ՝ երևեցաւ ազնիւ եւ պատուական պարիսպն տիգրանաշէն, որ է աթոռ եւ քախտ հայրապետացն Հայոց եւ թագաւորաց...» (204): Այդ ավանդները շարունակվում են և Սիմեոնի օրերում. Տիգրանակերտում իրենց հոգևոր կրթությունն են ստանում հայ պատանիներ, որոնք, դառնալով «ուսումնասէր եւ իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երաժիշտ վարպետք, ընտիր քահանայք» (անդ), նշանակալից դեր են խաղում հայ դպրության զարգացման գործում: ԺԷ դարասկզբի Տիգրանակերտը Լեհացին համարում է «Հայոց Աթենք. զի եւ փոքր տղայք զիտուն եւ հանճարեղք են, հանապազ ի հարցում եւ ի բնութման են...» (207):

Քրիստոնեության հաստատությունը ցույց տալուն են միաված մահ վանքերի ու եկեղեցիների նկարագրությունները: Հետաքրքիր է Տիգրանակերտի հայկական ս. Կիրակոս եկեղեցու մասին ակնարկը. «Եւ օր մի գնացի Մուրք Կիրակոս ի ժամ. հինգ տեղ պատարագ էր, զի հինգ խորան ունէր...»: Այս հատվածի շարունակության մեջ երևում է ուխտագնացական ուղեգրություններին բնորոշ մի կադապար. ամեն մի սրբավայրի ճոխություն որոշվում է եկեղեցու ծառայողների ու սպասավորների քանակով. «...եւ քսան եւ հինգ էրէց համրեցի զատ վարդապետաց եւ հարեղայից եւ եպիսկոպոսաց» (205): Նաև անվանապես նշվում են պաշտոնավարող եկեղեցականները: Ս. Կարապետի մասին ասվում է, որ այնտեղ ծառայում էին «... վարդապետ մի ընտիր եւ աստուածահաճոյ Պօղոս անուն, չորս եպիսկոպոս, ԺԵ հարեղայ, տնտեսք, սարկավագք» (198): Ուշագրավ է ներկայացված այդ եպիսկոպոսներից մեկի՝ Տեր

Մարտիրոսի կերպարը, որի «քաղցրեղանակ» ձայնով «ոչ միայն մարդիկ զմայլեին, այլ և բոչունք ժողովեին մերձ առ նա» (201):

Ուխտավայրերի նկարագրություններում սովորաբար ուղեգիրը մանրամասն կանգ է առնում եկեղեցիներում ու վանքերում պահվող մատուցների թվարկման վրա, նաև հիշվում են ուխտատեղիներ կառուցողների անունները: Այսպես, Լեհացին գրում է. «Եւ քաղբէն (Սեբաստայից,- Ա. Ս.) դուրս Սուրբ Նշան վանքն էր Մենիքարիմայ քաղաւորին շինած. եւ կայ մէջն սուրբ Խաչափայտից մասն» (189): Բերենք ևս մեկ օրինակ Լեհացուց, որտեղ նկարագրված են Տարոնի դաշտավայրի «իբէթ անվանի սքանչելագործ մեծ վանքերը»՝ «մինն Մատնէվանք, ուր կայ Պետրոս առաքելոյն մատն եւ այլ բազում նշխարք, գոր երեր Մասնցի տանուտերն ի Հռոմայ եւ շինեաց ի վերայ եկեղեցին եւ կոչեաց Մատնէվանք: Երկրորդն՝ Սուրբ Արդեր, ուր կայ շիշով պատվական արխունն Քրիստոսի, որ ի կողն: Եվ սուրբ Առաքեալն ստորոտ լերինն, որ կան Բեւեռքն Քրիստոսի, որ բեւեռացաւ, այլ եւ Գեղարդն եւ այլ մասն» (201):

Հաճախ եկեղեցիների, նրանց հիմնադիրների կամ սրբերի մասին, որոնց նվիրված են վանքերը, պատմվում են ավանդություններ, որոնց ներմուծումը պատումի հյուսվածք համարվում է ուղեգրությունների մեկ այլ յուրահատկություն: Այդ ավանդությունները նույնպես կոչված են սրբավայրերի գորությունը բացահայտելու: Օրինակ, կնոջ՝ եկեղեցի մտնելու և սպանվելու մասին ավանդագրույցը (Լջ 199): Նմանառիպ ավանդություններ են պատմվում նաև Ծովուց սուրբ Նշան եկեղեցու (202), Արզնիի Բարձր Աստվածածնի (203, Վարագա վանքի հետ համեմատվող), Խարբերդի և Հակոբի եկեղեցու մասին, որն այնքան զորավոր է, որ նույնիսկ թուրքերը «յաւիւն սարսեն եւ հարկիս կ'առնեն եւ նուէրս տան վասն սքանչելեացն» (191), իսկ ս. Կարապետի անունով անգամ քրդերն են երդվում (198):

Միմեռնին պատմում են նաև ավանդություններ Չորեհանգիստ վանքի (200), Իննակեան աղբյուրի մասին, ուր մկրտություն է կատարել Գրիգոր Լուսավորիչը (199): Ուղեգիրը Բալուտում տեսնում է Մեսրոպ Մաշտոցի աղոթարանը, նրա վեմին փորագրված նշանագրերը, «որ յԱստուծոյ տուաւ Հայոց» (195), Խարբերդի դաշտավայրում Արդմսեհի վանքը, որտեղ «այն քարն կայ արեւաքաթախ, որ հայրն զենեց ի վերայ» (191) և այլ բազում սրբավայրեր, որոնց շուրջը հյուսված հրաշալի պատմություններին իրեն հաղորդակից են դարձնում, ինքն էլ՝ ընթերցողին: Միմեռնը չի թաքցնում, որ ինքը լսել է այդ ավանդությունները, նույնիսկ բազմիցս նշում է այն մասին, որ այդ պատմությունները իրեն պատմել են: Միմեռնը ավանդությունները ընթերցողին ներկայացնում է

«եւ ասին քէ...» (195, 197, 199, 200, 203), «եւ ասին» (199, 200) և նման այլ ձևերով: Միայն մի դեպքում՝ Ծովուց սուրբ Նշան եկեղեցու մասին գրելիս նա բանավորից բացի մատնացույց է անում գրավոր աղբյուր. «... գոր եւ ի գիրս ընթերցեալ եւ լուեալ ի բացմաց» (202): Լեհացու Ուղեգրության մեջ օգտագործված գրավոր աղբյուրների մասին մենք կխոսենք մի փոքր ավելի ուշ:

Սիմեոնը, ընդհանուր առմամբ, միամիտ կերպով հավատ է ընծայում այն ամենին, ինչ պատմում են այս կամ այն վայրի եկեղեցականները: Օրինակ, Մշո ս. Կարապետում նրան պատմում են կաղ դևի մասին, որին «սուրբ Կարապետն այն թողել է սպասատր վանաց» (199): «Մյուս կողմից, ուղեգրի՝ ջերմեռանդ հավատացյալ լինելը, մանկությունից փայփայած՝ սուրբ վայրերը տեսնելու իրականացած իղձը, հավատը տեսիլներին ու իրաշքներին՝ մեծապես նպաստում են ճանապարհորդության ընթացքի զգայական ընկալումներին և, անշուշտ, ինչ-որ հետք թողնում են նաև ընթերցողի հոգում», - գրում է Ա. Մաղոյանը²⁰:

Ուխտագնացությունների համար խիստ բնութագրական, գրեթե պարտադիր կաղապար է հեղինակների կողմից Աստծուն կամ որևէ սրբի գոհության մատուցումն առ այն, որ իրեն արժանացրել է այս կամ այն սրբավայրի տեսուն և երկրպագությանը: Սիմեոն Լեհացու Ուղեգրության՝ Արևմտյան Հայաստանին վերաբերող դրվագներում առկա նմանօրինակ մի շարք դեպքերից (195, 198, 199, 202, 203) կատարենք մեկ մեջբերում. «Եւ իբրև տեսաք զխուպայրն Մշու սուլբան սուրբ Կարապետու՝ անկաք ի վերա երեսաց մերոց եւ բազում խնդութեամբ լցեալ գոհացաք զԱստծոյ, որ արժանի արար գնեզ տեսոյն սուրբ Կարապետին. փա՛ռք Աստուծոյ» (197):

Սուրբ Կարապետի տաճարը և նրա շրջակայքը, ուր Լեհացին անցկացնում է երեք օր, պատկերված է բավական ընդարձակ և վարպետությամբ: Այդ վանքի նկարագրության առիթով է, որ ուղեգիրը օգտագործում է ուխտագնացական ուղեգրությունների համար հատկանշական այլևայլ ձևեր: Դրանցից մեկը, ինչպես ավանդություններին տեղ տալը, նույնպես նպատակաուղղված է սրբավայրերի գովաբանությանը, այն է, որ որևէ ուխտատեղիի նկարագրության մեջ հատուկ շեշտվում է ուխտավորների այցելությունների հաճախակիության հանգամանքը՝ իբր տվյալ ուխտավայրի համար կարևոր դեր ունեցող մի գործոն: Սիմեոնի Ուղեգրության մեջ կարդում ենք. «Եւ այլ առաջ տեսաք հազար եւ անելի թօնիրս եւ օճախ վասն ուխտատրաց, որ անդ խորու եւ պիրեան կ'եփեն, զի ամենայն տիեզերաց գան առ նա (ս. Կարապետ, - Ա. Ս.) ի հեռու եւ օտար աշխարհաց՝ Ուռումելու եւ Լեհաց ԲՌ-ԳՌ-հոգի կու լինի...» (199-200):

Ուղեգրություններում մաս հիշվում է այն հանգամանքը, թե հատկապես ո՞ր տոնին է ձեռնարկվում ուխտագնացություն որևէ ուխտատեղի: Միմեռնը գրում է, որ ս. Կարապետի «ուխտն է Վարդավառի օրն» (200):

Հայաստանին վերաբերող մասում արտահայտվել են Միմեռն Լեհացու կրոնական զգացմունքները: Նրա ստղերում արժանի է քրիստոնեական հայրենի սրբավայրերի հանդեպ սիրով լեցուն ուխտավորի սիրտը: Սակայն, ի դեմս կրոնականի, Ուղեգրության մեջ արտահայտություն են գտնում մաս Միմեռնի հայրենասիրական խոսումները: Ինչպես առհասարակ հայոց պատմության անցյալ դարերում, այնպես էլ, առավել ևս, ԺԷ դարում կրոնի ու հայրենիքի գաղափարները միմյանցից տարանջատ չեն ընկալվել:

Ճանաչելով և սիրելով հայկական սրբավայրերը, հայր կլտրացներ իր կապը լուսավորչական դավանության հետ, որը սուրբ մախահայրերի կրոնն է, հայոց պատմության փառավոր շրջանների ուղեկիցը, որևէ դարերի հողավայրում ձեռք է բերել ազգային բովանդակություն:

Լեհացու համոզմամբ լուսավորչական դավանանքին հավատարմությունը ունիքորների՝ հատկապես ԺԷ դարում ուժգնացած շարժմանը դիմագրավելու հուսալի ճանապարհներից մեկն էր: Այս խորին մտահոգությամբ Լեհացին ավելի շատ ներքին ջերմություն, քան արտաքին փայլ է ներդնում իր նկարագրություններում: Հռոմի, Վենետիկի ու Երուսաղեմի շքեղաշուք տաճարները տեսած մեր ուղեգիրը, թվում է, առավել երկյուղածությամբ ու ջերմեռանդորեն, առավել սիրով ու հպարտությամբ է գրում հայաստանյան ուխտավայրերի մասին:

Ինչպես ասացինք, Լեհացու Ուղեգրության մեջ (ոչ միայն Հայաստանին վերաբերող դրվագներում) կրոնասիրական զգացմունքները ունեն հայրենասիրական մղումներ, ինչպես մի այլ առիթով ասել է Լեռն, «կրոնը ազգության գաղափարից բաժանվել չէր կարող»²¹: Մ. Աբեղյանը մեզ հետաքրքրող հարյուրամյակի հայ մատենագրության «իշխող գաղափարն ու զգացումը» համարում է «երկու բան, կրոնասիրություն և հայրենասիրություն»²²: Միմեռն Լեհացու Ուղեգրության մեջ մեկտեղվել են այդ երկու սկիզբները:

Լեհացին ճամփորդության միջոցին իր հետ, անշուշտ, վերցնում է իր ընթերցանության գրքերը: Յավոք, նա ստույգ չի նշում, թե ինչ գրքեր էին դրանք, որը կհետաքրքրի մեր գործը Ուղեգրության մի շարք արտահայտությունների սկզբնաղբյուրը պարզելու խնդրում: Ակինյանը գրում է. «Անիկա (Միմեռն Լեհացին, -Ա. Ս.) կը սիրւք ընթերցանութիւնը եւ հպարտ էր որ գիտէր կարդալ եւ գրել: Ուսած էր վայելուչ նոտրգիր: Իր սիրած

ընթերցանութեան գրքերն էին Վարք Հարանց, Յայսմաւորք եւ պատմագիրներ՝ յանուանէ Միրայէլ Ասորի, Թովմաս Սեծոփեցի եւն» (Ալիմյան, էջ ԺԵ-ԺԶ):

Միմեռնն իր գրքերը տեղափոխում էր տեղից-տեղ: Թիրայում նա ճամպուկը, դրանը և ապրանքները պահ է տալիս Կիրակոս անունով մեկի մոտ, և Կոզալ Հիսարում հիվանդանալուց և ապաքինվելուց հետո պարզվում է, որ Կիրակոսը մահացել է, իսկ նրա գույքը՝ բռնագրավել պարտատերերի կողմից: Միմեռնին Կիրակոսի գործակիցը լինելու մեղադրանքով բանտ են նետում: Բանտից և ապա 5 ամիս տևող հիվանդութունից ազատվելով, Լեհացին գրում է. «Ձոր սակաւ մի գօրացեալ՝ աճապարեցի եւ հնասայ ի ՊՈՒՐՄԱ, յոյժ տրտում եւ տխուր, զի զայլ ինչ այնպէս չհոգայի որպէս զգրեանս: Եւ ասի զողբս ի վերայ տալեհիս» (184):

Մեզ անհայտ է, թե հատկապես որ հեղինակների գրքերն են գտնվել իր մոտ: Ե. Ալիմյանը հիշում է Լվովի Մատենադարանում Cod. arm. 52 թվի տակ պահվող մի «Գանձարան-տաղարան» ժողովածուի մասին, որը մինչև ուղևորությունը սկսելը, 1606-ին գնել է Միմեռն Լեհացին: Այդ մասին Միմեռնի ինքնագիր հիշատակագրության մեջ կա գրանցում. «Արդ ի թվ. ՌՃԵ (1606) ապրիլ է ի թագաւորութեան Լեհաց երրորդ Ջիկմունտին, ի կաթողիկոսութեանն տէր Մելքիսեթի եւ առաջնորդութեանն այսմ նահանգիս տէր Կարապետ վարդապետի, ես անպիտան եւ յանարժան Միմեռն դպիրս վերջին ստացողս պատուական գրգիս, որ է Գանձատեար եւ տաղեր: Եւ գնեցի զսա ի հալալ ընչից եւ յարդար վաստակոցս, յիշատակ ինձ եւ իմ ծնողացս, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ. ամէն» (387):

Միմեռն Լեհացու «ճամատանով գրեանքը» կորչում են, բայց գրքերը, ինչպես նրա հետ էին ճամփորդության սկզբից (հիշենք, որ նա կարդացած գրքերով է բացատրում իր ուղևորության ձեռնարկումը), այնպես էլ շարունակում են «ուղեկցել» մինչև ուղևորության ավարտը: Ուղեգրությունը գրելիս նա լայնորեն օգտագործում է այդ (և ոչ միայն այդ) գրքերից իրեն ծանոթ տվյալները, համադրում կամ հակադրում տեսածի ու լսածի հետ:

Գժբայստարար նա իր բոլոր աղբյուրները մատնացույց չի անում, հիշատակում է միայն Վարք հարանց, Յայսմավորք, Գիրք հարցմանց և Պատմութիւն պղնձէ քաղաքին գրքերը, իսկ պատմագիրներից՝ Միրայէլ Ասորուն և Թովմա Սեծոփեցուն:

Այստեղ հարկ է խոսել նաև նրա գրչագրած մատյանների մասին. նա ձեռագրեր էր ընդօրինակում՝ օգտվելով ճանապարհորդության ընդհատումներից, «մինչևեւ այց արացել ինձ Տէր եւ հասուցել

գիս փափագանացս» (43): Չեռագրեր գրչագրելու պատվերները Միմեռնը ընդունում էր իր ուխտագնացությանը անհրաժեշտ դրամական միջոցներ վաստակելու նպատակով: Ահա թե ինչպես է նկարագրում այդ ամենը Լեհացին. «Եւ կացի անդ (ի Կ. Պօլիս) ամ մի, աշխատելով եւ վաստակելով գրագրութեամբ, զի ժողովեցից պաշար սուրբ յերուսաղէմ զնալ, զի եւ անդ էի ուխտ արել: Եւ Սաամայօլ գրագիրն խիստ խիյմաք ունէր. եւ թէպէտ կարգաւորք շատ են, գրող չկայ. զի կարդալն այլ արուեստ է եւ գրելն այլ: Եւ տուին ինձ յողով գիրք գրել աշխարհականք եւ կարգաւորք եւ քահանայք: Իսկ ես ջանայի եւ խայրաք առնէի, եւ տգնէի ցայգ եւ ցերեկ. փութայի, ճեպէի հանապագ, զի վաստակիցեմ ճանապարհի խարճ. զի ձեռս զատ չէր մնացել. եւ օրն Ծ-Կ դրամ վաստակէի: Աստուած շէն պահէ: Սաամայօլ ժողովորդն եւ զքահանայս, զի այն ամն ժողովեցի ուրսուն դուռուշ» (209-210):

Պոլսում և այլ քաղաքներում ընդօրինակած նրա ձեռագրերից մեզ հասել են Գրիգոր Տաբևացու «Գիրք Հարցմանց»-ը, «Լուծմունք առ որս Գրիգորի Աստվածաբանի»-ն, «Աղօթամատոյց»-ը, «Ժողովածո»-ն, Վարդանի «Մեկնութիւն Հնգամատենին»-ը, «Կանոնագիրք»-ը, Մատթեոսի ավետարանի «Մեկնութիւն»-ը, «Շարակնոց»-ը, «Առակք Սողոմոնի»-ն, «Ոսկեփորիկ»-ը ևն:

Թե՛ իր ունեցած և ընթերցած գրքերը և թե՛ իր ընդօրինակած ձեռագրերը (ավելի քիչ չափով, քանի որ պատվեր էր կատարում) անմիջականորեն բարերար ազդեցություն են գործել Լեհացու աշխարհայացքի ձևավորման վրա: Դրանք գրական ճաշակ, գեղագիտական ըմբռնումների որոշակի համակարգ են սերմանել նրա մեջ: Ավելին, նա այս կամ այն չափով օգտագործում է դրանք, անում մեջբերումներ: Դա պատկանում է, այսպես ասած, ուղեգրության մեջ առկա՝ վաղորդ ծանոթ գիտելիքների հիման վրա արված նկարագրությունների թվին: Ուղեգրություններում սովորաբար բերվում են երեք տիպի նկարագրություններ՝ տեսածի (երբ տեսնում է մի բան և դնում գործի մեջ), լսածի (երբ ուղեգիրը որևէ մեկից լսում է մի պատմություն, մի տվյալ, մի թիվ ևն և դնում գործի մեջ) և իմացածի (երբ ուղեգիրը նախօրոք գրավոր աղբյուրներից իմացած տվյալները դնում է իր գործի մեջ) հիման վրա: Մենք կխոսենք այս վերջինի մասին:

Միմեռնը հաճախ է նշում իր հաղորդած տեղեկությունների աղբյուրները: Այսպես. «Եւ չէ գարմանք, զի (Հոռոմք) նախնեաց թշնամիք են Հայոց. թէ որ կամի՝ թող կարդայ գՄիխալ գիրքն, Թոմա պատմագիրն եւ այլն...» (181): Ակինյանի ծանոթագրության համաձայն խոսքը առաջին դեպքում Միքայել Ասորու «Ժամանակագրության» մասին է, իսկ երկրորդը, ինչպես նշված է առաջարանում (ԺԶ), վերաբերում է Թով-

մա Մեծովեցու «Պատմությանը»: Շատ դեպքերում Միմեոնը անուններ չի տալիս և բավարարվում է «Ձի եւ զայս ընթերցայ ի պատմագիրս...» (181), «...գոր եւ ի գիրս ընթերցեալ...» (202), «...եւ մեք գտար ի պատմագիրս...» (231), «...որպէս եւ ի գիրս ընթերնումք» (232), «Եւ կայ ի գիրս» (240), «...ըստ պատմագրաց...» (346), «Եւ գտար ի գրոց...» (10), «... որոյ վկայ են պատմագիրք» (191) և այլ այսպիսի «անհասցե» հղումներով, որի նպատակը իր խոսքին հավաստիություն հաղորդելն է:

Երբեմն Միմեոնը ինքն է հանձնարարում ընթերցողին զանել և կարդալ համապատասխան գիրքը, որովհետև ավելորդ է համարում մանրամասն գրել այն ամենի մասին, ինչը արդեն գրված է: Պատմելով այն մասին, որ դպտիները «... քլպատեն ոչ միայն զարուս, այլ եւ զԲզ...», Միմեոնը դիմում է ընթերցողին. «...եւ թէ զպատճառն այսմ կամիս իմանալ, ընթերցիր զպատմագիրս, գոր ոչ է պարտ երկրորդելք» (218): Պատահում է, որ ուղեգիրը հետաքրքրասեր ընթերցողին օգնելու նկատառումով ստույգ անուններ է տալիս: Օրինակ. «...անդ («Տէվլլուի Աստուածածին») եկեղեցում,- Ա. Ս.) կան եւ զԷնքն Մերկերիոսի՝ յորժամ հրամայեց Մերկերիոս, թէ երթ եւ սպան գհայեռիչն որոյ իմոյ, որով եւ սպան զպիղծն Ուլիանոս: Եթէ կամիս գիտ եւ կարդայ Յայսմատորքն սուրբ Բարսղի» (328): Եվ կամ՝ տաճիկների կրոնի մասին տվյալներ հաղորդելուց հետո նա գրում է. «... գոր գրած է ի գիրքն Հարցմանց. այլ եւ զոցես ի պատասխանիսն Մատթեոսի վարդապետի ընդդէմ Տաճկաց» (30): Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանցի» մի ընդօրինակությունը պատկանում է Լեհացու գրչին²³: Այստեղ պետք է խոսել Երուսաղեմին վերաբերող հասովածի մասին, ուր Միմեոնը անհարկի է համարում տալ սրբավայրերի երկար-բարակ նկարագրությունը, որովհետև դրանք ընթերցողը կարող է զանել «... մի ըստ միոջէ գրած ի Տնօրինականքն...» (257): Այդ գրվածքի մեկ այլ հիշատակությունից պարզվում է, որ դա ցուցակ է (252): Հետաքրքիր են այս տողերը. «... իսկ թէ տնօրինականքն ո՞րք են կամ ի՞նչ տեղ կամ որո՞ց ձեռք, զայն չէ պարտ երկրորդել, զի կայ հաւարած եւ գրած բազում աշխատութեամբ, որ կոչի Տնօրինականք, գիտ եւ կարդա» (254-255): Ինչպես պարզ երևում է այս մեջբերումից, մի դեպքում (սկզբում) տնօրինականքը գրված է փոքրատառով, մյուս դեպքում (վերջում)՝ մեծատառով: Բառի այս վերջին գործածության մեջ վերնագիր է նշանակում: Դատելով «բազում աշխատութեամբ» արտահայտությունից և նյութի ընդգրկումներից (որո՞նք են տնօրինական տեղերը, որտե՞ղ և ո՞ւմ ձեռքին են) այն պետք է, որ ծավալուն գիրք լիներ: Մեզ չհաջողվեց պարզել, թե որ գրքի մասին է խոսքը: Մի բան պարզ է, որ դա եղել է բավական ընդարձակ և Միմեոնի օրերում տարածված մի ուղեցույց:

Լեհացու գործածած աղբյուրներից կարելի է հիշել Վարք հարանց և Յայսմատուրք ժողովածուները, որոնցից նա քաղել է սրբերի կյանքին, նրանց մասունքներին վերաբերող բազմաթիվ տեղեկություններ: Անշուշտ Սիմեոնի աղբյուրների շարքում առաջինը պետք է խոսել Աստվածաշնչի մասին:

Լեհացին հաճախ բառացի չի բերում Աստվածաշնչի տողերը: Անհրաժեշտության դեպքում նա փոփոխություններ է մտցնում մեջբերվող կտորում: Ահա մի նմուշ. Բեթղեհեմում. «...ի կէս ճանապարհին հանդիպեցաք գերեզմանին Հոաբէլի, որ լայր վանս որդոցն կտորոյոյ եւ ոչ կամիր մխիթարել» (265): Դ-ա Մատթեոսի ավետարանի տողն է (կրրկրնված Երեմիայի մարգարեությունից). «Հոաբէլ լայր գորդիս իւր եւ ոչ կամէր մխիթարել, զի ոչ էին» (Մատթեոս, Բ, 18): Ինչպես տեսնում ենք, Սիմեոնը «խմբագրել» է հիշյալ կառույցը, ուր ստույգ չի նշվում լացի պատճառը, այլ ասվում է «զի ոչ էին»: Այնինչ Լեհացին, հանելով «զի ոչ էին»-ը, ավելացնում է «կոտորոյոյ» բառը: Դ-րանով առավել հստակություն է մտցվում նկարագրության մեջ:

Բացի Աստվածաշնչից կատարած մեջբերումները, Սիմեոն Լեհացու խոսքը ամենուրեք հագեցած է սուրբ Գրքին հատուկ բանաձևերով ու արտա հայտություններով: Մի առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել մանրակրկիտ համեմատության միջոցով որոշելը, թե որքանո՞վ է ուղեգիրը ազդվել Կռակարաններից, այս կամ այն բառակապակցության մեջ որսն՞ող է ավարտվում Աստվածաշունչը, և որտեղի՞ց է սկսվում Լեհացին:

Մակայն բարդ աշխատատար այդ գործը նվազ արդյունավետ կարող է լինել:

Եթե Աստվածաշնչի պարագային Սիմեոնը հիշատակում է իր աղբյուրը, նույնը չի կարելի ասել Հովհան Մամիկոնյանի մասին, որի անունը Սիմեոնը ոչ մի տեղ չի նշում, թեպետ անհնար է, որ ծանոթ չլինի նրա գործին:

Սիմեոն Լեհացին իր Ուղեգրության՝ Մշո սուրբ Կարապետին նվիրված մատուց պատմում է մի ավանդություն. «Եւ ի ծախս կողմն (սուրբ Կարապետի,- Ա. Ս.) մատուռ մի այլ տեսաք. եւ ասին. Կին մի իշխանի շինել է զայս. կամէր մտանել ի ներս եւ չթողուին, զի կնոջ հրաման չկար. եւ նա բռնութեամբ եմուտ ի ներս եւ ել սուրբ գերեզմանէն գորութիւն, զի որպէս այր մի գրեհաւոր եհար գեղարդեամբ եւ սպան զնա եւ քաղեցաւ աստ» (199): Այս ավանդության աղբյուրը Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» գրքի մի հատվածն է: Հովհան Մամիկոնյանի բերած ավանդագրույցը՝ կնոջ եկեղեցի մտնելու և սպանվելու մասին²¹, Լեհացին խիստ համառոտելով մտցրել է իր շարադրանքի մեջ: Բացառ-

ված չէ, որ Լեհացին այդ պատմությունը իրոք լսել է («եւ ասին») վանականներից, որոնք Հովհան Մամիկոնյանի գրքից ծանոթ են եղել ավանդությանը: Բայց այս կարծիքին հակառակ է խոսում երկու հեղինակների գործերում որոշ արտահայտչամիջոցների նույնությունը:

Հովհան Մամիկոնյան

«... ուր հաճեցաւ տէր բնակել սրբոցդ» (57) կամ՝ «Հաճեցաւ տէր սրբոցդ բնակիլ ի տեղուջս յայս» (114)

Միմեռն Լեհացի

«աստ հաճեցաւ տէր բնակիլ սրբոց» (200):

Լեհացուց բերված հատվածում և Հովհան Մամիկոնյանի բնագրում առկա է այս նմանությունը. «... Տեսանեմ այր մի զիսառք ընդ ամպս որոտացեալ և ելեալ յեկեղեցոյն զայ առ իս. տեսանեմ առ նա զէն սրեալ և քազուցեալ և յարեան ներկեալ: Եւ ընդ բանիցն եհար զնա, և անդէն սատակեցաւ: ... և պատրաստեալ նմա զերեզման եղին ի նոյն տեղուջն» (154-155, ընդգծումներին իմն են, - Ա. Ս.): Բացառված չէ, սակայն, որ երկուսն էլ օգտված լինեն այլ, մեզ անհայտ մի հեղինակից:

Վերևում արդեն ասացինք, որ հաճախ Լեհացին ավերորդ մանրամասների մեջ չխորանալու կամ իր խոսքին հավաստիություն տալու կամ էլ պարզապես իր պատումի բնական ընթացքը չխաթարելու, նկարագրությունների կառուցվածքը չխախտելու համար ավելին իմանալու հետաքրքրասիրություն ունեցող ընթերցողներին բազում անգամներ տարբեր առիթներով հղումներ է անում պատմագիրներին («... ընթերցիր զպատմագիրս...», 218 և այլն): Նույն միտումը զանում ենք «Տարոնի պատմության» մեջ. «Եւ զկնի այտոյիկ եթէ իմանալ որ կամեսցի զայն, ի պատմագիրս հարցցէ» (143): Այս ամենը զայիս են հաստատելու, որ Լեհացին լավ ծանոթ է եղել Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» գրքին, օգտվել է նրանից: Վերջապես այդ պատմության հեղինակը մեկն է այն վիպասաններից, որոնք ներշնչել են պատանի Միմեռնին ուխտագնացություն ձեռնարկելու նաև դեպի Մուշ («Եւ երբեմն ընթերցեալ իմ զՎարս Հարանց եւ զՊատմութիւն վիպասանաց...», 2):

Միմեռն Լեհացու Ուղեգրության մեջ կան որոշ կաղապարներ, որոնք առհասարակ հայ մատենագրության մեջ ընդունված ու տարածված լինելով, դժվար է ճշգրիտ ասել, թե հատկապես որ սկզբնաղբյուրից են ծագում: Օրինակ, Միմեռնը, նկարագրելով Հռոմում ճանապարհներին տիրող կարգ ու կանոնը, այսպես է գրում. «... յերկար ճանապարհներն զնայաք խաղաղ եւ անդորր. որպէս ի ժամանակս Մօրկայ կայսերն» (87): Միմեռնից հետո այս նույն առածի կիրառությանը հանդիպում ենք

Առաքել Գավրիժեցու «Պատմութեան» մեջ²⁵: Սակայն 10-րդ դարի Անանուն Ջրուցագրի գործում, որ վերագրվել է Հովհաննես Դբասխանակերտցու հիշած Շապուհ Բագրատունուն և նրա անվան տակ էլ հրատարակվել, նույնպես գտնում ենք Մորիկ կայսեր օրերում տիրող խաղաղ վիճակի մասին համանման արտահայտություն²⁶: Այդ արտահայտությունը տեսնում ենք նաև մի Ճառընտիրում²⁷ և «Պատմութիւն Հացունեաց Խաչին» (Վիեննա, ձեռ. ք. 791, քղ 132 ա) գրվածքում (տե՛ս Ալիքնյանի՝ Լեհացու Ուղեգրության ծանոթագրությունը, էջ 87):

Պարզ է, որ այս դեպքում հնարավոր չէ որոշել, քե՞ն որտեղից է վերցրել Սիմեոնը: Այլ է խնդիրը անանուն հեղինակի «Պատմութիւն Պղնձե քաղաքին» երկից Սիմեոնի ունեցած ազդեցության վերաբերմամբ: Դա 10-րդ դարում Տայքի Գավիթ Կյուրաղապատ իշխանի պատվերով արարեբերնից կատարված քարգմանությունն է, որը հետագայում լայն տարածում է ստանում, «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ» բնագրի հետ միասին ունենում բազմաթիվ ընդօրինակություններ ու հրատարակություններ:

«Պատմութիւն Պղնձե քաղաքին» գրվածքը Սիմեոն Լեհացու աղբյուրներից մեկն է: Նրանից ուղեգիրը փոխ է առել նկարագրությունների կաղապարներ, պատկերային համակարգի ձևեր, լեզվաոճական միջոցներ: Պարզ է, այստեղ խոսքը ակամա, չզիտակցված կերպով կատարած «բանաբարությունների» մասին է: «Պատմությունը» Լեհացու ընթերցանության գրքերից մեկն է եղել, հեղինակի մեջ որոշակի նստվածք է տվել, հետևաբար Ուղեգրությունը գրվել է այդ գրվածքի ներգործությամբ: Սիմեոնին «Պղնձե քաղաքի պատմությունը», հավանաբար նրա պատանեկության տարիներին, գրավել է հետաքրքրաշարժ սյուժեով, հրաշապատում հեքիաթի և քրիստոնեության գաղափարախոսության ուշազրթավ միահյուսմամբ հատկանշվող կառուցվածքով, հոգեբանական-փիլիսոփայական խորքային ներքափանցումներով: Բայց Ուղեգրության մեջ ակնառու է «Պատմության» ձևական ազդեցությունը: Լեհացու երևակայության վրա խորապես ներգործել են «Պատմության» պատկերներն ու արտահայտությունները, որոշակի հետք թողել նրա ստեղծագործական ունակությունների ձևավորման մեջ: Լեհացին մի տեղ միայն հիշում է Պղնձե քաղաքը (54), մնացած դեպքերում լռության է մատնում, բայց դա պետք է վերագրել ոչ քե՞ն նրա անփութությանը, այլ այն իրողությանը, որ Սիմեոնը իր կամքից անկախ է կրել ազդեցություն, ուստի և չի նշել որևէ աղբյուր: Չուզահեռ բերենք մի շարք նույնական ձևեր և նմանություններ: «Պատմութիւն Պղնձե քաղաքին» գրքին հղումները տրվում են 1911 թվականի քիֆլիսյան հրատարակությունից:

«Յայնժամ շատ լացին,
և գնացին յանուն Աստուծոյ մինչև
'ի կէս օր, և մտան 'ի դուռ
աշխարհին սևագոյն բլուր մի բարձր
և ի հեռուստ որպէս զծուխ երևէր, և
դիմեցին ի նա: Եւ իբրև մքուեացան՝
տեսին, զի գմբէք էր բարձր և գեղեցիկ...
(էջ 7),

«Ով որ տեսնու գայս
վայելչութիւնս, նա բող
վառատրէ զԱստուած...» (16),

«Ասաց Ամիրնուսէն՝ փառք
Աստուծոյ որպէս գեղեցիկ շինուածք
են» (էջ 8),

«...և ոսկի գմբէք մի 'ի վերայ ոսկի
առիծ մի գուգած էր քան
զկենդանի...» (38),

«Եւ ասաց Ամիրնուսէն՝ թէ գատ 'ի
յԱստուծոյ ոչ որ կարէ շինել...» (էջ 8),

«Եւ 'ի վիզն շարոց մարգարիտ մեծ
քան գաղաւնոյ ձու...» (38),

«Եկայք նոր զարմանք տեսէք,
որ եղաք մեր անմխիթար. լաւ էր թէ
չէաք տեսեր, այս տեսիլս ի լաց
մեզ արար» (36),

«Եւ երկու ատուր ճանապարհէ
ծովով կ'երևէր Սա Մարքոին
զանկակատուն եւ եկեղեցիքն,
որպէս զՊղնձե քաղաքն»
(էջ 54),

«Իբրև մերձեցաք ի մեծն
Հոռմ. եւ ատուր միճանապար-
հէ երևէր սուրբ Պետրոսի
գմբէքն» (91),

«Եւ մեր գայս ամենայն
տեսեալ գոհացողական փառս
մատուցաք Աստուծոյ...» (57),

«... Եւ մեր գայն տեսեալ՝
ներքուստ փառատրեցաք
զԱստուած...» (61),

«Եւ ի վերայ դռան սպիտակ
մերմէռէ իբրև զկենդանի
գուգած էր կոյս մի գեղեցիկ...»
(58),

«... եւ գատ ի Աստուծոյ ոչ որ
կարէ շինել» (էջ 55),

«Եւ այլ տեսաք տասն
մարգարիտ կախ՝ աղաւնոյ
հակիթի չափ...» (57),

«...լաւ էր թէ չէի ծնեալ կամ թէ
չէի եկեալ աստ, քան թէ տեսի
ես զայսպիսի աղիողորմ
խեղճս աչօք իմովք» (19),

«Ի ներս մտան ու տեսին զի երեք սիւն կայր ի մէջ դարպասին. մեկն՝ լուրջ, մէկն կարմիր, մէկն՝ կանաչ... Եւ սիւն մի եւս կայր ի մէջ դարպասին, որ երեսուն կանգուն բարձր էր ... (37),

«Այլ եւ տեսար ի նմա բազում զարմանալի սիւնս... ոմն կարմիր, ոմն սպիտակ իբրև զծիւն, ոմն լուրջ եւ ոմն կանաչ ոմն սեւ եւ ոմն ծիրանի...: Եւ կայր սիւն մի մեծ ի մէջ տաճարին եւ մարդաշափ մի պատած էր զինքն յերկր... (9-10):

Սրանք միայն մի մասն են այն համանման ձևերի, որ առկա են երկու գրվածքներում: «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» գրքի հյուսվածքում առատորեն տեղ է տրված չափաձո խոսքի նմուշներին, որոնք երբեմն տողատված չեն: Մանապարհորդները բազմաթիվ ողբեր են ընթերցում՝ գրված քաղաքի դռներին ու տապաններին, որոնք բերվում են շարադրանքում: Առիթից առիթ ողբեր է ասում նաև Ամիրճուսէն: Այդ դրվագները ունեն այսպիսի «նախաբաններ». «Տեսաւ Ամիրճուսէն (մարդկանց, որոնք նստած և մեռած էին,- Ա. Ս.) ու զարմացաւ, և ասաց զողբս այս» (36), «Եւ վասն այն ասաց Ամիրճուսէն զողբս զայս ի վերայ Տալիսիին» (47) և այլն: Այս խոսքերին հաջորդում են ողբական տողերը: Այս երևույթը (արձակ գործի պատումը ընդմիջել չափաձո խոսքով) լայնորեն կիրառել են Խաչատուր Կեչառեցիին և Գրիգորիս Աղքամարցիին՝ մեկ այլ ավելի հին քարգմանական գործ՝ «Ալեքսանդրի պատմությունը», խմբագրելիս՝ գրելով ուշագրավ կաֆաներ:

Մենք հակված ենք կարծելու, որ Միմեոն Լեհացին Ուղեգրության էջերում չափաձո բանատողեր (ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն) ղնելով, շարունակել է միևնույն գիծը: Ինչպես «Պղնձէ քաղաքի պատմության» մեջ, Միմեոնը նույնպես Ուղեգրության իր չափաբերությունները սկսում է այսպես. «Եւ ես տեսեալ զայս ամենայն աղէտս տարակուսանաց եւ անցից գոր եկին ի գլուխս մեր եւ հառաչմամբ ասի զողբս զայս» (51), «...եւ ասի զողբս ի վերայ տալեհիս անաջող» (96), «Եւ ասի զողբս ի վերայ տալեհիս.» (184), «... եւ ասեմ զողբս զայս» (322): Այս նախադասությունները, ինչպես հեշտ է նկատել, շատ բանով հիշեցնում են «Պատմութիւն Պղնձէ քաղաքին» գրքի համապատասխան կառույցները: Դա էլ մի ավելորդ ապացույցն է այն բանի, որ Լեհացին ծանոթ է եղել վերոհիշյալ գրքին:

Միմեոն Լեհացու Ուղեգրության մեջ եղած չափաձո ողբերը բանաստեղծական արվեստով չեն փայլում: Դրանցում իշխում են «պրոզայիկ» ձևերը, զգացմունքների արհեստականությունը, արտահայտման

պարզունակությունը և այլն: «Անձնական վշտի արտահայտությունները,- Լեհացու չափածո ողբերի մասին գրում է Ա. Մադոյանը,- անհամեմատ քույլ են ստացվել: Պակաս քնարական է ու զգացմունքային նաև քրոջ մահվան կապակցությամբ ասված ողբը (179), որին խանգարել է ինչ-որ նախօրինակի նմանակելու գուցեև չզիտակցված ձգտումը»²⁸: Նույն բանը Ալիմյանը ցույց է տվել՝ Սիմեոնի «Յաշխարհս ես ի շուրջ եկի» սկզբնատող ունեցող չափածո ողբը համեմատելով Նահապետ Քուչակին վերագրվող «Յաշխարհս ես ի ժուռ եկա» սկզբնատողով հայրենների հետ²⁹:

Լեհացու նույն ողբի մի երկտողը համեմատվում է նաև Սարգիս Արեղայի Ուղեգրության վերջում բերված հայրենի սկսվածքի հետ.

Սարգիս Արեղա

Միմեոն Լեհացի

Գարիպ եմ ու խիստ լալի
Այս օտար աշխարհս որ եկի...³⁰

Գարիպ եմ ու խիստ լալի
Այս օտար երկիրս որ եկի...
(323):

Գրեթե նույն տողերին հանդիպում ենք Լ. Խաչիկյանի մատնանշած մեկ այլ հայրենում³¹:

Լեհացին լավ իմացել է նաև շարականները, որոնցից առանձին մեջբերումներ է անում (289):

Միմեոնը լայնորեն օգտագործում է իր ձեռքի տակ եղած պատմական և սրբախոսական գործերը, բազմիցս հիշում պատմագիրներին, անհրաժեշտության դեպքում, տալիս հեղինակների կամ գրքերի անուններ, վկայակոչումներ է անում նրանց: Այդ ամենը վկայում է, որ ուղեգիրը խորապես գիտի մայրենիով գրված կամ քարգմանված գրականությունը, կտրված չէ հայ մատենագրության լավագույն ավանդներից: Գրականության լայն իմացությանն է գումարվել ուղեգրի մեծ դիտողականությունը, և արդյունքում ստացվել է ըստ ամենայնի արժեքավոր մի ուղեգրություն:

Այստեղ հարկ է խոսել նաև Ուղեգրության մեկ այլ յուրահատկության մասին, որը սկսվում է ժողովրդական ձևերի օգտագործումով: Միմեոնի խոսքը հագեցած է ժողովրդական կենսագագացողությամբ, հետևաբար հյութեղ է և կենդանի: Կարելի է ասվածը հաստատել բերելով բազմաթիվ օրինակներ, որոնք ինքնահատուկ են միայն ժողովրդական խոսքարվեստին: «Մեր հասար մեր մուրատին. Աստուած գամենքն հասցնէ իրեանց մուրատին» (198), «Զուխտն կատարեցար, մեր մուրատին հասար. դուր այլ հասնիք ձեր մուրատին» (98), «այք հագար

պիսի...» (9, 17, 25, 95), «որպէս գովեցից» (12), «ոչ գիտէ մարդ գորն զնէ կամ ...յո՛րն հայի» (18), «Աստուած շէն պահի...» (210), «... ջրի պէս կու խօսէն» (198), «Միայն հոգի չկարեն տալ, քայց այլ ամեն հոմար կ'ելնէ ի ձեռաց նոցա» (վեներոիկցիների,- Ա. Ս., էջ 70) և այլն:

Հ. Սահակյանը, օրինակ, Միմեռնի աղբյուրների շարքում չի բացառում նաև հունական ուղեգրությունների՝ պորոսկինտարների հնաբաժոր առկայությունը, որոնք տեսակի առաջին նմուշներն են. «Ամենայն հավանականությամբ, քարգմանությունների օգնությամբ նա ծանոթացել է հույն ուլտաավորների ուղեգրություններին, քանի որ իր շարադրանքում օգտագործել է մի շարք սկզբունքներ, մշակված նրանց կողմից»²²: Այնուհետև այդ սկզբունքներից նշվում է, օրինակ, ճամփաների հեռավորությունը ժամանակի միավորներով արտահայտելու և եկեղեցիների ու տաճարների և նրանց առանձին մասերի (դռներ, խորաններ, լապտերներ) չափերը արտացոլելու միտումները, որոնք համեմատելի են մի կողմից Լեհացու, մյուս կողմից՝ հունական և ռուսական ուղեգրությունների հետ: Պետք է ասել, որ սրանք դեռևս բավարար հիմք չեն տալիս ասելու, որ Միմեռնը ծանոթ էր հունական ուղեգրական երկերին, քանի որ գործ ունենք համընդհանուր իրողության հետ. այն ժամանակներում ուղևորները հասկանալի պատճառներով տարածական չափեր չեն կարողացել օգտագործել և մնում էր անցած ճանապարհը ներկայացնել օրերով, շաբաթներով կամ ամիսներով՝ գոնե մոտավոր պատկերացում տալու նպատակով: Ինչ վերաբերում է այցելավայրերի կառույցների կամ բնակիչների մասին քվերով արտահայտված նկարագրություններին, դա ևս կարող էր հունականից անկախ կիրառվել: Բացի այս ամենը, չպետք է մոռանալ, որ առաջին սկզբունքը օգտագործել է դեռևս հայ անհայտ հեղինակը «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» գործում, իսկ երկրորդը՝ Միմեռնից առաջ ստեղծագործած հայ գրեթե բոլոր ուղեգիրները: Հետևաբար, ավելի օրինաչափ է տվյալ սկզբունքների աղբյուրները որոնել հայկական նույն տեսակի վերաբերող գրվածքներում: Եվ սակայն, դա էլ չենք կարող անվերապահորեն պնդել, քանի որ, եթե տարբեր ուղեգիրներ միևնույն աչքով են նայել ու տեսել, դա չի նշանակում, թե անպայման ծանոթ էին միմյանց ստեղծագործություններին: Օրինակ, Վեներոիկի մասին հայ ուղեգիրներից յուրաքանչյուրը, ով եղել է այդ քաղաքում, գրում է, որ շինված է ջրի մեջ և շուրջբոլորը ծով է: Սա է Վեներոիկից ստացած առաջին տպավորությունը, նաև այդ քաղաքի հիմնական առանձնահատկությունը, որը կարող էր հայ ուղևորին զարմանք պարզել: Հետևաբար, մեր ուղեգիրները Վեներոիկին անդրադառնալիս գրել են այդ մասին, բնավ չիմանալով, թե իրենցից առաջ ո՞վ ինչպե՞ս է պատկերել նույն քաղաքը: Ինչևէ:

Ժողովրդական լեզվամտածողությունից ու պատկերային համակարգի ակունքներից է սնվում նաև Լեհացու՝ ֆելլախներին վերաբերող հատվածը: Արար ֆելլախները «...փնթի զագիրք են, մերկ եւ խայտառակ, միայն շապկով, մարմինքն աղտոտ, երեսն եւ ձեռքին անլուայ, պոկտիքն մեծ եւ կախ, քթն խրիկն ի վար զայ. եւ աչքին ճարձա, ականջաց դեղին քարախ վազլ. ոտվուն վրայ կլայ բանջար ցանել...» (219), նրանց «... քարսիք, քնճերայք եւ այլ անօքքն շանց եւ խոզից լիզելիք (220): Ժողովրդական արտահայտությունների և ոճական միջոցների կիրարկմամբ Լեհացին իր հաղորդածը առավել պատկերավոր, հետևաբար առավել տպավորիչ է դարձնում: Նույն նպատակին են կոչված ծառայելու հեղինակի համեմատությունները: Ուղեգրին հաջողվում է համանման իրավիճակներ կամ երևույթներ պատկերելու համար գտնել նոր, միայնաց չկրկնող ձևեր: Համեմատությունները մեծագույն մասով, ինչպես բնորոշ է ուղեգրություններին, վերաբերում են համեմատելի օբյեկտների ծավալային հատկանիշներին՝ հիմնականում առարկայի մեծությանը և բարձրությանը: Եվ դա պատահական չէ. քանի որ առաջին աչքի զարնող տպավորությունը հայ ուղեգրի համար նկարագրվող օբյեկտի չափերն են: Այսպես, Սոֆիայի տաճարի հարկաբաժինները այնքան մեծ են, «որ թէ երեսունհազար հոգի մտներ յինքն՝ ոչ լցվեր» (10): Մալթայի դքսին պատկանող մի մավը այնքան մեծ է, որ երևում է «փ վերայ ծովու իբրեւ զլեռ մի...» (175): Սեբաստիայում Սիմեոնը տեսնում է «մեծ տներ որպէս խաներ» (189, իսկ այդ տներում եղած թոնիրների մեծությունը այնպիսին է, որ «եզ մի կու մտնէր մէջն» (անդ): Սոֆիայի տաճարի պատուհաններից «քաղաքն որպէս ձու երեւեր» (11), իսկ Ղալաթիայի բազմաթիվ մեհյանների բարձրությունը ցույց տալու համար Սիմեոնը գրում է, «որ Ստամպոլ եւ ծովն կ'մէտանով առջևն կ'երեւի իբրեւ զխնձոր» (26): Ընդհանուր քաղաքի (Պոլիս) մեծությունը պատկերավոր է արտահայտում Լեհացին. «Եւ այնպէս մեծ է Ստամպոլ, որ թէ կրակ ընկնի տասն հազար, քսան հազար տուն այրի՝ ոչ զիտեն թէ ո՞ր անկաւ կրակն» (30): Արդեն Հռոմը նկարագրելիս ուղեգիրը կրկնություններից չխուսափելու համար պարզապէս Հռոմի մեծությունը համեմատում է Ստամբուլի հետ. «Եւ էր մեծ քան զըՍտամպոլ, բայց կէսն ատեր» (91) Սիմեոնի շարադրանքին խիստ բնութագրական է տարածական համեմատության այս կարճ ձևը, երբ համեմատության անդամները կապում է մեծ մասամբ «որպէս» կապական բառով: Բերենք մի քանի օրինակներ. «Անետիկի նշանավոր ժամացույցը «դրսեւանց շինած էր որպէս բոլորակ մի, որպէս եւ այլ տեղեաց սահաքսն» (60), Կերատայում ձմեռը սաստիկ է լինում «որպէս ցԱրգրումն» (185), «Չանկակատուն մեծ եւ բարձր նման Այասօֆու եւ Երուսաղէմայ...», գրում է Լեհացին Լվովի եկեղեցիներից մեկի մասին (339) և այլն:

Միջնադարյան չափածո ուղեգրություններում եկեղեցիների կանթերները համեմատվում են աստղերի հետ: Այդ համեմատությունը օգտագործել է նաև Սիմեոնը. «... Եւ քան զաստեղս, բազում կանթեղս կախէն...» (160), և կամ՝ «Իսկ կանթեղք զանազան եւ ազգի-ազգի գունովք՝ իբրև զաստեղս երկնից բազմութեամբ էին պայծառացեալ...» (166): Բերենք ևս մի ուշագրավ օրինակ նույն համեմատության. «Իսկ կանթեղք, ջախք եւ լապտերք այնչափ բազում, մինչ զի ծածկեն զերեսս երկնի եւ զաստեղաց» (238): Հետևյալ մեջբերումներում շատ լավ տեսանելի է մի բան. Լեհացին, միևնույն համեմատությունը տարբեր առիթներով օգտագործելով, ամեն անգամվա համար գտել է մի նոր ձև, մի լրացուցիչ մանրամասն, որի շնորհիվ համեմատության յուրաքանչյուր գործածում ձեռք է բերել տարբեր որակական հատկանիշներ, արտահայտման բազմազան միջոցներ: Նմանատիպ «փայլել, վառվել» համեմատելի հատկանիշ ունեցող համեմատություններ կան հետևյալ դրվագում. «Եւ իբրև կատարեցաւ ողջոյն, ազուցին Փափին շուրջաւ մի որպէս փիլոն, յոյժ մեծագին գնոջ. զոր իրեանց լեզուաւ «ալքէմպաս» կոչեն. կանգունն երեքհարիւր դուռուշ. սպիտակ իբրև զծիւն, զոր փայլէր որպէս հայելի. եւ ունէր խաչածէն կոծակ մի եւ մէջն ակն մի զմրուխտ անգին. եւ զլուխն եղին քազ մի կամարածէն երեքյարկեան, ազնիւ եւ անգիտք եւ ունէր մատն ոսկի մատանի սլմասս ակնով, որ վառէր իբրև զճրագ» (135-136):

Վենետիկում ս. Մարկոսի ձիերի մասին հատվածում ևս առկա է նույնպիսի համեմատությունների կուտակում. «Եւ այն ձիանքն քափած զինչ ոսկի կու փայլէին, զոր հային ի վերայ միմիանց որպէս կենդանիք» (55): Հետաքրքիր է, որ նույն պոնձյա ձիերի նկարագրության մեջ նրանց կենդանությունն ու բնականությունն է ընդգծել նաև Մարտիրոս Երզնկացին³³: «Ընթերցողի միտքը մշտապես գործուն ընկալման առիթ ունի, Լեհացին անընդհատ հաղորդում է նորանոր զիտելիքներ,- գրում է Ա. Մադոյանը,- որոնք խորացնում և ամրացնում է նոր կապերով, դիմելով համարանությունների և համեմատությունների՝ ոչ միայն տարածական, այլև երբեմն պատմական-ժամանակային, հոգեբանական-զգայական ընկալումներով»³⁴:

Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը նույն տեսակին պատկանող գործերից առանձնանում է նաև նրանով, որ մեծ չափով տեղ է տրված ճանապարհին հանդիպած անձնավորությունների բնութագրմանը: Սիմեոնը կարողանում է իր նկարագրած մարդկանց ցուցադրել արտահայտիչ գծերով, կենդանի գույներով: Երբեմն այդպիսի նկարագրությունների շնորհիվ Լեհացին ստեղծում է իսկապես գրական կերպարներ, որոնք Սիմեոնի գրչի տակ ձեռք են բերում տեսանելի ու իրական արտահայտություն: Ահա ինչպես է ներկայացվում Երուսաղեմի պառ-

րիարք Գրիգոր Պարոնտերը. «... այր մեծ, յաղթանդամ եւ հսկայածեւ, սրբասնեալ եւ եօթնարփի շնորհօք լցեալ՝ զարդարեալ ներքին եւ արտաքին մարդով, այս է հոգեկանաւ եւ մարմնականաւ. մմանեալ Գրիգորի Լուսատրչի անուամբ եւ գործովք...» (274): Արտաքին և ներքին բարեմասնությունները մեկտեղված են նաև նախկին Դավիթ պատրիարքի կերպարում. «Կայր եպիսկոպոս մի Դաւիթ անուն, տեղացի, սպիտակալի եւ ցանկալի, զեղեցկատես եւ հիմաւորց. ասին թէ հարիւր ամաց է. պարթեւազին, քաղցրախոս եւ հեզ եւ ցած, բարեկենցաղ, այլ եւ վարպետ քաղցրեղանակ, համեղածայն, որ մինչեւ ցայժմ նա ասէր ժամօտեար եւ մեղեդիք, միայն ի հանդիսի ատուրս» (272-273): Լեհացու կերպարների բնութագրության մեջ գերակշիռ «կենսական տարածություն» են զբաղեցնում ներքին արժանիքների բացահայտումները: Նույն Գրիգոր Պարոնտերը «... էր անծամբն բարի, գործովք եւ վարիք սուրբ եւ առաքինի. լեզուն՝ ճարտար՝ իմաստիք լի. ամենեցուն ահարկու եւ զարհուրելի. զի ոչ որ կարէր զղեմն ունել, այլ պապանձեալ եւ ափ ի բերան եղեալ լռէին» (282): Գրիգորի կերպարը Միմեոնը ամբողջացնում է նրա վարած գործերի մասին հաղորդումներով: Վերջին մեջբերումի շարունակությունը այսպես է. «Երբեմն եւ տուգանք տայր ճ, Մ, Յ դուռուշ եւ բանն յառաջ տանէր: Եւ այլ բազում շէնք, կարգ եւ սահմանք եւ ուղղութիւնս արար եւ առնէ մինչեւ ցայսօր» (անդ): Լեհացին մեկ այլ տեղ նրա մասին գրում է. «Եւ զի էր ճարտար, հանճարեղ եւ դրամի ուժով զամենայն ինչ գոր կամէր՝ կատարէր...» (283): Գրիգորի կերպարը զծելիս՝ Միմեոնը չի մոռանում շեշտել նրա «խստամբեր վարքն» ու գործած առաքինությունները. «Այլ եւ ինքն ջանայ, աշխատի ցայգ եւ ցերեկ. սակաւ ուտէ, սակաւ ննջէ. եւ զգիշերն արթնութեամբ հանէ ի գլուխ յաղօքսն Աստուծոյ. եւ յորժամ նեղի ի քնոյ՝ մագեղինաւն գոր զզեցեալն է՝ հոլանի առանց զոտոյ արձակման ընկողմէր ի վերայ գետնախշտի՝ սուղ ինչ նիքիելով եւ դարձեալ յառնէր եւ զայլ բազում առաքինութիւնս ծածուկ եւ ճգնութիւնս կատարէր. գոր եւ մեր աշօք տեսար եւ ականջօք լուար» (282):

Մի շարք առումներով հետաքրքիր են խոճա Իպրահիմշահի (221), Գրիգոր Կեսարացու և Մովսես Ջուղայեցու կերպարները (8-9) և այլն: Մենք միտումնավոր կերպով Գրիգոր պատրիարք Պարոնտերի կերպարը բնութագրող հաստատվածներից ընդարձակ մեջբերումներ արեցինք, որպեսզի երևան Լեհացու կերպարակերտման սկզբունքները: Նույնաման հմտությամբ են ստեղծված նաև մյուս կերպարները, որոնց բնութագրումները տարբեր ձևերով ու հնարներով է տալիս հեղինակը: Ինչպես Միմեոնի շարադրանքում միանման քվացող քաղաքների նկարագրությունները տարբեր կերպ են արվում, նույնպես և կերպարները բնութագրվում են լեզվառճական տարբեր, միմյանց չկրկնող ձևերով ու հնարքներով:

Կերպարներին տրված Միմեռնի գնահատականներում ամենից առաջ երևում է հենց Միմեռնը: Իր վերաբերմունքը և համակրանքը կերպարների հանդեպ փոխանցվում են նաև ընթերցողին:

Իսկ այդ կերպարներին կենդանություն հաղորդած Միմեռն Լեհացու նպատակը հենց դա է եղել:

Ուղեգիրը անտարբեր չի գտնվել նաև այցելած վայրերի բնության ու կենդանական աշխարհի նկատմամբ: Գրեթե յուրաքանչյուր բնակավայր նկարագրելիս Միմեռնը հարկ է համարում ընթերցողին ծանոթացնել կլիմային: Շատ հաճախ է նշվում քաղաքների բարեխառն և առողջարար օդի, կամ հակառակը՝ անբարենպաստ կլիմայի մասին, ինչպես, օրինակ, «... յոյժ չար եւ վատ հաւայ է ի Հոռն» (149): Առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ուղեգիրը խմելու ջրին վերաբերող տվյալներին: Բալուի մի աղբյուրի մասին ասվում է. «Եւ էր ջուրն յոյժ քաղցրահամ եւ սառ, որ թէ գառ մի ուտես եւ ըմպես՝ մարսես» (195): Նույն վայրում Միմեռնը նկարագրում է լեռան գագաթին գտնվող Շաքարլու կոչվող «ազնիւ եւ անմման» աղբյուրը՝ հարելով. «... եւ յիրաւի շաքար եւ պաղ էր ջուրն, գոր ըմպեցաք կուշա, քրտնած. եւ ոչ վնասեց մեզ...» (196): Մառնորակ ու մաքուր այդ աղբյուրներից հետո ինչպիսի՞ զգացումներ կունենար Լեհացին՝ տեսնելով Կահիրեի պղտոր ու սաք ջուրը (220-221), որ «...մարդ հայելու չուզէր, թող թէ ըմպէ: Եւ ես զայն տեսեալ յիշէի զքաղցրահամ ջուրսն եւ ոգոց հանէի. եւ անյօժար առեալ խառնէի շաքար եւ ըմպէի անախորժ» (243):

Լեհացին ստեղծում է գունեղ նկարագրություններ, որոնք օգնում են ընթերցողին ամբողջական պատկերացում կազմելու այս կամ այն վայրի ֆիզիկական և աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ: Այդ նկարագրությունները հեշտությամբ տպավորվում են և անհետ չեն մնում ընթերցողի հոգում, քանի որ Լեհացին կարողանում է գտնել ներկայացման այնպիսի ձև, որը ինչ-որ արտակարգ, արտառոց, հետևարար հիշվող մի մանրամասն է պարունակում: Ահա, Ենկլի-Պագար հասնելուց առաջ պատահած մի գետի նկարագրության մեջ ասված է. «Եւ ընդ ծործոր մի երթայր մեծ գետ մի շառաչմամբ՝ ծուռ ու մուռ, որ մէկ օրն վաթսուն անգամ անցաք զնա ձիովք եւ ջորով» (46): Համանման դրվագ կա նաև էջ 7-ում: Ընդհանրապես Միմեռն Լեհացուն հաջողվում է գծել անմոռանալի բնապատկերներ: Բերենք Դանուրի նկարագրության հատվածը. «Եւ այս Կալասուս առջեւովն երթայր սրընթաց ահագնատեսիլ, մեծ եւ ծովանման գետն Թունայ, սուկայի եւ բազմաց զարիւրելի, լայնատարած եւ անդնդային, մարդակուլ եւ արեւարբո» (6): Դիտելի է, որ չնայած ամականների առատ գործածությանը, Միմեռնն իր խոսքը

«աճականախեղո» չի անում: Տպավորիչ է Նեղոս գետի՝ ծով քափվելու նկարագիրը, որը աչքի է ընկնում կենդանի ու տեսանելի գույների խտացումով. «Եւ աստ տեսաք զցանկալի գետն դրախտին Նիլոս բովանդակ, որ զայր շառաչմամբ եւ մեծամեծ պլօթ եւ մտաներ ի ծովն, որպէս Թունայ Սեւ ծովն: Եւ անդ էր տեսանել զշաչիւն եւ զխառվութիւն, որ բախէր գետն ընդ ծովն ի մտանելն. զի ոչ բողբոլ ծովն մտանել ի նա գետին. եւ ասին քէ մեծ ֆուրքունայ լինի, յորժամ հողմ հնչէ. եւ ոչ որ կարէ անցանել, զի լեռնանման կոհակք զան եւ բախին ընդ միմեանս եւ վերանան դիզին ալիքն եւ աւազն բարձրանայ որպէս լեռոն եւ ձայնք ջրոց հարկման լսելի լինի ատուր մի ճանապարհ» (214): Նեղոսից Ալեքսանդր Մակեդոնացին, ըստ Միմեոնի հաղորդած ավանդության, ջուր է բերել Ալեքսանդրիա:

Միմեոնը նկարագրում է այդ ջուրը այսպես. «եւ սակաւ ջուր մի գետօրէն զայր ի բաղաքն Նեղոս գետն» (213): Գետեր նկարագրելիս հաճախ հիշում է Սաղմոսների մի պատկերը. «Եւ մէջ քաղքին (Հոռմի,- Ա. Ս.) երթայր մեծ գետ մի եւ սրընթաց՝ պղտոր նման Խըզըլ Երմախին, ուրախացուցանելով զբաղաքն, ըստ այնմ քէ Գնայք գետոց ուրախ առնեն զբաղաք» (92):

Երուսաղեմի կլիմայի նկարագրությունը տպավորիչ դարձնելու համար Միմեոնը գրում է, որ այնտեղ ամառ և ձմեռ չկա, հետևաբար անասունները երկու անգամ են ծնում, մարդիկ երկու անգամ են ցանում և նույնքան անգամ՝ հնձում» (261): Նույն կերպ է նկարագրված մահ Կոզալ-Հիսարը, ուր «... ձմեռ չի լինէր, այլ հանապազ ամառ, մինչ զի անասունք եւ չորքոտանիք ի տարին երկու անգամ ծնանէին. նոյնպէս ամենայն բոյսք եւ դալար եւ բանջարք երկու հեղ սերմանէին եւ երկու հեղ հնձէին. եւ այնպէս մեծ շող լինէր որ ասին քէ տարի մի մէջիքի վրայի արձիճն հալել էր ի սաստիկ ջերմութիւնէն» (38-39): Բերենք ևս մի օրինակ, որտեղ պատկերավոր արտահայտված է Կահիրե-Երուսաղեմ ճանապարհախառվածի տապը. «Աւազն այնպէս խզմիշ եղել էր, որ քէ ձու դնես խորովի. եւ վասն առաւել ջերմութեանն եւ տոթոյն բնաւ չեղնէ քարվանս ցորեկով, այլ զիշերով. ցորեկն ի բուն տապէաք եւ յետնացն քսան ժամուն ելնէաք. զի աւազն ներքուստ այրէր զմեզ եւ արեզակն ի վերուստ...» (243-244):

Միմեոն Լեհացին ուշագրավ է նկարագրել Մշո Սուրբան սուրբ Կարապետի շրջակայքի բնությունը: Այստեղ ևս, ինչպես ամենուր, ուղեգիրը տեսնում է աննշան քվացող մանրամասները, որոնք, սակայն, լրացնում-ամբողջացնում են պատկերը. «Եւ զընկզից ծառի ճղերն առջքն կոտրել էին վրայ ելանելով, զի բազումք կան յանտառնին եւ յուժ սիրեն զնկուզն» (200-201):

Ուղեգրության մեջ հետաքրքիր դիտումներ կան զանազան կենդանիների մասին: Միմեռնը ուշադիր է հասկապես այն տեսակների նկատմամբ, որոնք անձանոք կամ քիչ ծանոթ լինելով կարող են որոշակի հետաքրքրություն առաջացնել հայ ընթերցողների շրջանում: Նա գրում է Հռոմի որսորդական շների (157), Կահիրեի կոկորդիլոսների մասին, որոնց կաշին «...ամուր եւ պինտ է քան զերկաթ. ոչ սուր, ոչ թֆաթ, ոչ սլաք չի մտնէ. վասն այն դրանց վրայ զարկած է, գոր այլ տեղ երկաթ» (229):

Նույն վայրում ուղեգրին գրավել են ջայլամները, որոնց մասին Միմեռնը ժողովրդական ավանդագրույց է պատմում. «... եւ շրջէին ի բակն մեծամեծ տէվէլաւիք, որ է ջայլամ, սորոս. ոտվին ըղտու, գլուխն փոքր իբր սագի, վիզն երկայն եւ ինքն մեծ քան գողտ, եւ թեւն թռչնոյ. սմայ ապին՝ բոֆր. նա յոտսն ցուցանէր. բեռն կամէին բառնալ, նա ասէր՝ քոչուն եմ» (անդ):

Այսպիսի նկարագրությունները իրենց դիպուկությամբ միայն վարպետ զրջի արգասիք կարող են լինել, ինչպիսին է Միմեռն Լեհացու զրխը: Դրանք այնքան պատկերավոր ու տպավորիչ են, որ ընթերցողին մտովի տեղափոխում են ուղեգրի անցած ճանապարհներով դէպի այցելավայրերը՝ նրան համակողմանի զաղափար տալով տարբեր ժողովուրդների վարք ու բարքին, կրոնական ծեսերին, սովորույթներին, զբաղմունքներին, պատմությանը և այլն: Օրինակ, Եգիպտոսի բնակիչների մասին կարդում ենք. «Եւ որպէս առ մեզ համբաւեն թէ ֆլան մարդ հազար դուռուշ ունի, ֆլան երկու հազար. եւ նոքա խուրմայով պարծին, թէ ան արապն հարիւր արմաւենի ծառ ունի եւ միսն երկու հարիւր եւ կամ իրեր հարիւր. զի բազում շահաւէտ է ծառն. եւ ոչինչ բաց չքողուն. զպառտն ծախէն, զկորիզն այրեն, եղն հանեն, ետքրախէն սէրէթ հիստն, զկեղեւն ծեծեն զի մզմզուկ է, եւ անտի պարան օլօրեն՝ բարակ եւ հաստ. իսկ զփայտն ի շինուածս տանն, քանզի անփուտ է եւ ամուր. եւ այսպէս ինչ եւ ունի խուրմի ծառն ի պէտք եւ ի շահ է. եւ ինքն է կանաչ եւ անբառամ եւ բարձր գոր եւ Դ-աիթ հիանայր եւ փափագմամբ զարդարսն արմաւենեաց նմանեցուցանէր՝ ասելով. Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեցին» (Սաղմ. ԴԸ 12, էջ 233):

Այցելավայրերի ժողովուրդների մասին Միմեռնի պատմությունները հաճախ ընդմիջվում են հետաքրքրաշարժ դիպվածների պատկերումով, որոնք բնականորեն զուգորդվում են պատումի ընդհանուր հյուսվածքին, բայց, ունենալով ինքնուրույն գործածություն, կարող են նաև առանձին նորավեպեր համարվել: Այդպիսին են Աթպազարի դրվագը (227-28), արաբ կաթնավաճառի մասին միջադէպը (224) և այլն: Դրանք զեղարվեստական շունչ են բերում Ուղեգրության շարադրանքին:

Միմեռն Լեհացու ներկայանալը, որ գուրկ է գորշ, անկենդան

գույներից, աչքի է զարնում իր բազմազանությամբ ու հարստությամբ: Գրական բարձր վարպետությամբ ուղեգիրը կերտել է մարդկային բնավորություններ, համոզիչ կերպարներ՝ հոգեբանորեն պատճառաբանված կապերով ու հարաբերություններով հատկանշվող, գեղեցիկ բնանկարներ, ճարտարապետական արվեստի գլուխգործոցների նկարագրություններ և այլն:

Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը տարբերվում է հայ գրականության նույն տեսակին պատկանող ստեղծագործություններից նախ և առաջ իր ծավալային ընդգրկումներով: Եթե ուշ միջնադարյան բոլոր ուղեգրությունները միացնենք-մեկտեղենք, այդ ամբողջը Սիմեոնի երկի նույնիսկ կեսը դժվար թե կազմի: Այդ մեծ ծավալը արդյունք է ոչ միայն ուղևորության երկարատևության (հայտնի է, որ երկարաժամկետ ճանապարհորդություններ են կատարել նաև Մարտիրոս Երզնկացին, Սարգիս Աբեղան, իսկ իր ժամանակակիցներից՝ նաև Օգոստինոս Բաջենցը): Այնպես որ Լեհացու գրվածքի գնահատությանը պետք է այլ չափանիշներով մոտենալ: Հետևաբար հազիվ թե ընդունելի լինի Ն. Ալիևյանի այն միտքը, որ Լեհացու «Արդեն երկար ուղեգիծը... ինչպես ես ժամանակը... բառական են համոզելու զմեզ, թե Սիմեոն ունի շատ բան պատմելու իւր շատաշքջիկ կեանքին եւ ապրումներին» (ԼԷ): Ուղեգրության ծավալը պայմանավորված է ուղեգրի հետաքրքրությունների շրջանակով, մտահորիզոնի լայնությամբ, հեղինակի հարուստ ներաշխարհով և մեծ դիտողականությամբ, որոնք ինքնին ենթադրում են ասելիքի առկայություն: «Սիմեոն օժտուած է տեսնելու, դատելու կարողութեամբ մը՝ որ նոյն իսկ օտար շատ մը ուղեգրաց մօտ կը պակսի», գրում է Հ. Բյուրայանը³⁵: Շնորհիվ այդ հատկանիշների Ուղեգրությունը մեծ է ոչ միայն իր ծավալով, այլև տեսակարար կշռով, այսինքն՝ բովանդակությամբ ու գրական արժանավորություններով: Սա այն սակավ պատահող դեպքերից է, երբ գրական երկի ծավալը և արժեքը միմյանց համապատասխանում են:

Հաջորդ կարևոր տարբերակիչ գիծը համասեռ գրվածքների շարքում պիտի համարել Սիմեոնի անձնական վերաբերմունքի արտացոլումը Ուղեգրության հյուսվածքում այս կամ այն վայրի և կամ երևույթի առնչությամբ: Դա ինչ-որ իմաստով հատկանշական է ժ: դարի ուղեգրություններին առիասարակ (հատկապես Խաչատուր Թոխաթցու «Պատմություն Վենետիկ քաղաքին») պոեմին, որին մենք ավելի ուշ կանդրադառնանք), բայց Լեհացու դեպքում մենք գործ ունենք իսկական բանաստեղծական գեղումների հետ: Դրանք երբեմն արդյունք են հեղինակի ապրած խոր կարոտարադճության. «Եւ անցեալ շաբաթ մի՛ յոյժ նեղանայք եւ տառապեաք. առաւել որ զլեզու նոցա չի զխտեաք: Այլ ես

յոյժ տազնապլի՝ յորժամ անկանէր ի միտս իմ գաւառս իմ եւ սիլաս, քոք եւ փեսայքս իմ, եւ ամենայն ազգականք եւ սիրելիքս. լայի եւ հառաչէի, ակն ունելով թէ որ տրամնցի. եւ ոչ որ էր. այլ եւ մխիթարիչ ինձ ոչ որ գտաւ. վասն որոյ խորովէր սիրտս իմ, գալարէին աղիքս, ցնորէր միտքս եւ նուաղէր յիս հոգի իմ եւ յիշէի զբան Սաղմոսին, թէ Տա՛յր ինձ որ թես աղանոյ, զի քռչէի վերանայի՝ ւ առ իմ երամս հասանէի...» (96): Միմեռնը բազմաթիվ առիթներով չի քաքցնում, ավելին՝ բացահայտում է իր տպավորությունները, ընթերցողին հաղորդակից է դարձնում իր հույզերին ու զգացմունքներին, իր ներքին աշխարհն է բացում ունկնդրի առջև: Հեղինակի ապրումներն ու զգացողությունները իրենց խոր բանաստեղծականության, հուզական բեռնվածության շնորհիվ ապահովում են Ուղեգրության զգայական ընկալումը: Այս իմաստով խիստ բնութագրական են Լեհացու զգացած խորին ցավի արտահայտումները՝ կապված մահմեղականների կողմից քրիստոնյա ժողովուրդների հանդեպ ցուցաբերած անիրավությունների ու դաժանությունների հետ: Գրաբարձրակետը Ստամբուլում գերիների շուկայի՝ ցնցող, բարձրարվեստ, միաժամանակ ողբերգականությամբ հագեցած նկարագրությունն է: Այդ ցավազին ապրումներին ի հակակշիռ ուղեգիրը ունեցել է հոգու ցնծության ու անանց բերկրանքի պահեր, որոնք հաջորդում են նշանավոր սրբավայրերի տեսությանն արժանանալուն և ծնրաղիբ երկրպագություններին: Նա գույներ ու միջոցներ չի խնայում նկարագրելու այն տպավորությունը, որ իր վրա գործում են ճոխ եկեղեցիները, դրանք հաստատուն պահող մարդիկ: Միևնույն ժամանակ նա ուրախանում է նաև «ոչ կրոնական» ուրախություններով: Օրինակ, Երուսաղեմ ուխտավորների մուտքը ցնծությամբ է ընդունում Միմեռնը, քանի որ «...Երուսաղեմ ամայի է առանց ըխտատրաց» (262): Ականատես լինելով «բովանդակ քրիստոնեության» տիրապետության, Լեհացին մխիթարվում է դրանով, մոռանում ճանապարհին կրած զրկանքները. «Ձայս ամենայն տեսեալ ուրախացաք եւ բերկրեալ ցնծացաք հոգով եւ մարմնով, մինչ զի մոռացաք զամենայն նեղութիւն եւ զտանջանս, եւ զգծուարտութիւն ճանապարհին, այլ եւ Նազարէթին. գոր այտուիտես բարձաւ իշխանութիւն եւ զօրութիւն Տաճկաց եւ թագաւորեաց Քրիստոս քրիստոնէիք» (53): Լեհացին, կարծես, չունի «միջին» զգացմունքներ. նա կամ ժխտում, խարազանում, դատափետում, ողբում է մի բան և կամ հաստատում, զովարանում, երկինք բարձրացնում: Նրան խորթ է զգացմունքների չեզոքությունը կամ հավասարակշռությունը: Լեհացին գրում է միմյանց հակադիր զգացողությունների մասին ծայրահեղ բևեռացումով: Իրավացի է Մ. Գարբինյանը, երբ գրում է. «Միմեռն Լեհացու «Ուղեգրությունը» դեպքերի չոր թվարկում չէ, հեղինակը անտարբեր չէ նկարագրվող իրադարձություններին, ջերմորեն արձագանքում է դրանց,

բացահայտելով իր համակրանքն ու հակակրանքը» (ընդգծումը իմն է.- Ա. Մ.)³⁶: Այս գիծը՝ զանազան դեպքերի, երևույթների, իրերի կամ մտահոգությունների առթիվ անձնական հեղինակային վերաբերմունքի արտահայտությունը, ռուսական ուխտագնացությունների նկարագրություններում (ուխտագրություններում) երևան է գալիս Միմեոն Լեհացուց ուղիղ մեկ դար հետո: Ահա մի հատված Եֆրոնի և Բրոկիհանովի հանրագիտարանից. «1710-1711 թվականների ճանապարհորդ, հնաձես սուրբ Լուկյանովը (XVIII-IV) արդեն ավելի շատ պատմում է իր անձնական տպավորությունների մասին»³⁷:

Ուղեգրությունը՝ նույնատեսակ գրվածքներից տարբերող հատկանիշ է մաս կառուցվածքը, նրա առանձին բաղադրիչների հետևողական դասդասումը: Միմեոնը իր հաղորդած գիտանքները, իր ունեցած խոհերն ու մտորումները, մաս զգացողությունները չի «սփռում» միաժամանակ և միևնույն տեղում: Նա դրանք օգտագործում է չափի խիստ պահպանումով, մեծ զգուշավորությամբ: Ուղեգիրը, կարծես, մի պահ թողնում է, որ ընթերցողը «մարսի» մեկ նկարագրությունը, ապա նոր միայն անցում է կատարում դեպի մյուսը: Նա չի ստեղծում պատկերների կուտակումներ, ավելորդ բառաբարդումներ (եղածն էլ բացատրվում է Աստվածաշնչի գորեղ ազդեցությամբ): Կարևոր հանգամանք է այն, որ հեղինակը իր բազմազան նյութերը հավասարաչափ տեղաբաշխում է գրվածքով մեկ: Նրան հաջողվել է իր տարաբնույթ դիտողություններն ու դատողությունները մատուցել այնպիսի գրական վարպետությամբ, որ ընթերցողը չապրի ձանձրույթի պահեր: Այդպիսի մտահոգություններ նա բազմիցս հայտնում է Ուղեգրության էջերում, թվում է՝ կամենալով զսպել, սանձառել իր խոսքի թափը՝ դրանով խուսափելով երկարաբանություններից:

Հռոմի սուրբ Պետրոս նշանավոր եկեղեցու նկարագրությունը Միմեոն Լեհացին եզրափակում է այսպիսի տողով. «... տեսողացն է ըսքանչելի, ոչ թէ լտողացն» (100): Կարծում ենք չափազանցություն չի դիտվի, եթե ասենք, որ ուղեգիրը կարողացել է իր տեսած հրաշալիքները մաս լտողներին (իմա՝ ընթերցողներին) սքանչելի դարձնել: Դա է Միմեոն Լեհացու Ուղեգրության (ինչպես և բոլոր իսկական ուղեգրությունների) կարևորագույն արժանիքը:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԳ
ԺԷ ԴԱՐԻ ՄՅՈՒՄ ՈՒՂԵԳԻՐՆԵՐԸ

ԺՉ դարավերջին և ԺԷ սկզբին է վերաբերում Փիրգատի ուղևորությունը: Նա իր ճամփորդությունը հայրենի Սյունիքից սկսում է Սարգիս Արեղայի ուղեգնացության ենթադրյալ թվականից մեկ տարի առաջ, 1586-ին և ավարտում է 1607-ին Փարիզում: Սա ժամանակային վերջին հիշատակումն էլ Օբսֆորդի Բողեյան գրադարանում պահվում է մի ձեռագիր, որի նկարագրության մեջ կարդում ենք. «Մատեանս է Աղոթագիրք, որի մէջ մտած կան զանազան մանր նկարագրութիւններ, որ ոչ մի կապ չունեն մատեանի հետ...»: Այդ գրությունները, որոնց մեջ և թնկվող Ուղեգրությունը, «բոլորն էլ անվարժ նոտրգրով» գրված, պատկանում են Փիրգատի գրչին:

Նույն այդ ձեռագիր մատյանը Փիրգատի մոտ գտնվել է իր երկար ղեզերումների ընթացքում, և նա Աղոթագրքի ազատ էջերին համապատասխան նշումներ է արել: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ մեր հեղինակի գրառումները չափազանց հակիրճ են ու «սակավախոս»:]

Մինչև Տիրայր վարդապետի վերոհիշյալ նկարագրությունը, ձեռագիրը ծանոթ է եղել մխիթարյաններին, որոնք 1882-ին Փիրգատի նշումների մի կարևոր մասը (թղ. 4բ - 11բ) հրատարակել են «Բագմավէպում»: Այնուհետև որոշ հատվածներ է մեջբերել Գ. Ալիշանը «Հայ-Վենետում»: Ուղեգրության մյուս հատվածը, որն անտիպ է մնացել, գտնվում է նույն Աղոթագրքի 64ա-68ա էջերում: Դա ավելի շատ ցանկ է այն թագավորությունների ու իշխանությունների, որոնք այցելել է ուղևորը:] Ո՞րն է եղել ուղևորության շարժառիթը: Այդ մասին մեր դիտողությունները ենթադրություններից այն կողմ չեն կարող անցնել: Չկան անհրաժեշտ փաստեր: Պատմաբան Ա. Հովհաննիսյանը Փիրգատի ճանապարհորդությունը դիտում է հայ ազատագրական շարժումի շրջանակներում և կապ տեսնում վրաց Սիմոն թագավորի և արևմտաեվրոպական տերությունների մինչև վարվող բանակցությունների հետ՝ թուրքերի դեմ ուժերը միավորելու նպատակով: Նա վարկած է հայտնում այն մասին, որ Փարգատը կարող էր լինել մեկը Սիմոն թագավորի հայ թղթաբերներից: Բերելով Ուղեգրության մուտքի այս տողերը. «Ես մեղատր Փիրգատա Դիզիպաշէն, երկիր Ղապանէն, Իւրտուն ձորէն, կեղու Գիտայթաղէն Պաստամէ է ցաց ասքէն, Չաքաքէի բոռն, Միրզին

Հոռոմսիմին աղայ, Իսայուն, Փարուն, Պահալավէն աղբէր, Էն տարին որ հայոց թիւ էր Ռ-Ե (1586) որ ես իմ տանէն իլայ գլխս առայ սակայկան մոլորեցի, օտար աշխարհ եկայ», հետագոտողը ավելացնում է. «Չպիտի ենթադրել, թե շատերի պես Փիրգաղան առևտրական գործերով էր գլուխ առել հայրենի երկրից՝ Թուրքիայում և Արևմուտքում պատելու համար: Աչքի է ընկնում, ընդհակառակը, որ չչռշափելով առևտրականին շահագրգռող խնդիրներ՝ նա թվարկում է միայն այցելած երկրների և դրանց հարևան պետությունների «թագավորություններն» ու «պարոնությունները», նշում դրանց քաղաքական փոխհարաբերությունները, անցողակի հիշատակում այցելած սրբատեղիներն ու դավանությունները և անվանում այն երկրները, ուր հայ գաղութներ կան և կամ ուր «հայկլյական ասքն խիստ կուգեն»⁵: Այս վերջին գնահատականը արվում է նաև Իսպանիայի Փիլիպոս (Ֆիլիպ) 2-րդ թագավորին (1555-1598), որը «աղեկ քրիստոնյա» է: Հիշենք, որ նույն արքայի մասին հատուկ գովեստով է խոսում նաև Սարգիս Արեղան, և սակայն վերջինիս ճամփորդությունը երբևէ փորձ չի արվել առնչել քաղաքական առաքելության հետ: Մարգիսը պատմում է Հնդկաստանից բերվող ոսկու մասին. «Առջեւ քաղաքին (Սիվիլիայի, - Ա. Ս.) մեծ գետ մն կայ, նաւեր շատ կանկնել է. քաղաւորն Իսբանեայու, որ Նոր Հունտուստան գտաւ: Տարին Ե (5) կամի կու գա, ըստակ ու ոսկի կու բերէ: Այտ այն ոսկին [եւ] արծաթն] է, որ ինքն իրեն կու բուսանի, զարմանք բան է: Շատ ձի, շատ ջորի, կով, ոչխար կու մորթին, լաշն կու տանին այն տեղն կու ձգին, որ ոսկին - արծաթն կու բուսնի. ան տեղն մեծ մոջիմ կու լինի, մեծութիւնն բանձ շան չար. (աղճաոված այս բառը Ա. Մադոյանը՝ կարդացել է «չափ»), մոջիմներն կու ելին ոսկուն միջէն, լաշն ուտել կու երթան Գ-Դ-Ե (3-400) ձիաւոր կտրիչ կու երթան, ի մէջն կու մտնուն, վայր ու վեր կու վազեցընեն, ոսկի-արծաթն կու մանտրի մինչեւ մոջիմն գայ, մոջիմն լաշն կուտէ ու դառն [այ] գայ իր տեղն, տես [ն] ու մա [ն] արած է ոսկին ու արծաղն. մոջիմն բան տեղ կու շէնէ, կու տան [ի] հեռու տեղ: Կու առնուն ու կու տանի՝ ի նաւըն կու լնուն ու կու բերին: Նախն մեծութիւնն ԺԲ (12) տապաղա [է], ԺԴ (14) տեղ ազաստ կու բանան. եկեղեցի կայ ի մէջն. պանեղ կայ ի մէջն. ջրհոր կայ ի մէջն՝ քար ու կիր պատած, անծրել որ գայ՝ ի մէջն կու լցվի, խասաֆ կայ, պագագ կայ, ԵԵ (500) նաւավար կայ. Զ (6) ամիսն կու գայ կու հասնի Սիվիլիայ»⁶: Նոր Հնդկաստանից (իմա՝ Ամերիկայից) Փիլիպոս թագավորի կողմից Իսպանիա ներկրվող ոսկուն անդրադարձել է նաև մոտավորապես նույն ժամանակամիջոցում այնտեղ գտնված Փիրգատը: Ի տարբերութիւն Սարգիս Արեղայի, որի շարադրանքում տեղ են գտել առասպելագարդ պատմություններ, որոնց հիմքը Ամերիկայից իսպանական արքունիք հոսող հարստության չափն է.

Փիրզատը բերում է իրական քվեր. «Նոր Հինիստ անգլեմովն ծովով Զ (6) ամիս կայ հասնու մէկ տարումն կիկյա քարայրին գիբիբի ԼԵ (35) միոն ոսքի առձաք...» (Էջ 2062): Հեաաքրքիբ է, որ երկու ուղեգիրներն էլ նույն քվով են նշում Ամերիկայի ու Իսպանիայի միջև հեռավորությունը (վեց ամսվա ճանապարհ):

Վերադառնանք Ա. Հովհաննիսյանի տեսակետին: Գիտնականը Փիրզատի Ուղեգրությունը չի համարում առևտրական ճամփորդության արդյունք՝ անտեսելով ուխտագնացական ուղևորության հավանականությունը: Երբ այս դիտարկյունով ենք նայում ներկա Ուղեգրությանը, պատկերը մի փոքր վախվում է: Բանն այն է, որ, այսպես ասած, «քաղաքական» հաղորդումների կողքին, թեկուզ ավելի նվազ չափով, տեղ են գրադեցնում նաև զուտ «կրոնական» նկարագրություններ: Այսպէս, Ուղեգրության ամենից մանրամասն հատվածը հենց այն է, որտեղ պատմվում է «Շիվեցոց երկրի» մարդկանց կրոնական սովորույթների մասին (Էջ 2060): Պակաս մանրամասն չի գրել հեղինակը նաև Վենետիկի ու Հռոմի մասին, ուր կրոնական շինությունների նկարագիրն է գերիշխում: Առավել մեծ թիվ են կազմում Ուղեգրության այն մասերը, որոնցում ուղևորին հեաաքրքրում են քաղաքների թագավորանիստ լինելը, լեհահայերի ինքնուրույնությունը և այլն: Սակայն նմանատիպ «քաղաքական» բնույթ կրող հեաաքրքրությունների արտահայտությունների մենք հանդիպում ենք մեծ չափով նաև զուտ ուխտագնացական ուղեգրություններում: Ըստ մեզ, կան առավել գորավոր կովաններ Փիրզատի գործը ուխտագրություն չհամարելու համար: Այդ կովանները ուղեգրությունների դասական, կաղապարային ձևերից շեղումներն են: Երբ դիտարկյում ենք մեզ ծանոթ ուխտագրությունները (Մարտիրոս Երզնկացու, Մարգիս Աբեղայի, Օգոստինոս Բաշեցու, Միմեոն Լեհացու և այլրն), ի հայտ են գալիս մի շարք առանձնահատկություններ, որոնք հատուկ են միայն ուխտագնացությունների նկարագրություններին: Դրանցից առաջինը ուխտ կատարելու հեղինակային նպատակադրման բացահայտումն է ուղեգրության սկսվածքում: Հետո՝ Աստծուն կամ մի որևէ սրբի գոհություն մատուցելը առ այն, որ իրեն՝ ուխտավորին արժանի է արել տեսնելու սրբությունները, նշանավոր ուխտատեղիների նկարագրությունները, մեղքերի թողություն խնդրելը եկեղեցիներում կամ գերեզմանների վրա, ուխտի կատարման հետ կապված այլևայլ մանրամասների անդրադարձները և այլն: Երբ, այս բոլոր յուրահասկությունները նկատի առնելով, ծանոթանում ենք քննվող Ուղեգրությանը, տեսնում ենք, որ այդ կաղապարներից և ոչ մեկը իր արտահայտությունը չի գտել Փիրզատի գրվածքում: Իսկ քանի որ ուխտագրությունները միջնադարում գրվել են որոշակի ձևերի ու կաղապարների պահպանումով, Փիրզատի Ուղեգրությունը չի կարելի համարել ուխտագնացության նկարագիր:

Փիրզատի Ուղեգրությունը նույնասեռ գրվածքների շարքում առանձնանում է իր չափից դուրս սեղմությամբ, պատկերումների հակիրճությամբ: Այստեղ չկան այցելած քաղաքների ու եկեղեցիների երկար նկարագրություններ, բացառությամբ մի քանի դեպքերի, որոնք միայն համեմատության մեջ են այդպիսին երևում: Հետևաբար չկան և ուխտագնացների զարմանքն ու հիացմունքը արտահայտող ժողովրդական բանաձևերը, որ լայնորեն կիրառվում են ուղեգրական երկերում: Հեղինակը իր ուղեգիծը նույնպես խիստ կարճառոտ է տալիս: Օրինակ՝ «...Էնկից իրայ կինեցի Պաղիշ քաղաքն, Էնկից կինեցի Հիդու քաղաքն, Էնկից կինեցի Հելեր քաղաքն...» (Էջ 2058): Ավելի տարողունակ են ուղևորի՝ Լեհաստանում այցելած քաղաքների նկարագրությունները, որոնք, ինչքան էլ համառոտ, արժեքավոր սկզբնաղբյուր են լեհահայոց գաղթավայրերի պատմությունը ուսումնասիրելու տեսակետից. «...Էնկից կինեցի ԼԷի երկիրն. առջի քաղաքն Կամայնից. ԴՆ (400) տուն Հայական ասկ այ լուսայ/որչի. կայ մեջն, ԺԲ (12) պարոն հայ շարիք կանին. Չ (6) եկեղեցի հայոց ասքին կայ: -Էնկից կինեցի Իլով քաղաքն. Հայոց ասք կայ Ն (100) տուն. ամեն պարոնէք ին. ուրանց գլխու ին» (2058): Փիրզատով հայկական ուղեգրություններում սկիզբ է առնում քեմատիկ մի նոր գիծ: Դա այցելավայրերում հայ ժողովրդի մասին տեղեկությունների հաղորդումն է, որ ավելի ուշ դարձավ Սիմեոն Լեհացու Ուղեգրության առանցքային խնդիրներից մեկը:

Օգոստինոս Բաջեցին (Բաճեցի, Բաջենց), որ ապրել է 1590-1667 թվականներին, ԺԷ դարի պատմության շատ հետաքրքրական դեմքերից մեկն է: Ըստ Առնոդ Ալիշանի, Բաջեցին 1627-1653 թվականներին եղել է Նախիջևանի առաջնորդ արքեպիսկոպոսը⁷: Սինչ այդ իր մաշկի վրա զգացել է 1605-ին Շահ Աբասի կազմակերպած տեղահանության սարսափները: Այդ իրադարձությունը և դրան հաջորդած իր կյանքի դեպքերը մինչև 1614 թվականը, երբ Հռոմում ձեռնադրվում է քահանա, նկարագրել է իր Ուղեգրության մեջ:

Բացի գրիչ, եկեղեցական ու քաղաքական գործիչ, ուղեգիր լինելուց՝ Օգոստինոսը նաև զբաղվել է աստվածաբանական հարցերով: Դրան նպաստել է նաև լատիներենի իմացությունը: Իբրև հմուտ աստվածաբան և հանոզված կաթոլիկ, նա ճանաչում է գտել Հռոմում: Ա. Մադոյանը ուշադրություն է հրավիրում մեր հեղինակի կենսագրության հետևյալ դրվագի վրա. «1634-ին, երբ հերթական այցով գտնվում էր Հռոմում, Հավատասփյուռի հանձնարարությամբ ծանոթանում է «Առաել պարզաբանութիւն քրիստոնէական վարդապետութեան» աշխատությանը և հայտնում գրավոր կարծիք քարզմանության որակի մասին: Անելով մասնակի դիտողություններ, նա հավաստում է, որ ընդհանուր առմամբ գործը որակով է կատարված («գտա գեութիւնն անսղալ»)»⁸:

Օգոստինոս Բաջեցու եռանդուն գործունեությունը հոգևոր հով-
վության տարիներին և դրանից էլ առաջ լուսաբանված է Սահակ Ծնե-
ճնմյանի «Ֆրա Օգոստինոս եպս. Բաջեցի գործունեությունը»⁹ և ««Հայոց
վարժարանը» և Նախիչևանի բնմը»¹⁰ հոդվածներում: Բաջեցու քաղա-
քական գործունեության մասին հետաքրքիր տվյալներ է հաղորդում Վ.
Ոսկանյանը «Древняя Русь и Украина в судьбах армян» հոդվածում¹¹:

Իր Ուղեգրությունը պահպանվել է 1617 թվականի գրություն
ունեցող ձեռագիր Մաղմոսարանի էջերում, որի գրիչը հիշատակարանում
իրեն կոչում է «Ֆրա Ալգոստինոս քահանա»: Դա հենց Օգոստինոս Բա-
ջեցին է: Այդ ձեռագիրն այժմ պահվում է Փարիզի Ազգային Մատենադա-
րանի հայերեն ձեռագրերի հավաքածուում (թիվ 3, Supplement armenien):
Մինչ այդ Բաջեցի ինքնագիր Մաղմոսարանը նույն քաղաքի Անտեսց
Աստուածածնին վանքի («գոր Սան Հօնօրաթօ կատն»), Անտոն Նազա-
րոս) գրառանք տեսել ու նկարագրել է Բաջեցու քեռորդին կամ եղբորոր-
դին՝ Անտոն Նազարոս Ապրակունեցին: Վերոհիշյալ ձեռագիրը Կ. Բաս-
մաճյանի «Յուցակ հայերեն ձեռագրաց ազգային մատենադարանին
Պարիսի» աշխատության մեջ թվագրված է համար 10¹²:

Առաջին անգամ Բաջեցու ուղեգրական գործը քարգմանել և
«Հայաստանի վիճակը ԺԷ դարուն մէջ» վերնագրով առաջաբանով հրա-
տարակել է հայագետ Մ. Բրոսեն Փարիզի Ասիական ընկերության Օրա-
գրի 1837 թվականի մարտյան և մայիսյան համարներում¹³: Առաջին ան-
գամ բնագիրը լույս է ընծայել Քերովրե Պատկանյանը «Նշխարք մատե-
նագրութեան Հայոց» ժողովածուում՝ «Ալգոստինոս Բաջեցոյ ճանա-
պարհորդութիւն յԵւրոպայ» ինքնամույժ վերնագրով, և սրան հաջորդող
Անտոն Նազարոս Ապրակունեցու դեսպանագնացության պատմուք-
յունը՝ անվերնագիր¹⁴: Այնուհետև, Կ. Բասմաճյանը հրատարակում է
Օգոստինոս Բաջեցի գործը՝ «Վարք Ալգոստինոս Բաջեցից հայալատին
եպիսկոպոսին» և Անտոն Նազարոսի գրվածքը՝ «Պատմութիւն ֆրա
Անտոնի» խորագրերով¹⁵: Այս հրատարակության փոքրիկ առաջաբա-
նից, որ նախորդում է Բրոսեի վերը նշված ակնարկի քարգմանությանը,
իմանում ենք, որ ներկա հրատարակիչը ծանոթ չէ նախորդ՝ Ք. Պատ-
կանյանի հրատարակությանը. «Այս ձեռագրերն՝ որչափ գիտենք, տա-
կաին անտիպ կը մնան, եւ միայն ֆրանսերէն քարգմանութեամբ մը
հրատարակած է Բրոսէ...» (էջ 218): Արդեն մեր դարակազմին ունենք
Բաջեցի գործի մի հատվածական հրատարակում: Ուղեգրության
առաջին մասը, որտեղ պատկերված են իր պատանության տարիները,
լույս է տեսել Մ. Սմբատյանի՝ Երնջակի մասին գրքում¹⁶: Վերջապես
Օգոստինոսի ուղեգրական նոթերն ու Անտոնի հիշատակարանը
աշխարհաբարի վերածել և առաջաբանի հետ հրատարակել է Ա.
Մաղոյանը «Արարս» հայ-բասկյան ամսագրում¹⁷:

Հայ միջնադարյան ուղեգրությունները ընդհանուր առմամբ չեն արձագանքում ժամանակի պատմական իրադարձություններին: Խոսքը Հայաստանում կատարված դեպքերի ուղղակի արձագանքների մասին է: Այս կամ այն իրադարձության հետևանքով առաջացած իրավիճակների արտացոլումներ հարկավ եղել են ուղեգրություններում, ինչպես Միմեոն Լեհացու երկում ենք գտնում, սակայն զուտ պատմական դիպվածներ ուղեգրական ստեղծագործություններում հիմնականում տեղ չեն գտել: Դա բացատրվում է այնու, որ հայ հեղինակները ի մեծի մասին կատարել են ուղևորություններ օտար երկրներում: Բնականաբար այդ վայրերի հետ կապված պատմական դեպքերն էլ որոշ չափով արտահայտվել են ուղեգրություններում: Հաճախ տրվել են նաև այցելավայրերի հայ համայնքների մասին պատմական բնույթի տեղեկություններ: Ինչ վերաբերում է բուն Հայաստանում կատարված ուղևորություններին, որոնք փոքրաթիվ ուղեգրություններ են արդյունել, ապա դրանց նկարագրություններում գերիշխում է կրոնական քեմատիկան: Այս իմաստով բացառություն է Օգոստինոս Բաջեցու Ուղեգրությունը, որը ժամանակի կարևորագույն իրադարձություններից մեկի մասին ակնառեսաի վկայություն թողնելու իրողությամբ իր անփոխարինելի տեղն է զբաղեցնում ուշ միջնադարյան համասեռ գրական տեսակի մեջ: Քննվող գործն ունի հայկական ուղեգրություններից (նկատի ունենք ուխտագնացական ուղեգրությունները) տարբերվող սկզբածք. բացվում է սուրբ Երրորդությանը փառաբանությամբ առ այն, որ «չանարժան մեղաւորիս եցոյց այսչափս, որ չեմ բաւական»¹⁸, մի բան, որ ավելի բնորոշ է ուխտագրությունների վերջավորություններին կամ զանազան ուխտավայրերում երկրպագությանը հաջորդող վիճակներին: Այս ամենը սկիզբ է բերված: Շարունակությունը (ինքզինքը ներկայացնող մասը) արդեն մոտ է հայկական ուղեգրական երկերի համանման սկզբածքներին. «Այս են վարք ֆրայ Ալգոստինոս քահանային, լուիցէք: Ես անարժան ֆրայ Ալգոստինոս քահանայս. էի ի աշխարհէն Մեծ Հայաստանոյ. ի գաւառէն Երինջակոյ ի գիւղէն Ապարաներոյ եւ ազգաւ Հայ կրօնիւր հնազանդ ուղղափառ հաւատոյն Քի.» (222): Այսբանը: Մրան հետևում է «հետադարձ հայացքը» դեպի մանկություն, տեղի Ամենայն սրբոց եկեղեցում ծառայության և ուսումնառության տարիները, ժողովրդի հետ իր տարագրությունն ու վերադարձը, սպասավորությունը Խոշկաշենի վանքում, հետ դառնալը Ապարներ, այնուհետև Նախիջևանում գտնվող շահի բանակ գնալը, այնտեղ մի ֆռանկ նվիրակի մոտ երեք տարի կենալն ու ճանփորդությունն սկսելը: Այս բավական ընդարձակ հատվածը, որ հետաքննելի է թե՛ իբրև ակնառեսաի ճշմարիտ վկայություն պարսիկների կազմակերպած մեծ զաղթի մասին, թե՛ որպես հեղինակի կենսագրությունը լրացնող-ամբողջացնող ավյալների մի շարք, փաստորեն նա-

խորդում է բուն ուղեգրությանը: Պատումի ժամանակային հաջորդականության զանց առնելը (սկսվածք ներկա վիճակից, իսկ շարունակության մեջ անցյալի դեպքերի վերաբարտադրություն իբրև ուղեորության նախապատմություն) Օգոստինոսի՝ ուղեգրության տեսակի կառուցվածքային համակարգին բերած նոր գիծն է, որը նրանից անմիջապես հետո պիտի շարունակեր Անտոն Նազարոս Ապրակունեցին:

Նույնատեսակ գրականության մեջ մեր հեղինակի գրվածքը առանձնանում է նաև նրանով, որ, եթե մյուս ուխտագնացություն նկարագրողները իրենց մասին տեղեկություններ հաղորդելուց հետո ընթերցողին հիմնականում հայտնում են նշանավոր սրբատեղիներին երկիր պագանելու վերաբերյալ որոշակի երազանքներ, իսկ ոչ ուխտագնացական ուղեգրությունների հեղինակները ընդհանրապես որևիցե նպատակ չեն նշում, ապա խնդրո առարկա երկր բնորոշվում է ուղեորության, այսպես ասած, «ուխտագնացական» շարժառիթի բացահայտման չգոյությամբ. Օգոստինոսը մտաբուրմ է գնալ Եվրոպա ոչ թե այն բանի համար, որ ուզում էր տեսնել արևմտյան եկեղեցիները, այլ որովհետև «... ես մեղաւորս այն ժամն երիտասարդ էի. տեսայ որ հայր մայր չունէի, աշխարհս մէկզմէկ խառնուած վախեցայ անօրինաց կողմանէն թէ զիս չգողանէին տանէին, միտք արի վասն ֆռանկըստան զնայոյ...» (Էջ 224): Գրվածքի շարունակության մեջ այլևս իր բոլոր հատկանշական կողմերով ուշադիր ընթերցողը կտեսնի ԺԵ-ԺԷ դարերի տիպիկ ուխտագնացական ուղեգրության ձևով գրված մի երկ: Օգոստինոսի Ուղեգրության էջերում բավական չափով տեղ են գտել այնպիսի կենսագրական գծեր, որոնք անմիջականորեն չեն առնչվում ուղեորության հանգամանքների հետ և ավելի շատ լույս են սփռում հեղինակի գործունեության այլևայլ կողմերի վրա: Մինչև բուն ճանապարհորդության նկարագրությունը ուղեգրի գծած դիպաշարի մասին արդեն վերևում խոսք եղավ: Այդ մասում Օգոստինոս Բաջեցու ամենից արժեքավոր դրվագը վերաբերում է Երնջակի, Նախիջևանի բնակչության՝ Արաքսի գետանցումին: Դա «Մեծ սուրգում» (մեծ գաղթ) կոչված տեղահանության սարսափների տարեգրության ամենասև էջն է: Ուղեգրության այդ կտորի արժեքն ու նշանակությունը մեզ համար երկակի է. առաջին՝ այն ականատեսի ու մասնակցի կողմից արված ստուգապատում¹⁹ վկայություն է Շահ-Աբասի դաժանությունների վերաբերյալ, և երկրորդ՝ գրված է գրական պատկերավորումով՝ օգտագործելով իր սերտած (ինչպես ինքն է գրում) ութ կանոն սաղմոսի արտահայտչամիջոցները: Ինչ խոսք, սա մեզ առավել հետաքրքրող կողմն է այդ նկարագրության:

Մենք գիտենք, որ վերոհիշյալ դեպքերի մասին ամենից նշա-

նավոր աղբյուրը համարվում է Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը», որի Շահ-Աբասի գաղթին վերաբերող դրվագից օգտվել է Հովհաննես Թումանյանը «Թագաւորն ու չարչին» գրելիս: Առաքել Դավրիժեցու նկարագրությանը քիչ բանով են զիջում Բաջեցու պատկերումները, ավելին, ինչպես ասացինք, արված լինելով ականատեսի ու մասնակցի, նաև ականջալուր հեղինակի կողմից, առավել են արժեքավորվում:

Հայտնի է, որ Առաքել Դավրիժեցին իր «Պատմութեան» այդ մասերը գրել է ձեռագրերի հիշատակարանների և պատմական անցքերին վկա կամ լավ իրազեկ մարդկանց վկայությունների հիման վրա, որովհետև նկարագրում է իրենից առաջ կատարված իրադարձություններ²⁰: Անհավանական չէ, որ թավրիզեցի պատմիչը ձեռքի տակ ունեցած և օգտագործած լիներ նաև Բաջեցի գործի սկզբնամասը իբրև արժանահավատ սկզբնաղբյուր: «Ալգոստիհնուը մինչև այսօր մեզ ծանօթ պատմագիրների մեջ միակ ժամանակակից ու ականատես անձն է Հայոց այն նշանաւոր գաղթականութեան, որ տեղի ունեցաւ Շահ-Աբբասի օրով ղէպի Պարսկաստան», գրում է Բերտրե Պատկանյանը «Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակ»-ում²¹: Ինչպես երևում է երկու գործերի համեմատությունից, Առաքել Դավրիժեցու նկարագրությունները հիշեցնում են Օգոստինոս Բաջեցուն, չնայած ավելի ծավալուն են, ավելի գեղարվեստական: Թեպետ որոշ դեպքերում երկու հեղինակների պատկերները կառուցվում են սաղմուների արտահայտամիջոցներով, ընդհանուր առմամբ նմանությունները ակնհայտ են: Ավելորդ չենք համարում զուգահեռաբար բերել մի քանի ընդհանրություններ.

Օգոստինոս Բաջեցի

«... եկին հեծեալքն հրամանաւ
թագաւորին որպէս կայծակն ի
յերկնից մեզի մէկ ժամ խաղաղութիւն
չի տուին որ ամենայն մարդ
իւր ապրանքն պահել էր... (Էջ 222)

... դուս արին ամենայն մարդ իւր
յերկրէն որպէս նահիր եւ ինքեանք
եղեն սրով եւ նիզակով բշողք
խառնեցան մէկզմէկ
որպէս գառն ի ոչխարն խառնի
լալն ու հառաչանքն ելաւ մինչեւ
յերկնս. անօրէնքն յառաջ արին

Առաքել Դավրիժեցի

«Եւ գորապետացն՝ յետ
ընդունելոյ զայնպիսի
զաշխարհակործան և
զաստիկ հրամանի թագա-
ւորէն, ելեալ իւրաքանչիւր
հրամայեալ զաւառսն
աշխարհիս Հայոց. և իբրև
հողմախառն հուր ընդ եղևզն
անթացեալ, հապճեալ տագմա-
պաւ վաղվադակի զամենայն
բնակիչս զաւառացն կորզե-
ալք յիւրաքանչիւր բնակու-
թեանց, և արտասահման

ժողովուրդն եւ իրեանքն յեղն
ընկան քեղերդեանք խոցելով...
...եկաք հասաք ի գետն որ կոչի
Արաստղ խիստ մեծ, որ մարդ
առանց նաւի չէ կարիլ անցնիլ
ամենայն ժողովուրդն լցին ի
մէջն առանց նաւի եւ առանց
տաւարի որն որ անցաւ որն որ
ջուրն տարաւ... եւ մեղատուս այլ
գետն կու տանէր մէկ ջամշի աքի
ընկաւ ձեռս Աստուծով դուս եկի
լալով դէպի Ած հառաչելով
ամենքեան լալով անցնէին... (222-223),

«... որպէս գրեալ է Գաւիթ՝
մարգարեն իր սաղմոս (ուն)
երթալով երթային եւ լային որ
բարձրեալ տանէին ի գետնամաս
իրեանց...» (էջ 223),

«... ի ճանապարհն բազում
կանայք դնէին իրեանց ստընդեալ
տղայքն ի վայր երթային վասն
տկարութեան...» (էջ 223),

«Շատոց որդիք եւ դստերք
անօրէնք տարան յեղև այս
նեղութեանցսն» (էջ 223),

արարեալ յիրաքանչիւր տե-
ղեաց, իբրեւ զջուլիս
բազմութեան հոտից և անդէոց
զառաջեալ արարեալ՝ ածեալ
բերեալ հատուցին ի զաւառն
Արարատու, և զլայնալիստ
դաշուն նորա լցին ծագէ ի
ծագ. քանզի ի ստորտաւ
լերանցն Գառնու մինչ ի յեզրն
Երասխայ մեծի գետոյն,
լայնութիւնն էր բանակին. իսկ
զերկայնութիւնն դովիմբ
կշռեաց դու, բայց եւ ասեմ
սուր միոյ ճանապարհ. և
յայլում տեսի՛ որ հինգ աուր
ճանապարհ էին գրեալ»²²,

«Եւ ոմանք ի նոցանէ կալեալ
զեզերս նաւացն, և ոմանք
զտփոցն, և ոմանք զագիս
ծիոյ՝ և զեզանց, և զոմշոց,
և ոմանք իւրովի լողեալք
անցանէին» (43),

«Եւ նոքա երթալով երթային,
և լային, որք բարձեալ տանէին
զսերմանս իրեանց» (էջ 45),

«Եւ բազումք մարք զողայս
և տեարք զիւանդս ի ճանա-
պարհին ընկեցիկ արարեալ
լքեալ բողեալ զնային, վասն
անհանդուրժելի և անըմբռնելի
վտանգին, որ ժամանեալ էր ի
վերայ նոցա» (էջ 44),

«Եւ հեծեալք... շրջելով ի մէջ
քրիստոնէից տեսեալ նկա-
տէին զուստերս և զդուստերս
քրիստոնէից, և որոց հաւանե-
ալ սիրտք իրեանց, եթէ կա-

մանց, եթէ աղջկանց, և եթէ տղայոց, էր զի խաբէին զտեսարան, թէ տուր՝ զի վասն թո անցուցից ընդ գետն յաննկոյս, և իբրև անցուցանէր, ոչ ղմէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո և կամէր (էջ 44),

«Ինչ առաջի ժամանակին Իսրայելացոց զլուխն էր եկեալ շատ աւելի արեկ մեր հայ ազգին զլուխն. շատ բազում չարչարանաց հանդիպ եցար որ ես մեղատորս չիպատմեցի» (էջ 223),

«Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք և արեալիքք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարագու հիւսեցից ողորս դամբանականս ի վերայ բեկման հայկական սեռիս, որք այսբան չարակրօթանց եղեն ընդունակք: Չի թէպէտ ըստ սարասի հնոյն Իսրայելի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդիս Բաբելացոց, այլ ոչ զոյր Երեմիա, որ խրատէր...» (էջ 44):

Բաջեցու Ուղեգրությունը կարելի է բաժանել բովանդակային երեք մասի: Առաջինը մինչև բուն ուղևորությունը ընկած շրջանն է, որի մասին վերևում խոսվեց: Երկրորդը ճամփորդության ընթացքի նկարագիրն է՝ քաղաքների, վանքերի ու եկեղեցիների պատկերամաներով: Երրորդ, վերջին մասը վերաբերում է հեղինակի կենսագրականին և, ինչպես առաջին մասը, ուղղակիորեն չի կապվում ուղեգնացության հետ: Այստեղ գերիշխում են անձնական կյանքի դրվագների մասին հաղորդումները (Կրակովի սուրբ Երրորդության վանքում պաշտոնավարության անցնելը, Հոռոմում պապին հանդիպելը, քահանա ձեռնադրվելը, առաջին անգամ պատարագ մատուցելը և այլն): Ուղեգրության վերջին հատվածում հեղինակը պատմում է, թե ինչպես պապի նամակով իրենց առաջնորդը Պողոս վարդապետին ուղարկում է հայրենիք իբրև տեղապահ «վերայ մեր աշխարհին» (էջ 235): Սա և Բաջեցու մտնում են Վենետիկ, որ «... խիստ մեծ քաղաք է շինած ի մեջ ծովուն խիստ զարմանալի քաղաք է եւ հիանալի չկա այսպիսի քաղաք ի վարայ երկրի սր

Մարկոս անտարանչին գերեզմանն հոն է եւ իւր գլուխ քազադրուիլն է» (անդ): Ուղեգրության այսպիսի անսպասելի վերջը կասկած չի թողնում, որ գրվածքը իր ավարտուն տեսքով չէ, որ մեզ ներկայանում է: Չեռագրում սրան հաջորդում է Անտոն Նազարոսի ինքնագիր ուղեգրությունը:

Ներկա Ուղեգրության հիմնական մասը, որ մեզ որպես այդպիսին հետաքրքրում է, երկրորդ, միջին մասն է, որտեղ Օգոստինոսը հայտնում է երկար և դժվար իր դեգերումներից ստացած ապավորությունները: Նրա ուղեգիծը այսպիսին է. Սպահան-Գազվին-Արդավիլ-Շամախի-Դամուրդարի-Թարք-Հաշտարխան-Կայրզա-Մոսկով (Մոսկվայում անձամբ չի լինում, այդ քաղաքի մասին նրան պատմում են, էջ 226)-Կարայքով-Համբուրք-Լիզբուա-Մատրիլ-Մալամանբայ-Մամբոր-Պատրոնա-Մատրիլ-Բարսալոն-Ջենովա-Միլան-Բոնոնեա-Ֆլորենցիա-Սենիա-Հոմ-Քարայքով-Հոմ-Բոնոնեա-Վանատիկ: Ի՞նչն է առաջին հերթին գրավում մեր հեղինակին այս քաղաքներում: Երկու բառով եթե ասելու լինենք՝ քրիստոնեական սրբավայրերը: Դա Բաջեցու, կարող ենք ասել, հիմնական, առանցքային հետաքրքրությունն է: Ուղեգիրը հաակապես ուշադրություն է հրավիրում եկեղեցիներում ու վանքերում պաշտոնավարող հոգևորականների թվի, ուխտավորների այցելությունների չափի, սրբատեղիներում գտնվող նշանավոր գերեզմանների ու սրբազան մատուցների, տաճարների արտաքին տեսքի վրա: Ահա այս նկարագրություններում է, որ շատ ցայտուն երևում են առհասարակ ուղեգրության տեսակի առանձնահատկությունները, իսկ Բաջեցի ուղեգիրը ներկայանում է իր ողջ հասակով մեկ: Բաջեցը առանձնապես մանրամասն է նկարագրում Իսպանիայի և Իտալիայի սրբությունները: Ս. Հակոբի երկրում հեղինակը տեսանելի գույներով է պատկերել համանուն տաճարը. «...բազում ոսկե եւ արծաթե խաչ եւ գաւազան էին վեր առեալ եւ շատ սրբոց մատուց ամենայն ոսկով պատած եւ ս. Յակոբոս Ալիեան գլուխն ի թափուրն վեր էին առեալ իւր պատկերն ոսկով շինած այ մինչեւ ի գոտկայ տեղն ի գլխին անգին թագ էին եղեալ որ գինն Ած լաւ գիտէ. Դ (4) քահանայ յօժարութեամբ վեր կունին. եւ ս. Յակոբոյ գերեզմանն մեծ խորանին տակին Ա դուռն մեծ բեմումն Այ. պապէն բանադրանք կայ որ ոչինչ մարդ չէ կարիլ դո[ւ]ռն բանալ եւ վեր իջնիլ տեսնուլ գերեզմանն սրբոյն. եւ գերեզմանին վերա. ԲԺ (20) կանքեղ կայ մեծիմեծ եւ արծաթե եւ այլ բազում հանապազ վառ են. ամենայն քրիստոնայ թագաւորի կանքեղ եւ տաճար կայ հոն շինած. եւ ս. Յակոբոյ գաւազանն ի մէջ եկեղեցումն է եւ երկաթով պատած է վասն եկող եւ գնացողքն չկարատեն. եւ մէկ դուռն կայ եկեղեցումն մօտ գերեզմանին որ կոչեն Դուռն Ողորմութեան որ է. Է (7) տարէնն մէկ հետ կու բացուի երանի այնոցիք, որ այն աւուրն որ բացուի հոն լիցին. այս ս. եկեղեցիս երկու տակ է որչափ

որ վերն է եւ այնչափ վայրն է խիստ զարմանալի գեղեցիկ շէնք...» (Էջ 227-228): Մենք դիմամբ այսպիսի մեծ մեջբերում արեցինք, որպեսզի առավել հստակ երևան Օգոստինոս Բաջենցի լեզվաոճական ինքնահատուկ ձևերը:

«Հավերժական քաղաքում» հեղինակը նկարագրում է գլխավոր յոթ եկեղեցիները. «...ապայ. Է (7) եկեղեցին պատմեսցուք որ ինչպէս փառօք եւ պատուօք կայ մինչեւ այսօր որչափ ուխտատու որ այս քաղաքս կուգայ մինչեւ այս. Է (7) եկեղեցիս ուխտ չանի ուխտն ընդունելի չէ...» (Էջ 230): Նույն այդ ժամանակ Հռոմում գտնված Միմեոն Լեհացին նույնպես գրում է վերոհիշյալ եկեղեցիների մասին. «Եւ այսպէս սահմանք է որ ամէն ուխտատու գայս եօքն եկեղեցիքս պիտուր քայլեն, զի սորա են մեծ եւ աւագ. իրեքն ի քաղաքն եւ չորս ի դուրս. բայց բոկ ռտամբ եւ հետիոտս, մեծաւ գոջմամբ եւ հառաչամօք» (Էջ 124): Առհասարակ Իտալիայի մասին (օրինակ՝ հիվանդատների ու որբանոցների մասին) երկու ուղեգիրների դիտումներն ու դիտողությունները շատ կողմերով են համեմատելի: Նրանք հիմնականում միևնույն դիրքերից են մոտենում «պապի երկիր» իդեալականացմանը: Այստեղ մեծ դեր չի խաղում դավանանքային խնդիրը. լուսավորչադավան Լեհացին և կաթոլիկ Բաջենցին հարազատ են միմյանց իրենց աշխարհայացքով և ըմբռնումներով: Մակայն Լեհացու և Բաջեցու ուղեգրությունները առնուհից ավելի շատ համեմատելի են մեկ այլ առումով. երկուսն էլ լայն չափով անդրադառնում են իրենց կյանքի դրվագներին: Այս իմաստով քննվող գործերի թերևս միակ տարբերությունը ծավալն է. Լեհացին առավել ընդարձակ է նկարագրում թե՛ տեսածները և թե՛ իր գլխով անցածները:

Օգոստինոս Բաջեցու գրիչը չի սահմանափակվում միայն ինքնակենսագրական բնույթի փաստերի և կրոնական-ծիսական շինվածքների արտացոլմամբ: Ուղեգրության մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում ժամանակի քաղաքական անցուղարձերի պատկերումները: Օրինակ, նրա այցը Ռոմաստան գուգադիպել է այն պատմական շրջանին, երբ ռուսաց գահի վրա իշխում էր ինքնակոչ թագավորը: Աստրախան քաղաքի կապակցությամբ հեղինակը գրում է. «...այս քաղաքիս իշխանն չէր թողուլիս որ էլչին մէկն ճանապարհովն գնէր դէպի Մօսքով վասն Մօսքովու թագաւորին իշխանքն տուէլ ին իրեանց թագաւորն սպանել. այլ ուրիշ սուտ թագաւոր եկեալ էր թագում հեծելօք ի Մօսքով քաղաքն պատւէլ թէ ես եմ թագաւորն, ուզին զիս սպանանէին փախեսայ, այժմ իմ է թագաւորութիւնն սուտ գրուց է ես թագաւորն մեռած չեմ. այս Հաշտարխան քաղաքս հնագանդեալ էր այս սուտ թագաւորիս...» (Էջ 225): Ռոմական քաղաքների վերաբերմամբ Ուղեգրության մեջ գործածական են «խիստ լավ ամուր բերդ», «լաւ ամուր քաղաք» (Էջ

225) և նման այլ արտահայտություններ, որոնցով բնութագրվում է քաղաքների և բերդերի պաշտպանվածությունը «վասն ահուն բշնամեաց» (անդ): Տպավորիչ է Դամուր դարի քաղաքի նկարագիրը. «... եւ Աղեքսանդեր քազատրն է շինելյալ պարբսպին մէկ եզերն ծովն որ է կոչի Քասպիական. մէկ եզերն է ի լեռն. ճանապարհն ձգած է ի մէջն բերդին որ եկող գնացողն չէ կարիլ անցնիլ եթէ ոչ մտցէ ի բերդն. խիստ շատ հինուց բան կայ տեսնելոյ զարմանալի...» (անդ):

Ինչպես հատուկ է ուղեգրության տեսակին վերաբերող գործերին, Օգոստինոս Բաջեցու Ուղեգրությունն էլ հազեցած է հետաքրքիր համեմատություններով, որոնց ակունքը ժողովրդական խոսքն ու բանն է: Ծամախիի երկրաշարժին ականատես լինելով, ուղեգիրը նկատում է. «Քաղաքն եղաւ որպէս նաւ ի վերայ ծովոյ» (անդ): Ֆլորենցիայի ավազ եկեղեցու աշտարակը այնքան է բարձր, որ «երբ մարդ հայի բարձրութենէն աչքն սեւանա» (էջ 230): Հռոմի Պետրոս և Պողոս առաքյալների եկեղեցու մասին կարդում ենք. «... եւ այնչափ է բարձրութիւնն որ մեծ գունբեփին գլխին խաչին տակին խնձորի լինանա...» (231): Իսկ Մոսկվայի եկեղեցիներից մեկում «մէկ զանգակ կայ որ ժամ կու ձայնեն. Ծ (100) մարդ կու քաշէ» (226):

Իր ծավալային հատկանիշով ԺԷ դարի ուղեգրությունների մէջ Օգոստինոսի գրվածքը զիջում է միայն Սիմեոնի Ուղեգրությանը: Մակայն պիտի ասել, որ Բաջեցու գործի ծավալը ի մեծի մասի գոյացել է բազմաթիվ կրկնությունների հաշվին, որ աչք են զարնում Ուղեգրության շարահյուսվածքում: Հեղինակը մի անգամ արդեն հորինած արտահայտությունը պատրաստի ունենալով, նույնությամբ կամ գրեթե նույնությամբ օգտագործում է մեկ այլ տեղանքի նկարագրության մեջ: Նա ջանք չի քափում գնահատանքների նոր ու չկրկնված ձևեր գտնելու, միմյանց չկրկնող պատկերներ ստեղծելու: Այդ անփույթ վերաբերմունքը մեծ չափով հեռանք է շտապողականության, գրելու ընթացքում հեղինակի ունեցած տկարության: Ուղեգրությունը պարունակող Մաղմոսարանի հիշատակարանում Բաջեցին գրում է «... մի լինիք մեղադիր մեղատրիս ի կողմանէ սղալանաց ի մէջ նախ գրեցաք տկարութեամբ»²³:

Ուղեգրության մեջ նշված պատճառներով շատ են կրկնությունները: Այսպես, նախորդ ուղեգիրներից արդեն մեզ հայտնի «ՌՎ կարող է լեզվով պատմել» կաղապարը Բաջեցին աննշան ձևավորություններով կրկնում է ուղիղ տասնմեկ անգամ, և կամ «ԲԺ (20) կանթեղ կայ մեծիմեծ եւ արծաթէ եւ այլ բազում»-ը (էջ 228) նույնությամբ կրկնված է հինգ անգամ: Իսկ «եկեղեցին խիստ մեծ պայծառ եւ ոսկիակազմ եւ անգին քարերով շինած» (էջ 232) ձևը չնչին տարբերություններով հանդիպում

ենք ուրից ավելի անգամներ: Նման օրինակները կարելի է էլի ավելացնել, բայց բերվածն էլ բավական է որոշ գաղափար ունենալու համար Բաջեցու գրվածքի քերթությունների մասին: Սակայն, քանի որ այս կարգի կրկնություններ ավելի կամ պակաս չափով հանդիպում են նաև հայկական համարյա բոլոր ուղեգրություններում, ներկա Ուղեգրության գրական արժեքը չի կարելի անտես առնել:

Շարադրանքում խախտելով ԺԷ դարի ուղեգիրների ներկայացման հերթականությունը (որպես հիմք ընդունել ենք ուղեգրական երկերի գրության ժամանակները), նպատակահարմար ենք գտնում Բաջեցուց անմիջապես հետո «տեղափոխվել» նույն դարի վերջը՝ քննության նյութ դարձնելու այդ շրջանի ոչ ուխտագնացական ուղևորությունները նկարագրող գործերը: Ժամանակային հերթագայության անաեսումը պայմանավորված է ուղեգրությունների այդ խումբը՝ իբրև բովանդակային իմաստով ուխտագրություններից տարբեր ստեղծագործություններ, մեկ տեղում վերլուծելու անհրաժեշտությամբ: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մենք ուխտագնացության նկարագրությունները չէինք առանձնացնի ոչ ուխտագնացական ուղեգրություններից, եթե դրանց միջև եղած տարբերությունները սահմանափակվեին միայն պատկերման նյութով, բովանդակությամբ: Բանն այն է, որ տվյալ դեպքում ավելի էական են արտահայտչական միջոցների ու պատկերավորման եղանակների, այսինքն ձևային բնույթի տարբերությունները, որոնք արդյունք են հեղինակների տարբեր նպատակադրումների:

Անտոն Նազարոս (ըստ Ղևոնդ Ալիշանի և Գարեգին Հովսեփյանի՝ Նազարյան) Ապրակունեցին 1684-ից սկսած հիշվում է որպես Երնջակի գավառի Ապարաններ կամ Ապրակունիք գյուղի ունիթորական վանքի վանահայր²⁴: Մինչ այդ, 1669 թվականին նրան քահանա է ձեռնադրում Բաջեցու հաջորդ Պողոս Փիրոմալաբալա Բրեզի հաջորդ Մաթեոս Հովանիսեցին, և, ինչպես գրում է Ապրակունեցին իր Ուղեգրության մեջ, տանում է իր հետ պարսից շահի արքունիք: Սպահան այցելությունն ուներ իր նպատակը. Պարսկաստանի շահին նա քղեր էր տանում Հռոմի Կղեմես Թ պապի, Լյուդովիկոս ԺԴ քազավորի, Թուսկանայի դքսի և Վենետիկի ժերակույտի կողմից՝ հայկական հարցի առնչությամբ²⁵: Ուղեգրության մեջ կարդում ենք. «... նա՝ (շահը, - Ա. Ս.) մեծաւ պատուով ընկալաւ. եւ կատարեաց զխնդրելին. եւ պատասխանն ամենեցունց գորս ունէր. այսինքն Փափին. Ֆրանցիոյ քազաւորին եւ գրանդուկին. Վանա[ա]յտիկոյ ռէիպուպիկին եւ եւ այս պատասխանիքս, յանձնեաց մեզ քանզի քազաւորն Պարսից այսպէս կամեցաւ զի յինքն այսինքն մեր Արքեպիսկոպոսն տեղն մնասցէ եւ մեզ առաքեսցէ առ ի հասուցանել պատասխանքն, իշխանացն քրիստոնէից...» (էջ 236-237): Այդ քղերում

խնդրվում էր Նախիջևանի գավառի միարար բնակիչների հարկերը քեթևացնելու մասին և, որ ավելի կարևոր էր, «վասն միզակակցութեան ընդ քրիստոնէից» (Միսական, էջ 399) ընդդէմ Օսմանյան տիրապետության: Իր ընկերակից Ազարիա Ջահկեցու հետ զայիս է Հռոմ, ապա Վենետիկ ու Ֆլորենցիա՝ նամակները հասցեատերերին հանձնելով: Այնուհետև Անտոն Նազարոսը միայնակ (Ազարիան գործերով մնացել էր Վենետիկում) մեկնում է Ֆրանսիա՝ Վերսայլ, որտեղ երկու ամիս սպասում է Լյուդովիկոսի պատասխան նամակին: Ֆրա Անտոնի Ուղեգրությունն սկսվում է հենց Փարիզ մուտքով 1674-ի փետրվարի 28-ին. «... ի թիւն Ռ-Ռ-Հ-Գ. (1674) փետ[ր]ուար[ի] յետին ատուրն եկեալ հասի այս գահանիստ եւ քազայգարդ քաղաքս Փարիզ...» (235):

Յավոր, գրեթէ երկու ամիս կենալով Փարիզում, Անտոնը չի թողել ոչ մի նկարագրություն: Ընդհանրապես ներկա Ուղեգրությունը մտտ է Փիրգատի գրվածքին: Օրինակ, ընդհանուր է հետևյալ կաղապարը. «Իսկ մեր ճանապարհն էր այսպէս. մալս Դարբանդ. անդի Հաճքարխան. անդ Մասկովն. անդի Լէին. ի Լէին Վիւնայ անտի Վան[ա]յտիկն...» (237):

Իր դեսպանագնացության նկարագիրը Ապրակունեցին գրչազրնել է Փարիզի Սան Հոնորաթո վանքի ձեռագրատանը պահվող Բաջեցու Ուղեգրությունը պարունակող մատյանի էջերում²⁰: Ինքնագիրը հաջորդում է Բաջեցի Ուղեգրությանը: Սան Հոնորաթո վանքում տեսնելով Բաջեցի գրվածքը, Անտոնը ձեռնամուխ է լինում իր պատմության գրությանը: Օգոստինոսի ինքնաձեռագիր Ուղեգրությունը գտնելու մասին հիշատակություն կա Նազարոսի երկի սկզբնամասում. «... իջեանեցայ (Փարիզում, -Ա. Մ.) ի վանս կարգին մերոյ սբ Այ Աւետեաց Ածածնին, զոր սան Հօնօրաթօ կասեն. զնացեալ զտես գրատանն զքի զիրս այս որ է ձեռացագիր հանգեալ քահանայետին (այսպէս) մերոյ Տր Օգոստինոս Բաճիցի, Նախիջևանոյ Արի եպիսկոպոսին զորս յիշատակն օրհնութեամբ եղիցի զի անպատմելի է բարերարութիւն սորայ վերայ վանորէից եւ ժողովրդեան մերոյ» (235):

Անտոն Նազարոսի Ուղեգրությանը հատկանշական է ինքնատիպ կառուցվածքը: Հեղինակը փաստորեն իր գործը սկսում է վերջից (1674թ.), այնուհետև, միտելով հայտնել ուղևորության նախադրյալները («Իսկ պատճառ զալստեան մերոյ տեղս այս է...», մ. տ.), հետ է գնում դեպի 1667 թվականը: Դրան հետևում է Եվրոպայից վերադարձած Մաքեոս Հովանիսեցու հետ հանդիպման նկարագրությունը 1669 թվին: Բուն ճանապարհորդությունն սկսվում է այս տարեթվից և ավարտվում 1674-ին: Կառուցվածքի այդպիսի «չրջումը», այսօրվա եզրույթով, ֆարուլայի օգտագործումը, որ ինքնին ուշագրավ հնարանք է, իրենից առաջ արդեն իսկ գործածել էր Օգոստինոս Բաջեցին: Կարելի է աներկրայորեն

ասել, որ Ապրակունեցին, ծանոթանալով իր հորեղբոր ուղեգրությանը, ցանկանալով նմանվել (կամ անգիտակցորեն նմանվելով), ինչ-որ իմաստով ազդեցություն է կրել նրանից:

ԺԷ դարի ոչ ուխտագնացական թեմատիկայով ուղեգրության տեսակը բարձրության հասցրին Հովհաննես Թութունջին և Շահնուրատ Բաղիշեցին:

Եթե Փիրգատի մասնակցությունը ԺԷ դարավերջի ազատագրական շարժումներին երկբայելի է, իսկ Անտոն Նազարոսի պարագայում հանգամանքները մեզ երևում են մշուշապատ տեսքով, ապա Հովհաննես Թութունջիի և Շահնուրատ Բաղիշեցու դեպքում՝ նրանց քաղաքական գործունեության օգտին խոսող փաստերը բավականին բացորոշ են: Գալով առաջինին, նշենք, որ Հովհաննեսը գործուն դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության ԺԷ դարում և ունի իր հարուստ կենսագրությունը: Խիստ համառոտ վերապատմենք նրա կյանքի գլխավոր դրվագները: Թութունջի կոչվել է շատ ծխող լինելու համար, Վանեցի՝ Վանում ծնված լինելու, Աղթամարցի՝ Աղթամարի կաթողիկոս լինելու համար (1670-1672): Ունեցել է մահ Արևելյի մականունը: Երկու անգամ (1663-1664 և 1665-1672) եղել է Պոլսի պատրիարք: «1678-1680-ին ուղեվորվել է Եթովպիա՝ հավանաբար ապահովելու վերջինիս մասնակցությունը Լյուդովիկոս 14-րդի ի ձեռնարկած հակաթուրքական կռաւիցիային»²⁷: Այդ ճամփորդության մանրամասները Հովհաննես Թութունջին շարադրել է իր Ուղեգրության մեջ, որը մեզ է հասել երկու տարբեր օրինակով: Դրանցից մեկը Երևանի ընդօրինակությունն է (ՄԱՄ, Ձ. 737), մյուսը՝ Պոլսի (Անտոնյան մատենադարան, Ձ. 211): Այս երկու տարբերակները (առաջինը՝ ավելի ընդարձակ), որոնք լրացնում եւ ամբողջացնում միմյանց, 1961-ին հրատարակել է Հակոբ Անասյանը իր «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» գրքի «Վավերագրեր» բաժնում²⁸: Մինչ այդ եղել են բազմաթիվ ամբողջական և հատվածական հրատարակություններ:

Հովհաննես Թութունջիի Ուղեգրությունը մեծ կարևորություն ունի հայ-հարեշական առնչությունների պատմության մեջ, այն անգնահատելի սկզբնաղբյուր է ԺԷ դարի Եթովպիայի պատմությունը ուսումնասիրելու համար: Առանձնապես կարևոր են Հովհաննեսի գրվածքի այն տեղերը, որոնցում հեղինակը պատմում է Եթովպիայի պետական կառուցվածքի ու թագավորի մասին, որին ուղևորը հանդիպում և նկարագրում է երկրի մայրաքաղաք Դումպիայում: Սա հարեշական վեց թագավորներին հնազանդ պահող թագավորն է: Դրա համար էլ հեղինակը նրան կոչում է «խիրատոլ», որ իտալերեն իմպերատոր բառի աղավաղված ձևն է: Նրան է պատկանում մյուս վեց թագավորներին փոխա-

բինողների ընտրության իրավունքը. «Եւ այս Ջ (6) քազաորքս հնազանդ են Դումպիոյ քազաորին, եւ որ ինչ որդիք ծնանի այս քազաորացս, կուղարկեն Դումպիոյ քազաորին զի գորն որ կամի՝ գայն արասցէ քազաոր ի տեղի իօրն» (Ե. օ., էջ 302): Հետաքրքիր են քազավորի վարած դատական արարողակարգի մասին մանրամասն հաղորդումները, քազավորի հանդերձանքի տպավորիչ նկարագրությունը: Դումպիայի քազավորը տարբերվում է երկրի մյուս մարդկանցից. «Եւ ինքն քազաորն է յոյժ աստուածասէր և բարեպաշտ, տեսլանմբն գեղեցիկ և հասական Բ (2) կանգուն բարձր բան զամենայն մարդիկը» (Ե. օ., 302-303): Կ. Պոլսի օրինակում այս հատվածն ունի իր շարունակությունը. «... եւ որքան քազաոր որ եկեալ է տրա ազգէն՝ բազկի ոսկոռն մի է եւ ոչ երկու իբրև հասարակ մարդոց» (Պ. օ., էջ 308): Սա ևս ասվում է քազավորի առանձնաշնորհյալությունը ցույց տալու նպատակով:

Ըստ Մահաեսի Մուրատի բանավոր պատմության, որ նա արել է Լուդովիին և Թեոդոյին 1683-ի վերջերին, Փարիզում, Հովհաննես Թութունջին ինքն անձամբ է շոշափելով ստուգել քազավորի արմունկը և համոզվել դրա միասնակոր կազմության մեջ²⁹: Ի դեպ, Պոլսի օրինակում առավել ընդարձակ է քազավորին՝ Մեծ Նեգուսին (Եթովպիայի քազավորների տիադոսը) վերաբերող հատվածը: Այս քազավորը մեծ բարյացակամությամբ հայ ուղևորին արքունիքում պահել է մեկ տարի: Դրանով է բացատրվում հեղինակի լավ ծանոթությունը հարեշների արքային:

Նեգուսից հատուկ արտոնություն ստանալով³⁰, Հովհաննես Թութունջին գնում է տեսնելու Կապույտ Նեղոսի ակունքը, «որ այնքան երկրախոյզներ որոնել ու չէին գտել, և իրենից շատ տարիներ հետո եվրոպացիք հագիվ պիտի գտնեին»³¹: Սա հայկական ուղեգրություններում տեղ գտած միակ, բայց ոչ աննշան աշխարհագրական հայտնագործությունն է: Իրենից մեկ հարյուրամյակ հետ թողնելով պորտուգալացիներին, Թութունջին վաստորեն դարձավ առաջին սպիտակամորթը, որ տեսավ ու նաև նկարագրեց Նեղոսի ակունքը: Ա. Ալպոյաճյանը ժխտում է հավանականությունն այն բանի, որ Թութունջին «... Նեղոսի ակը գտնելու նպատակով գացած ըլլայ Հապէշխտան: Պարզապէս դիպումս մըն է, որ զինք կը դարձնէ զիտական հետազոտութեան մը առաջապահը կամ աշխարհագրական խուզարկու մը...»³²: Ալպոյաճյանը շեշտում է թե «... մեր ցեղին պատկանող անհատ մը - ան ալ եկեղեցական մը - գտնէ 200 տարիներ կանխած է Կիօսմ Լը Ժանը, Տը Պարտէզը, Տը Պուրկօնը, Շառլ Պիսիտօնը և ուրիշ շարք մը ուղեգիրներ, ներկայացնելով Հապէշխտանը ստոյգ տեղեկություններով և ճշդելով վայրը կենսաբաշխ Նեղոսի ակերուն, որոց տեղը որոշել շատ հին դարերէ ի վեր մարդկային հետաքրքրութեան առարկան եղած էր»³³: Այս իմաստով Թութունջիի Ուղե-

գրության նշանակությունը դուրս է գալիս միայն հայ գրականության շրջանակներից՝ ստանալով միջազգային կարևորություն: Հայ եպիսկոպոսն իր ճշմարտապատում տեղեկություններով վերջակետ դրեց միջնադարում Նեղոսի սկիզբ առնելու վայրի և առհասարակ Երովսիայի հետ կապված առասպելական պատմություններին, որ մեծ թիվ էին կազմում եվրոպացի հեղինակների ուղեգրություններում³⁴:

Եգիպտոսում ֆրանսիական հյուպատոսի պատմության համաձայն Թութունջիին Նեղոսի ակունքը տեսնելու թույլատրություն-արտոնություն է շնորհել ինքը՝ Նեգուսը: Հատուկ թույլտվությամբ միայն Նեղոսի ակը տեսնելու հանգամանքը Ուղեգրության մեջ ուղղակիորեն չի արտացոլվել: Այս տեսակետից շատ կարևոր է Նեղոսի նկարագրության հատվածը, որից պարզ երևում է որ հեղինակը միտումնավոր կերպով քաքրել է քազավորի կողմից թույլտվություն ստանալու մասին հիշատակությունը, ինչպես որ իր ուղևորության բուն շարժառիթ-նպատակն է լռության մատնել: Բանն այն է, որ Ուղեգրության շարադրանքում տեղ գտած Նեղոսի նկարագրությունը Կ.Պոլսի օրինակում գրված է Գունսիայի քազավորի մասին ծավալուն գիտանքների հաղորդման և նույն արքայի քաղաքական առավելությունը (Եգիպտոսի նկատմամբ) ցույց տվող նախադասության միջև՝ կապված Նեղոսի ակունքի հետ: Երևանի օրինակում միայն վերջին՝ Նեղոս-քազավոր թեմատիկ հերթազայությունն է պահպանված: Նկարագրության առարկաների այդպիսի հերթականությունը ամենևին էլ պատահական բնույթ չի կրում և իր խորքում պահում է քազավորի կողմից միայն հատուկ թույլատրությամբ Նեղոսի ակը տեսնելու հնարավորությունը: Բերենք Ուղեգրության այդ դրվագն ամբողջությամբ, «Ի՛ յունիսի ամսոյն մինչև հոկտեմբեր ամիսն ձմեռն է որ բարձր սարերն ձիւն կու գայ եւ այս 4 ամիսս ամէն օր 2 անգամ անձրեւ կու գայ եւ գիշերն մինչև լոյս. եւ որքան անձրեւ որ կու գայ ամէնն կու հաւաքին ի ծովակ մի որ պատէ 15 օր եւ Նիլ գետոյ ակն այս ծովակիս մօտ է, կու մտնու այս ծովակիս մէջ. եւ այս ծովակիս ջուրն կելնէ 2 սարամիջով կու գնայ Մար, որ Մարայ երկիրն շէն կու պահէ. եւ թէ Հապաշի քազատրն կամենայ՝ կարէ կտրել զՄարու ջուրն. եւ այս ծովակիս մէջն ամենայն ծովային կու գտանի. ֆիլ, գոմէշ, եգն, մարդ, կին, եւ ամենայն անճոռնի կենդանի» (Պ. օ., 308-309): Ինչպես ենթադրելի է մեջբերումից, հարեշների քազավորն է հաղորդել Հովհաննեսին այն կարևոր տեղեկությունը, որ ինքը ցանկության դեպքում կարող է կտրել Եգիպտոսի համար կենսական երակը: Գիտենք, որ Նեղոս գետը կազմվում է Կապույտ և Սպիտակ Նեղոսների միախառնումից, որի տեղը Սուդանի մայրաքաղաք Խարթումն է: Առաջինը սկզբնավորվում է Հաբեշական բարձրավանդակում գտնվող Թանա լճից (որ Թութունջիին կոչում է ծովակ), երկրորդը՝ Վիկ-

տորիա լճից: Այս դեպքում խոսքը Կապույտ Նեղոսի ակունքի մասին է: Հարց է առաջանում. ինչո՞ւ միայն Կապույտ Նեղոսի ջրաբազումով կվաանգվեր եգիպտացիների կյանքը, չէ՞ որ կա Սպիտակ Նեղոսը: Եթե նրանք մեկ գետ դարձած են մտնում Եգիպտոս, ուրեմն ընդամենը կվա- գեր Նեղոսի ջրառատությունը: Մանավանդ, որ Սպիտակ Նեղոսն է ավանդաբար համարվել առավել մեծն ու ջրառատը: «Այս Ապինինեան ճիւղը (Կապույտ Նեղոսը, - Ա. Ս.) համարուեցաւ զարդիս իբր բուն Նեղոս, քելաւ Սպիտակ գետն արեւի մեծ և երկայն է, և հին ատեն կհամարուէր բուն Նեղոս»³⁵: Մենք ստույգ չենք կարող ասել, քե՞նք այդ «հին ատենը» հատկապէս որ ժամանակներին է համապատասխանում, բայց մի բան կարելի է հաստատ պնդել, որ ԺԷ դարի Եթովպիայում Նեղոսի հիմնական «ջրամատակարարը» իրավացիորեն համարվել է Կապույտ Նեղոսը, ինչը տեսանելի է Նեղոսի նկարագրությունից:

Նեղոսի նկարագրությունը Թութունջիի Ուղեգրության մեջ բնության պատկերման մի մասն է կազմում: Բնությունը, ինչպէս ցույց է տալիս համեմատական վերլուծությունը, մինչև ԺԷ դարասկիզբ, մինչև Միմեոն Լեհացի, ուղեգրական երկերում, կարելի է ասել, չի դարձել պատկերման նյութ: Բնության տեսարաններին հիմնականում անդրադարձ եղել է ճանապարհների դժվարանցելիությունը ցույց տալու առիթներով: Բացառություն են խորենացու «Հայոց պատմության» մի հատվածում Ալեքսանդրիա քաղաքի կլիմայի նկարագիրը և Եղիշեի «Ալյակերպության ճառում» Թարթր լեռան պատկերը: Հովհաննես Թութունջին իր գործում մեծ տեղ է տալիս բնության հետ առնչվող երևույթներին: Օրինակ, Նեղոսի մասին հատվածը Երևանի ընդօրինակության մեջ շարունակվում է այսպես. «Եւ երկիրն Հապաշոյ միշտ կանաչ է, եւ չոր բոյս ոչ տեսանի, լի է ջրաւտ եւ խտաւտ» (Ե. օ., 305): «Եւ երկիրն լի է ամենայն բարութեամբ և զանազան այգօք և առատութիւն յոյժ ամենայն կերակրոց քէ՛ մսեղիմաց և քէ՛ մրգեղիմաց: Կան ծառք և ծաղիկք զանազան: Բայց կայ և ծառ մի որ ո՛չ ինչ գտանի ի նա, և է բարձր որպէս զանկակատուն Պիշառու (Pisa) և տակն այնքան հաստ է, որ ԺԵ (15) կամար ե[ն] շինել ի ծառն. և ի գլուխն ունի սակաւ ճիւղ, և պտուղն որպէս դդում, և մէջն է իբրեւ գվշատ քրքվաշ, և մարդիկք ուտեն զայն» (Ե. օ., 303): Եվս մի մեջբերում. «Կայ և ծառ բամպակի մեծ որպէս ծիրանի, և տարին ԺԲ (12) ամիս պտուղ տայ և ապրի մինչ ի Դ (100) տարի» (Ե. օ., 304): Բուսական աշխարհի երևույթներից բացի Թութունջին քիչ տեղ չի հատկացրել Եթովպիայի «Ֆաունայի» նկարագրություններին: Բերենք օրինակներ Ա. Պոլսի ընդօրինակությունից. «Ի Մուսովու 12 օր զնացար ի Դիվարպատ. այս 12 ատուր ճանապարհիս շատ կերպ զազան կայ, եւս առաւել ֆիլ, քարբերդան, մեխմուն, առիւծ, որ շատ են քան զաւագ ծովու: Գռն և ազգ

ազգ խօսուն քոչունք գեղեցիկ փետրօք...» (Պ.օ., 307): Հովհաննես Թորունջին չի գոհանում կենդանիների միայն թվարկումով. նա դրանցից առավել անհայտներին (իր ընթերցողի համար) ներկայացնում է առանձին՝ յուրաքանչյուրի համար գտնելով մի հետաքրքիր բնութագրություն. «Կայ և ազգ մի եզն որ ամեն պոչն (զրչի սխալ է, պետք է կարդալ պոզն, ինչպես Երևանի օրինակում է, - Ա. Ս.) և (40) հոխայ ջուր կու տանի որ կու մորթեն կուտեն. կայ և էշ վայրի գեղեցկախայտ որ թագաւորաց փէշքաշ կու տանին: Կայ և ազգ մի կենդանի որ զառնափա ասեն որ վիզն խիստ երկայն է, դեվադուշու նման է, և ինքն է քան զէզն մեծ և յետքն բարձր է քան զառաջքն. և ինքն խիստ սիրուն կաշի ունի պուտ պուտ: Կայ և սամուր պատուական որ մէկ հատն մին քիւրք կու լինի» (Պ. օ., 309-310):

Սեկ այլ տեղում հեղինակը Ալֆայի մերձակայքի լերկ անապատը նկարագրելիս գրում է այսպիսի տպավորիչ տողեր՝ դրսևորելով սուր դիտողականություն. «...ամենն չօլ է, ոչ բոյս կայ եւ ոչ ծառ. ամենն սպիտակ աւազ է որ ասեն ծով աւազ. եւ սատակեալ ըղտոց մարմինքն են նշան ճանապարհի» (Պ. օ., 311):

Շատ բան է տեսել ուղեգիրը երկու տարի և տասն օր տևած իր ճանապարհորդության ընթացքում: Մեծ է Ուղեգրության էջերում հաղորդվող տեղեկությունների թիվը, սակայն փոքր է դրանցից ամեն մեկի ծավալը, հեղինակը «ուրբաբախտս» է մանրամասները վերապատմելու մեջ: Ամեն դեպքում այդ տեղեկություններն ու տվյալները, որ վերաբերում են եթովպացիների պետական միավորումներին, կենցաղին ու սովորույթներին, կրոնական-դավանաբանական կարգերին, առևտրական հարաբերություններին և այլն, ունեն ճանաչողական մեծ արժեք և, որ առավել դիտելի է, արվում են գրական խոսքի հատկանիշներով բնութագրվող պատումով:

Հովհաննես Թորունջին որևէ երևույթի կամ առարկայի վերաբերյալ ընթերցողին առավել հիմնավոր պատկերացում տալու նկատառումով հաճախ է դիմում համեմատությունների օգնությանը: Շատ դեպքերում այդ համեմատությունները խոսում են մեր ուղեգրի աշխարհատեսության մասին: Այսպես, ծառի բարձրությունը ցույց տալու համար նա համեմատություն է անցկացնում Պիզայի նշանավոր աշտարակի և այդ ծառի միջև. «Այլ եւ կայ ծառ մի մեծ որ բարձր է քան զգանկակատունն Փիզայու...»³⁶ (Պ. օ., 309): Դումայիան համեմատվում է Կ. Պոլսի հետ. «Իսկ քաղաքն Դումայիոյ երկու չափ մեծ է քան զՄտամպօլ...» (Պ. օ., 307): Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ համեմատությունը արվում է առարկայի գերազանցությունը բացահայտելու նպատակով: Ընդ որում, որպես համեմատության մի կողմ, հեղինակը որոշակի գիտակցությամբ վերցնում է իրենց տեսակի մեջ բարձր կամ մեծ առարկաներ.

ինչպես վարվում են մյուս ուղեգիրները իրենց նկարագրությունները ավելի տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու համար: Բերենք Թութունջիի ստեղծած տեսանելի պատկերի ևս մեկ օրինակ, որտեղ Դիվարապատ-Դումպիա ճանապարհին խոյացող լեռան բարձրությունն ու զառիվերությունն է ընդգծվում. «... և զսարն դժար կու անցանի որ քե՛ տավար, և քե՛ բեռն չուանով կու քաշեն ի վեր...» (Ե. օ., 302): Այսպիսի բազմաթիվ նկարագրությունների շնորհիվ Հովհաննեսի գրվածքը դառնում է ընթերցանության համար հետաքրքրական: Այդ հանգամանքն էլ, միանալով Ուղեգրության մյուս կարևոր արժանիքներին, ապահովում է Թութունջիի ուրույն տեղը ոչ միջնադարյան ուղեգիրների շարքում:

Քննվող երկում առավել մանրամասնորեն կերտված է Եթովպիայի թագավորի կերպարը, որը, կարելի է ասել, իդեալականացված է: Ուղեգրություններում սովորաբար բացակայում են կերպարները այդ բանի մեզ ծանոթ եզրույթային իմաստով: Եթե չհաշվենք Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը, նաև այլ ուղեգրական գործերում իրենց՝ ուղեգիրների կերպարները, որոնք ինքնըստինքյան կան, նույն տեսակին պատկանող բոլոր երկերում մերթ ընդ մերթ երևում են ամենատարբեր կերպարներ, հիմնականում թագավորներ և հոգևոր իշխանության գլխավորներ, որոնք բոլոր դեպքերում էլ բնութագրվում են անցողակիորեն, այնքանով միայն, որքանով տվյալ անձնավորությունը առնչվում է ուղևոր-հեղինակի ճանապարհորդությանը: Նրանք մեծ մասամբ հիշվում են հանձնարարական գիր (պապերը) կամ դրամական օգնություն (թագավորները) ուղեգրին տալու առիթներով: Այլ է պատկերը Հովհաննես Թութունջիի Ուղեգրությունում, որտեղ առանցքային-կենտրոնական տեղ է զբաղեցնում թագավորի, ինչպես ասացինք, բևեռացման սկզբունքով հորինված կերպարը: Այս գիծը պարզ տեսանելի է նաև Մահտեսի Մուրատի «Հիշատակարանում», ուր շեշտը դրված է ֆրանսիական արքունիքի ներկայացուցիչների կերպարները վերարտադրելու վրա: Շահմուրատ Բաղիշեցու Ուղեգրության մեջ իր շարունակությունն է զանում կերպարաստեղծումը իբրև ուղեգրության քեմատիկայում կենտրոնաձիգ մոտիվներից մեկը, իսկ հաջորդ դարում զարգացման է հասցնում Հովհաննես Թովմաճանը իր «Ինքնակենսագրության» ուղեգրական մասերում:

Ներկա Ուղեգրության ոչ երկրորդական արժանավորություններից մեկն էլ հեղինակի խոսքի հավաստիությունն է: Հովհաննես Թութունջին ստուգապատում գրող է, և, ինչպես նկատում է Ալպոյաճյանը, «հակառակ անոր որ առասպելական և բոլորովին անձանօթ երկիրի մը վրայ կը խօսի, բնաւ չէ ուզած չափազանցութիւններով կամ անհեթեթութիւններով լեցնել իր ուղեգրութիւնը: Անիկա չափազանց պարզ ոճով մը գիրի առած է (գրեթէ աշխարհաբար) ինչ որ տեսած է կամ լսած.

որով ուղղամիտ տեղագրող մը եղած է»³⁷: Պատմաբանը «անտեղի չափազանցութիւններ»³⁸ է համարում Պիզայի բարձրության ծառը, զմբուխտ լեռը, մարդակեր ցեղերը, քազավորի միառակոր բազուկը, հարյուր տարի ապրող և բոլոր տարին պտղավորվող ծառը, որոնք արդյունք են մասամբ իր ուղեկիցների պատմածների հանդեպ դյուրահավատության, մասամբ էլ ընթերցողի վրա տպավորություն գործելու միառամին: Ամեն պարագայում դրանից չի նվազում Հովհաննես Թութունջիի Ուղեգրության ուժը:

ԺԸ դարի ազատագրական շարժման հետաքրքիր դեմքերից է նաև Մահտեսի Ծահմուրատ Բաղիշեցին (անվան սկզբում «շահ»-ը դրել է՝ իր համար «քազավորական-իշխանական ծագում»³⁹ ապահովելու համար): Իր «Հիշատակարանում» նկարագրել է Լյուդովիկոս 14-րդի արքունիք Վերսայլը: «Այս պարզամիտ Հայագի ճանապարհորդը Վերսայլի բիրատր ճոխութեանց մէջ՝ միայն այն բաները համարել է արժանի յիշատակութեան, որն որ իւրեան քմաց յարմար է գտել»⁴⁰ - կարդում ենք Ի հրատարակության առաջաբանում: Ծննդյան քվականը ծանոթ չէ, ծննդավայրը Բաղեշն է, մահացել է 1684թ.-ին, տեղն անհայտ: Եղել է խոջա: Կենսագրության կարևոր փաստերից է Աղթամարի կաթողիկոս Հովհաննես Թութունջիի կողմից 1666-ին կազմակերպված այցելությունը Փարիզի արքունիք: «1666-ից մինչև 1683-ը գործել է Փարիզում»⁴¹: Վերսայլի նկարագրությունը պարունակող նրա հիշատակարանը, որը մենք կրնենք ստորև, գրել է 1683թ. փետրվարին: Այստեղ կա մի դրվագ, ուր ներկայացնում է իր խոսակցությունը քազավորի եղբոր հետ քարզմանչի միջոցով: 16 տարի Փարիզում ապրած մեկը դժվար թե չտիրապետեր ֆրանսերենին և քարզմանչի կարիք ունենար:

Գառնանք Մահտեսի Մուրատի հիշատակարանին: Ծահմուրատի բնագրի ամենից կատարյալ ընդօրինակությունը (որ Երևանի Մատենադարանի 4618 ձեռագիրն է. էջ 173ա-175ա) հրատարակել է Հակոբ Անասյանը⁴²: Այս հրատարակության համար նկատի են առնվել նախորդ հրատարակությունների տարբերությունները, որի շնորհիվ Հ. Անասյանի տպագրածը դարձել է «կանոնավորված բնագիր»՝ ձեռք բերելով քննական բնագրի հանգամանքներ: Անցյալ դարավերջին և մեր դարասկզբին եղել են մի շարք հատվածական հրատարակություններ:

Թեև այս գործը կոչվում է «Հիշատակարան», ըստ էության ուղեգրություն է: Պատկանում է ուղեգրությունների այն տեսակին, որոնցում չեն նշվում անցած ճանապարհի հետ կապված հանգամանքները (բնակավայրերը, մարդիկ, լեռները, գետերը, եկեղեցիները և այլն) և պատումը անմիջապես սկսվում է որևէ վայրի նկարագրությամբ, որին և վերաբերում է գրվածքն ամբողջությամբ: Ինչպես հետո մենք ցույց

կտանք, նմանօրինակ ուղեգրություններով հարուստ է չափածոյի բնագավառը: Մինչդեռ Մահտեսի Մուրատի Ուղեգրությունը արձակ ուղեճամբերի շարքում մեզ ծանոթ միակ նմանօրինակ հուշարձանն է: «Հիշատակարան» անվանումը տվյալ դեպքում ինքնամույժ է, որովհետև հեղինակային խորագրում կոչվում է «պատմութիւն» («Պատմութիւն Վերսալիայ քաղաքին ֆրանկաց» էջ 315): Հիշենք, որ «Պատմութիւն» են անվանել իրենց ուղեգրությունները նաև Մարտիրոս Երզնկացին և Հովհաննես Թութունջին՝ չնայած վերջինների ու Շահմուրատ Բաղիշեցու գրվածքների միջև եղած էական տարբերություններին: Ի՞նչն է դրդել բանասերներին Մահտեսի Մուրատի գործը ոչ թե ուղեգրություն, այլ հիշատակարան համարելու: Հավանաբար այն, որ խնդրո առարկա գրությունը ունի մի սկսվածք, որ ավելի բնորոշ է հիշատակարաններին: Կարելի է բազում գուգահեռ-նմանակ ձևեր ցույց տալ հիշատակարաններում: Այդ ձևերի ու տվյալ ստեղծագործության սկզբնամասի ընդհանրությունը մեկ կարճ նախադասությամբ մեկ երկար ուղևորության պատկերումն է: Ահա Մահտեսի Մուրատի գրվածքի սկիզբը. «Ի թվին Հայոց ՌճԼԲ (1683), փետրուար ամսոյ Բ (2) աուրն, ես Բաղիշեցի Մահտեսի Շահմուրատս զնացի ի քազաւորանիստ քաղաքն Վերսալիայ...» (էջ 315): Այսբան, շարունակությունը արդեն վերաբերում է իր հանդիպումներին, որը նույնպես «հիշատակարանային» ստովվ է. «... տեսայ զԹութունջի Յովանէս վարդապետն, Սիսիանցի Չարարիա վարդապետն, Հալապցի Ղազարոսի որդի Ջուզէփն. Արզրումցի Յովանէսի որդի Գրիգորն, Ղազանչեցի Մուրատն, Ոսկան վարդապետի թվեր որդի Սողոմոնն» (նույն տեղում): Շարադրանքը չձանրաբեռնելու համար մենք այստեղ համապատասխան մեջբերումներ չենք անում «հիշատակարաններից»: Պիտի ասել, որ միայն այս սկսվածքն է հիշեցնում «հիշատակարան», իսկ մնացած մասերը զուտ «ուղեգրական» են: Ահա թե ինչու սխալ է Մուրատ Բաղիշեցու գործը համարել «հիշատակարան»՝ դատելով միայն սկզբնամասից: Ինչևիցէ:

Ուղեգրության՝ ժամանակի հայ-ֆրանսիական հարաբերությունների տեսակետից պատմական կարևորություն ունեցող նկարագրությունները մանրամասն քննության են ենթարկվել Հ. Անասյանի նշված աշխատության մեջ:

Մենք չգիտենք, թե ստույգ ինչքան է մնացել Բաղիշեցին Փարիզում, բայց մի բան պարզ է. նա ներկայացնում է երկու հազեցած օրվա իր տպավորությունները: Առաջին օրը՝ 1683թ. փետրվարի 2-ին, հեղինակը վերոհիշյալ անձնավորությունների հետ այցելում է Վերսալի քաղաքական ապարանքները և հանդիպում «...գֆրանկսիզու քազաւորն, զկինն, զորդին և զեղբայրն, զեղբօր հարսն և զվեզիրն» (էջ 315): Նրանք

տեսնում են թագավորի պաշտոնարանը՝ դեռևս կիսակառույց, պարտեզը, բոշնանոցը, թագավորին՝ հաց ուտելիս: Մյուս օրը, փետրվարի 3-ին նկարագրված է իրենց այցը թագավորի եղբոր պալատ՝ Սեն-Կլո, որտեղ Բաղիշեցուն նկարում են: Այս օրվա տպավորությունների մասին հեղինակը լռում է: Այնուհետև հաջորդում է ընդհանուր տեղեկությունների հաղորդումը, ինչպիսիք են քաղաքների թիվը Ֆրանսիայում, երկրի չափերը, եկեղեցական տարրեր դասերի ներկայացուցիչների քանակը:

Ուշադիր ընթերցողը բավարար քանակությամբ ընդհանրություններ կգտնի Շահմուրատ Բաղիշեցու և Հովհաննես Թութունջիի ուղեգրությունների միջև: Այդ ընդհանրությունները ամենից առաջ պայմանավորված են երկու հեղինակների նպատակադրումներով: Մի կարևոր ընդհանրության մասին արդեն խոսք եղավ վերևում: Դրանք թագավորի ուժն ու գործությունը ցույց տվող դրվագներն են: Հետաքրքիր է, որ երկու հեղինակներն էլ գտել են թագավորի հզորությունը արտահայտելուն միտվող համամյան ձևեր: Երկուսն էլ գրում են թագավորների պալատների մեծության և եզակիության մասին: Թագավորը (Դումպիայի) իր իշխանության տակ ունի 6 թագավորություն, որի համար նրան Հովհաննես Թութունջին կոչում է «փմփերատոր» (Պ. օ., էջ 308):

Հեղինակը հատուկ նշում է նաև թագավորական զորքի մասին «... և զօրքն անհուն են իբրև զաւագ ծովու...» (անդ): Նույն դիտանկյունով է խնդրին մոտենում նաև Շահմուրատ Բաղիշեցին. «Այս մեկ թագաորի երկիրն է. է (7) թագաորաց մինն այս է. քան զՍպանիոյն և քան զԳերատոյն փոքրն այս է. ապա ուժով է եւ մալով եւ կռվարար զինուոր քազում եւ շատ ունի դորա պարապար չկայ է (7) թագաորաց մէջն...» (էջ 319): Հետաքրքիր ընդհանրություն է նաև թագավորների ճաշկերույթի հետ կապվող մանրամասների պատկերումը: Բերենք զուգադիր օրինակներ.

Հովհաննես Թութունջի

«Եւ յորժամ թագաորն նստի ի սեղան՝ 2 առաքերեց մինն յաջ և մինն յահեակն կու կանգնին, եւ 2 վեզիր առաջեն և թագաորին ձեռաց մին ճոք կայ, եւ ինչ կերակուր վեզիրքն հրամայեն՝ չաշնիզիրն գայն կերակուրն դնէ հացին վրայ՝ ուտէ թագաորն նոյնպէս եւ ըմպելն, որ ինչ վեզիրքն հրամցնեն» (Պ. Օ., էջ 308)

Շահմուրատ Բաղիշեցի

«Դարձեալ տեսաք զթագաորի հաց ուտելն, որ ինքն եւ կինն ի միասին կու նստին, թագաորն յաջ դիին, եւ կինն. ի ձախ դիին տիվանխասնի յաջ դիին՝ թագաորի տղայն եւ իւր կինն թագաորի դիմաց՝ եղբայրն եւ իւր կինն ձախ դիին՝ հօրեղբօր որդին, եւ կամ հօրեղբօր աղջիկն: Իսկ թագաորն սեղանի վերին

դիհն կու նստի Դ (4) կողմն
սեղանին որչափ մեծամեծք
կան՝ վեզիր, փիրիյօլ, մարքիզ
ջինթիօմ, եպիսկոպոսք, եւ այլ
մեծամեծք շուրջ զսեղանովն
կու կանգնին, թէ կամի՝ կու
խօսի ընդ նոսա (էջ 317)

Շահմուրատ Բաղիշեցու նկարագրությունը ավելի մանրամասն է. նա նաև բերում է թագավորի կերակրացանկը, որ 55-60 տեսակից է բաղկացած:

Երկու ուղեգիրների երկերում ընդհանրություն կարող են համարվել նաև փառաստրական մասերը՝ ուղղված թագավորներին:

Հովհաննես Թորունցի

«... տէր Աստուած ամփոքճ եւ
երկար կեանք պայծառ պահեսցէ,
ի պարծանս ամենայն բրիստո-
նէից եւ ի գթութիւնս տառապեալ
Հայոց ազգին պանդխտէլոց
ամէն» (Պ. Օ. էջ 311),
Երևանի օրինակում այսպէս է.
«... ի պարծանս բրիստոնէից եւ
ի խնդութիւն տառապեալ ազգիս
Հայոց» (Ե. օ., էջ 306),

Շահմուրատ Բաղիշեցի

«... Աստուած վայելել տացէ
թագաւորին եւ ամենայն
գաւակաց նորին, ընդ երկայն
ատուքս, ի փառս Աստուծոյ եւ ի
պարծանս ամենայն բրիստո-
նէից եւ ի ցնծութիւն տառա-
պեալ ազգիս Հայոց» (էջ 318),
«... Աստուած զքո եղբօր թա-
գաւորութիւնն եւ զքո բարձ-
րութիւնն հաստատուն եւ ան-
փոքճ պահեսցէ աստ եւ ի հան-
դերձելումն» (էջ 319):

Ընդունելով լեզվի տվյալ շրջափուլում նման բանաձևերի նմանության հնարավորությունները, միաժամանակ և չենք կարող ժխտել, որ ակնհայտ են էական փոխներթափանցումները, որ կարող էին կայանալ նաև բանավոր ճանապարհով՝ պայմանավորված երկու հեղինակների փոխադարձ շփումներով, որ հայտնի է պատմությունից և հենց Շահմուրատ Բաղիշեցու գրվածքից: Նմանատիպ ընդհանրությունների շարքը կարելի է դասել նաև կենդանական աշխարհի իրեն անձանոթ ներկայացուցիչների նկարագրության կաղապարները: Բերենք զուգահեռ ձևերը.

«Կայ և եզն մի, որ պոզն այն-
չափ մեծ է, որ ամեն պոզ Խ (40)
յօղայ ջուր կու տանի, որ և
յամեն տարի փոխի պոզն: Կայ և Էջ
վայրի գեղեցկախայտ, որ քա-
զատրաց ընծայ կու տանին:
Կայ և սամուր պատուական, որ
մինն մի քուրք կու լցնու, և է
քանկագին» (Ե. օ., էջ 304):

«Կայր քարուատր հաւ մի, որ
ՋՃ (600) դուռուշի էր. որ այն
հան օրն դուռուշ մի խարջ
ունէր: Կայր օրտակ մի, որ
ներքի չանեն հոխայ մի ջուր
կու տանէր: Կայր կով մի՝ Թ (9)
ոտր ունէր. եւ ուսն որպէս
ըղոտ էր: Տեսանք սպիտակ
ազուս մի, որ քագատրին
մասխարան էր, մարդոյ պէս
կու խոսէր և շան պէս կու
հաչէր» (էջ 317):

Շահմուրատ Բաղիշեցու Ուղեգրության բարձրակետը, ամենից տպավորիչ, գեղարվեստի տեսակետից ամենափայլուն հատվածը, ինչ խոսք, Վերսայլի պարտեզի ու ավազանների նկարագրությունն է, որ իր արժանիքներով կարող է համեմատվել իր մեծ նախորդի՝ Սիմեոն Լեհացու Ուղեգրության մեջ առկա նկարագրությունների հետ: Վերջիններից հատկապես նկարագրվող նյութի նույնության առումով նշելի է Պասլի ամառանոցի գեղեցիկ նկարագրությունը⁴³: Սիմեոնի նման Շահմուրատն էլ կարողանում է բազում մանրուքներից ընտրել ոչ սովորականը, հիշվողը և դրանով ապահովել խոսքի մեծ ներգործություն: «Եւ այնոր ներքնն հավուզ մի այլ կայ բոլոր և մեծ, որ Դ (4) բոլորն Դ (4) եղանակն է, եւ ամենայն եղանակի իւր կենդանիքն է, որ բերաններն ջուր կու վիչեն» (316):

Բաղիշեցին ընթերցողի աչքին կենդանացրել է իր տեսած հրաշքները, դարձրել տեսանելի շրջապատող «անպատմելի արարմունքը» (էջ 316): Սրանչլիքների մասին անհնար է լեզվով պատմել. «... ոչ լեզվով պատմել կու գայ և ոչ գրով իմացնել, ոչ ասել կու գայ և ոչ գրել» (էջ 317): Պատմելու անհնարիմության մասին հեղինակային պնդումներն ընդհանրական են ուխտագրությունների համար, բայց ոչ ազատագրական նպատակով կատարված ուղևորությունների նկարագրությունների: Այս տեսակետից ԺԵ դարի ոչ ուխտագնացական ուղեգրությունների մեջ բացառություն է Շահմուրատ Բաղիշեցին: Նրա խոսքին ընդհանրապես բնորոշ են ժողովրդական լեզվի ձևերը. «... գայս գրածներս սարայէն կու բռնես մինչի ներքին կողմն» (316), «... տեսէք որչափ հիանալի և զարմանալի բան է» (318): Հեղինակը ունեցել է «ընթեր-

ցողական լսարանի» հետ կապված լուրջ մտահոգություններ, որոնք բարերախոսաբար արտահայտել է Ուղեգրության մեջ. «Եւ քէ մի ըստ միոջէ գրէինք՝ բան գշափն առնի ձանձրութիւն էր լսողացն եւ ընթերցողացն: Եւս առաւել գներ տեսած բանն, միայն քէ մեր տեսածն աչօք, քէ չէ լեզուօք պատմել չի գար. աչօք չտեսողն չի տատար» (էջ 319):

Շահմուրատ Բաղիշեցին օգտագործում է ճշգրիտ չափեր, նա մյուս ուղեգիրների նման տարածությունները ժամանակային ասպեկտով չի չափում: Օրինակ, եթե Հովհաննես Թութունջին Եթովպիայի լայնքի մասին գրում է. «Եւ երկրի լայնութիւնն ասեն 5 ամսէն ճամբայ է...» (Պ Օ., էջ 307), ապա Շահմուրատը գործածում է ստույգ տարածաչափական տվյալներ. «Դարձեալ ֆրանկսիզու երկրի լայնքն ԲՃԼ (230) աղաճ է. երկայնութիւնն այլլի ԲՃԼ (230) աղաճ է» (էջ 319):

Մի այլ առիթով հեղինակը տարածության չափի միավորների մասին կարևոր գիտանքներ է հաղորդում, որը Շահմուրատի գործը մի այլ կողմից է շահեկան դարձնում. «Այսբան շինուածիս մեծութիւնն Կ (60) միլ է, որ ամէնն շինուածով լի է: Գ (3) միլն մին աղաճ է. Զ (6) աղաճն մին մանգիլ է» (էջ 316):

Շահմուրատի շարադրանքին խիստ հատկանշական են նաև այս կամ այն շինության զարդարանքների գների մասին հիշատակումները, որոնք հեղինակը ծառայեցնում է իր միտումին. պանծացնել ու ճոխացնել քրիստոնյա թագավորին՝ թուրքերի լուծը հայ ժողովրդի ուսերից և նթադրյալ թոթափողին: Եվ բանի որ հեղինակը գրում է խոսակցական հայերենով, նրա գործը կարող է հետաքրքրել նաև լեզվաբաններին: «Արարատի» հրատարակիչները հարկ են համարել Շահմուրատի գործը ընթերցողին ներկայացնելիս ընդգծել նաև այդ նշանակությունը. «Մոցա (Բաղիշեցու և ուրիշների-Ա.Ս.) գրածները արժանի են լաւ վերահասութեան, ոչ միայն իրանց նիւթոց մասին, այլ և լեզուի մասին, որ նրանով յայտնուում է, քէ 150. 200 տարի առաջ Հայոց աշխարհաբար լեզուն ի՞նչպէս էր՝ կամ քէ այն գրողներու ճաշակն ինչպէս էր. ո՞ր բանն էր մոցա առաւել ցանկալի, զարմանալի, կամ գրելու ժամանակն՝ որչափ ճշդութիւն էին պահում»:

Եվ Թութունջին և Բաղիշեցին, դատելով իրենց ուղեգրություններից, գրական ձիրքով օժտված հեղինակներ են: Այդ մասին է վկայում նշված գործերի գեղարվեստական արժանիքը, որով ուղեգրությունները դառնում են ուշագրավ ոչ միայն այս տեսակի, այլև ԺԷ դարի արձակի համար առհասարակ:

Վերադառնալով ուխտագնացությունների նկարագրություններին, այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ Դավիթ Եվդոկիացու անավարտ Ուղեգրությանը, որը պատկանում է ԺԷ դարի երկրորդ կեսին:

Դավիթ երեց Եվդոկիացու փոքր Ուղեգրությունը պահպանվել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի թիվ 387 «Հավաքածու» ձեռագրում (թղ. 65ա-66բ): Ձեռագրի նկարագրությունից՝ «Նոր գրչե՛ր բուն գրբէն ի դուրս՝ եւ մասամբ յիշատակագրութիւն մըն է յաջորդը»⁴⁴: Այդ ուղեգրությունը գրված է «յետոյ աւելցուած թրքին վրայ» (էջ 841): Հետագայում ուղեգրական բնագիրը կցվել է վերոհիշյալ հավաքածու ձեռագրին, որի գրության ժամանակը, ինչպես իրավացիորեն նկատում է Հ. Տաշյանը, «մէկ կողմանէ ուշ է ՌՉԴ (1635) քուականէն, միս կողմանէ կանուխ ըլլալու է քան ՌՆ (1651) ...» (էջ 840): Այս վերջինն էլ ձեռագրի վերջերում գտնվող Ուղեգրության մեջ հիշված տարեթիվն է, երբ Դավիթ Եվդոկիացին սկսել է իր ճամփորդությունը: Ձեռագիր հավաքածուն անկասկած պատկանել է Դավիթ երեցին, հավանաբար հենց ուղևորության միջոցին գտնվել է նրա ձեռքին, և մեր հեղինակը, իր ունեցած ձեռագրին նոր էջեր ավելացնելով, դրանց վրա շարադրել է իր գործը: Թե երբ է շարադրել, հայտնի չէ, քանի որ բնագիրը վերջից թերի է: Ամեն դեպքում մենք ստույգ գիտենք ուղևորությունը սկսելու ժամանակը. «Թվ. ՌՆԼ (=1651) յունիս ամսո պատկեր ատրն ուրբաթ, ես նուստ միայն անուամբ Դաւիթ երեցս ելի ի Ըստամպոլայ և ոչ գիտեմ թէ ընդ որ եմ երթալոց... (էջ 840): Այստեղից հետևում է, որ Դավիթ Եվդոկիացին իր Ուղեգրությունը գրել է կամ 1651թ. վերջերին (ժամանակային վերջին նշումը դեկտեմբերի 19-ն է) կամ շատ չանցած այդ թվականից: Այնինչ Կ. Դանիելյանը, կարծելով, որ Հ. Տաշեանի կողմից նշված թվերը վերաբերում են Ուղեգրության, այլ ոչ բուն ժողովածուի գրության ժամանակին, գրում է. «1635-1651թթ. շրջանում է գրված Դավիթ երեցի Ուղեգրությունը»⁴⁵: Երուսաղեմ մուտքը ներկա օրինակում բացակայում է, գուցե եղել է գրված, բայց չի պահպանվել. Ուղեգրությունն ավարտվում է ս. Քաղաքի ճամփան բռնած ուխտագնացների՝ Վահան Գողթնացու գերեզմանին կատարած ուխտով. «... եւ յորժամ ելար ի Համայո որ գնալոց եմք ի Համուս մօտ կարմուռնին վերայ գիւղն ուխտեցար գՎահանայ Գողթնացուն գերեզմանն եւ ապա գնացար ի Համուս» (էջ 841): Կ. Դանիելյանի գրքում Հովհաննես Թութունջին, որ ապրել և գործել է ԺԷ դարում, ներկայացվում է իբրև ԺԸ դարի հեղինակ⁴⁶: Նույն հարյուրամյակի ուղեգիրների շարքում գրականագետը հիշում է Քյուչուկ Աբուքինին, որի «Պատմութիւն Թահմազ Դալու» գործը գրված է թուրքերենով⁴⁷:

Դավիթ Եվդոկիացին իր ճանապարհորդությունը Կոստանդնուպոլսից դեպի Փոքր Ասիա (Մտամբուլ-Իզմիր-Անկուրիա-Թեանդրի-Չաւրոսամ-Մարգուան-Ամասիա-Չիլա-Թոխաս-Սեբասիա-Կուռին-Մարաշ-Այնթապ-Հալեյ-Փայաս-Պելանկ-Անտիոք-Չամպախու-Խանպազար-Մաղբ-Ղուլան-Սաճոր-Համայ-Համուս գծով), նկարագրել է ոչ մանրամասնորեն: Չկան նկարագրություններ: Նրա նախադասություն-

ները պարզ են և կարճ: Այս կողմով Դավիթ երեցը նախորդ ուղեգիրներից հիշեցնում է Փիրգատին: Երկուսի ուղեգրական երկերից այն տպավորությունն է ստացվում, որ դրանք ճամփորդական հում գրառումներ են, առանց վերջնական մշակումի: Փիրգատը իր գործը գրել է ճամփորդության ընթացքում իր մոտ եղած ձեռագիր «Աղօթագրքի» ազատ էջերին: Այս հանգամանքն էլ պայմանավորել է նրա և Դավիթ երեցի (որ նույնպես ուրիշ մի ձեռագիր ժողովածուի էջերում է բողել իր նոթերը) ուղեգրական նկարագրությունների սեղմությունն ու հակիրճությունը: Ինչպես մեկ ուրիշ առիթով ասում է Բարկեն Կյուլեսերյանը. «... մարդ մը չկրնար իր գրքերուն մեջ ատանկ երկար, բարակ, ճոխ բան մը գրել»⁴⁵:

Փիրգատի ուղեորության հանգամանքը («... ես իմ տանն էիլ այ գլխոյս առայ ասկայկան մոլորեցի, օտար աշխարհ եկա»⁴⁶), նույնական է Դավթի ճամփորդության պարագաների հետ («... Դավթ երէցս ելի ի Ըստամպոլայ եւ ոչ գիտեմ թէ ընդ որ եմ երթալոց», էջ 840): Այս երկուսը միմյանց հետ համեմատելի են ուխտագնացության հստակ ծրագրերի բացակայությամբ: Սակայն մի էական արժանավորությամբ տարբերվում է Դավթի գործը Փիրգատի ուղեգրությունից: Եվդոկիացու գրվածքում պարզ զգացվում է ԺԷ դարի ուղեգրությունների մեկ յուրահատկությունը: Դա իր՝ ուղեգրի հոգեկան վիճակների արտահայտություններին տեղ տալն է ուղեգրության էջերում: Հեղինակն իր սպրումներով տեսանելի է դառնում ընթերցողին: Բերենք մի քանի օրինակ. «... եւ անտի զնացաք ի քաղաքն (Թոխաք, -Ա. Ս.) եւ կացաք ի սուրբ Պարսամ եկեղեցին, եւ անդ լուայ զմահ ծերունի մօրս իմոյ քանզի յառաջմանէ ոչ էի լուեալ, եւ տեսլեամ[բ] եորօն եւ հանգանակաց իմոց սակաւ ինչ մխիթարութիւն գտի...» (էջ 840): Համանման իրադրության մեջ հայտնված Սիմեոն Լեհացին իր մեծ քրոջ մահը լսելով, մխիթարություն է գտնում քույր ճուռարի համար ողբ ասելով: Թող որ այդ ողբը հիշեցնում է մեզ ծանոթ մեկ այլ ստեղծագործություն: Սիմեոնը, ինչ խոսք, անձնական սպրումներին անհամեմատ մեծ տեղ է հատկացնում, և այդ սպրումներն արտացոլող դրվագները ընդարձակ են Դավիթ Եվդոկիացու համեմատությամբ, բայց և այնպես մեզ համար կարևորը վերջինիս շարադրանքում բուն ուղեգրության հետ չկապվող նման հատվածների առկայությունն է:

Կուռինի մոտ իր ուղեկիցներից մեկը՝ Հովհաննես վարդապետը մարմնական վնասվածք է ստանում. «անկաւ Յովաննէս վարդապետն եւ բեկաւ ոտն, զոր յոյժ տրտմութիւն եղեւ մեզ եւ նուղաղեաք (այսպէս) մեր ընդ նմա, եւ ԻԸ (28) օր կացաք ի Կուռին, եւ բազում մխիթարութիւն ընկալաք ի քահանայից, բայց սիրտ մեր ի սուր էր վասն վարդապետից կողմաց (այսպէս) ...» (էջ 840):

Երբ ուղևորները Փայասում էին, որպեսզի այնտեղից հետ դառնան կամ Թոխատ կամ Կ. Պոլիս, այդտեղ է գալիս Երուսաղեմ ուխտի

զնացողների մի խումբ: Դավիթ Եվդոկիացին կարճ, բայց լավ է արտահայտել իր երկընտրանքը. «...եւ ես զգիշերն ամենայն զմտաւ ածեալ զգնալն իմ ի սուրբ յԵրուսաղէմ լաւագոյն համարեցա քան առ Ըստամպօլ» (անդ):

ԺԷ դարի ուղեգրական երկերում այս կամ այն չափով արտահայտվել են որոշակի պատմական դեպքերի ու դեմքերի մասին արձագանքներ: Դավիթ երեցը ակնարկում է այդպիսի իրադարձություններ՝ իհարկե սունչված միայն իրենց՝ ուղևորների հետ, որոնք խույս են տալիս երկիրը ասպատակողներից սպասվող վտանգներից: «... Հասան աղան անդ (Մարզվան, - Ս. Ա.) եկ անհուն զօրօք, եւ սուրբ Աստուածածնա պահոց Բ (2) շրթն զնացաք յԱմասիա եւ ԺԲ (12) օր անդ կացաք. եւ անտի ճանապարհ ոչ գէտաք զնալ ի Թռխաք սակս միաբանութեանց Իվիշիրին եւ Հասան աղայի, այլ զնացաք ի Զիլս (զր. «Իզիլս») եւ անդ արարաք զտօն ծնողաց սուրբ Աստուածածնին» (անդ): Եվ կամ՝ «Բագում նեղութիւն եւ ահ կրեցաք սակս զօրացն Հասան աղայի...» (անդ):

Ուղեգիրը միայն օտար զավթիչներից չէ, որ տառապանքներ է կրում: Խանապազարի մոտ «Յարասպ վերահասեալ զիս եւ զայլ որ այնպէս մերկացուցին, որ մին դենարի կարօտ մնացի: Բայց ողորմութեամբ Աստուծոյ ձիս պրծաւ, որ ընդ յայն մասն ինչ ուրախ եմ փառք Աստուծոյ» (841):

Երևանի Մատենադարանի քիվ 2745 ձեռագիր ավետարանի գրիչ Հակոբ երեցը իր հիշատակարանում ԺԷ դարասկզբի Հայաստանի դրությունը այսպես է ներկայացրել. «Գ (3) [ա]զգ ետղի (քշնամի, - Ա. Ա.) կու շրջէր ի վերայ աշխարհիս. մինն դրզլպաշ, ե[ր]կրորդն յումանուն, երրորդն եպիսկոպոսունք եւ իրիցունք՝ դարայքէշ (մրահոն, - Ա. Ա.) հայերովն»⁵⁰: Այս վերջին՝ ներքին քշնամիների վերաբերյալ ևս չի մոռանում հիշել Դավիթ Եվդոկիացին: Հասան աղայի գորբերից անվնաս մնալուց հետո Անկուրիայում՝ «... եւ զայն որ ի ճանապարհին պրծաք եւ ոչ քալանեցաք, եկեալ Սիմաս վարդապետն քալանեաց զմեզ» (ԼՋ 840): Իսկ Մարզվանում «... գԴավիթ պարոնտերն եւ զԼովցի Յովսէփ վարդապետն անդ գտի, զոր զմեզ այլ անարգիլ ին» (անդ):

Այլ է ճանապարհորդի վերաբերմունքը սրբակրոն եկեղեցականների հանդեպ, որոնց հասցեին զովեստի խոսքեր ասելու առիթը չի կորցնում մեր հեղինակը: Հալեալում հանդիպում է հոգևոր տեր Փիլիպպոս կաթողիկոսին: Ահա այդ դրվագը. «... եւ նոյեմբերի. Լ (30) հասաք ի Հալալ եւ օթեցաք Խէրպէկ յանին, եւ առժամայն զն[աց]ի ի սուրբ. Խ[ալ] եկեղեցին, զոր ի վաղուց ժամանակաց լսեալ էի եւ տեսի անդ զհայրն հանորք զսրբագան կաթողիկոսն, զոր լուսաւորեցա տեսութեամբն նորա հոգով եւ մարմնով, եւ շահեալ յարինությունն նորա եւ առեալ զիր կացի

անդ ի Հալասայ ատուրս. Խ (40) եւ գնաց հոգեւոր Տէրն ի սուրբ յԵրուսաղէմ...» (Էջ 841):

Դավիթ Եփղոկիացու շարադրանքին խիստ բնորոշ են հայկական ուղեգրությունների համար հատկանշական կաղապարները: Թերևս այստեղ Դավիթը զանազանվում է մի բանով. նա շատ ուշադիր է քրիստոնեական տոների նկատմամբ և միշտ նշումներ է անում դրանց մասին: Օրինակ՝ «Եւ շաբաթ օրն հասայ Իգմիտ որ տօն էր գլխաւոր առաքելոցն Պետրոսի և Պօղոսի» (Էջ 840), «եւ յետ. ԺԸ (18) ատուր որ տօն էր Գրիգորիս Աղուանից կաթողիկոսին և որոց ընդ նմա ելաք ի Կոտիմո...» (Էջ 841) և այլն:

Դավիթ Եփղոկիացու Ուղեգրությունը անավարտ է մնացել կամ միայն այսբանն է մեզ հասել, բայց սկզբնամասերի պահպանված հատվածներով էլ կարելի է ընդհանուր պատկերացում կազմել մեր հեղինակի գրվածքի մասին:

Միմեռն Լեհացու Ուղեգրության՝ Տիգրանակերտ քաղաքին վերաբերող մասում կան այսպիսի տողեր. «... միշտ անպակաս անտի ելանեն ուսումնասէր եւ իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երաժիշտ վարպետք, ընտիր քահանայք, այլ եւ դպիրք եւ դպրատունք» (Էջ 204): Հիրավի, Տիգրանակերտը հայ դպրությանն ու մշակույթին է տվել մի շարք նշանավոր դեմքեր, որոնցից մեկն էլ Ավետիք Տիգրանակերտացին է: Նրա անվանն ու գործին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ղևոնդ Ալիշանը: Նա նկարագրում է իրեն ծանոթ հինգ ձեռագիր հատոր, որոնք պատկանում են Ավետիքի գրչին և հեղինակությանը, ինչպես նաև մի քանի բուրքերեն ու արաբերեն ձեռագրեր է հիշում, որոնք ինքը չի տեսել⁵¹: Հետագայում Պ. Չորանյանը այդ շարքին ավելացրեց ևս երկու ձեռագիր, որ պահվում են Երևանի Մատենադարանում: Մեկը Գավազանագիրք, մյուսը՝ Աստղաբաշխություն⁵²: Այդ բոլոր ձեռագրերի բովանդակությունից պարզվում է, որ նա եղել է աստղագետ, տոմարագետ, ժամանակագիր, աշխարհագիր, երաժշտագետ, քարզմանիչ, համարող, ապրել է ԺԷ դարավերջին և ԺԸ դարասկզբին, իր կյանքի մեծ մասը անցկացրել է քափառումների մեջ, որոնց ընթացքում խնամքով նյութեր է ժողովել իր աշխատությունների համար: Այդ մասին Ավետիքը իր Աստղագիտության և Տոմարի սկզբում գրած հիշատակարանում հայտնում է. «Այս գիրքս ամենայն տոմարական արուեստից և աստղաբաշխական ճեւղից (աղիսակաց) և մեկնութեանց Տէֆուր է. գոր ես նաստ Աւետիք ընթերցող, ծնունդ Տիգրանակերտեան, որ և սնեալ եղէ ի բազում քաղաքս, այսինքն նախ ի Էրզրում քաղաք, կացի անդ զամս ԺԴ (14), և յետոյ ի Տիգրանակերտ քաղաքն փոխեցայ, ի Բաղէշ, ի Վան, ի Պարսից երկիրն, ի Քրդստան, ի Արապիստան, ի Անատոլի, ի Սեբաստիա, ի Թօխաք: Պատճառ իմ շրջիլն այսբան աշխարհ, վասն գրասիրութեանս և մերէ-

Ֆեքի (ուրուեստ, գիտութիւն) աղագաւ ոչ թէ ի Հայոց գրոց միայն, այլ ամենայն ազգաց գրոց, ասինքն, Արապաց, Ֆարսից, Ջիղաց, Գաղից, Ասորոց, Ֆրանկաց, ի Յունաց գրոց և վարպետաց»⁵³: Առայժմ հրատարակված է դրանցից մի ուղեգրութիւն՝ «Վասն որ կամի ի Հելլէշին երկիրն զնալ՝ այսպէս է.» սկսվածքով⁵⁴: Ուղեգրութեան ձեռագիրը գտնվում է նշված հինգ հատորներից մեկում (90 էջ ունեցող), որ Ալիշանը կոչում է Աշխարհագրութիւն, որտեղից և հրատարակվել է: Թե ն⁵⁵րբ է գրել Ուղեգրութիւնը, այդ մասին բնագրում հիշատակութիւն չկա: Ալիշանը շատ ընդհանուր կերպով գրում է, որ «Գրուածոցը մէջ խառնած յիշատակներէն կիմացուի՝ որ ԺԷ դարուն վերջերը և ԺԸ ին սկիզբները ծաղկեր է. 35 տարուան միջոցի յիշատակ կա 1684 էն մինչև 1719» (1897, յունիս, էջ 317): Սա վերաբերում է նրա վերոհիշյալ Տէֆտէր-ին, իսկ Ուղեգրութիւնը պարունակող «Աշխարհագրութիւն» կոչված հատորի գրութեան ժամանակը, առավել ևս ուղեգրութեան ժամանակը, անհայտ է: Խնդրի լուծման գործում կարևոր են Պ. Չորանյանի դիտողութիւնները: Նա վիճարկում է Լ. Խաչիկյանի այն վարկածը, ըստ որի այդ եթովպական ուղևորութիւնը կատարվել է 1682-1704թթ., երբ «եղել է Հաբէշտանում, Նուրիայում, Սուդանում, Չոդ հանրապետութեան ներկայիս տերիտորիայում, ապա Սահարայի վրայով անցել է Աֆրիկայի հյուսիսային շրջանները, հասել Ջիբրալթար»⁵⁵: Հենվելով Ավետիքի տարբեր հիշատակարաններում գրանցված ժամանակային տվյալների վրա, Չորանյանը գալիս է այն հետևողական, որ ուղևորութեան հավանական թվականներն են 1696-1699 (տե՛ս նշվ. աշխ., էջ 97-98): Եվ քանի որ այդպէս է, ուրեմն Ուղեգրութիւնն էլ պետք է գրված լինի հենց այդ տարիներին, համենայն դեպս, ոչ ուշ, քան 1700 թվականը: Հետևաբար Ուղեգրութիւնը պատկանում է ԺԷ դարին: Սրանով ավարտվում են այդ հարյուրամյակի մեզ ծանօթ ուղեգրական երկերը:

Այս գրվածքը որոշակիորեն հիշեցնում է, ասենք, «Անուանք քաղաքաց Հնդկաց և Պարսից» երկը: Սա ուղեգրութիւն չէ՝ դասական ըմբռնումով, այլ բնութեով ավելի շատ մտնում է աշխարհագրական բնագրերին: Հեղինակը նույնիսկ ներկա չէ նկարագրութիւններում, իսկ անձնական մտքերի ու զգացմունքների արտահայտութեան մասին ընդհանրապէս այս դեպքում խոսք չի կարող լինել: Այս իմաստով սույն գործը ԺԷ դարի ուղեգրութիւնների շարքում եզակի է: Դա բացատրվում է Տիգրանակերտցու նպատակադրումով, հեղինակը ցանկացել է ստեղծել ընթերցողների աշխարհագրական հետաքրքրութիւնները բավարարող ձեռնարկ: Դա արտահայտվել է ուղեգրութեան վերջին, հիշատակարանային մասում, որտեղ կարդում ենք: «Արդ, փոքր ի շատ, զայսքան երկիրս որ գրեցի, տեսածս և շուրջ եկածս տեղեկացայ և գրեցի՝ իբրև աշխարհացոյց» (էջ 463): Ալիշանի կողմից Ուղեգրութեան հրատար-

բակումը պայմանավորված էր երկի- հենց այդ՝ աշխարհագրական նշանակությամբ. «Բայց ամենևն նշանատրն է («Աշխարհագրութիւն») կոչվող հատորի նյութերից, որոնք, ըստ Ալիշանի, ընդգրկում են կարևոր տեղեկություններ Փոքր Ասիայում և Կիլիկիայում բնակվող հայերի մասին, - Ա. Ս.) նոյն ինքն Աւետիք իր ընկերին հետ ըրած և գրած ստորագրութիւնն՝ Հապէշի, քէ և համառօտ, այլ ստոյգ հիմնական ծանօթութեանց համեմատ, ուսկից կրնան օգտուիլ և աշխարհագիրք. մանաւանդ Իտալացիք, որոց՝ այս ետքի տարիներումս այն կողմերն ըրածն և կրածն աշխարհածանօթ է»⁵⁶:

Տիգրանակերտցու շարադրանքին բնորոշ են կարճ, երբեմն կցկտոր տողերը, առանց մանրամասնությունների խոսքը: Բերենք մի նմուշ. «Համէճու 8 օրն կ'երթայ ի Ահմարային մեծ քաղաքն, որ են քրիստոնեայք, և եպիսկոպոսութիւն է. և է այս Առաջին Հէպէշ, որ են զարմ Սողմոնի, և է այս Դշխոյն հարաւոյի երկիրն. և անուն քազատրին է Յետու. և քազատրանիստ քաղաքքն այս են, Կօնտար, Խաթամա, Տումպիա:

...Ահմարային ձախ դիին են ազգն Թզնէլաց, որ են Դ Հէպէշ, որ Հայոց Թաղէոս վարդապետն է դարձուցեր. ունին մեծ քազատր, բայց Ահմարային հնազանդեն» (էջ 460):

Ուղեգրությունը պատմական սկզբնաղբյուր է ժէ դարավերջի Հյուսիսային Աֆրիկայի ժողովուրդների կյանքը ուսումնասիրելու համար, պարունակում է բազմաթիվ հետաքննելի և մեծարժեք գիտանքներ այդ ժողովուրդների սովորույթների ու բարքերի մասին: Այսպես, խիստ հետաքրքրություն է առաջացնում «Իպրիմ» և «Նուպիա» երկրների տարածքում ապրող «ասպապտ» ազգին նվիրված հատվածը: Այստեղ երևում է դիառոլունակ ուղեգիրը, որը, կարողանալով ստեղծել տպավորիչ պատկերներ, իր խոսքը դյուրավ առեղ է հասցնում: Բացի այն հետաքրքրությունը, որով համակվում է ընթերցողը, այդ դրվագը ունի մեկ այլ կարևոր նշանակություն. Ալիշանի առդատակի ծանոթագրության համաձայն «ասպապտ» ազգի հետ եվրոպացիների ծանոթությունը սկսվում է հայ ուղեգրից հարյուր տարի հետո միայն. «Եւրոպացիք գրեթէ մեր Աւետիքէն դար մի վերջ ճանչցան այս ազգը, Մեծին Նարոլունի յԵգիպտոս արշաւած ատեն, որք ատելի հանդարտ և կիրք գտնեն զանոնք հիմայ՝ քան մեր ազգայնոց ատեն» (էջ 461, ծանոթ., 8):

Ահա «ասպապտ» ցեղի վերաբերյալ դրվագը. «...կռապաշտ են. միջվմին շէխ ունին. ոչ մէկ քազատրի հնազանդ չեն. գող են. բան ու գործ չունին. այն բոլորի քազատրութենէն քաշեն և գողնան, և նորանով կէչնմիշ կու լինին. խրեանք սաչլու են, չպլախ են, միջասու են: Եր այս ազգս շատ լայն երկիր է, մինչ որ երեք ամիս կամ հարիւր օր կու բոլորէ. գողութիւնով կէչնմիշ կու լինին. երկիրն անշուր է և անբոյս է. հանց ըղտեր ունին՝ որ տասն ատուր ճամբան օր մի գիշեր մի կ'երթայ: Թէ գողութենէ

բան չգտանեն և անօթի մնան, մա զգեստինն կու փոսեն, ըդստուն ոտքն ի մէջն կու դնեն, մէշտերով կու ծակեն՝ որ արուն կու վազէ, և զայն արունն կրակով կու խորվէ քան զքէպասայ և կ'ուտէ. և դարձեալ կու հեծնու զայն ուղտն ու կ'երթայ գողութիւն. քէ բան ընկնի ամիերնին՝ տաւար, գոմէշ կամ այլ ուտելիք՝ ի բոլոր երկիրներէն, կու բերեն կուտեն: Եւ այսպիսի է կացք նոցա. ցանել վարել չգիտեն. արուեստ և բանել չգիտեն, այլ են որպէս վայրի գազան և անասուն. երկիրն բարի է, հողն և ամէն բանն. քէ ցան, քէ վար անեն՝ շատ կու բերէ և կու բուսնի. բայց չեն գիտեր. ճալարու են. զայլոց վաստակ կու խլեն» (էջ 461-462): Այս վերջին մասում նշմարելի է հեղինակային վերաբերմունքի արտահայտությունը:

Ուղեգրության մէջ Տիգրանակերացիին տեղեկություններ է հաղորդում ինչպես զանազան բնակավայրերի մարդկանց սովորությունների, ազգության, կրոնի, արտաքինի, այնպես էլ այդ վայրերի տեղադրության, միմյանց նկատմամբ ունեցած հեռավորության, ռազմական հնարավորությունների ու տնտեսական վիճակի, կլիմայի ու հողերի, օգտակար հանածոների և այն մասին, թե տվյալ ազգության թագավորը ում է հնազանդվում և այլն: Այս կարգի ճշմարտապատում տվյալների կողքին հանդիպում են չափազանցումներ, առասպելախառն պատմություններ: Դրանց առկայությունը ուղեգրության շարադրանքում բացատրելի է. նրանով, որ հեղինակը հավատ է ընծայել այն ամենին, ինչ իրեն պատմել են: Այդպիսին է. օրինակ, հետևյալ հատվածը. «Եւ այս Մուղրուպիս երկիրն պարարտ և ընչեղ են, և ոսկի բազում կ'ելնայ ի հողէն. մինչ զի գառան չափ ոսկի կ'ելնայ: Եւ ի տորա աշխարհէն երթայ դէպ ի հարաւ՝ Անծանօթ երկիրն, որ մարդ չէ գնացեր. և ասեն, քէ անծանօթ երկիրն մարդ կայ՝ որ ոտք և ձեռք չունի, իբրև փչած տրևի պէս կու գորովի, և քամի կու ծծեն: Եւ այս երկիրս այնչափ ահագին վիշապներ կայ՝ որ գողտն բեռնով կու կու տայ. և է երկիրս ի մէջ Այրեալ գոտոյն» (էջ 463): Մակայն այսպիսի դրվագները քանակ և որակ չեն կազմում, հետևաբար դրանցից ամենևին չի տուժում Ավետիքի գործը իբրև պատմական, աշխարհագրական և ազգագրական հարուստ տեղեկություններ պարունակող մի աղբյուր:

Բերված հատվածներից կարելի է պատկերացում կազմել հեղինակի պարզ ու անսեթեթ ռճի մասին. արդյունքը այն բանի, որ հեղինակը գրել է այն, ինչ որ տեսել կամ լսել է, առանց պակասեցնելու կամ ավելացնելու: Նույնքան պարզ է ուղեգրի լեզուն, որ կարելի է ասել, համարյա աշխարհաբար է:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԳ
ՉԱՓԱԾՈ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես միջնադարյան մի շարք ժանրեր, ուղեգրությունները նույնպես լինում են արձակ և չափածո¹: Չափաբերված ուղեգրությունները ևս ունեն սահմանման դժվարություններ: Արձակ ուղեգրությունների բնութագրման ճանապարհին ծառացող բարդություններին, որոնց մենք անդրադարձանք «Ներածության» մեջ, չափածոյի պարագայում գումարվում են նորերը, առաջին հերթին չափածո ուղեգրությունները կարող են շփոթելի դառնալ գովքերի ու ներբողների հետ: Բայց այդ մասին՝ մի փոքր ուշ: Այժմ փորձենք չափածոյի բնագավառում տարբերակել ուղեգրության տեսակը: Ուղեգրական բազմաթիվ հատվածներ կարելի է ցույց տալ հիշատակարաններում: Այստեղ նշենք, որ խոսքն այն գործերի մասին չէ, որոնք թեպետ վերնագրված են հիշատակարան կամ վերնագրում ունեն այդ բառը, սակայն սկզբից մինչև վերջ գրված են ուղեգրության տեսակի բոլոր կանոնների պահպանումով: Խոսքը վերաբերում է բուն հիշատակարաններին, որոնք գրական տեսակ լինելուց հետո են, թեկուզ պարունակում են գեղարվեստական խոսքի որոշ տարրեր: Վերցնենք մի բնորոշ հիշատակարան, որի սկիզբն այսպես է.

*Ես Առաքելս Կօլպաշեցի,
Ի նահանգէն Կոստանդնի,
Նռափափաք սիրով մեծի՝
Դինեալ յերկիրս Պաղեստինի,
յերուսաղէմ սբ. քաղաքի,
Ողորմութեամբ ամենակալի
Տեսուն մերոյ կենարարի,
Եկեալ ի սբ. Երկիրս հասի...²*

Բերված հատվածում և շարունակության մեջ բացակայում են ուղեգրական համարվող նկարագրությունները, հեղինակային խոսքը չոր ու ժլատ ձևով ուրվագծում է միայն ճամփորդության երթուղին, ապա պատմվում է այն գործունեության մասին, որ հեղինակը ունեցել է Երուսաղեմում: Ուղեգրական հատվածների չնչին առկայությամբ հատկանշվում են նաև հայկական արձանագրությունները, որ ունեն հիշատակարանային բնույթ³:

Կան նաև մեծ թվով հիշատակարաններ, որոնք իրենց ձևային և

մասամբ էլ բովանդակային հատկանիշներով մոտենում են ուղեգրություններին:

Ստորև մենք կ'խոսենք այն «հիշատակարանների» մասին, որոնք ըստ էության մաքուր ուղեգրական ստեղծագործություններ են:

Չափածո վկայաբանություններում նույնպես քիչ չեն ուղեգրական կառուցերը: Օրինակ, «Տաղ Աստուածատուր Խաթայեցուն ի Գրիգորիս կաթողիկոս Աղթամարցոյ» վկայաբանական քերթվածը իր սկզբնամասով հիշեցնում է ուղեգրական երկ՝:

Նմանօրինակ ուղեգրական սկսվածք ունի Մարտիրոս Դրինեցու «Սոփիայի Տեր Յունանին վերայ է ասացեալ ոտանատրս» խորագրով տաղը⁵: Ինչպես արդեն պարզաբանել ենք, մման դեպքերում որևէ երկի ժանրը որոշելիս հարկ է նախապատիվ համարել այս կամ այն ժանրին բնորոշ գերակշռող գծերը և ըստ այդմ էլ տվյալ գործը դիտել միայն այդ ժանրի շրջանակներում:

Հայկական ձեռագրերում պահպանվել են մաս այնպիսի ստեղծագործություններ, որոնք թեկուզև ունեն որևէ այցելության առիթով գրված լինելու հավանականությունը, կարող են, թվում է, գրված լինել առանց անձամբ տեսնելու ներկայացվող վայրը, մատենագրական կամ բանավոր ճանապարհով ստացված տեղեկությունների հիման վրա: Նման գործերում գրեթե իսպառ բացակայում են գուտ նկարագրական տողերը: Լինելով հիմնականում նշանավոր վանքերի ու եկեղեցիների մասին չափածո գովաբանություններ, դրանցում իշխում են հոգևոր աճաճարին տրվող զանազան բնորոշումներ, քրիստոնեական համալիրի դերի ու նշանակության բացահայտումներ, որոնք զուրկ են առարկայական, նյութական բովանդակությունից:

Չափածո ուղեգրական երկերը հայ իրականության մեջ երևան են գալիս մեծ մասամբ ուշ միջնադարում: Եւ իրոք, չնայած բազմաթիվ «ուղեգրական» դրվագներ կարելի է մատնանշել հայ միջնադարյան բնաբերգության համարյա բոլոր տեսակներում (տաղ, պատմական ողբ, չափածո վկայաբանություն և այլն), չափածո ուղեգրություններ, այդ եզրույթի իսկական իմաստով, հանդիպում են սկսած ԺԷ դարասկզբից, երբ հայ մշակութային ու գրական կյանքում սկսվել էր վերանորոգության ու վերելքի մի շրջան: Չափածո ուղեգրությունների հեղինակները ստեղծագործական բազում քելերով կապված են հայ միջնադարյան պոեզիայի ավանդներին: Տեսակի առաջացման գործում որոշակի դեր ունեն անցյալ դարերի տաղերգուները՝ իրենց ստեղծագործություններում առկա նկարագրական հատվածներով: Այս տեսակետից մեծ է հատկապես Ներսես Շնորհալու դերը. «Ողբ Եղիսիոյ»-ն վիթխարի ազդեցություն է ունեցել ոչ միայն չափածո ուղեգրությունների, այլև ողջ միջնադարյան քերթության զարգացման վրա:

Չափածո ուղեգրություններն ըստ էության շարունակում են արձակ ուղենորքերի հիմնական օրինաչափությունները՝ հաճախ գիջելով իրենց գեղարվեստական և, առավել ևս, սկզբնաղբյուրային նշանակությամբ, որը հաճախ պայմանավորված է նրանց ծավալով: Ի՞նչն է ստիպել հայ ճանապարհորդներին իրենց դիտումները չափածոյով արտահայտելու: Ամենից առաջ գրավոր խոսքի այդ ձևի հոգեհարազատությունը նրանց խառնվածքին: Դրա վկայությունն է այն, որ գրեթե բոլոր չափածո ուղեգրողները, բացի մեզ հայանի ուղեգրական երկերից, հեղինակել են նաև այլ բնույթի ստեղծագործություններ: Օր.՝ Խաչատուր Թոխաթցին, որի անվան հետ է կապվում չափածո ուղեգրության սկզբնավորումը, գրել է «Տեսէք զամանս դղմենի»⁶ վերնագրով ռոտանավոր, ինչպես նաև, Գրիգոր Դարանաղոս վկայության համաձայն (եթե նրա հիշած Խաչատուրն ու «Պատմության») հեղինակը միևնույն անձն են), «զիրք մի ռոտանաւոր... ի վերայ մեր դաւանութեանցն և իւր անձին կրիցն»⁷: Գրականության պատմությանը դեռևս անհայտ, իր կրած դավանավորյան հալածանքները և լուսավորչական դավանության գովքը պարունակող այս երկը «վարատաւուցական ծավալուն օրագրություն է»⁸ և «ամենայն հավանականությամբ իսկական բանաստեղծություն պիտի լինի»⁹:

Ժէ դարում հաճախակի են այն գործերը, որոնք նվիրված են մեկ քաղաքի նկարագրությանը: Հեղինակը, բաց թողնելով իր բուն ճանապարհորդության մանրամասների, մասնավորապես անցած ճանապարհի նկարագրությունները, միանգամից պատումը սկսում է այն քաղաքի ներկայացմամբ, որը իր ուղևորության, այսպես ասած, կիզակետն է, ամենից անցնչելի տպավորություն գործած վայրը: Հիմնականում ներկայացվում են քաղաքը կառուցող-հիմնադրողները: Եթե դարի երկրորդ կեսի բազմակողմանի զարգացած մտավորական Երեմիա Քյոմուրճյանի «Ստամպոլոյ պատմութիւնը»¹⁰ սկսվում է քաղաքի հիմնադրման պատմականորեն հավաստի տվյալներով, իսկ Հակոբ Թոխաթցու և Նիկողայոս Ստամբուլցու բանաստեղծություններում Երուսաղեմի հիմնադրումը վերագրվում է Ասածուն, Դավիթ մարգարեին ու Սողոմոն իմաստունին, ապա Խաչատուր Թոխաթցին Վենետիկի հիմնումը կապում է բանահյուսական տարածված սյուժեի հետ (փախստական անձը՝ քաղաքի կամ տոհմի հիմնադիր): Խաչատուրի վրա ցնցող տպավորություն են թողել Վենետիկի հիանալի շինվածքները, մեծ պալատներն ու դարպասները, ճարտարապետական այլևայլ կոթողներ: Հեղինակը անչափ ուշադիր է, ինչպես քաղաքի արտաքին ճոխությունների, այնպես էլ քաղաքացիների ներքին բարեմասնությունների հանդեպ:

Պոեմն առաջին անգամ հրատարակվել է «Բազմավկպում»¹¹ հավանաբար Գևորգ Ալիշանի կողմից: Երկրորդ հրատարակությունը իրա-

կանացրել է Արշակ Չոպանյանը «Անահիտ» հանդեսի էջերում¹²: Երկու հրատարակության համար էլ հիմք է ծառայել Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի մի «Ոսկեփորիկի» բնագիրը¹³: Այն «անամօրխած հատուածները, որոնք Ս. Գազարու վանականներուն անպատշաճ են թուած իրենց թերթին մէջ երևալու համար»¹⁴, և որոնք կրճատել-սրբագրել է «Բազմավէպը», «Անահիտ»-ի հրատարակության մեջ ամբողջովին վերականգնվել են: Այս հրատարակությունները և Մաշտոցի անվան Մատենադարանի համար 1636, 5495, 4618, 6451 ձեռագրերը բաղդատելով Կարապետ Մելիք-Օհանջանյանը պատրաստել է պոեմի գիտական-քննական բնագիրը և 1966-ին հրատարակել «Պատմութիւն Փարեգի և Վեննայի» միջնադարյան ասպետական սիրավեպի հետ միասին: Առաջաբանում վաստակաշատ գիտնականը, կարևորելով Խաչատուր Եվդոկիացու (Թոխաբքու) տեղն ու դերը հայ միջնադարյան մատենագրության մեջ, այնուհետև հասուկ անդրադառնում է հիշյալ թերթվածի հեղինակի խնդրին: Երկի առաջին երկու հրատարակություններում Խաչատուրը ներկայացված է Եթովպացի մականվամբ, որ, ինչպես պարզվեց ավելի ուշ, սխալ է, գրչի վրիպում: Դեռևս Ներսես Ակինյանը Սիմեոն Լեհացու Ուղեգրության ներածության մեջ խոսելով հայ գրականությանը ծանոթ ուղեգրական այլ երկերի մասին, գրել է. «Ունիմք դարձեալ Խաչատուր Եղովկացի (այսպես, եւ ոչ Եթովպացի) մը...»¹⁵: Իսկ 1958-ին Ա. Մարտիրոսյանը իր «Մարտիրոս Գրիմեցի» գրքի ծանոթագրության¹⁶ մեջ արդեն ուղղում է Խաչատուրի մականունը՝ հիմնվելով Երևանի Մատենադարանի 1636 ձեռագրի 169ա-187ա էջերում գետեղված պոեմի ծավալուն խորագրի վրա. «Յարմարեալ պատմութիւն Վենետիկ քաղաքի Խաչատուր իրիցուէ Եղովկիացոյ որ ասի Թողաղ ըստ կարի մտաց իմոյ թվին Ռ-ԿԳ (1063+551=1614) յունիս ԺԵ (15) ի վերայ ծովու և ի մէջ նաւի գրեցի որում ակն ունիմք է Աֆռեզ քաղաք ելանեմք որում մարմինն Արիստաբէսի որդոյ մեր Լուսատրչին կայ ի նմայ հանգուցեալ»: Կ. Մելիք-Օհանջանյանը այդ դրույթը հիմնավորում է հենց պոեմում առկա հատվածներով («Չթուրբաց երկրի գմարդն խաբեն, մէկ մ'ալ ես որ խիստ խաբեցայ» էջ 272, «Եւ ես բարով հասնիմ իմ տեղս, Թոխաբ քաղաք հերիք ինձի...» էջ 286): Այս տվյալներից բացի Մատենադարանի 4618, 5495 ու Երուսաղեմի 526 ձեռագրերում Խաչատուրի մականունը Եվդոկացի և Թոխաբցի է նշվում¹⁷ (էջ 239-240): Ինչպես գրում է Կ. Մելիք-Օհանջանյանը Խաչատուրը Թոխաբցի կարող էր կոչվել կամ Եվդոկիայում (նաև նրա շրջակայքում) ծնված լինելու և կամ այդ

քաղաքում իր հոգևորական պաշտոնավարությունը կատարելու պատճառով: Վերջին դեպքի հավանականությունը մեզ անհայտ է բողոնում հեղինակի ծննդավայրը: Հայտնի չեն նաև Խաչատուրի ծննդյան քիվը, ծնողները, մահկանացուն կնքելու ժամանակը: Եվ, ընդհանրապես, հայ գրականության մեջ առաջին անգամ եվրոպացու գեղեցիկ ու կանոնիկ կենսաձևը ներկայացնող այս հեղինակը¹⁸ մեզ համարյա անհայտ է ներկայանում իր կենսագրությամբ: Ըստ Արշակ Ալպոյաճյանի, Խաչատուր Թոխաթցին ծնվել է 1565-70թթ. և հայրենիքից մեկնել է 1602-ին, երբ ջալալիները նվաճեցին ու ավերեցին Եվդոկիան¹⁹: Հիմնվելով Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» հաղորդած տեղեկությունների վրա, Ալպոյաճյանը եզրակացնում է, որ Թոխաթից հեռանալուց հետո Խաչատուրը «փնթզիմքը կը նետէ մինչև Իտալիա և Վենետիկ»²⁰, որտեղ էլ նրան հետապնդել ու հալածել են կաթոլիկ հավատաբնիչները²¹: Ներկայացնելով իրեն բաժին ընկած տառապանքները հավատաբնությունյան կողմից, Գրիգոր Կամախեցին համեմատության եզր է գտնում Խաչատուր Թոխաթցու հետ. «... որպէս զԹոխաթցի Խաչատուր անուն երէց մի...»²²: Հավատաբնիչներից զուխը մի կերպ ազատելով, Խաչատուրը ուղևորվում է Կ. Պոլիս: Պոլսից, ինչպես գրում Ա. Ալպոյաճյանը, հետ է դառնում Թոխաթ և շարունակում իր ծառայությունը որպէս քահանա: Խաչատուր Թոխաթցու կյանքի վերոհիշյալ փաստերին պիտի հավելել և այն, որ, ըստ Մելիք-Օհանջանյանի, 46-ամյա Խաչատուրը մեզ հետաքրքրող երկը գրել է Եվրոպայից հետդարձի ճանապարհին, դեպի Բորֆեռ²³ կղզին նավարկելիս, որի ավերին նավը խարխախ էր զցել քաղցրահամ ջրի պաշար վերցնելու համար, 1614 թվականի հունիսի 15-ին, ինչպես այդ մասին նշված է ՄԱՄ 1636 ձեռագրում գտնվող պոեմի խորագրում (էջ 244): Պարզ է, որ սա քերթվածի երե ոչ վերջնական ավարտման, ապա զոնե հիմնական մասի գրության ժամանակն է: Անշուշտ, «Պատմություն Վենետիկ քաղաքին» երկի նախնական գրական աշխատանքները Խաչատուրը կատարել է դեռևս Վենետիկում:

Այստեղ լուսարանման կարոտ է մնում այն հանգամանքը, որ հավատաբնիչների կողմից ահավոր և տանջալից տառապանքների ենթարկված Խաչատուրը պոեմում այդ մասին որևէ հիշատակություն չի բողոյ: Վերհիշենք Գրիգոր Կամախեցու համապատասխան հատվածը. «Որպէս զԹոխաթցի Խաչատուր անուն երէց մի, որ զնոսա չար աղանդն ոչ ընդունելոյ սակս ի գուր էին արկեր բազում ժամանակս, որ յետոյ յագիւ էր ազատէր, որ ի բնութենէ ծննդական շնորհ ունելով, ի մէջ գրին զիրք մի ոտանատր էր ասել ու գրել ի վերայ մեր դաւանութեանցն և իւր անձին կրիցն, որ վասն հաւատոյ, որպէս մեք տեսաք զինքն յԸստամբոյ»²⁴: Եթե

Խաչատուրին Գարանաղցին տեսել է Կ. Պոլսում, ուրեմն արդեն իսկ գրված-պատրաստ էր «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» քերթվածը, որին ծանոթ չէ Գրիգոր Գարանաղցին կամ ծանոթ է, բայց չի նշում, քանի որ ժամանակագիրը խոսում է հավատարմնիչների պատճառած տանջանքների մասին և, բնականաբար, հիշատակում է միայն Խաչատուր Թոխաթցու կողմից այդ շրջանում հեղինակված կրոնական բովանդակությամբ գրվածքը, որի գրության շարժառիթը, ինչպես երևում է, հենց դավանափոխման հալածանքներն են: Այն, որ Խաչատուրի ստեղծագործության մեջ այդ հալածանքների ուղղակի կամ անուղղակի արձագանքները տեսանելի չեն, կարելի է բացատրել տարբեր պատճառներով: Նախ և առաջ Խաչատուրը կարող էր հավատարմություն ենթարկվել 1603-1604 թվականներին, իսկ մենք գիտենք, որ ներկա գրվածքը գրվել է դրանից 9-10 տարի անց: Հետևաբար, ոչ քիչ ժամանակ անցած լինելով և այդ դեպքերը, կորցնելով իրենց քաղաքությունը, չեն դարձել ստեղծագործական փաստ: Երկրորդ, Խաչատուր Թոխաթցին գրում է Վենետիկ քաղաքի մասին պատմություն՝ վենետիկցիների վարք ու բարքով, կրոնա-ծիսական հանդիսություններով, գեղեցիկ կենցաղով և այլն, և, ինչքան էլ այդ ամենի արտացոլումը անցնում է իր «եսի» միջով, նա պատմում էր Վենետիկի ու վենետիկցիների և միայն աննշան դեպքերում՝ իր մասին: Ուստի կաթոլիկների հետապնդումներն ու կտտանքները ստեղծագործության մեջ չեն անդրադարձվել: Չի բացառվում և այն, որ պոեմի նախնական բնագրում եղել են այդ անդրադարձումները, սակայն հետագայում խմբագրվել են հայ կաթոլիկների ձեռքով: Հավանականությունից գերծ չէ, նաև այն, որ եկեղեցական դոգմատիզմից ու կրոնական կաշկանդվածությունից հեռու, լայնախոհ այս քահանան, մոռանալով իր կրած խաչի ծանրությունը, վեր կանգնելով անձնական կրքերից ու վիրավորանքներից, երևան է հանել Վենետիկի ճշմարիտ պատկերը: Եվ, վերջապես, շատ հնարավոր է, որ Գրիգոր Կամախեցու հիշած «Թոխաթցի Խաչատուր անուն երեցը» «Պատմութիւն Վենետիկ քաղաքին» երկի հեղինակը չէ: Ինչո՞ւ չմտածել, որ բանաստեղծներով հարուստ Թոխաթում²⁵ ապրել և գործել է մեկ ուրիշ երեց Խաչատուր անունով, որը հետագայում անունների, հոգևորական աստիճանի, ժամանակի, Վենետիկում լինելու հանգամանքի զուգադիպության պատճառով նույնացվել է գրվածքի հեղինակի հետ: Մյուս կողմից նայելով, դժվար է այդ ամենի համապատասխանությունը համարել ընդամենը պատահական զուգադիպության արդյունք: Այս հարցերը կնճռոտ կմնան այնքան ժամանակ, քանի դեռ նոր փաստեր չեն հայտնաբերվի:

Գեպի Վենետիկ իր անցած ճանապարհի նկարագրությունը բաց բողոնելով²⁶, Խաչատուր Թոխաթցին միանգամից անցնում է աշխարհի արևմտյան կողմում գտնվող «գեղեցկադիր կղզու» Վենետիկի՝

տեսնողի վրա ցնցող տպավորություն գործող հիանալի շինվածների, մեծ պալատների ու դարպասների հիշատակմանը՝ մի բանի առդում կարծեք խտացնելով քերթվածի հետագա հիմնական ասելիքը: Այնուհետև բերվում է հնդկաց արքայի փախստական դստեր՝ Վենետիկի կողմից քաղաքի հիմնադրման մասին հին ավանդազրույցը: Թոխաքցին միջ-անկյալ մի նախադասությամբ նշում է, որ «Վաղ ժամանակի խապար է սա», (ավանդությունը, - Ա. Ս., էջ 254) դրանով իսկ բանահյուսական տա-րածված սյուժեն ներկայացնելով իբրև ճշմարտություն:

Հեղինակը շատ ուշադիր է, ինչպես քաղաքի արտաքին ճոխուր-յունների (օրինակ, Մամարքա-ս. Մարկոս եկեղեցին՝ շրջակա երեք հա-զար սյուներով), այնպես էլ բնակիչների ներքին բարեմասնությունների նկատմամբ.

*Կանոնք սրբոյ կայ ի միջի,
Եւ երդումնին չքսանն սոքա,
Թիւր դատաստան իսկի չառնին,
Եւ ոչ կաշառ առնուն սորա (էջ 275):*

Վենետիկյան պատկերների մեջ իրենց գեղարվեստական ուժով ու ծավալայնությամբ առանձնանում են ժամացույցի, հոգեգալստի, առ-նավաճառի, դիմակահանդեսի նկարագրությունները: Ահա մի հատված «Մեծի աուրն սազ ուրբաք» կատարված ծխական հանդիսության տեսարանից, որ Խաչատուրը տվել է կենդանի ու տպավորիչ գծերով.

*Ունանք լայով՝ գկուրծն բախեն,
Եւ բոկ ռոտամբ առջև նորա
Մեծ պարոնայք գկերպն փոխեն,
Ծածկեն գերեսն, որ մարդ չիմնայ (261):*

Պոեմում հետաքրքրաշարժ, հետևարար հիշվող մանրա-մասներով ներկայացված են վենետիկցու նիստուկացը, տոնական ու ծխական բազմամարդ արարողությունները, Վենետիկի ճարտարապե-տական դեմքը, քաղաքի դժվար ընդարձակման հետ առնչվող ուշագրավ տեղեկությունները, առևտրատնտեսական կյանքը, որոնց նկարագրու-թյունները ճանաչողական արժեքից զատ ունեն գեղարվեստական նշանակություն:

Խաչատուր Թոխաքցին լավ գիտի, որ Վենետիկի շենշող տեսքն ու բնակիչների բարեկեցությունը արդյունք է տևական խաղաղության.

*Հագար ՚ երկու հարիւր տարի,
Որ Վենետիկն շինեալ կայ՝*

*Չարկամաց ձեռք խսկի չ' անկեր,
Եւ ոչ կրրակ հրդեհներ զնա՝ (Էջ 270):*

Այս տողերի ենթատեքստում անընդհատ պատերազմների քատերաբեմ դարձած ու ավերված Հայաստանի պատկերն է: «Այսպիսի դիտողություններն ունեն իրենց ենթահողը, - գրում է Ա. Մաղոյանը, - չէ՞ որ բանաստեղծը մտովի համեմատում է Վենետիկը իր հայրենիքի հետ և զրի է առնում այդ համեմատության միայն մեկ կողմը, մյուսը բողնելով, որ ընթերցողը վերականգնի՝ դարձյալ մտովի»²⁸: Վենետիկն ու վենետիկցիներին զովաբանելիս նա ջերմեռանդ հայրենասիրությամբ ոչ այնքան քափանցիկ զուգահեռներ է անցկացնում նրանց ու իր հայրենակիցների միջև՝ մեծ սրտացավությամբ հիշելով այդ ամեն լավից ու զեղեցիկից զրկված իր հայրենիքն ու ժողովրդին և խորապես տխրելով դրա համար:

Խաչատուր Թոխաթցու «գրչից չեն վրիպել դրականն ու բացասականը, զեղեցիկն ու տգեղը, լուսավորն ու սովերտսը» (Էջ 237): Եվ ահա քաղաքաբնակների զովասանքին հետևում է նրանց սովորույթների ինչ-ինչ կողմերի սուր, հաճախ զավեշտով հագեցած քննադատությունը, որ երբեմն հասնում է երզնիական սրության: Վենետիկյան կանանց՝ արևելցու համար ամոթալի ու բաց հանդերձանքի մասին զրելուց հետո նա կարուկ նկատում է.

*Այն հերիք է, զինչ զովկեցի,
Պահ մի բամբաս անեն սորա (Էջ 272)²⁹:*

Շարունակելով նրանց ազատ-անպարկեշտ շարժունակից իր դժգոհությունը, Խաչատուրը անցնում է շների հանդեպ վենետիկցիների վերաբերմունքի (իրենց ամաններից շներին կեր տալը, հետները եկեղեցի տանելը և այլն), ինչպես նաև սուրբ Գրքի սահմանած օրենքներին հակառակ ամենատարբեր «պիղծ» ու «անարգ» բաներ (ճանճ, կրիա, մրջյուն, գորտ, ճիճուներ և այլն) ուտելու սովորույթի պախարակմանը.

*Ըզտուրք, զանտուրք՝ որ մեզ յայտնեաց,
Գրոց մտիկ չանեն նորա (Էջ 277):*

Հետաքրքիր է, որ նույն այդ երևույթի մասին համանման ձևով է գրել Խաչատուրից մոտ երեք դար հետո Վենետիկ այցելած Ավետիս Ահարոնյանը: Բերենք այն զուգահեռ ձևերը, որոնց համեմատությունը լավագույնս խոսում է այն մասին, որ Խաչատուրը ճշմարտապատում հեղինակ է, չափազանցված չէ նրա խոսքը:

Գարձեալ պատմեմ զկերակուրն,
Ամենևին խտրել չի կայ...

... Թէ չէ այլ ինչ ծովէն ի դուրս
Ժիժմուրք ելնե, կ'ուտեն ըզնա...
(276),

... Ազգի-ազգի սողուն, թռչուն,
Ծով ու ցամաք, թէ զինչ որ կայ
(277),

«Ինչպես երևում է, վեներտիկցի
ձկնորսը իր ցանցի մեջ ընկած
կենդանիների վերաբերմամբ
մեկ հատիկ սկզբունք ունի,
այդ այն է, թէ ինչ որ կենդանի
է, շարժվում է, անպատճառ
պիտի ուտուի: Մանր բրձնե-
րից սկսած մինչև մեծ ձկնե-
րը, խխունջները, տեսակ-տե-
սակ խեցգետինները...»³⁰:

Վերոհիշյալ պարսավալից տողերը ամփոփելով այսպես.

*Չվայելչութիւնս աղեկ վարեն,
Բայց այս քանի քանս անարգ է... (Էջ 278):*

Հեղինակը շարունակում է Վեներտիկի ու վեներտիկցիների
ընդմիջված դրվատը մի նոր թափով.

*Տուն և խանութ մալով է լի,
Պակասութիւն հեչ քաշեր չէ,
Հարիւր տարոյ անցեալ մարդիկ՝
Հանց զխտենաս կտրիճ է նա (Էջ 280):*

Թեպետ Խաչատուրը եղել է կոչումով հոգևորական (երեց), բայց
պոեմի տողերում ամենուր իշխում է աշխարհիկ ռզին: Դիշա է նկատված,
«որ քահանա Խաչատուրի ուշադրությունն առաջին հերթին զրավել են ոչ
թե հոգևոր նշանակություն ունեցող շենքերն ու տաճարները որպես կրո-
նական-ձիսական վայրեր, այլ տնտեսական նշանակություն ունեցող
հաստատություններն ու երևույթները»³¹: Եկեղեցիների ու տաճարների՝
պոեմում առկա նկարագրությունները հետին պլանում են զանվում աշ-
խարհիկ կառույցների (տներ, խանութներ, ժամացույցներ և այլն) պատ-
կերումների համեմատությամբ, որոնց մեծ հետաքրքրասիրությամբ է
վերաբերվում հեղինակը: Այս և ուրիշ փաստերից ուսումնասիրողը իրա-
վացիորեն հանգում է այն հետևությանը, որ նույնիսկ ամենից աշխարհիկ
տաղասացներից (իդ դարի) առաջ գնացած Խաչատուր Թոխաթցին «Իր
տեսածներով այսպես հիանալու, մարմնական վայելքների համար ըս-
տեղծված իրերն ու առարկաները այսպես հախտուն զովերգելու համար

չի էլ մտածում դատապարտել իրեն, ապաշխարել ու ներումն հայցել բարձրյալից»³²: Ասվածը ամբողջացնելու իմաստով այստեղ հարկ է հիշել մեր հեղինակի գրչին պատկանող զինու և վայելքի մի բանաստեղծությունը («Տեսէք զամանս դղմենի»), որտեղ Խաչատուր Թոխաթցին գովերգումով դիմում է զինու ամանին.

*Որպէս որդեակ քեզ գգունեմ,
Վեր ծնկար քեզ մեծարեն...³³*

Հետաքրքիրն այն է, որ Խաչատուր Թոխաթցու երկը բավական հեռու է ժամանակաշրջանի ուխտագնացությունների³⁴ արձակ ու չափածո նկարագրությունների կայուն կաղապարային որոշ կառուցվածքներից: Այստեղ իսպառ բացակայում են նման գրվածքների սկզբին բնորոշ ուխտ կատարելու երազանքի ու խոստման արտահայտությունները, ուխտավորի հավատի ուժը ցույց տվող ճնրադիր աղոթքները և Աստծուն զոհություն մատուցելը, որ իրենց՝ անարժաններին արժանի է արել տեսնելու երկրպագության վայրերը և այլն:

Պոեմը գրված է միջին հայերենով ու Եվրոպիայի բարբառով, ինչպես բնութագրել է Հրաչյա Աճառյանը³⁵, «ոամիկ լեզվով»: «Անարվեստ է ոտանավորը, ռամկական է ոճը, և լեզուն խառնակ»,- կարդում ենք պոեմի առաջին հրատարակության ներածական խոսքում, որի հեղինակը Ղ Ալիշանն է³⁶: Արդեն նորագույն շրջանից Հ. Սահակյանը ևս այն կարծիքին է, որ «այս երկարաշունչ ոտանավորը առանձնապես այքի չի ընկնում իր բանաստեղծականությամբ...»³⁷: Պիտի ասել, որ այս գնահատությունների մեջ անտեսվել են հեղինակի սահուն ոճի գեղեցկությունը, աշխույժ խոսքի հմայքը, որոնց շնորհիվ ընթերցողի մտքում կենդանանում է քաղաքը և ասես շնչավորվում են քաղաքացիները: «Վարպետորեն հյուսված... այդ երկը ընթերցողին ասես տեղավոխում է «Գեղեցկադիր» կղզին, չբնաղ Վնենտիկ քաղաքը, նրան ևս ստիպելով իր հետ ըմբռնվել մարդկային հանճարի ստեղծած գեղեցկությունները, իր հետ հիանալ ու ոգևորվել, հիասթափվել ու ափսոսալ, ի վերջո զգալ հայրենի երկրի կարոտը և շտապել դեպի տուն»³⁸:

*Եւ ես բարով հասնիմ իմ տեղս,
Թոխաթ քաղաք հերիք ինձի:
Ամենեքեան անցաւոր է,
Միայն Աստուած անխախտելի (Էջ 286):*

Քառանդամ ու նույնավերջ ոտանավորով հորինված այս պոե-

մում մեր ուղեգիրը մշտապես օգտագործում է հետաքրքիր համեմատություններ ու գեղեցիկ մակդիրներ: Դրանք ցայտուն են երևում հետևյալ դրվագում, երբ մտնը Խաչատուր Թոխաթցու զրչի տակ զանազան համեմատությունների ու մակդիրների առիթ է դառնում.

*Չյատակըս փողոցնին քերեն,
Մոմի արցունք ժողվեն նոքա,
Հանց ճերմակցեր է փողոցին՝
Գիանաս, թէ ձխն եկել նմա...
... Գեղորեից կամ թէ քաղբից
Մոմի շոկէն ի ծով ծփայ (էջ 262)*

Վենետիկի հրաշալիքների նկատմամբ իր զարմանքն ու եհացմունքը արտահայտելու համար Խաչատուր Թոխաթցին կարողացել է գտնել բազմազան ձևեր, որոնցով ինքն իրեն չկրկնելու կարողություններ է դրսևորում.

*Տեսողքն ի նա ապուշ մնայ (էջ 254):
Տեսողն ի խելաց կու գնայ (էջ 261):
Խտտի աչք հայողին ի նա (էջ 266):*

Խոսքի ինքնատիպ ոճավորումը լավ տեսանելի է պոեմի այն մասում, ուր նկարագրվում են վենետիկցի կանայք: Քառաստողի սկզբի երկու տող ընդգրկող նկարագրոթյանը հետևում է.

*Իրեանց խիստ մեծ պարծանք քուի,
Որ գեղեցիկ կին ունենայ:*

Հաջորդող քառաստողի սկզբնատողերի պատկեր-նկարագրությունից հետո նույալես սկսվում է դրա ամփոփումը.

*Իրեանց խիստ մեծ պարծանք հաշունն՝
Հես սիրողին ի ծուռ կու գայ (էջ 273):*

Տողավերջի «քուին» Խաչատուրը փոխարինում է համատեքստում նույնիմաստ «հաշունն» բառով, որը ժամանակի քնարերգության համար ուշագրավ բանաստեղծական հնարանք է:

• Խաչատուր Թոխաթցին, ինչպես նկատել է Ա. Մադոյանը, «ամբողջ քերթվածը գրել է արագ³⁹, մեկ շնչով, իր գործը չի դժվարացրել հան-

գի հնչեղությանը խստիվ հետևելով, նրա խոսքն ինքնեկ է, սահուն ու գրավիչ, նաև՝ տպավորիչ»⁴⁰: Գրվածքը բնորոշվում է ոճի-սահունությամբ, խոսքի աշխույժ հմայքով: Այն քե՛ր ըստ ժամանակագրության և քե՛ր իր ծավալային ընդգրկումով ու գեղարվեստական արժանավորություններով հայ միջնադարյան գրականության՝ մեզ ծանոթ առաջին չափաբերյալ ուղեգրությունն է: Խաչատուր Թոխաթցին փաստորեն սկզբնավորեց ճանապարհորդական-ուղեգրական ժանրը չափածոյի ասպարեզում, որը, սակայն, ապրեց հետընթաց շարժում. նրանից հետո գրված չափաբերված ուղենոթերը ըստ ամենայնի զիջում են «Պատմութիւն Վեներաիկ քաղաքին» ստեղծագործությանը:

Այնուամենայնիվ երևան եկավ չափածո ուղեգրություն գրողների մի սովոր բանակ, որոնցից յուրաքանչյուրը իր կարողությունների չափով փորձում էր տեսակը դուրս բերել իսկական բանաստեղծության լայնահուն ճանապարհ:

Ուշ միջնադարում Երուսաղեմի մասին բանաստեղծությունները հիշեցնում են գովքեր ու ներբողներ, որոնք, թվում է, կարող էին գրվել առանց սեփական աչքով տեսնելու, խցում փակված: Գրա հնարավորությունը ընձեռում էր հայ մատենագրության մեջ և հատկապես Աստվածաշնչում Երուսաղեմին վերաբերող նյութի առատությունը: Մաչի նշանակում, քե Երուսաղեմը նկարագրողները անձամբ չեն եղել ս. Քաղաքում: Ուղղակի քչերին էր վիճակված նյութի այդպիսի առատության պայմաններում արտահայտել սեփական հույզերն ու զգացմունքները, ձեռքագատվելով նյութի կապանքներից: Նման բանաստեղծություններից կարելի է առանձնացնել Հակոբ Թոխաթցու «Տաղ վասն սուրբ Երուսաղեմայ» գրվածքը (1635թ.): Բանաստեղծության բոլոր տները ավարտվում են «Սուրբ Երուսաղեմ, քաղաքդ աննման» տողով: Հակոբ Թոխաթցին գրել է Երուսաղեմի եզակիության, դեպի աշխարհի բոլոր քրիստոնյաները նրանից ծագող յույսի մասին: Տաղասացը Երուսաղեմի սրբավայրերը նկարագրելիս չի մոռանում հայկական վանքերի մասին գրել առանձնահատուկ սիրով ու անխառն ցնծությամբ: Բանաստեղծության վերջում սուրբ Երրորդությանը փառք և օրհնություն է մատուցվում, որին հաջորդում է այս տողը.

Չմեզ արժան արա քոյին տեսութեան... (ՌԻՄՀԲ, հ. 1, էջ 57):

Ուղեգրական բանաստեղծության վերջում դրվող այս փառատրական մասը (այն կարող է հասցեագրվել նաև Աստծուն, Քրիստոսին, Աստվածածնին), այն, որ անարժան ուխտավորը արժանի է եղել տեսնելու սուրբ վայրերը, Ժէ դարի արձակ ուղեգրություններին և բնորոշ մոտիվ է:

Երուսաղեմի մասին մեկ այլ բանաստեղծություն («Տաղ խիստ գեղեցիկ ի վերայ յԵրուսաղեմի» (1570թ.), որի հեղինակը Նիկողայոս Ստամբուլցին է, նույնպես ենթակա է այդ կաղապարի պարտադրանքին: Աստծուն ու Քրիստոսին նվիրված փառատրական տողերից հետո նա գրում է.

Արժան առնես դու քրիստոնեաց,

Երկրպագել տեղ տնօրինեաց (ՌԻՄՀԲ, հ. 1, էջ 366):

Այս գործը ունի նախորդին նման կառուցվածք: Գրեթե բոլոր տները ավարտվում են «Երուսաղեմ, քաղաք զոված» կրկնակով: Այս երկու քերթվածներում համարյա նույնն է երուսաղեմյան սրբավայրերի (Քրիստոսի և Աստվածածնի գերեզմանները, Համբարձման ու Չիթենեաց լեռները, Գալիլեան և այլն) ներկայացման հերթականությունը:

Հակոբ Թոխաբցի

Նիկողայոս Ստամբուլցի

*Ի Գեթսեմանի ձորն արքունական,
Ուր Աստուածածնի դիրն է և տապան...*

(ՌԻՄՀԲ, հ. 1, էջ 571)

*Գետեսմանի ձորին միջոյն
Աստուածածինն է հոն
քաղած...*

(ՌԻՄՀԲ, հ. 1, էջ 366)

Այս դեպքում քերևս նյութի նույնությամբ է պայմանավորված նկարագրությունների նմանությունը: Ստամբուլցին նույնպես անդրադառնում է հայկական եկեղեցիներին՝ հատուկ առանձնացնելով ս. Հակոբյանց վանքը: Բանաստեղծը չի ուզում համակերպվել այն մտքին, որ քրիստոնեական սրբությունները անհավատների ձեռքին են: Այս մտտիվը խիստ հատկանշական է ուղեգրությունների համար⁴¹.

Բերանիա՝ տեղ պարծանաց,

Այն տեղն, որ Դազարն է քաղած,

Այսօր ի ձեռն Արապաց,

Երուսաղեմ, քաղաք զոված, - գրում է Ստամբուլցին

(ՌԻՄՀԲ, հ. 1, էջ 365):

Հակոբ Սսեցին իր «Տաղ ազնի սասցեալ Յակոբ վարդապետ է ի վերայ քաղաքին Բուզանդիոյ» բանաստեղծության մեջ, քվարկելով Կ. Պոլսի կրոնական կառույցները, Այա Սոֆիայի տաճարին անդրադառնալիս չի կարողանում չարձանագրել, որ արևելյան-քրիստոնեական այդ մեծ կոթողը մատնված է անհավատ բուրքերի ձեռքը.

*Այնպիսի տաճարի մասին հայ ուղեգիրները գրել են ցավով ու
Փոխան զանկակին մեզինքն կանչել...⁴²*

Մոֆիայի տաճարի մասին հայ ուղեգիրները գրել են ցավով ու տխրությամբ Երեմիա Բյուճուրճյանը «Ստամպոլոյ պատմութեան» մեջ սրտի կսկիծով է նկարագրում երբեմնի փառաւիղ ու վայելչական հուշարձանը՝ այժմ գրկված սուրբ մատուցներից.

*Արդ չիք զարդք վայելչութեանց՝
ոչ մատուրք եւ ոչ դրասպեղն այն,
Եւ ոչ սխրայի դրունքն,
այլ տարեալ ի Վենեցիայն⁴³։*

Երեմիան մանրամասն և, իհարկե, ոչ ինքնանպատակ նկարագրում է⁴⁴ Կ. Պոլսում գտնվող զազանանոցի վերածված եկեղեցին, քվարկում զազաններին:

Վերևում արդեն հիշված Հակոբ Ստեցին գրել է նաև Ղարասու քաղաքի մասին ուղեգրական բանաստեղծություն՝ «Այս տաղ գուսական բեր Ակոբ լեզուն» սկզբնատողով: 1649-ին գրված բանաստեղծությունը սկսվում է քաղաքի եկեղեցիների մասին հաղորդումներով: Այնուհետև պատմվում է հոգևորականների մասին: Դա հեղինակը այսպես է բացատրում. «Այլ առաջ կարգ է բան զմարմնոյ հոգոյն»: Հետո սկսվում են մարմնականի նկարագրությունները, որ ավելի գերակշռող են: Դրանց մեջ մտնում են Ղարասուի գործնական ու անտեսական դեր ունեցող կառույցները՝ բաղնիքներ, խանութներ, իջևանատներ և այլն: Հակոբ Ստեցու գրիչը ավելի բանաստեղծական է դառնում, երբ նկարագրում է քաղաքի, այսպես ասած, «կենդանական ու բուսական աշխարհը»:

Արխատակես Խարբերոցին ևս իր բանաստեղծությունը («Ուսանաւոր և ներքողեան ասացեալ Արխատակես վարդապետի Խարբերոցու վասն օրհնեալ քաղաքին Յեղեսիոյ, որ է ի Միջագետս Ասորոց») սկսում է քաղաքի նշանավոր խոջաներին ներկայացնելով և օրհնելով: Ուսանավորը, սակայն, որպես ուղեգրություն անարժեք է, քանի որ նկարագրական մասերը գրեթե նույնությամբ հեղինակը վերցրել է Ներսես Շնորհալու «Ողբ Եղեսիոյ»-ից: Խարբերոցու երեք տասնյակից ավելի տողեր աննշան տարբերություններով իրենց զուգահեռ ձևերը ունեն Շնորհալու ողբում: Խարբերոցին հիմնական փոփոխություն է մտցրել պատումի դեմքի (առաջին դեմքը դարձրել է երկրորդ) և ժամանակի մեջ (ներկայով փոխարինել է անցյալը): Բայց, ինչքան ևլ Շնորհալին իր թողած ազդեցությամբ կաշկանդում է Խարբերոցու երևակայությունը, երբեմն հանդիպում են տողեր, որոնք սեփական դիտումի արդյունք են:

Ներսես Շնորհալու՝ Եղևսիայի նկարագրություններից ակնհայտ ազդեցություն է կրել նաև Երեմիա Քյոմուրճյանը «Թուղթ առ Նիկոմեդացիս» (1652) բանաստեղծության մեջ, որտեղ գեղեցիկ պատկերներով ներկայացված է Նիկոմեդիա քաղաքը.

Ներսես Շնորհալի

Արիստակես Խարբերոցի

*Ծովն ի միջի իմ ծածաներ
քաղցրիկ օդովն ծիծաղէր...⁴⁵*

*Զծովն ի միջի քո ծածանի,
Քաղցրիկ օդովն ծիծաղի:
(ՈՒՄՀԲ, 2, 231)*

Երեմիա Քյոմուրճյան

*Ծովն առաջի քո ծածանի՛,
Քաղցրիկ օդով ծիծաղական...⁴⁶*

Այս ամենը լավագույնս ցույց է տալիս Շնորհալու ստեղծած պատկերների կենսունակությունը: Եթե Խարբերոցին տեսնում է գրեթե միայն այն, ինչ իրենից առաջ արդեն տեսել էր Շնորհալին, ապա Մարտիրոս Գրիմեցին նկարագրում է ոչ միայն իր տեսած գեղեցկությունները, այլև այն ամենը, ինչը կուզենար տեսնել Ամասիայում: «Տաղ ի Գրիմեցի Մարտիրոս վարդապետէ ասացեալ յաղագս քաղաքին Ամասիո» վերտառությամբ գրվածքում կենդանի ու տեսանելի գույներով պատկերված են Ամասիայի «ծիծաղածաւալ» գետը, դրախտային այգիները, բազմատեսակ պտուղները: Նաև, կարծես, պարտականություն կատարելով, ուր առդ հեղինակը նվիրում է քաղաքի եկեղեցիներին: Ապա սկսվում են Գրիմեցու աշխարհիկ փափագներին վերաբերող հատվածները: Բանաստեղծական երևակայության ուժով հեղինակը կառուցում է երազանքների մի իսկական բուրգ. այնպես լինել, որ ինքը կամուրջ կապեր քաղաքի վրա, քաղաքը ծածկեր նշարենու սաղարթով, որպեսզի հունիսի արևը անգոր լինել վնասելու Ամասիային: Սաղարթի աջ և ահյակ կողմերը նա փոքրիկ լուսամուտներ թողնել՝ մեղմ հովի համար: Իր կառուցած ջրմուղով նա Պուլտուլալու հարգված զինին բերել ու հեղել նույնպես իր սարքած մարմարյա ավազանը: Եվ սկսվել ուրախ խնջույքը.

*Մատուլակն յոտին կացեալ
Մեզ քաշխէր զգինին անխնայ,
Մէկ մէկ այն ոսկի ճամով,
Ես խանն, որ կարգն ի քեզ գալ՞:*

Մեկ քաղաք նկարագրող ուղեգրական բանաստեղծությունների մասին խոսելիս հարկ է անդրադառնալ ԺԷ դարի երկրորդ կեսի հեղինակ Մտեփանի «Տաղ Վան քաղաքին» բանաստեղծությանը (ՌԻՄՀԲ, 2, էջ 634-636): Բրիտոնեության մեջ հաստատ եկեղեցիներ, քաջազարմ իշխաններ, դրախտային գարնան տեսարաններ, - ահա ուսանավորի բովանդակային գլխավոր առանցքները:

Ի տարբերություն վերը քննարկված գործերի, սրբավայրեր ներկայացնող հեղինակների ուշադրության կենտրոնում որևէ քրիստոնեական սրբավայր է, ավելի հաճախ վանք կամ եկեղեցի: Մեկ սրբավայրի մասին է գրել նաև Մարտիրոս Դրիմեցին («Գովեստ սուրբ Աստուածածնայ վանացն յԱնկուրիոյ, ոգեալ ի Մարտիրոս վարդապետի Դրիմեցոյ», 1669թ.): Այսպես է բանաստեղծը դիմում նաև գրչության նշանավոր կենտրոն Անկուրիայի վանքին.

*Մոյի ընդ յարկաւ տեղւոյդ սրբութեան
Յերկրպագութիւն արեհնեալ քո սեմայն,
Եղէ արժանի քոյին տեսութեան,
Սուրբ Աստուածածին տենչայի խորան⁹⁵:*

Մարտիրոս Դրիմեցու խոր մտահոգությունը ժամանակի հայության ծանր վիճակի հանդեպ իր արտահայտությունն է գտել հետևյալ առղերում.

*Վասն մեր մաղթեա առ ծնեալդ Բան
Ողորմիլ գթով յազգս հայկազեան⁹⁶:*

Ուխտագնաց լինելով Երուսաղեմ (1680-ականների սկիզբ), Մարգիս վարդապետը գրել է մի բանաստեղծություն՝ «Երգ առ սուրբ առնաճարն գեղեցիկ սրբոց Յակոբեանց, ասացեալ ի Մարգիս վարդապետէ»:
Մովորաբար ուղեգրություններում յուրաքանչյուր ուխտատեղիի գովեստի մեջ էական դեր է վերապահվում ուխտավորների այցելությունների հաճախակիության պարագային.

*Ազգ և ազիւնք ցանկան նմա
Եւ չորս կողմանց յոյստ գան առ նա (ՌԻՄՀԲ, 2, 291):*

Թեև տաճարը երկրի վրա է կառուցված, բայց լուսեղեն երկնքում է գտնվում: Գեղեցիկ կամարներով զարդարված եկեղեցին՝

*Որպէս արքայի է բազմեալ,
Վերայ չորից սեանց հաստատեալ (Անդ):*

Այս համեմատությունը վերոհիշյալ բանաստեղծության մեջ օգտագործում է նաև Մարտիրոս Ղրիմեցին.

*Միջոցն դուր դաշտ ընդարձակ և լայն,
Գու բազմեալ ի գահ քազաւորակամ⁵⁰:*

Անշուշտ երկու բանաստեղծների պատկերային մտածողությունն էլ սնվում է «Ողբ Եղեախոյ»-ի ակունքներից⁵¹:

Արևմտյան եկեղեցին տարբերակել է ուխտագնացությունների երկու տեսակ՝ մեծ և փոքր: Ամենահարգի և բարձր կարգի ուխտագնացություն են համարվել ճանապարհորդությունները դեպի Երուսաղեմ, Հռոմ, Կոմպոստելա և այլն: Փոքր ուխտագնացություն հասկացության տակ ընկալվել են այցելությունները հայրենական սրբավայրերին⁵²: Թովմա Վանանդեցու ուղեգրության («Թովմայի վարդապետի Վանանդեցույ ի խնդրոյ Մահակայ և Ասլանի բան չափեալ ի սրբազան տեղիս աշխարհին Հայոց») հիմքում ընկած է մի այդպիսի փոքր ուխտագնացություն, որ, «ճանճրացեալ յաշխարհի» (Ղևոնդ Ալիշան), կատարել են շամախեցի եղբայրները ԺԷ դարի երկրորդ քառորդում՝ «Շրջեալ զսրբովքն ճգնագգեաց, Հատուցանել զպարոս երախտեաց»: Պոեմն ընդգրկում է լայն «աշխարհագրություն» (Հաղպատ, Սանահին, Երևան, Էջմիածին, Նախիջևան, Տաթև և այլն): Եղբայրները Գողթան գավառում եղել են իրենց ճամփորդության վերջերում.

*Եւ անտի իսկ եկեալ հասին
Ի Գողթն գաւառքն ցանկալի⁵³:*

Հավանաբար հենց այստեղ էլ խնդրանք-պատվերով նրանք դիմել են տեղի ս. Խաչ վանքի առաջնորդ Թովմա Վանանդեցուն՝ քրթին հանձնելու իրենց ուղեգնացության մանրամասները: Երկու տասնյակից ավելի եկեղեցիների նկարագրությունները, որ գտնում ենք Վանանդեցու պոեմում, պատմական ու տեղագրական արժեքից զատ ունեն նաև գեղարվեստական նշանակություն: Այդ նկարագրությունները բովանդակային առումով կարելի է բաժանել երեք մասի.

Ա. Վանքերի ու եկեղեցիների կառուցման մասին տվյալներ: Այս հառվածներում դրվատվում են սրբավայր կառուցողները: Օր.՝ Սանահինի վանքային համալիրի մասին կարդում ենք.

*Ատոռածածին նախադասեալ
Ի յարքայէն Արաս շինեալ:*

Այլ և Փրկիչն ամենակայ,
Խոսքովանոյշ զնա կերտեայ,
Մեծ ժամատուրն հաստատեայ,
Ի Յովհաննու էր կառուցեայ:
Գառիթն մեծ վայելչացեայ
Վաչէ իշխանն աւարտեայ,
Նշխարախոց և Առաքեայ,
Ի Հրանուշէ եղև կանգնեայ:
Կորադապատն Դառիթ լեայ,
Ձսուրբ Յակոբն նա նորոգեայ
Ձսուրբ Յարութին փառագարդեայ
Վասակ իշխանըն հաստատեայ⁴⁴:

Ուշադրություն է գրավում հոմանշային բազմազանությունը (շի-
նեալ-կերտեալ-հաստատեալ-կառուցեալ-աւարտեալ-կանգնեալ-լեալ-նո-
րոգեալ), որ հեղինակի խոսքը դարձնում է նման թվարկումներ պարու-
մակող երկի համար գրեթե անխուսափ ճանճրույթից զերծ:

Բ. Եկեղեցիներում ու վանքերում պահվող սրբազան մատուր-
ները և սուրբ այրերի շիրիմները ներկայացնող նկարագրություններ:
Սրբերի գերեզմանների նկարագրություններում հետաքրքիր է Մեսրոպ
Մաշտոցի շիրմին այցելության անդրադարձը, որ լակոնական խոսքի
գեղեցիկ նմուշ է.

*Ի զիրն սուրբ՝ որ յՕշական
Մեսրոպ եղեայ անմարմնական⁴⁵:*

Գ. Վանքերի ու եկեղեցիների բարոյաբանական-հոգևոր նշանա-
կությունը բացահայտող նկարագրություններ: Պոեմի հատկապես այս
հատվածները շնչում են ուխտավորի խոր հավատով ու մեծ սիրով դեպի
քրիստոնեությունը, որը հայ ժողովրդի մշտական հոգևոր հենարանն է:

Այսպես կենդանանում են, շնչավորվում հայկական սրբա-
վայրերը, դառնում, մի տեսակ, գործող անձինք: Եվ հեղինակը իր գրչի
տակից շարունակ դուրս է բերում զնահատանքի նորանոր ձևեր ու
կադապարներ՝ միմյանց չկրկնող և ինքնատիպ: Ուսանավորը նմանվել է
թվարկման՝ նյութի ծավալային մեծ ընդգրկման և նկարագրությունների
հատկացված համեմատաբար փոքր տարածության պատճառով: Ակն-
հայտ է պատվիրատուների ու հեղինակի միտումը՝ բաց չթողնել ոչ մի
սրբազան տեղի նկարագրություն: Դրանից տուժել է երկը իբրև բա-
նաստեղծություն, բայց թերևս մի այլ առումով շահել է. պոեմը միակն է

հայ գրականության մեջ, որ ներկայացնում է միայն Հայաստանի սրբավայրերի այդչափ մեծաթիվ մի ընտրանի:

Եթե դիտարկված բանաստեղծությունների հեղինակները առանց անցած ճանապարհի նկարագրության, առանց որևէ «նախաբանի» ներկայացնում են այս կամ այն քաղաքը կամ եկեղեցին, ապա միջնադարյան ուղեգիրների մի խումբ գրում է բացառապես դեպի իրենց ճանապարհորդության վերջնակետը տանող ճանապարհների մասին: Նաև նկարագրվում են ճանապարհին ընկած զանազան վայրեր, իրենց կրած դժվարությունները: Այս տիպի ուղեգրությունները դասական կոչվելու հավանականություն ունեն այն իմաստով, որ ավելի ճիշտ ու լրիվ են արտահայտում ուղեգրություն եզրույթի նշանակությունը (ուղու գրություն, ճանապարհի գիր):

Մինաս գրիչը 1634-ին իր և իր ընկերակիցների՝ դեպի Եվրոպա կատարած ճանապարհորդությունն է պատկերել «Մի ի թուոցն հազարին» սկզբնատողով բանաստեղծության մեջ: Այն սկսվում է ճանապարհին կրած իրենց տառապանքների նկարագրությամբ.

Նա խիստ դիժար չար քաշեցար.

Չոր և մահու դուռն հասար.

Ճանապարհաց վիշտ կրեցար,

Եւ առանել չարքն որ տեսար (ՌԲՄՀԲ, հ. 2, 310):

Ուղևորները հանդիպում են Հյուսիսիային Եվրոպա կատարած մի անհաջող արշավանքից ամոթահար ու պարտված վարադարձող թուրքական վեզիրին, որի զինվորները ուղեզնացներին դուրս են հանում պանդոկներից և ձգում «ի մէջ սառաց»: Ճանապարհին կրած գրկանքները հատուցվում են, ճանապարհորդները զանում են իրենց մխիթարությունը, երբ «տորմութեամբն աստուածային» հասնում են «Դանուր գետովն լցեալ» Բելգրադ քաղաքը: Այստեղ հեղինակին հիացնողը ամեն տեսակի բարիքներն են: Մինասը հատկապես անտարբեր չէ ձկների նկատմամբ, որոնց առատության մասին նա երիցս նշում է: Ուղեգրին ամենևին չեն հետաքրքրում Բելգրադի ճարտարապետական հոգևոր ու աշխարհիկ կառույցները: Հեղինակի մտահորիզոնը իր բացասական կնիքն է դրել երկի արժեքի վրա: Նրա բառապաշարը աչքի չի ընկնում հարստությամբ, մեծ թիվ են կազմում բառային և նույնիսկ առանձին նախադասությունների անհարկի կրկնությունները: Բանաստեղծության 72 տողից 28-ը ունեն գուռ փառատրական բովանդակություն: Այդ մասերը, որքան էլ տարօրինակ է, համեմատությամբ «ուղեգրական» մասերի, ավելի հաջող են ստացվել: «Ճամփորդական» հատվածները, իբրև տեսա-

ծի ու զգացածի անմիջական արտահայտություն, անհրաժեշտաբար պիտի առավել տպավորիչ ու կենդանի գրվեին: Սա նշանակում է, որ Աստվածաշնչի ազդեցությունը ավելի ուժեղ է եղել, իսկ իր տեսածն ու զգացածը չի դարձել կենսափորձ ու ստեղծագործության փաստ: Արդյունքում «ժողովրդական» Մինասը գերազանցել է «ուղեգիր» Մինասին:

1655-ին է գրել Հովհաննես քահանան իր բանաստեղծությունը՝ «Ի չորս կողմանց ժողովեցան» սկսվածքով: Երկու տասնյակից ավելի վայրերի նկարագրությունները բոլոր դեպքերում չէ, որ բովանդակալից են ու երբեմն բողոնում են պարզ թվարկման տպավորություն: Գրանք բաժանվում են հետևյալ մասերի.

1. Անճնական դեպքերի նկարագրություններ՝ կապված այս կամ այն բնակավայրի հետ: Նման դեպքերում այդ տեղանքի մասին նշվում և հիշվում է միայն այն, ինչը անմիջականորեն կապվում է իրենց՝ ուխտավորների հետ: Օրինակ՝ Մառանի և Իշըլսի խանի կապակցությամբ պատմվում է «խոր անչափական» ու սակավաջուր ջրհորներից ջուր վերցրնելու դժվարության մասին, որից էլ ընթերցողը տեղեկանում է այդ վայրերի միայն մեկ բնորոշ կողմին՝ ջրի պակասությանը: Եվ կամ՝ Համա քաղաքում ուխտագնացների յոթօրյա բանտարկության պատկերումը Համայի վերաբերյալ միակ տեղեկությունն է: Բնակավայրերի ավելի քան կեսը ներկայացնելիս ընդամենը հիշատակվում են ուխտավորներից մահմեդական իշխանությունների կողմից զանձվող հարկի չափերը.

... *Անաի եկաք ի Դօնաքրին,*

Երեք ըռուպ դաֆար առին (ՌԻՄՀԲ, 2, 315):

Այդ դժվարությունների (ջրապակասություն, բանտարկություն, ծանր հարկեր) պատկերումը բանաստեղծության մեջ պատահական չէ:

2. Առանձին քաղաքներին վերաբերող նկարագրություններ: Համուս և Շամ քաղաքներում հեղինակը ուշադիր է ճարտարապետական կառույցների նկատմամբ («կամարակապ» շինվածքներ, «բարձրակամար» շուկաներ):

Քարինք հիսեալք նաղանկարք,

Կարմիր, դեղին և կապուտակք,

Ճերմակ ևս, և միմեանց յարեալք,

Վերուտս ի վայր նաղշ օրինեալք (ՌԻՄՀԲ, 2, 314-15):

3. Մուրք վայրերի նկարագրություններ: Այս վերջին տիպի մեջ դասվում են ս. Գրքի ավանդությունների հետ առնչվող, սրբերի գործած

հրաշքներին ականատես եղած վայրերի մասին պատումները: Խիստ յուրօրինակ է Գառնասկոս մտնելու առիթով վերապատմած Պողոս առաքյալի մասին աստվածաշնչյան սյուժեն: Հովհաննես քահանան այդ քաղաքի անունը չի նշում.

*Շամայ ի դուրս եկար տեղին,
Որ երևեալ լոյս Պողոսին,
Շրջապատեալ զանձամբ նորին,
Որով ծանեալ զնագովրացին* (ՈՒՄՀԲ, 2, 315):

Նման հնարանքն ընթերցողին ստիպում է վերհիշել Աստվածաշնչի համապատասխան հատվածը և որոշել, թե որ տեղանքի մասին է խոսքը: Կասկածից վեր է, որ այս ոճական հնարանքը, որ եզակի երևույթ է հայկական ուղեգրություններում, ինքնանպատակ չէ. դրանով հեղինակը հետապնդել է ոչ բացահայտորեն արասահայտված ուսուցողական նպատակներ:

Հովհաննես քահանան խստորեն հետևում է հանգի հնչեղությանը, որը երբեմն հանգեցնում է ծայրահեղությունների. որոշ դեպքերում առաջին դեմքով պատումը արհեստականորեն վերածում է երրորդ դեմքի՝ հանգը պահպանելու նպատակով: Մինչև Երուսաղեմ ընկած ճանապարհին է ներկայացնում նաև Գառնաքը իր «Գանգատ ունիմ Չեզ, լսեցէք» առդով սկսվող բանաստեղծությամբ: Ուտանավորի հիմքում ընկած է 1695-ին կատարված ուխտագնացական նավարկությունը Կ. Պոլսից դեպի Երուսաղեմ: Ամբողջ ուտանավորի հիմնական բովանդակությունը հանգում է այդ ուղևորության հանգամանքների պատկերմանը: Սյուժեի կենտրոնակետում ոչ թե սուրբ տեղերի նկարագրությունն է, ինչպես Հովհաննես քահանայի պարագայում, այլ լոկ այն դժվարությունների ու նեղությունների անդրադարձը, որոնց հաղթահարումը հավատացյալներին տանում է դեպի երազային Երուսաղեմ (այդ դժվարությունների պատկերումը կարևոր տարր է այսօրինակ գործերում և ունի իր նպատակը, որքան շատ և անավոր են այդ դժվարություններն ու նեղությունները, այնքան մեծ է երևում ուխտագնացի կերպարը: Դա ստիպել է, որ հաճախ չափազանցվեն ուխտավորների կրած տառապանքները): Գառնաքի բանաստեղծությունն ավարտվում է ս. Քաղաք մուտքով.

*Ով եղբայրք, ընթերցողք տաղիս,
Ներումն արարէք դալատիս,
Ողորմի սուր իմ ծնօղիս.
Դուք այ արժանի լինիք
Գնայ ի սուրբ Երուսաղեմ* (ՈՒՄՀԲ, 2, 604):

Բանաստեղծությունը գրեթե զուրկ է գեղարվեստից, մաս ադրատ է զաղափարական բովանդակությունը: Այստեղ, ի տարբերություն հայ ուխտագնացների մեծամասնության, երևում է միայն ապագային-քրիստոնյա ուխտավորը՝ իր անձուկ պատկերացումներով:

ԺԷ դարասկիզբը նշանավորվում է երգիծանքի բուռն զարգացմամբ: Դա մեր գրականության մեջ երգիծանքի զարգացման երկրորդ շրջանն է: Երգիծանքը մեծ տեղ է գրավում մաս ուղեգրական երկերում: Արդեն Խաչատուր Թոխաթցու պոեմում կան երգիծական ուժեղ կտորներ, բայց երգիծանքը զարգացման բարձր աստիճանի հասցրին Ստեփանոս Թոխաթցին, Մարտիրոս Ղրիմեցին ու Եփրեմ Ղափանցին, որոնք միմյանց նկատմամբ ունեն ուսուցչի-աշակերտի հարաբերություն: Վերջին երկուսը հայտնի են իրենց ուղեգրական բնույթի չափածո երգիծական ստեղծագործություններով: 1673-74 թթ. դեպի Բալկանյան թերակղզի կատարած իր ուղևորության տպավորությունները Մարտիրոս Ղրիմեցին ամփոփել է չորս բանաստեղծություններում: «Ի վերայ Պուրղազու Ռ-նի-Դ. (1124+551=1675) Յունուարի ԺԷ-ին»⁵⁶ գրվածքը սկզբին մինչև վերջ հորինված է անեծքի ձևով, որ միջնադարյան երգիծանքի տարատեսակ է: Հայատառ թուրքերենով Ղրիմեցին գրել է «Ի վերայ Վառնայու բաղանեացն»⁵⁷ տաղը, որտեղ բաղնիքը, բաղնեպանները ստանում են սրամիտ ու դիպուկ բնութագրումներ: Իսկ Բարադաղում Ղրիմեցուն ոչինչ չի գոհացնում: Դրա համար էլ այդ թեմայով նույնպես հայատառ թուրքերեն գրել է երկու տաղ՝ «Դրմցի Մարտիրոս վարդապետ է ի վերայ Պապատաղի ասացեալ» և «Ի վերայ Պապատաղու»⁵⁸: Հեղինակը հինգ և կես ամիս մնացել է այդ քաղաքում և մեծ գրկանքներ կրել: Տաղերում բավական տեղ են բռնում բնության տեսարանների, բնակիչների կենցաղի ու բարքերի երգիծական պատկերումները, որոնք արված են աշուղական ոճով ու տաղաչափությամբ:

Եփրեմ Ղափանցու կենցաղագրական-գավեշտական ուղեգրություններում իշխողը դրության կոմիզմն է: Երկու բանաստեղծություններում էլ («Հազար հարիւր Հայոց թուին» և «Կամակցութեամբն աստուածային» սկզբնատողերով, ՌԻՄՀԲ, 2, 556-567) տրված են ուխտագնացության նկարագրություններ: Սակայն հեղինակը դրանք ներկայացնում է պատումի կատակային ձևով ու երգիծական իրավիճակների գեղարվեստորեն հանդգիչ պատկերումներով: Ահա մի նմուշ.

*Գլուխ խոնարհեալ ձեռս իմ պագին:
Ձի էր երկայն հասակ նորին... (ՌԻՄՀԲ, 2, 560):*

ԺԷ դարի հայ գրականությունը հարուստ է չափածո ուղեգրություններով, որոնք բազմազան են քե՛ր բովանդակային և քե՛ր ձևային հատկանիշներով: Դրանց մի մասում, ինչպես տեսանք, նկարագրված են միայն առանձին քաղաքներ կամ վանքեր, մի ուրիշ մասում պատկերված են ընդամենը ճանապարհի դժվարությունները: Իսկ մի շարք ուղեգրություններում էլ միահյուսված են այդ երկուսը: Հասկանալի է, որ տարբեր են նաև մեր հեղինակների հայացքները, կրթական, լեզվի իմացության, բանաստեղծական արվեստին տիրապետելու մակարդակները: Գեղարվեստական տեսակետից բարձրաժեշտ երկերի կոդիցին հանդիպում են գեղարվեստից բավական հեռու ստեղծագործություններ: Այդ կարգի գրվածքները քննության ենք ենթարկել ընթերցողին տեսակի զարգացման մասին գաղափար տալու միակ նպատակով:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Այստեղ մեր նպատակն է շատ համառոտ վերլուծությամբ ներկայացնել հայկական ուղեգրությունների պատմության չորրորդ շրջանը (ԺԸ հարյուրամյակ): Դրա անհրաժեշտությունը ուղեգրության տեսակի անցած ճանապարհի մասին քիչ քե շատ ամբողջական գաղափար ու պատկերացում տալու ցանկությամբ է պայմանավորված: ԺԸ դարի ուղեգրությունների մասին խոսքը ժամանակագրական առումով հարկ է սկսել Չուար Քահանայի Ուղեգրությունից՝ «Ճանապարհագրութիւն Չուար Դիլերճի օղլու քահանայի եւ ուխտ յԵրուսաղէմ, յամի 1711-12»¹: Բավական ընդարձակ այս ուղեգրության մեջ հեղինակը պատմում է իր ուխտագնացությունը Կ. Պոլսից դեպի Երուսաղեմ, ապա մանրամասն նկարագրում ս. Քաղաքի Տնօրինական վայրերը: Մխիթարյանները նպատակահարմար են գտել ներկա Ուղեգրությունը ամբողջությամբ հրատարակել՝ «... յուսալով որ այս խառնակ (գրված է ռամկախոս լեզվով՝ խառնված գրաբարին, աշխարհաբարին և թուրքերենին, - Ա. Ս.) բայց անաշխատ լեզուն ալ իր ոճին պէս կրնայ գուարճութիւն մը տալ ընթերցողաց, ինչպես որ բանասիրաց համար կրնան օգտակար ըլլալ ասկէ դար ու կէս առաջ Երուսաղէմի ազգային վանքերուն և սովորութեանց տեղեկութիւնքն, մանաւանդ ուխտատուրաց՝ որ կրնան ալ բաղդատել զանոնք հիմակուան ստեինս վիճակին և իրենց տեսածներուն հետ, և իմանալ փոփոխուածը կամ անփոփոխ մնացածը»²: Ինչպես բնորոշ է ԺԸ դարի ուղեգրություններին, հեղինակը իր ուղևորությանը զուգընթաց գրում է զանազան մարդկանց հետ ունեցած հանդիպումների մասին, նկարագրում այցելավայրերը: Ուղեգիրը նկարագրում է Երուսաղեմի սրբությունները, որոնց մեջ առանձնանում են ս. Հակոբի վանքին վերաբերող հատվածները: Չուար Քահանան ուշադրություն է հրավիրում տաճարի կացարաններին, վարսավիրանոցին, գինետանը, սեղանատանը, մոմաձուլարանին և այլն: Ուղեգրությանը խիստ հատկանշական են չափազանց մանրամասն նկարագրությունները, թվում է, քե Չուար Քահանան բաց չի թողնում ոչ մի մանրուք: Ինչպես ընդունված է ուղեգրություններում, այստեղ ևս հեղինակը սրբավայրերի սքանչելիությունն ու պայծառությունը ընթերցողին ներկայացնելու հետ միասին պատմում է քրիստոնեական ավանդություններ, որոնք ինքնին հետաքրքիր են: Ս. Հարություն եկեղեցում ուխտագնացին իմիջիայլոց գրավում են նրբաճաշակ կարպետները. «Այս կարպետ-

ներուն վարպետութիւն չեն կարել պատմել. թէ գոյնն, թէ շուքն, թէ զգեստն
և թէ հայուացքն, թէ մորուսն և թէ ունքն ու թարփիչն, թէ նստիլն և թէ
կանգնիլն, թէ ծաղկունքն և թէ հրեշտակքն, թէ սերվքէքն, թէ պաղչան և թէ
բահի երկաթին փայլելն. և պաղչայի միջի քոշքն, և թէ վարդենիքն»³:

Ուղեգրութիւնում քիչ չեն հիշվող նկարագրությունները, պատ-
կերավոր ու թափանցիկ համեմատությունները և այլն: Ֆելլախներին վե-
րաբերող դրվագը իր մանրամասներով հիշեցնում է Սիմեոն Լեհացու
Ուղեգրության համապատասխան հատվածները. «... յետոյ կու իջանես
Չեշմէլին գիւղին մըջովն կու անցնիս. որ երկու կողմն նստեալ են ֆել-
լախնին, և զմեզ թամաշա կանեն. անտէր մնայ իւրեանց զլուխն, մէկ մե-
աքվա (ծածկոց) են խոթեր իւրեան մէջքն, և վոռն վարաիք չիկայ, և ոտքն
բոկ. միաւոր մէկին ձեռքն ընկնիս՝ գրեզ կու հանուեցնէ և չըսլախս կանէ»⁴:

Չուար Քահանայի Ուղեգրությունը գրված է մի լեզվով, որը ա-
վելի շատ ժողովրդական տարր է պարունակում, բան ժէ դարի ուղե-
գրությունները: Այսպես, նկարագրելով Հարության տաճարին մերձ հրա-
պարակում վաճառվող ապրանքները, նա ասում է. «Յետ գատկին տե-
ղացոց բերանն ճանճ կու մտանէ»⁵: Ժողովրդական բանով ու ոճով աչքի
է ընկնում Ուղեգրության ամբողջ հյուսվածքը. «... ճանապարհին սիրուն
անձրեւ մի կերաք և թրջեցար...»⁶, «... նաչարն կուտէ գրանջարն...» (անդ,
181), «... առնող առնողի եղև...» (անդ) և այլն:

Չուար Քահանայի գրվածքում գործածված է պատմմի հրա-
մայական ձևը. հատկապես Երուսաղեմյան սրբատեղիների նկարա-
գրություններում նա ուղղակի դիմում է ապագա ուխտավոր-ընթերցողին.
«... վեր ել և անդ կար լիւան մի...»⁷: Կամ կարող է լինել այսպիսի ձև. «Արի
զմամբ ի վեր ելանէ...» (անդ): Մնացած դեպքերում պատմումը առաջ է
տարվում սովորական՝ առաջին դեմքով:

Ուղեգրական բազմաթիվ դրվագներ իր «Պատմագրութիւն Ան-
ցիցն իւրոց եւ Նատր-Շահին պարսից» երկասիրությանն է ներհյուսել Ե-
կեղեցական, քաղաքական գործիչ Աբրահամ Կրետացին (Թեքիրադ-
ցին) 1736-ին: Այդ երևույթի առաջին օրինակը մեզ, ինչպես տեսանք,
տվել է Մովսես Խոթենացին: Բայց, եթե Պատմահոր դեպքում մենք գործ
ունենք ընդամենը մեկ հատվածի հետ, ապա Կրետացու պարագային
պատկերը մի փոքր այլ է. «Պատմագրության» ամբողջ հյուսվածքը լրց-
ված-հագեցված է փոքր ու մեծ ուխտագնացությունների, ճանապարհոր-
դությունների նկարագրություններով, որոնք ձեռնարկել է հեղինակը, և
իր կողմից ու անունից էլ նկարագրում է առաջին դեմքով: 1719-ին դուրս
գալով Ռոդոսքոյից (Թբալկիա, Թեքիրդադ), ուր ինքը հոգևոր առաջնորդ
էր, սկսում է իր ուխտագնացությունը:

«Պատմագրութիւնն» սկսվում է միջնադարյան ուղեգրու-

քյուններին հատկանշական ձևով. «Քանզի զկարօտութիւն գոր ունէի ի մանկութենէ իմմէ՝ որ վասն սրբոց արքոռոց և ևս վասն Հայաստան երկրի վանորայից և ուխտատեղաց, շնորհեաց Աստուած անարժան անձինս»⁸: Երուսաղէմում ուխտ կատարելուց հետո՝ Կրետացին մտածում է ի կատար ածել իր ցանկությունը՝ այցելելով ս. Էջմիածին և ս. Կարապետ. «Իսկ ի թուին ՌՃՁԳ. (1734) և ապրիլի ԻԷ (27) չուեցի ի Թրակիոյ՝ զնալ ի սուրբ Էջմիածին և ի Տարօն՝ ի սուրբ վանքն Գլակայ, որ յանուն սուրբ Կարապետին է կառուցեալ ի սրբոյն Գրիգորէ՝ մեր Լուսաւորչէ: Որ և ի Ճ (100) օրն հասանք սուրբ Էջմիածին աշխարհաբոյժ տաճարն օգոստոսի Գ. (3) տն շաբաթ. երրորդ ժամու» (անդ): Այս ուխտագնացական սկզբին, որով զրկած են նախորդ դարերի գրեթե բոլոր ուղեգրությունները, հաջորդում է դարաշրջանի պատմական ու քաղաքական պատկերի ճշմարտացի արտացոլումը, որի շնորհիվ երկը դառնում է պատմական՝ դուրս գալով ուղեգրության սահմաններից: Կրետացին գալիս-հասնում է ս. Էջմիածին, որ հանդիպում է կաթողիկոս Աբրահամին: Նրա հետ և առանց նրա մեր հեղինակը ուխտ է կատարում Խոր-Վիրապում, Գեղարդում, Գետարգելում, Հովհաննավանքում, Մաղմոսավանքում, Ուշիի ս. Սարգիսում, Մուղնու ս. Գևորգում, Օշականում և այլ սրբավայրերում: Այնուհետև կաթողիկոսի մահանալն ու իր ս. Աբրովին նստելը նկարագրելուց հետո Կրետացին պատմում է Նաղիբ շահի հետ հանդիպումների, նրա՝ թուրքերի դեմ մղած ճակատամարտերի ու արշավանքների, զանազան պատմական դեպքերի մասին, որոնց ինքը ակամատես է: Այս ամենի հետ միասին հեղինակը խոսում է նաև իր մասին, ինչը երևում է հենց քեկուզ երկի վերնագրից և վերջին գլխի մի նախադասությունից. «Այլ այսբան գրեցաւ զի ցանկացողը՝ առ ի յիմանալ զանցս և գորպիսութիւնս սուրբ արքոռոյս և զիմ, ահա այս ճշմարիտ պատմութենէս վերահասու լիցի և զովասցի»⁹: Իրավացի է Մ. Աբեղյանը, երբ գրում է. «Այդ պատմությունն իսկապես պատմություն չէ, այլ անձնական հիշատակարան (memoires), և իբրև այդպիսին՝ մեր պատմության մեջ մի առանձին տեղ է բռնում և, կարելի է ասել, եզակի է իր տեսակի մեջ, քանի որ մեզանում պատմական հիշատակարաններ շատ չկան: Աբրահամն այն է մանրամասն արձանագրում, ինչ որ ինքն արել ու գործել է, կամ մտածել է: Շատ քիչ բան՝ ուրիշներից լսած: Հենց այդ պատճառով ևս Աբրահամի հիշատակարանը շատ հետաքրքիր է, նա ուրիշներին նկարագրելով հանդերձ՝ դարձյալ ավելի ինքն իրեն է նկարագրում, յուր

ճաշակը, հասկացողությունները, առաքինություններն ու արխությունը, բայց նա ինքն իրեն նկարագրելով՝ նկարագրում է միանգամայն և ժամանակի ընտիր հայ եկեղեցականներին, որոնց լավագույն օրինակներից մեկն էլ ինքն է»¹⁰:

ԹԸ դարում ուղեգրության հեղինակ է դարձել Հովհաննես Տրապիզոնցին (Տերմանուկյան Հովհաննես Եպիսկոպոս) 1762-1763 թվականներին: Դա ըստ էության նամակ է՝ գրված Բենգալիայում և ուղարկված Շամախեցի Հակոբ կաթողիկոսին. «Թուղթ ի Հնդկաց կողմանցն նոյրակ Տրապիզոնցի զՅօհաննէս վարդապետին գոր գրէ առ շամախեցի զՅակոբ կաթողիկոսն...»: Այստեղ հեղինակը նկարագրում է իր՝ Հնդկաստան կատարած դիպլոմատից ճանապարհորդության մանրամասները: Թուղթը տպագրվել է 1857-ին «Բազմավէպում» (թիվ 3): Հայ-հնդկական հարաբերությունների ուսումնասիրողին ծանոթ չէ այս հրատարակությունը, ուստի նա, խոսելով Հովհաննես Տրապիզոնցու մասին, հղում է Երևանի Մատենադարանի թիվ 618 ձեռագրին (Էջ 82ա-86բ) և գրում. «Աշխատանքը հրատարակված չէ»¹¹: Նույնպես և «Անտիք Կարբեցի Ծաղիկեան «Մտորագրութիւն ճանապարհորդութեանց»» (գրված 1835-36 թթ.) հրատարակման (տպագրության պատրաստեցին Ռ. Աբրահամյանը և Փ. Անթափյանը) ներածականում նշվում է միայն Երևանի Մատենադարանի 618 ձեռագիրը, որտեղ պահպանվել է «ոմն Տրապիզոնցու» թուղթը¹²: Հովհաննես Տրապիզոնցու ինքնությունը պարզ չէ: Նրա անունը չկա նույնիսկ Հր. Աճառյանի «Անձնանունների բառարանում»: Գիտենք միայն, որ եղել է Էջմիածնի վանքի վարդապետ (ըստ «Բազմավէպի»՝ Եպիսկոպոս) և Հնդկաստանում Էջմիածնի նվիրակ: «Բազմավէպի» հրատարակության փոքրիկ առաջաբանում կարդում ենք. «Հնդկաստանէն Էջմիածին դարձած առեն (1763-ից հետո, - Ա. Ս.) հոն (Էջմիածնում, ուր ուղարկել էր Բենգալիայում գրված նամակը, - Ա. Ս.) իր թուղթը կառնէ դարձեալ ու բովը կը պահէ: Հիմա այս թուղթը մեր մատենադարանը կը գանուի, ոսկից որ առած անփութիս կը հրատարակենք»¹³: Սակայն մինչև նամակը կիսաներ Էջմիածին, որտեղից էլ Վենետիկ, այն ընկել է Եփրեմ արեղայի ձեռքը, որը և ընդօրինակել է: Դա էլ Երևանի Մատենադարանում պահվող 618 ձեռագիրն է: Այսպիսով ինքնագիր օրինակը Վենետիկում է, իսկ Երևանում՝ դրա ընդօրինակությունը:

Հովհաննես Տրապիզոնցու մեկ այլ նամակ՝ գրված Պոլսում և ուղարկված տեր Ղազարին, ունի 1770 թվականի գրչություն: Սա նախորդի բովանդակության կարճառոտ վերաշարադրանքն է («Բազմավէպ, 1884, սարքիլ, մայիս, հունիս, 116-117):

Հովհաննես Տրապիզոնցու առաքելությունը սրբազան մեռոնի փոխադրումն էր Հնդկաստան: Թղթում մեռոնի գորությանն է վերագրվում իրենց ազատվելը, անպատմելի փորձությունների հաղթահարումը: Ուղեգրության մեջ բացակայում են այցելավայրերի նկարագրությունները. ամբողջ գրվածքը ճանապարհորդների անօրինակ տառապանքներին ու կրած դժվարություններին է վերաբերում: Ուղեգրությունը հատկանշվում է հետաքրքրաշարժ դիպաշարով, իրադարձությունների կարուկ զարգացումով: Այս հատկանիշները գրվածքի ընթերցանությունը դարձնում են շատ կողմերով հետաքրքրական ու գրավիչ:

Թղթի և ուղեգրության տեսակների գուգորդման երևույթին հանդիպում ենք մաև 1794-ին գրված ու «Ազդարարի» էջերում տպագրված Պետրոս Հարությունյանի և Խաչիկ Ծատուր Զարիֆյանի գրվածքներում: Դրանք «Ազդարարի» խմբագիր «Սրբակոն Տէր Յարութիւն Ծնածոնեանին» հղված նամակներ են, որոնցում հեղինակները նկարագրում են իրենց գլխով անցած դիպվածներն ու արկածները նավի վրա, ծովային ճանապարհորդությունների միջոցին: Ինչպես Հովհաննես Տրապիզոնցու «Թղթում», այս գործերում ևս բացակայում են այցելավայրերի ուղեգրական նկարագրություններ. պատումները զարգանում են տեղից տեղ՝ ուղևորների անցումների մասին հաղորդումներով և արկածային դեպքերի ծավալմամբ: Այս երկու կարճ գործերը հետաքրքիր են մեկ այլ տեսակետից. դրանց հեղինակները հայ միակ ուղեգիրներն են, որ հրատարակված տեսել են իրենց գրվածքները: Եվ ընդհանրապես, սրանք հրատարակված առաջին ուղեգրական երկերն են:

Արկածային դրվագներով հագեցած է մաև Հովհաննես Թովմաճանի Ուղեգրությունների հյուսվածքը: Դրանցում կարելի է գտնել ուշագրավ տվյալներ այցելավայրերի բնության, ժողովուրդների, նրանց սովորույթների ու հավատալիքների, նշանավոր մարդկանց հետ հեղինակի հանդիպումների մասին: Հովհաննես Թովմաճանը (Թովմաճանեան) 74 տարեկան հասակում, 1790-ին ավարտում է իր հարուստ կյանքի մանրամասներն ու արտասովոր քափառումների ողիսականը պարունակող ինքնակենսագրության մեծաղիր (527 էջ) հատորի շարադրումը: Արդեն այն հանգամանքը, որ Թովմաճանը ճամփորդել է Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի երեսուն «փնքնիշխան պետություններում ու թագավորություններում», ասում է, որ գործ ունենք շատ բան տեսած ու բանիմաց մի ուղեգրի հետ, որի հարուստ կենսափորձն-խկ ասելիքի առկայություն է ենթադրում: Կենսագրականը շարադրված է տեսակի պահանջներին «խորք» մի սկզբունքով. գործողությունները պատմվում են ոչ թե առաջին, այլ երրորդ դեմքով: Ինքնակենսագրության «Առաջաբանութեան» մեջ

հեղինակը փարատում է ընթերցողի կասկածները՝ հայտնելով, որ չնայած երրորդ դեմք ունեցող պատումին, կենսագրության «հերոսը»՝ անվանյալ Թովմաճան, ոչ այլ ոք է, քան հենց ինքը: Իսկ թե ինչ պատճառով է նա «վիտխել դեմքը», այդ մասին անորոշ է արտահայտվում. «Ուստի և նա... սկսաւ գրել երրորդ դիմաւ վասն նկատմանց ոմանց, ուրեմն ընթերցողք մի կարծեսցին թէ այլ ոք է որ պատմէ զմանէ, այլ ինքն Թովմաճանն է գրեալ զամենայն, որ և այսու պարզ և անճոռնի շարադրութեամբն յայտ առնէ ինքն զովն, որպէս և այս առաջարանութիւնն իւրն է, բայց երրորդ դիմաւ խօսի»¹⁴: Այդ ծավալուն կենսագրությունից «Բազմավէպ» հանդեսում Հ. Եղիա Փեչիկյանի առաջարանով հրատարակվել է երկու հատված, որ ինքնին ուղեգրություններ են: Մեկը վերաբերում է Թովմաճանի՝ Հաբեշտան կատարած ճամփորդությանն ու այդ երկրում արքունի զանձապետի պաշտոնի բերումով մնալու տարիներին¹⁵, իսկ մյուսը՝ Փարիզ այցելության նկարագրությունն է¹⁶: Սրանցից պատմագիտական առումով ավելի արժեքավոր է առաջինը, որտեղ մեծ չափով անդրադարձ են ունեցել հաբեշ ժողովրդի բարբերին, կենցաղին ու սովորույթներին վերաբերող հետաքննելի մանրամասներ, ինչպես նաև արքունիքի, հատկապես զանձապետության պաշտոնի վերաբերյալ ուշագրավ դիտումներ:

1762-ին իր Պողոս որդու հետ ճանապարհորդելով Կոստանդնուպոլսից Եգիպտոս, այնտեղից էլ Կարմիր ծովով դեպի Շիտտե, Աֆրիկա, ապա Հաբեշտան ուղևորները մտնում են Եթովպիայի թագավորանիստ Կեոնտեր քաղաքը: Մինչև Կեոնտեր հասնելը Թովմաճանը Այդո Բիջոյի ուղեկցությամբ լինում է Ատուայում, ուր տեղի փաշա Շզմաթի Միքայելին ներկայանում է իբրև բժիշկ՝ խուսափելով իր՝ վաճառական լինելը հայտնելուց: Այնուհետև Այդո Բիջոն կազմակերպում է Իթակե թագուհու հրավերը և նրանք ընկնում են ճանապարհ: Ատուային նախորդող ճամփակետում՝ Շիտտեում հանդիպելով Թովմաճանին եթովպացի Այդո Բիջոն նրան ու իր որդուն հրավիրել էր Կեոնտեր՝ սուտ հավաստիացնելով, որ Թովմաճանի ակնեղենը այնտեղ լավ գին կունենա: Ինչպես պարզվում է հետո, եթովպացիները ընդհանրապես քանկազին քարեր չէին գործածում: Փոխարենը Թովմաճանին թագուհին նշանակում է պալատական զանձապետ: Ահա այս դրվագի գործողությունների զարգացման կարճ վերաշարադրանքը:

Պատմելով հաբեշների՝ հում միս ուտելու մասին, հեղինակը գրում է. «Եւ աստէն դիցուք զպատճառն հում միս ուտելոյ մոցա թէ ուտի իցէ յառաջացեալ պաշտմեսցուք. այլ ես զկերպն սեղանոյ հացին»¹⁷: Թովմաճանը այդ նպատակով հետադարձ հայացք է ձգում դեպի 1540

թվականը, այսինքն իր՝ այնտեղ գտնվելու ժամանակից (1765) 225 տարի առաջ, երբ մահմեդական ստորուկները, ապստամբելով հաբեշների դեմ, փախուստի են մատնում նրանց և հապեշները «... փախստեայս լինէին ի ծերպս և ի բարանձաւս ի մեծ ահէ և յերկիրդէ մահմեդականացն ի գիշերի և ի տուրնջեան, զի ոչ կարէին լուցանել գետր առ ի պէտս կերակրոյ. վասն զի ի տուրնջեան ի ծխոյն, և ի գիշերի ի լուսոյ հրոյն երկնչէին. զի ի տեսանելն տաճկաց զծովսս կամ զլոյսն հրոյ՝ յողի անկեալ զնացեալ սպանանէին: Ուստի և այս փախստական հապէշք սկսան զմիսն հում հում ուտել և ահա յայսմ պատճառէ մնացեալ է հում ուտելն հապէշին, որպէս ինքեանք խոստովանեցան» (անդ): Հեղինակը շարունակում է պատմական դէպքերի հետագա զարգացումը՝ բավական մանրամասն նկարագրելով հաբեշ ժողովրդի ազատագրական պայքարի դրվագները¹⁸: Այնուհետև անցնում է հաբեշների «զկերպն սեղանոյ մեծամեծացն»: Այստեղ հետաքրքիր տեղեկություններ կան հաբեշական կերակուրների, համեմունքների, գինու, նրանց պատրաստման եղանակների մասին:

Ուղեգրության բովանդակային ընդգրկման շրջանակները բավական լայն են: Նրանում իրենց արտացոլումն են գտել հաբեշների կենցաղավարությունը և բարքերը, դավանանքն ու եկեղեցական կարգերը, բնակիչների հագուստի կերպը, ոսկու արդյունահանումը, առևտուրը և այլն: Հատուկ ուշադրություն է դարձնում ուղեգիրը նաև Հաբեշստանի կենդանական աշխարհի պատկերմանը: Ահա մի հատված, ուր հավանաբար հեղինակը գրում է գետածիերի մասին. «Այլևս ի լիճս յայս գոն բազում գոմէշանման չորքտանի մեծ կենդանիք, բայց զեղջիր ոչ ունին. սերնդագործեն ի ցամաքի՝ ելեալ ի ջրոյ ի վերայ հողոյ, և յայնժամ ի թաքստի կացեալ որսորդքն հրացանի հարկանեն զնա ի բազում տեղիս և ընդ անկանելն զնան և մորթեն զնոսա, և հանեն զմորթն, որ չորս մատնաչափ թանձրութեամբ է, յորմէ կազմեն զվահանն: Քանզի յետ չորացուցանելոյ զնա մի մատնաչափ թանձրութեամբ մնայ, յայնժամ ոչ սուրն հատանէ զնա, և ոչ հրացանի արճիճն անցանէ ընդ այն»¹⁹:

Հովհաննես Թովմաճանը երկրորդ անգամ, Հովհաննես Թութունջուց ավելի քան մեկ դար հետո նկարագրում է Նեղոսի ակը կազմող լիճը (Թութունջին կոչում է ծովակ): Թովմաճանը գրում է լճի կղզիների մասին. «Եւ դարձեալ, չորս ժամաւ հեռի ի Կեօնտէրէ մեծ լիճ մի գոյ, որ է մայրն և սկիզբն Եգիպտացոց Նեղոս-Նիլ մուպարեկ-գետոյն, և գոն բազում կղզիք ի լճի անդ, որոց ոմանք ճգնաւորաց վանք են և ոմանք կուսանաց վանք, և նաւակքն որով զնան ել և մուտս առնեն՝ եղեգնեայ են» (անդ):

Անշուշտ հետաքրքրական են նաև հաբեշական եկեղեցիների, այլևայլ շինությունների նկարագրությունները, որոնք բացակայում են

ԺԷ դարում Եթովպիան նկարագրող ուղեգիրքների երկերում: Հովհաննես Թովունցի, Ավետիք Տիգրանակերտցի և Հովհաննես Թովմաճան: Սրանց ուղեգրությունների համեմատությունը կարող է երևան բերել շատ ընդհանրություններ ու տարբերություններ, որոնք պայմանավորված են պատկերման նյութով: Ինչ խոսք, հետաքրքիր է տեսնել թե միևնույն երևույթը ինչպե՞ս են նկարագրել տարբեր ուղեգիրքները, ինչն են համարել գրելու արժանի, ինչը՝ անկարևոր, երկրորդական և այլն: ԺԷ դարի՝ հարեշական թեմայով գրված ուղեգրություններից ներկա գործը շահեկանորեն տարբերվում է իր ստուգությամբ, անտեղի չափազանցումների ու առասպելական պատմությունների չգոյությամբ: Այստեղ չկան հորինովի, անհավանական հանգամանքներ, ամեն ինչ իրական է ու ճշմարտաման: Թովմաճանի ուղեգրության մեկ այլ տարբերիչ գիծը գրվածքի լեզուն է, որ, ինչքան էլ պարզ ու անպաճույճ, ապահովում է բարձր մակարդակ:

Հաջորդ հատվածը, ինչպես վերևում ասացինք, վերաբերում է 1769-ին հեղինակի՝ Վերսայում ունեցած հանդիպումներին Լյուդովիկոս ԺԵ քագավորի և նրա մախարաբապետի հետ: Գրեթե ամբողջ հատվածը գրված է տրամախոսությունների ձևով, քիչ տեղ է բռնում զուտ հեղինակային խոսքը: Ահա Վերսայի նկարագրությունը, որ արված է միջնադարյան ուղեգրություններին բնորոշ ավանդույթներով. «Ձայս ամենայն տեսեալ Թովմաճանի, յոյժ գնայլեցաւ առ այն մեծակառոյց եւ պերճապատում պալատն եւ զգեղեցկութիւն կարգի եւ համեմատութեան պարտիզացն, որ ոչ կարեն գրով բացատրել Չեզ ասէր. եւ գոր ոչ որ կարէ գրով բարեպէս իմանալ եւ պատկերակերպիլ, մինչեւ ոչ զնացեալ անձամբ տեսցէ զամենայն. վասն զի հիմանալի ինչ է այս Վերսայիա եւ արժանի տեսութեան ամենայն իմաստոնոց եւ հանճարեղ անձանց, ահա այսքան կարեն գովեր»²⁰:

Թովմաճանը այցելում է նաև Կիլիկիայի Լևոն վերջին քագավորի գերեզմանին՝ այդ մասին գրելով այսպես. «Եւ մտեալ ի կառան զնացին ի Սան Սելաստան եւ գոին գերեզման որ էր Վեցերորդ Լեւոն եւ վերջին քագատորն Հայոց 1393 թուի Փրկչին...»²¹:

Հովհաննես Թովմաճանի այս երկու Ուղեգրությունները, ինչպես նաև հավանաբար իր կենսագրական ձեռագիր հատորի այլ ուղեգրական հատվածները, որոնք մեզ անմատչելի են, նոր գծեր են ավելացնում հայկական ուղեգրապատումին, այն հարստացնում նոր երանգներով ու գույներով:

ԺԸ դարում է գրվել նաև Պասմաճյան Գրիգոր պատրիարքի «Յիշատակարանը», որը ընդարձակ ծանոթություններով հրատարակել է Բաբգևն Ծ. Վ. Կյուլեսերյանը Փարիզում²²: Այն ընդգրկում է հեղինակի ինքնակենսագրությունը և նամականին: Պոլսի Անտոնյան Մատենա-

դարանից հանված ինքնագրերը, ինչպես գրում է Բ. Կյուլեսերյանը, - «կանոնադր կերպով գրուած օրագրութեան մը մնացորդներ են, մանաւանդ առոնց Ա. մասը ուրիշ բան չհաստատեր: Պասամաճեան Պատրիարք իր դժբախտութիւններն ու արկածները զրի առած է, անշուշտ, ցոյց տալու համար թէ ինչ զօրատր և բանատր պատճառներու տակ՝ ինքը իբր հալածական եւ բարբարոսական՝ Արևմուտք անցաւ եւ մնաց հոն մինչև իր վերջին շունչը» (էջ 5): Ուղեգրական բնույթ է կրում Արևմուտք անցնելու մասին դրվագը (էջ 34-36): Դա ընդգրկում է հեղինակի կյանքի մեծ շրջանում՝ 1773 թվականից մինչև 1784-ը կատարված ճանապարհորդությունները: Հեղինակը պատմում է, թե ինչպես, 1773-ի վերջին գալով Կոստանդնուպոլիս և այնտեղ մնալով 10 ամիս, Սկյուտարից գնում է Կիպրոս, ուր 1774-ի հոկտեմբերից մինչև հաջորդ թվի սեպտեմբերը զբաղեցնում է տեղի Առաջնորդարանի աթոռը: Այնուհետև՝ «Բայց ի յայն միջոցին ուղղեցաք եւ հաստատեցաք զմիտս մեր առ ի դիմել դէպ առ յարեւմուտս, ուր Տէր առաջնորդեսցէ» (էջ 34): Այստեղից նավամուտ լինելով՝ հասնում է Վենետիկ, ուր մնում է հինգ ամիս: Այնուհետև նրան հրավիրում են Հռոմ, «վասն որոյ դիմեցաք եւ զնացաք եւ հասաք առ ցանկալին ամենայն ազանց քրիստոնէից» (էջ 35): Պասամաճյանը նկարագրում է այն բարեգործությունները, որոնցից օգտվում էին Հռոմում օքլանած օտարականները. «Ուստի ի ժամանելն մեր անդ զբազում ընդունելութիւնս, բազում մխիթարութիւնս, բազում գթութիւնս եւ բազում ողորմութիւնս տեսաք եւ վայելեցաք թէ ըստ հոգեկանին եւ թէ ըստ մարմնականին, զի յիրաւի ճշմարիտ վարդապետք եւ աշակերտք զնորին ստետարանական քաղցր վարդապետութեանն զի ըստ բանի տէրունականի ետուն հացս առ քաղցեալս եւ ջուր առ ծարաւեալս, ժողովելով զօտարացեալս եւ զզեցուցանելով զմերկացեալս այցելու եւ տածօղբ լինելով հիւանդացելոյս եւ տեսանօղբ բանտարկեցելոյս, եղին դեղս վիրաւորեցելոյս, որ ի հոգի եւ ի մարմին» (անդ):

Սիմեոն Լեհացու մման համեմատելով ֆռանկներին հայերի հետ՝ Պասամաճյանը այն համոզմունքն է հայտնում, որ առաջինները իրենց բարեպաշտությամբ, անկեղծ սիրով, խնդությամբ և խաղաղությամբ կարող են ժառանգել Աստծո արքայությունը, ի տարբերություն իր որոշ հայրենակիցների, որոնք կրծում են միմյանց թշնամությամբ և երկպառակությամբ (էջ 35): Մնալով Հռոմում ինը ամիս՝ Պատրիարքը Պասպից խնդրում է տեղափոխվել ծովեզերքի մի քաղաք: 1777-ի ապրիլին գալով Անտոնա՝ այնտեղ մնում է վեց ապրիլ, որից հետո «... խնդրեցաք ի վեհագունիցն, զի առնիցեմք զբնակութիւն մեր ի Վենետիկ»:

Դրա պատճառն այն էր, որ Պասամաճյանը նեղություն էր կրում լատիններենի չիմացությունից և զրկվում ժամերգություններից: 1782-ին մտնելով Վենետիկ՝ նա բազում մխիթարության ու բարիքների է արժանանում

հատկապես Մխիթարյան միաբանների կողմից: Դա հայկական ուղեգրություններում Մխիթարյանների առաջին հիշատակությունն է. «... Ի գալն եւ ի ժամանելն մեր աստ (Վենետիկ, - Ա. Ս.) բազում մխիթարութիւնս ունեցար ի մերայնոց եւ ի յայլոց մանաւանդ ի վանքեցոց հայոց, որք բնակին ի վանքն սրբոյն Ղազարո. այսինքն ի լուսահոգի Աբբայի Մխիթարի եւ ի նոյն Մխիթարն լուսահոգոյն կրօնաւորացն բոլորից եւս առաւել ի ներկայ եղեալ Ստեփաննոս Հայր Աբբայն Կոստողնուպօլսեցոյն» (էջ 36): Հեղինակը իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում միաբաններին և մաղթում. «... Տէր կեանս տացէ. զմիաբանութիւնս եւ զկրօնս նոցին հաստատունս պահեսցէ ի պարծանս ազգին մերոյ» (անդ): Երկու տարի անց՝ 1784-ի մարտին, Պասմաճյանը ծանր հիվանդություն է ունենում. «Բայց ի ձեռն դեղօրէից եւ ի ճարտար բժշկաց» բժշկվում է տանջող ցավերից: Այստեղ ավարտվում է ուղեգրական մասը, որին հաջորդում են հեղինակի խոսքերն ու զգացողությունները, մտահոգությունը առ այն, որ քրիստոնյանները դավանանքով բաժանվել են միմյանցից. «Աստուծօր մեծապէս սրժան է աւաղելն ի վերայ քրիստոնէական կրօնի մերոյ, որ գայս տարածայնութեան սերմն սերմանեցեալ է ի մէջ իւրեանց, որք հեռացեալք եւ օտարացեալք են ի միմեանց. որպէս ոմն ի բաց () ցաի եւ ողբայ եւ զարմանայ ասելով. զարմանամ ասէ որ ի ժամանակն սեղանոջ այլասեռք քրիստոնէայք միաբանեալք ընդ միմեանս բազմին ի սեղան եւ սեղանակիցս լինին, ճաշակեն ի միասին ոչ առնելով զխտրութիւնս եւ այնպէս հրճուին եւ ուրախսանան. բայց ի հոգեւոր սեղանոջն զի՛արդ բաժանին եւ հեռանան ի միմեանց՝ ճաշակելով զաս եւ ուրոյն, փոխելով զնոյն հրճութիւն իւրեանց ի տխրութիւնս, զտէրն՝ ի յատելութիւնս, ուրախութիւնս՝ ի տրտմութիւնս, զցնծութիւն սրտից իւրեանց՝ ի սուգ, զմիաբանութիւնս՝ ի յանմիաբանութիւնս, զընտանութիւնս իւրեանց՝ ի յօտարութիւնս, պախարակելով զմիմեանս, խոցոտելով զսիրտ եւ զհոգի եւ անգոսնելով զկրօնս եւ զպաշտօնս եւ այլս թէ սկսին մատուցանել Աստուծոյ զաղօթս եւ զփառաբանութիւնս» (էջ 36-37):

Գրիգոր Պասմաճյանի ինքնակենսագրության այս դրվագով ավարտվում են ԺԸ դարի ուղեգրությունները: Ինչպես տեսանք, այս հարյուրամյակում ուղեգրության տեսակը այնքան էլ ճոխ վիճակ չի ներկայացնում: Հովհաննես Թովմաճանի, Գրիգոր Պասմաճյանի և Աբրահամ Կրեւացու ուղեգրությունները մաս են կազմում ծավալուն ինքնակենսագրական կամ պատմական երկերի: Հովհաննես Տրապիզոնցու «Թուրքը» և «Ազդարարում» հրատարակված ուղեգրությունները գրվել են նամակների ձևով, ուստի նրանցից դուրս են մնացել այցելավայրերի ամենատարբեր նկարագրությունները, որոնք թղթի տեսակի պահանջներին չեն համապատասխանում: Մինչդեռ մեզ այդ նկարագրություններն են առաջին հերթին հետաքրքրում: Մաքուր ուղեգրական ստեղծագործություն է փաստորեն միայն Ջուսար Բահանայի գրվածքը:

Հիշված ուղեգրությունները կազմում են հայ միջնադարյան ուղեգրապատումի չորրորդ շրջանը: Այս շրջանում նախապատրաստվում է անցումը դեպի ուղեգրության նոր՝ գեղարվեստական տարրերով առավել հագեցած տեսակը, նյութը դարձյալ գերազանցապես մնալով կրոնական, միաժամանակ ազատվում է մատուցման ավանդական ձևերի կապանքներից: Իր ավարտին է հասնում ուղեգրությունների միջնադարյան տիպը: ԺԹ հարյուրամյակում ուղեգրությունները ձևոր են բերում ավելի լայնշունչ բովանդակություն, մեծ չափով կրում են գրողների անհատականության կնիքը: Դարի ուղեգրություններից կարելի է առանձնացնել Խ. Աբովյանի, Մ. Թադիադյանի, Մ. Բժշկյանի, Բաֆֆու, Գր. Արծրունու, Ս. Ջալալյանցի, Մ. Միրախոբյանի, Գ. Սրվանձտյանցի, Ե. Տևկանցի, Բ. Սարգիսյանի և այլոց ստեղծագործությունները: Երբ թերթում ենք ԺԹ դարում լույս տեսած մամուլի օրգանների էջերը, հանդիպում ենք ուղեգրական նյութերի արտակարգ առատության: Նույնը կարելի է ասել մեր դարի վերաբերյալ: Գրեթե չկա մի արձակագիր կամ բանաստեղծ, որ ուղեգրություն հեղինակած չլինի:

Այսպիսով, ուղեգրության տեսակի լինելության ճանապարհին մենք առանձնացրինք հինգ շրջան: Առաջին շրջանը ուղեգրության տեսակի նախնական վիճակն է արտացոլում, երբ դեռևս տեսակը մշակված չէր: Այն չէր սահմանազատվել մյուս տեսակներից և ձևոր չէր բերել իր կայուն հատկանիշները: Այս շրջանում, որ տևում է մինչև Մարախոս Երզնկացի, հիմնականում գրվում են ուղեցույցներ, որոնք պարունակում են չոր ու կարճ նկարագրություններ, գրված են որպես ցանկեր կամ ցուցակներ: Ուղեգիրը սակավ դեպքերում է մանրամասնություններ հաղորդում: Նա ուղղակիորեն չի նշում, որ ինքը եղել է այդ վայրում կամ լավագույն դեպքում նշում է մեկ նախադասությամբ:

Ուղեցույցներից բացի այս շրջանում գրվել են նաև ուղեգրական հատվածներ, որոնք առանձին, ինքնուրույն գործածության արժեք չունեն և կազմում են ուրիշ տեսակների (պատմագրություն, ճառ) պատկանող երկերի մաս: Երկու դեպքում էլ ուղեգիր-հեղինակի «ներկայությունը» չի երևում: Այդ երկերի բովանդակությունը սահմանափակ է: Գերիշխում է կրոնական թեման: Լեզուն գրարար է, թևկուզ պարզ: Երկու դեպքում էլ այդ գործերը հատկանշվում են նկարագրությունների չոր շարադրանքով և հեղինակային վերաբերմունքի խստա չզոյությամբ:

Հաջորդ՝ երկրորդ շրջանում, ինչպես ցույց տվեցինք, տեսակը սկսում է զարգանալ և՛ ձևային, և՛ բովանդակային մակարդակներում: Նախ առանձնանում է մյուս տեսակներից, դառնում ինքնուրույն տեսակ: Նաև որոշակիորեն կայունանում է ուղեգրության կառուցվածքը, հորինվում են մի շարք նոր կաղապարային ձևեր: Ուղեգիրներին արդեն հուզում ու հետաքրքրում են այցելած քաղաքների հետ կապված այլևայլ

մանրամասներ: Չնայած գերիշխողը դարձյալ մնում է կրոնական քեմատիկան, բայց առավել լայնանում է ուղեգիրքների հետաքրքրության դաշտը: Ուստի այս շրջանի ուղեգրություններում ավելի հաճախադեպ են գրական մշակված ձևերը, խոսքի արտահայտման հիշվող, ապավորիչ համեմատություններով հատկանշվող միջոցները: Ուղեգրությունները դառնում են առավել ամբողջական, առավել կատարյալ: Մինչև ժէ դարակիզբը տևող այս շրջանում մենք արդեն ունենք ուղեգրության այն ձևը, որը նվազ փոփոխություններով շարունակվում է ողջ ուշ միջնադարում:

Այս երկու շրջանները բարեբար հող նախապատրաստեցին ժէ դարում տեսակի անօրինակ բարձր վերելքի համար: Դա ուղեգրության տեսակի զարգացման երրորդ շրջանն է և ընդգրկում է ժէ հարյուրամյակը:

Երրորդ շրջանում ուղեգրությունները գրեթե ձերբազատվեցին սխեմատիկ ձևերից, դարձան առավել բովանդակալից, ինչպես նաև ծավալուն: Ուղեգրական գործերի քեմատիկան ևս կրեց էական փոփոխություններ: Կրոնականի կողքին երևան եկան քաղաքական, աշխարհագրական մոտիվներ: Ուղեգրությունները, հարստացան աշխարհիկ շեշտերով, մոտեցան մարդուն ու բնությանը: Ուղեգիրքները ընդլայնելով նյութի ընդգրկման սահմանները, միաժամանակ նոր կողմերից պատկերեցին իրենց տեսածն ու լսածը: Ամենից կարևոր առաջընթացն այն էր, որ ժէ դարում ուղեգիրքները սկսեցին իրենց երկերում մեծ տեղ տալ անձնական ապրումներին ու զգացողություններին և հուզական վերաբերմունքի արտահայտություններին: Այս շրջանին է պատկանում նաև չափաժող ուղեգրությունների սկզբնավորումն ու զարգացումը:

Ժէ հարյուրամյակում հանդես են գալիս լայն աշխարհայացքով, մեծ դիտողունակությամբ և գրական ձիրքով օժտված մի շարք ուղեգիրքներ, որոնք կատարելագործում են ուղեգրության տեսակը, հասցնում նոր, որակապես բարձր մակարդակի: Դարի լավագույն ուղեգրությունները (հատկապես Լեհացու, Բաջենցի, Թուրունցիի և ուրիշների) դառնում են տեսակի բարձրակետերը: Դրանք ոչ միայն ուշ միջնադարյան, այլև ողջ հայ ուղեգրական գրականության համար մնում են անզերազանցելի բարձրություններ:

Չորրորդ շրջանում, որը ներառում է ժԸ հարյուրամյակը և տևում է մինչև ժԹ դարասկիզբ, ուղեգրության տեսակի զարգացմանը անմիջապես հաջորդում է նկատելի անկման ժամանակաշրջանը, երբ այն որոշ տեղափոխության վիճակ է ապրում: Սա ուղեգրության տեսակի հետընթաց շարժման շրջան է, քեպետ այս փուլում ևս գրվում են միմյանցից ու նախորդ ուղեգրություններից ձևով ու բովանդակությամբ տարբերվող մի շարք գործեր: Մրանցում արդեն նվազ չափով են նշմարվում այն

գծերը, որոնք բնորոշ էին նախորդ շրջանների ուղեգրական երկերին: Աստիճանաբար գործածությունից դուրս են մղվում դասական ուղեգրությունների յուրահատուկ ձևերը, տեսակը սկսում է ձերբագատվել կադապարային որոշ կառույցներից: Չնայած դրան՝ մյուս կողմից շարունակվում են հայկական ուղեգրությունների լավագույն ավանդույթները և ձեռքբերումները: Դա վերաբերում է թե՛ թեմատիկ, և թե՛ կառուցվածքային ու ձևային հատկանիշների պահպանմանը:

Այլ ուսումնասիրության նյութ է ԺԹ և Ի դարերի հայկական ուղեգրությունների քննությունը: Դա կարելի է պայմանականորեն կոչել հինգերորդ շրջան, որի ընթացքում տեսակը գեղարվեստականանում է, ազատվում կադապարային կառույցներից և պարտադրված պայմանականություններից:

Այսպիսով, ուղեգրության տեսակը, ծնունդ առնելով հայ մատենագրության սկզբնավորման հետ մեկտեղ, գալիս-հասնում է մինչև մեր օրերը: Մենք քննության ենթարկեցինք այդ երկար ուղու մի հատված՝ ԺԷ դարի ուղեգրությունները՝ միևնույն ժամանակ խոսելով նախորդ և հաջորդ շրջանների մասին՝ տեսակը իր շարժման և ընթացքի մեջ տեսնելու նկատառումով: Ամփոփելով կարելի է ասել, որ ԺԷ դարի ուղեգրությունները հայ բազմաժանր գրականության մի ուրույն էջն են, հանիրավի մոռացված էջը: Ուղեգրությունները, լինելով տարբեր երկրների ու ժողովուրդների մասին ստույգ վավերագրեր, միաժամանակ բացահայտում են դրանք ստեղծող հեղինակներին, նրանց նախասիրություններն ու ճաշակը, հայացքներն ու աշխարհընկալումը: Այդ պատճառով ուղեգրությունները դառնում են առաջին հերթին գրական ստեղծագործություններ: Որպես այդպիսիք էլ մենք փորձեցինք դիտարկել այդ գրվածքները: Տեղի սղության պատճառով մենք ԺԷ դարի ուղեգրությունները չհամեմատեցինք նույն հարյուրամյակում ստեղծված այլ տեսակների պատկանող (ժամանակագրություն, պատմություն, օրագրություն) գործերի հետ: Դրանցում և ուղեգրություններում տարբեր գրական միջոցներով ամբողջանում է դարաշրջանի ընդհանուր պատկերը: Արտաքին հատկանիշներով ուղեգրությունները ամենից ավելի մոտ են օրագրություններին: Մակայն այդ երկու տեսակների թուղցիկ բաղդատությունն իսկ երևան է հանում մի շարք խորքային տարբերություններ. մինչև ուղեգրողը հմայված ու սքանչացած պատմում է իր տպավորությունները, նոր, իրեն մինչև այդ հիմնականում անծանոթ, օրինակ, քաղաքների ու եկեղեցիների մասին, օրագրի հեղինակին այդ ամենը չի հետաքրքրում: Նա միայն մտածում է իր՝ առևտրականի չոր հաշվի մասին՝ նույն չորությամբ էլ առևտրական ապրանքների ու գործարքների վերաբերյալ գրանցումներ անելով: Նա վաճառական է, ոչ թե ուխտավոր:

Մեր վերլուծության դաշտից դուրս մնաց նաև հայկական ուղեգրությունների ու նույն ժամանակաշրջանի օտար համասեռ գրվածքների համեմատությունը, որը կպարզեր մի շարք ընդհանուր և տարբերիչ գծերի առկայություններ, թույլ կտար տեսակը դիտել ոչ թե մեկուսացած, այլ մյուս ժողովուրդների գրականությունների նույնատեսակ գործերի համապատկերում՝ ի հայտ բերելով, անշուշտ, միասնական մտայնություններ ու սկզբունքներ, որոնցով առաջնորդվել են ուղեգիրները, և կամ որոշակի տարբերություններ, որ վերաբերում են մեծավ մասամբ պատկերման նյութին՝ պայմանավորված ուղեգրի հետաքրքրությունների շրջանակով և կամ ճանապարհորդության նպատակով: Մ. Դարբինյանը, օրինակ, Միմեոն Լեհացու Ուղեգրությունը համեմատել է ֆրանսիական նշանավոր ուղեգրությունների հետ, որ հեղինակել են Տավերնյեն, Դելլա Վալլեն և Դը Արավլեն: Մրանք գրել են միայն այցելավայրերի այն երկվայրերի մասին, որոնք կարող էին հետաքրքրություն առաջացնել վերնախավերում, որի ներկայացուցիչներն էին նաև իրենք: Եթե նրանք Ասիայի երկրներում մարդկանց թշվառությունը բացատրում են, ասենք, բնակիչների ծուլությամբ կամ երկրի անբարենպաստ կլիմայով, ապա Լեհացին նույն երևույթը մեկնաբանում է սոցիալական և քաղաքական պատճառների, թուրքական իշխանությունների կամայականությունների առկայությամբ: Ըստ թարգմանչուհու, «որանում է կայանում Միմեոնի Ուղեգրության և արևմտաեվրոպական ճանապարհորդների հուշագրությունների միջև եղած հիմնական և կարևոր տարբերությունը, և դա հատուկ արժեք է տալիս Միմեոնի աշխատանքին»²³:

Հ. Մահակյանը մատնացույց է անում մի շարք կադապարային ձևեր ու առանձնահատկություններ, որոնք հավասարապես բնութագրական են և՛ հայկական, և՛ ռուսական ուղեգրությունների համար²⁴:

Ուղեգրությունների մեծ մասը, ինչպես միջնադարյան գրականության շատ տեսակներ, եկեղեցական կրոնական ուղղվածություն ունեն: Դրանցում զերակշիռ մասով պատկերված են բարեսպաշտական ուխտագնացություններ: Ուխտավորությունն էլ եղել է հայ ուղևորների ճամփորդության գլխավոր նպատակը: Սակայն զուտ ուխտագնացությունից բացի, նրանք նաև երազել են տեսնել իրենց անհայտ տեղեր, ծանոթանալ նոր ժողովուրդների, հաղորդակցվել անձանոթ քաղաքակրթություններին: Բնականաբար ուղևորության նպատակներին անդրադառնալիս խոսել են միայն ուխտի մասին՝ միտումնավոր մոռացության մատնելով իրենց աշխարհատեսության նպատակները: Այսպիսով, հայ ուղևորները ուխտագնացությանը զուգակցել են նաև աշխարհատեսությունը: Այդ բանը չի վրիպել Ղևոնդ Ալիշանի ուշադրությունից: «Հայ-Աեմետի» Մարտիրոս Երզնկացուն վերաբերող հատվածում մեծ հայագետը գրում է. «Ուխտից հետո՝ զգօն կամ հետաքնին անձինք միացնելին աշ-

խարհատեսութեան փափագն. այս այլ յատուկ բնատրոփին մ' է և պետք էր ըլլալ՝ մեր ազգայնոց, որ ի մէջ ազգաց՝ թէ ոչ առաջին աշխարհաշրջիկ կամ աշխարհաքաղաքացի կրնան ըսուիլ, այլ ոչ և երկրորդ: Այս երկու դիմումներն յորդորեր է Բարձր Հայոց արդէն ուխտաշատ Եզրնկայ գաւառին մէկ ուխտատեղոյ Եպիսկոպոսն Մարտիրոս, երկար ժամանակ և երկար ճամբորդութիւն ընել յԵրուսայ, 1491-7 տարիներու միջաց»²⁵: Այս խոսքերի քիչուներում Լեւհացու, Բաջենցի, Թուրունջիի և այլոց ուղեգրություններն են:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

- 1 Միմենոն Լեհացի, Ուղեգրություն, քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մաղոյանի, Եր., 1997, էջ 5:
- 2 Վ. Նալբանդյան, Միջնադարյան ժամերի սահմանման ճանապարհին, «Սովետական գրականություն», 1985, 4, էջ 133:
- 3 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Եր., 1961, էջ 39:
- 4 Անդ:
- 5 Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, Եր., 1969, էջ 20:
- 6 Ա. Մաղոյան, Միջնադարյան հայկական պոեմը, Եր. 1985, էջ 5:
- 7 Անդ:
- 8 Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Եր., 1980, էջ 341-343:
- 9 «Տեղեկագիր», 1957, ք. 6, էջ 103:
- 10 «Միմենոն դպրի Լեհացույ Ուղեգրություն, Տարեգրություն և Յիշատակարան», աշխատ. Ն. Ալիմեանի, Վիեննա, 1936, էջ 10:
- 11 «Սովետական գրականություն», 1985, 4, էջ 133:
- 12 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Եր., 1951, հ. 1, էջ 14:
- 13 Տե՛ս Сборник "Восточные источники по истории народов юго-восточной и центральной Европы", М., 1964, стр. 253-261. և Միմենոն Լեհացու՝ իր քարգմանության առաջաբանը ("Симеон Лехаши, Путевые заметки", стр. 10-30):
- 14 "Армянская и русская средневековые литературы", Ереван, 1986, стр. 357-374
- 15 «Բանրեր Երևանի համալսարանի», 1991, 3, էջ 20-28:
- 16 В. С. Налбандян и другие, Армянская литература, М., 1976* с. 127-128:
- 17 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4-րդ, Եր., 1972, էջ 500-502:
- 18 Հայ միջնադարյան գրականություն, Եր., 1986, էջ 109 և 147:
- 19 Գ. Արզարյան, Մատենադարան, Եր., 1962, էջ 35-36:
- 20 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Երևան, 1961, էջ 55-72:
- 21 Sluszkiewicz E., Relacja Ormianina polskiego Simeona o podrozy na Wschod, Zjazdy orientalistow polskish, III-IV, Wilno, 1934, str. 59-60:
- 22 Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 512-514:
- 23 Բ. Բարսեղյան, Լեհահայության մշակութային կյանքն ու գրականությունը XIV-XIX դարերում, Եր., 1992, էջ 264-278:
- 24 Я. Р. Дашкевич, Армянские колонии на Украине в источниках и литературе XV-XIX веков (исторический очерк) Ер. 1962, с. 51-54.
- 25 Միմենոն Լեհացի, Ուղեգրություն, քարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մաղոյանի, Եր., 1997:

Գ.ԼՈՒԻՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՄԱԿԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱՍԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

- 1 Տե՛ս «Արար», 1995, 1, էջ 30:
- 2 «Պատմա-բանասիրական հանդես», 1970, 3, էջ 125: Տողատակի ծանոթության մեջ այդ ուղեգնացներից ներկայացվում են Միմենոն Սրանչեկագործ Հայը (956-1026), Դավիթ Հայ-

- կազմը (1000-1050) և Լևոն 5-րդ արքան (1342-1393):
- 3 Տե՛ս «Բազմավեպ», 1937, քիւ 2-5, էջ 51-52:
- 4 «Պատմա-բանասիրական հանդես», (այսուհետև՝ ՊԲՀ), 1970, 3, էջ 125:
- 5 **В. С. Налбандян** и другие, *Армянская литература*, М., 1976, с. 127.
- 6 Ս. Պ. **Հայրապետան**, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւն, Երեւան, 1994 (երրորդ հրատարակություն), էջ 600:
- 7 Հայ միջնադարյան գրականություն, Վ. Նալբանդյան, Վ. Ներսիսյան, Հ. Բախչինյան, Երևան, 1986, էջ 147:
- 8 Հ. Բախչինյան, Ս. Սարիճյան, Հայ գրականություն, Եր., 1993, էջ 148:
- 9 Տե՛ս Բ. Բարսեղյան, Լեհահայության մշակութային կյանքը և գրականությունը XIV-XIX դարերում, Եր., 1992, էջ 264:
- 10 «Միմե՛տոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն...», Վիեննա, 1936, էջ ԼԷ:
- 11 Տե՛ս Գ. Աբգարյան, Հայտոն Հայի «Արևելքի պատմության ծաղկաբաղը» միջնադարյան Իսլամիստի, «Արարս», 1996, 2, էջ 80:
- 12 Հերո՛ւմ պատմիչ, Պատմութիւն Թարարաց, Վնու., 1842, էջ 3:
- 13 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4-րդ, Եր., 1972, էջ 500:
- 14 **А. С. Саакян**, “Путевые заметки” Симсона Лехаши (сб. “Армянская и Русская средневековые литературы”, Ер., 1986, с. 358).
- 15 Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Եր., 1961, էջ 55:
- 16 “Армянская и Русская средневековые литературы”, Ер., 1986, с. 358.
- 17 «Սովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց», աշխատ. Ս. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տիպիս, 1913, էջ 345:
- 18 Հոմե՛րոս, Ողիսական, հին հունարենից քարգծանոց Համագասպ Համբարձումյանը, Երևան, 1988, էջ 128-198:
- 19 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ», աշխատասիրությամբ Հ. Սիմոնյանի, Եր., 1989, էջ 251-264, 282-297, 325-328 և այլն:
- 20 «Աստուածաշունչ մատենան Հին ու Նոր Կտակարանաց», Կ. Պոլիս, 1895, Գործք Առաքելոց, գլխ. Ի, ԻԱ, ԻԲ:
- 21 Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար քարգծանությունը և ծանոթագրությունները Մտ. Մալխասյանցի, Երևան, 1981, էջ 527:
- 22 Դառնի վերջնամասը այս վերնագրով հրատարակվել է «Արարատում», Էջմիածին, 1869, յունուար, էջ 123-125: Ամբողջական տեսքով Դառը մինչ այդ հրատարակվել էր Վենետիկում («Սովիերը Հայկականը», ԺԸ, Վնու., 1854, էջ 5-71 և «Տիլիշի վարդապետի մատենագրութիւնը», Վնու., 1859, էջ 213-239):
- 23 «Արարատ», էջ 123:
- 24 Ա. Սանջյանի կազմած քննական բնագիրը տե՛ս Le Museon, LXXXII, 1969, էջ 268-275:
- 25 «Երևակ», 1860, քիւ 94, 16 նոյեմբերի, էջ 296-297:
- 26 Բնական բնագիր, էջ 269:
- 27 Ղ. Ալիշան, Հայապատուն, Վենետիկ, 1901, էջ 74:
- 28 Անդ, էջ 74-75:
- 29 Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, 1860, էջ 227:
- 30 Անդ, էջ 225-226:
- 31 «Բանբեր Մատենադարանի», 4, էջ 324: Սա Ռ. Արբախանյանի քննական բնագիրն է (էջ 317-329), որին հետագա հղումները կլինեն տեքստում:
- 32 «Բազմավեպ», 1882, էջ 198-200:
- 33 «Կասն վանորէից որ ի Ս. Քաղաքն յԵրուսաղէմ ըստ նախնեաց մերոց գաղղիարէն քարգծանութեամբ», Վենետիկ, 1896:
- 34 «Միմե՛տոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւն», էջ 45:

- 35 «Լասն վանորեից...», էջ 19:
 36 «Հանդես Ամսօրեայ», 1932-1935թթ.:
 37 «Միտն», 1931, յունիս, էջ 181:
 38 «Արարս», 1995, I, էջ 31:
 39 «Հայ-Վենետ կամ յարոնչութիւնը Հայոց եւ Վենետաց ի ԺԳ. և ի ԺԵ-Ձ դարոս», Ղևոնդ Աշիշան, Վենետիկ, 1896, էջ 194:
 40 «Տեղեկագիր», 1957, ք. 6, էջ 103: Հետայսու այս հրատարակության հղումները կտրվեն շարադրանքում, փակագծերի մեջ:
 41 «Բազմավէպ», 1937, քու 2-5, էջ 54:
 42 Տե՛ս, «Հայ-Վենետ», էջ 194:
 43 Բ. Սարգիսեանց, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ճատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հտ. Բ, Վնտ., 1924, էջ 509:
 44 Նույն տեղում:
 45 «Բազմավէպ», 1937, քիւ 2-5, էջ 50:
 46 «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ», հայկական խմբագրություններ, աշխատասիրությամբ Հ. Սիմոնյանի, Եր., 1989, էջ 475:
 47 «ՊԲՀ», 1970, 3, էջ 125-148: Նույնը վերահրատարակվել է Լ. Խաչիկյանի «Աշխատութիւններ» Ա հատորում (Եր., 1995, էջ 291-318): Բոլոր մեջբերումները կհղվեն՝ փակագծում նշելով վերահրատարակության համապատասխան էջը:
 48 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 20, с. 346.
 49 «Բազմավէպ», 1937, քիւ 2-5, էջ 53:
 50 Հրատարակել է Ռուսեր Կյուպենկյանը «ԺԵ դարու ձեռագրի մը պատմութիւն» հոլովածում («Բանբեր Մատենադարանի», 10, 1971, էջ 359-372):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
 ՄԻՄԵՈՆ ԼԵՀԱՅԻ

- 1 Baracz Sadok, Rys dziejow ormianskich, Tamopol, 1869, էջ 205:
 2 Macler Fr., Rapport sur une mission scientifique en Galicie et en Bukovine (Juillet - Août, 1925), 'Revue des Etudes Arminennes', t. 7, Paris, 1927, N 1, pp. 126-127.
 3 Ձեռագրի նկարագրությունը տես «Ցուցակ հայերէն ձեռագրաց Համալսարանի ճատենադարանին ի Լվով (Universytet Jana Kazimiesza), կազմեց Ն. Ալիինեան, «Հանդես ամսօրեայ», ՇԱ տարի, 1937, յունուար-մայիս, էջ 146-148:
 4 «Միմե՛ոն դարի Լեհացոյ Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ Յիշատակարանք», ուսումնասիրեց եւ հրատարակեց Հ. Ներսէս Ալիինեան, Վիեննա, 1936: Այստե՛տև այս գրքի հղումները՝ շարադրանքում, փակագծերի մեջ:
 5 «Բազմավէպ», 1938, հոկտեմբեր-դեկտեմբեր, քիւ 10-12, հատոր Ռ-Ձ, էջ 313:
 6 Стен Симеон Лехаца, Путевые заметки, М., 1965, предисловие М. Дарбиняна, с. 11.
 7 «Բազմավէպ», 1938, 10-12, էջ 313-316:
 8 Հրատարակել է Ալիշանը, «Կամենից Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումնիոյ հաստտեայ յաեկուածովք, Վենետիկ, 1896, էջ 202-214:
 9 Ա. Մարդյան, «Թող չպակասի քո լապտերի յողը», «Նորք», 1990, N 7, էջ 139:
 10 Ա. Մաղդյան, Միմե՛ոն լեհացոյ «Ուղեգրութիւնը», «Բանբեր Երևանի համալսարանի» («ԲԵՀ»), 1991, N 3, էջ 20:
 11 ՄԱՄ, Անհատական արխիվներ, Տիրայր վարդապետի անհատական արխիվ, «Օրսփորդի Բողոյեան գրատան ցուցակ», քղրապանակ 122, վավերագիր N ԲԳ, ձեռագիր N 122, էջ 2058:

- 12 «ԲԵՀ», 1991, N 3, էջ 20:
- 13 «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը», աշխատ. Հ. Սահակյանի, Եր., 1986, հ. 1, էջ 568-573: Այսուհետև տեքստում կնշվի հապավումով՝ ՈՒՄՀԲ և հատորն ու էջը:
- 14 "Древняя Русь и Украина в судьбах армян", ИСД, Ер., 1961, с. 81.
- 15 «ԲԵՀ», 1991, N 3, էջ 25:
- 16 **Н. Барсамаов**, Феодосия, Симферополь, 1957. (Ա. Արքահանայան, Թուրք-քարարական արշավանքները ըստ մի քանի հայկական աղբյուրների, ИСД, Ер., 19711, с. 81. 352Ը):
- 17 «Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց», աշխատասիրութեամբ Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տիգրիս, 1913, էջ 344:
- 18 **А.С.Саакян**, "Путевые заметки" Симеона Лехаци (сб. "Армянская и Русская средневековые литературы"), Ер., 1986, с. 364.
- 19 Երեմիա Քեօմիլոնեան, Ստամբուլյոյ պատմություն, հ. Ա, հրատարակեց եւ ծանօթագրեց տօրս. Վահրամ Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 5:
- 20 «ԲԵՀ», 1991, N 3, էջ 23:
- 21 **Լեո**, Երկեր, հ. 5, էջ 274:
- 22 Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, էջ 547:
- 23 Երևանի Մատենադարան, ձեռագիր N 6333:
- 24 Յովհան Մամիկոնեան, Պատմություն Տարօնոյ, աշխատասիրությամբ Ա. Արքահանայանի, Եր., 1941, էջ 148-156: Այսուհետև հղումները շարադրանքում, փակագծերի մեջ:
- 25 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Եր., 1988, էջ 48:
- 26 «Պատմություն Շնափոյ Բագրատունույ», ի լոյս ածին Գ. Տէր-Ալլոտեան եւ Մարուպ եպիսկոպոս. Էջմիածին, 1921, էջ 5:
- 27 Տես չ. Կ. Տէր-Սահակեան, Հայ կայսեր Բիւզանդիոնի, Վենետիկ, 1905, էջ 264:
- 28 «ԲԵՀ», 1991, N 3, էջ 26:
- 29 Հմմտ. Սիմեոն Լեհացի (էջ 323-324) և «Նսահապետ Քուչակի դիվանը» (էջ 92, 101):
- 30 **Լ. Խաչիկեան**, Աշխատություններ, հ. Ա., 1995, էջ 312:
- 31 «Գուսանական ժողովրդական տաղեր», Երևան, 1940, էջ 199:
- 32 **А.С.Саакян**, "Путевые заметки" Симеона Лехаци (сб. "Армянская и Русская средневековые литературы"), Ер., 1986, с. 358.
- 33 «Տեղեկագիր», 1957, ք. 6, էջ 104:
- 34 «ԲԵՀ», 1991, N 3, էջ 24:
- 35 «Բազմավեպ», 1938, քիւ 10-12, էջ 313:
- 36 «Հայ ժողովրդի պատմություն» հ. IV, Եր., 1972, էջ 502:
- 37 Энциклопедический словарь, изд. Ф.Брокгаузъ, И.Ефронъ, т. XXII^А, С.Петербург, 1897, с. 645.

Գ Լ Ո Ւ Խ Ե Ր Ր Ո Ր Գ
ժ Է Գ Ա Ր Ի Մ Յ Ո Ւ Մ Ո Ւ Վ Ե Գ Ի Ր Ն Ե Ր Ը

- 1 ՄԱՄ, Անհատական արխիվներ, Տիրայր վարդապետի անհատական արխիվ, 122 թղթապանակ, հա. ԻԳ վավերագիր, 122 թվակիր ձեռագրի նկարագրությունը: Այսուհետև այս նկարագրության հղումները կտրվեն տեքստում:
- 2 «Բազմավեպ», 1882, էջ 317-318:
- 3 «Հայ-Վենետ», էջ 458-459:
- 4 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2-րդ, Եր. 1959, էջ 76-77:
- 5 «Արքս», 1996, 1, էջ 37:
- 6 Լ. Խաչիկեան, Աշխատություններ, հ. Ա, (Հայագիտական մատենադարան մատենաշար), 148

Եր., 1995, էջ 310:

7 Ղ Ալիշան, Միսական, 1893, Վեներտիկ, էջ 388: Տե՛ս նաև էջ 394-395:

8 Ա. Մաղոյան, Օգոստինոս Բաջեցու Ուղեգրությունը, «Արար», 1996, 2, էջ 63:

9 «Բազմավեպ», 1990, քիւ 3-4, էջ 330-344:

10 «Բազմավեպ», 1990, քիւ 1-2, էջ 40-71: Տե՛ս նաև նույն հեղինակի հոդվածաշարի հաջորդ հոդվածները (1991, քիւ 1-2, էջ 64-76 և այլն):

11 ИСД (“Исторические связи и дружба украинского и армянского народов”), Ер. 1961, с. 81:

12 «Բանասեր», Պարիս, 1899, Ա տարի, գիրք Գ, էջ 258:

13 Itineraire du très - reverend frere Augustin Badjetzi é crit en langue armenien: traduit par M. Brosset (Journal Asiatique, 1837, Mars, pp. 209-245 et Mai, pp. 401-421).

14 «Նշխարք մատենագրութեան Հայոց», կազմ. Բ. Պատկանեան, Ս-Պ., 1884, էջ 5-26:

15 «Բանասեր», Պարիս, 1899, Ա տարի, գիրք Գ, էջ 222-237: Այսուհետև այս հրատարակչության հոդումները կտրվեն տեքստում, փակագծերի մեջ նշելով միայն համապատասխան էջը:

16 Մեսրոպ Սմբատեան, Նկարագիր ս. Կարապետի վանից Երմզալայ եւ շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 222-225:

17 «Արար», 1996, 2, էջ 64-77: Առաջաբանը՝ էջ 63:

18 «Նշխարք մատենագրութեան Հայոց», էջ 5:

19 Չարարիա Սարկավազը իր պատմությունը գրելիս դժգոհում էր ճշմարտապատում վկայությունների պակասից. «Կամին՝ թէ գոր ինչ եղեալ է ի ժամանակի շահ Աբասին՝ գրել այլ ոչ կարողանամ. բանգի սակաւք են գիտողք ժամանակին՝ որք ասէին զամենայն ստուգութեանք» («Չարարիա Սարկատագի Պատմագրութիւն», հ. 1, Վարդաշապատ, 1870, էջ 23):

20 Տե՛ս Առաքել Գալբիժեցի. Պատմություն, բարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Եր., 1988, էջ 10-11:

21 «Փորձ», Տփղիս, 1880, հ. 1, էջ 36:

22 «Պատմութիւն Առաքել վարդապետի Գալբիժեցու», Վարդաշապատ, 1896, էջ 40: Այսուհետև այս հրատարակչության հոդումները կնշվեն տեքստում, փակագծերի մեջ:

23 «Բանասեր», Պարիս, 1899, Ա տարի, գիրք, էջ 258:

24 Ղ Ալիշան, Միսական, 1893, Վեներտիկ, էջ 377:

25 Ժ: դարասկզբից սկսյալ եվրոպական պետությունների և Պարսկաստանի միջև ընթացող բանակցություններում մեծ տեղ էր բռնում վերջինիս տիրապետության տակ գտնվող տարածքներում «հայ եկեղեցուց կտրուած եւ կարողիկութեան յարած (Գ.Յովսէփեան, Խաղրակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, Բ. հրատարակություն, Անքիլիաս-Լ. իրանան, 1969, էջ 146), հայերի խնդիրը, որի էությունը հավատալիոյս հայերին որոշ «արտօնութիւններ եւ դիրտութիւններ» (անդ) շնորհիւլու միջնորդութիւնը էր: Դեռևս 1619-ին Բաջեցու շահին է հանձնում բոլեր՝ գրված Պապի, Ֆրանսիայի և Իսպանիայի քաղաքների կողմից:

26 Չեռագիրը հետագայում հանգրվանել է Փարիզի Ազգային Մատենադարանում (նկարագրությունը տե՛ս Կ. Բասմաջեան, Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Պարիսի, Բանասեր, 1899, Ա տարի, գիրք Գ, էջ 258): Այս միակ ձեռագիրն էլ հիմք է հանդիսացել Ուղեգրության հետագա հրատարակությունների համար, որոնք բոլոր դեպքերում իրականացվել են Բաջեցու Ուղեգրության հետ մեկտեղ:

27 ՀԱՀ, հ. 6, էջ 561:

28 Հ. Անաայան, XVII դարի դատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Եր., 1961, էջ 301-311: Այսուհետև այս գրքին բոլոր հղումները՝ տեքստում, փակագծերի մեջ, ուր կնշվի միայն այն, թե տվյալ մեջբերվող հատվածը ո՞ր օրինակի ո՞ր էջից է: Օրինակ՝ Ե. օ. (Երևանի օրինակ) կամ Պ. օ. (Պոլսի օրինակ):

